

ԹԱՐՄԻ ԱՎԱՋԱՆ

ԱՅԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ԱՐԱՎՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԶԱՐՈՒԹԻ ՊԱՏՄՈՒՑՈՒԾ

Նվիրվում է

Քրիստոնյա Ամերիկայի Միացյալ Նահանգների
մարդասիրության ու գթասիրության խորհրդանշիշը դւրձած
և հայ ժողովրդի կյանքում հոգեսր, կրթամշակութային,

սոցիալ-քաղաքական ու խնամակալական
անմնացորդ նպաստը բերած երախտաշատ

Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական

Ամերիկյան Խորհրդի (1819 թ.)

և

Մերձավոր Արևելքի Նպաստամատուցի (1919 թ.)

180-ամյա և 80-ամյա

հիշարժան տարելիցներին:



Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

գործադիր տնօրեն,


Հայ Ավետարանական Համաշխարհային Խորհրդի քարտուղար
Վերապատվելի Մովսես Շանպազյանին,

քանզի, իր բարեշնորի հովանավորությամբ հրատարակելով
ԱՄՆ-ի հայ գաղութի ձևավորման ու գարգացման պատմությունը,
նոր շունչ հաղորդեց ամերիկյան այդ էթնիկ խմբի
ինքնաճանաշմանն ու ինքնապահպանմանը:

Ք. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2000

DEDICATION

This work is dedicated
to the 180th and the 80th
memorable anniversaries

of the American Board of Commissioners for Foreign Missions (1819)
and

of the Near East Relief (1919),
symbolizing the philanthropy and compassion
of the Christian United States of America,
which have given spiritual, educational-cultural,
social-political and tutorial assistance to the Armenian people.




We express our deep gratitude to the Executive Director of the
Armenian Missionary Association of America,
Secretary of the Armenian Evangelical World Council
Reverend Movses B. Janbazian
for taking under his benevolent patronage
the publication of the history of formation and development
of the Armenian Community of the USA
and for giving a new breath to the self-cognition and self-preservation
of that American ethnic group.

K. A.

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

KNARIK AVAKIAN



“GITUTIUN” PUBLISHING HOUSE OF NAS RA
YEREVAN – 2000

ПОСВЯЩЕНИЕ

Посвящается
180-й и 80-й
памятным годовщинам

Всемиссионерского Американского Совета по Внешним Миссиям (1819 г.)

и

Комитета Помощи Ближнему Востоку (1919 г.),

ставшими символом гуманности и сострадания

Христианской Соединенных Штатов Америки

и принесшими духовную, образовательно-культурную,

социально-политическую, попечительскую помощь армянскому народу.



Выражаем глубокую благодарность

Исполнительному директору

Армянской Евангелистской Ассоциации Америки,

Секретарю Армянского Евангельского Всемирного Совета Америки

Преподобному Мовсесу Джанбазяну,

поскольку, взяв под свое покровительство издание

истории формирования и развития армянской колонии США,

дал новое дыхание самопознанию и самосохранению

этой американской этнической группы.

К. А.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

КНАРИК АВАКЯН

**ИСТОРИЯ АРМЯНСКОЙ КОЛОННИИ
СОЕДИНЁННЫХ ШТАТОВ АМЕРИКИ**

[от начала до 1924 г.]

**ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН – 2000**

ԴՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (23) 52
Ա 770

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ ակադեմիկոս Վ.Ա.Միքայելյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ

պատմական գիտությունների դոկտոր Վ.Ա.Խաչատրյանը,

պատմական գիտությունների թեկնածու Յ.Յ.Մարտիրոսյանը

ԱՎԱԳՅԱՆ Ք.Ռ.

Ա 770 Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը
(Սկզբնավորումից մինչև 1924 թ.) / Խմբ. Վ. Միքայելյան: ՀՀ ԳԱԱ
Պատմության ինս-տ. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000,
240 էջ:

Դայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը կազմող սփյուռքահայ գաղութացաների, ինչպես նաև ամերիկյան էթնիկ խմբերի պատմության ողջ շղթայի հետազոտման և ամբողջացման անհրաժեշտությունից ելնելով, առավել քան արդիական ու առաջնահերթ է հայկական ամենից մեծաթիվ ու կազմնակերպված Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի սկզբնավորման ու զարգացման պատմության համակողմանի ուսումնասիրությը:

Ուսումնասիրությունն առանձնապես շահել է, քանի որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել ինչպես Դայաստանի պատմական արխիվների, այնպես էլ, առավել ևս, Թուրքիո Դայոց Պատրիարքարանի Դիվանի բացառիկ արժեք Ծերկայացնող փաստաթրթերը:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, վերջաբանից, ունի հավելված բաժին, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ, անգլերեն և ռուսերեն ամփոփումներ, բազմաթիվ համադրական այլուսակներ:

Ա 0503020913 2000
703(02) - 00

ԳՄԴ 63.3 (23) 52

ISBN 5 - 8080 - 0405 - 5

© Ք.ԱՎԱԳՅԱՆ, 2000

ՆԵՐԿԾՈՒԹՅՈՒՆ

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը պատմական ճակապագրի բնույնով հարկադրված է եղել հետանալ իր բնօրբանից և զաղթել աշխարհի փարքեր երկրներ՝ իիմներով մեծ ու փոքր զաղթավայրներ, որոնք ժամանակի ընթացքում կամ սփվարացել, բարգավաճել ու հզորացել են՝ պահպանելով իրենց գոյությունը մինչև օրս, կամ նուրացել, թուլացել ու ընդհանրապես անհետացել:

Այս իմաստով կարևորվում է գնդեսական, քաղաքական, մշակութային, կրոնական, ինչպես նաև անձնական հանգամանքների բնույնով աշխարհով մեկ սփոված հայ ժողովուրդի մի գերակշիռ հավածի՝ գաղթականության ու նրա իիմնած գաղթավայրերի պատմության ուսումնասիրումը, առանց որի թերի կյիներ հայոց պատմության ամբողջական լուսարանումը:

Անդրադառնալով հայ ժողովուրդի պատմության հավելապես նոր շրջանի մաս կազմող հայկական զաղութերի պատմությանը՝ հայ մեծանուն պատմարան Լևոն գրել է. «Նայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացագրող հավելությունն այն է, որ նա կազմվում է հայ զաղութերի հզոր ազդեցության գակ, համարյա նրանց ձեռքով միայն»:¹ Իսկ եզիպարահայ զաղութի բազմավասփակ պատմարան Արշակ Ալպյանցիանը եզրակացրել է. «Եթէ զաղութերը գոյութիւն չունենային, Նայերը գուցէ մինչեւ այսօր մնացած պիգի ըլլային ... ասիական խաւարին մէջ, անշարժ, լճացած, միտավորական պաշարէ գուրկ ժողովուրդ մը...»:² «Սա մի իրողություն է, որի գիրակցումը անխուսափելիորեն հանգեցնում է այն եզրակացության, թե հայ ժողովուրդի պատմությունը իր մի որոշ մասով նաև զաղութահայության պատմություն է», - իրավացիորեն նշում է ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը Դրիմի հայ զաղութի պատմությանը նվիրված իր սպվարածավալ ու արժեքավոր աշխափության ներածականում և ավելացնում, որ զաղթաշխարհի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները լիարժեք չեն լինի այնքան ժամանակ, «...քանի դեռ անմշակ է մնում իրենց նշանակությամբ մեծ ու կարևոր հայկական առանձին զաղթօջախների պատմությունը»:³

XIX դ. վերջից հայության սրբվարացող հոսքի հետևանքով ասպիճանաբար բարգավաճել ու հզորացել է Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ զաղութի: Այն այսօր էլ հարապես է՝ կարևոր ու առանցքային դեր կապարելով հայկական սփյուռքի զաղութերի շարքում:

Ներկայում ԱՄՆ-ի նկարմամբ մեզանում աճող հետաքրքրության, ինչպես նաև դեպի այնպես հայության շարունակվող հոսքի պայմաններում, և, մասնավորապես, կմերով զաղութահայ պատմության ողջ շղթայի հետագործման և ամբողջացման անհրաժեշտությունից, առավել քան արդիական, իրավապ ու առաջնահերթ է հայ-

կական ամենից մեծաթիվ և կազմակերպված ամերիկահայ գաղութի սկզբնավորման ու զարգացման պատմության համակրողմանի ուսումնասիրումը, որն իր նպաստը կրերի հայոց նոր պատմության հետագա լուսարանմանն ընդհանրապես:

Տեսմայի արդիականությունը կարևորվում է նաև նրանով, որ, չնայած անցյալում մասսամբ մեզանուս և հիմնականում Սփյուռքում առկա անորոշանալի ձեռքբերումների, ցարդ բացակայում էր ԱՄՆ-ի հայ գաղութի պատմության հիշյալ ժամանակաշրջանի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրությունը:

Սույն աշխատանքի հիմնական նպատակն է եղել հանգամանալից ու բազմակողմանի ուսումնասիրել և առարկայորեն ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմության մի կարևոր ու սրբար ժամանակահարվածի համարի պարկեր՝ սկսած 1618 թ. Նոր Երկիր առաջին հայի՝ Զոն Մարգին Հայի ուրնադրումից մինչև 1924 թ.՝ ամերիկյան Կողմից ԱՄՆ մեկնող փարբեր ազգի, այդ թվում նաև հայ գաղթականների նկարմամբ դրված թվային սահմանափակումը՝ մասնաբաժնիք (Quota):

Ուսումնասիրության առարկան ընդգրկում է հայոց պատմության նշանակալից իրադարձություններով հարուստ մի կարևոր ժամանակահարված, որի ընթացքում սկզբնավորվել ու զարգացել է ԱՄՆ-ի հայ գաղութը:

Այդ նպատակի իրականացման համար անդրադարձել ենք հետևյալ առանցքային խնդիրներին՝

I. ՀԱՅԵՐԻ ՇՈՍՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱՎ ՆԱԽԱԳՆԵՐ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԱ ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.

- ա. Հայերը գաղութային ժամանակաշրջանի Ամերիկայում (XVII դ. սկիզբ - XVIII դ. առաջին կես),
բ. Հայերի պանդիստությունը և գաղյաք ԱՄՆ (1834 -1924 թթ.):

II. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՄՆ-ում.

- ա. Հայերի գենդարախյուսը,
բ. Հայերի գրադարանները,
գ. Ամերիկահայերի կենուամակարդակը,
դ. Ամերիկահայ ընդունությունը. կենցաղն ու բարքերը:

III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- ա. Ամերիկահայ միություններ, կազմակերպություններ, կուսակցություններ, ընկերություններ և ակումբներ,
բ. Ամերիկահայերի կապը բնօրրամբ հետք:

IV. ԱՄԵՐԻԿԱՅԱ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ.

- ա. Եկեղեցին,
բ. Պարքերական մամուլն ու դպարանները,
գ. Կրթական - մասնագիտական զարգացումը,

դ. Գրականություն,

ե. Ներասանական արվեստը (թափրոն, շարժանկար),

գ. Երգարվեստը (երգիչներ, նվազիչներ, երգահաններ, երգախմբեր),

է. Կերպարվեստը (լուսանկարչություն, նկարչություն, բանդակագործություն):

Ամերիկահայ գաղութի պատմության վերաբերյալ առկա աղբյուրներն ու գրականությունը հետևյալ բնույթի են. ամերիկահայ, հայկական, իսկ լեզվական առումով անգլերեն, հայերեն (արևմտահայ, արևելահայ):

Ենկով թեմայի առանձնահավկրւյանից՝ մեզանում ի սպառ բացակայում են աղբյուրագիրական իիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթերը, որոնք բացառապես կենդրոնացած են ԱՄՆ-ի պատմական արխիվներում: Ուստի բնձնոված սույն հնարավորությունները թույլ են փեկ ծանոթանալ սոսկ արխիվային բացառիկ այն փաստաթղթերի որոշ մասի հետ, որոնք լույս են դնեսկ գերազանցապես անգլիակեզրու հրապարակություններում: Դրանցից են ԱՄՆ-ի հայ գաղութի պատմության առանձին ժամանակահարվածներին ու առանցքային հարցերին նվիրված Վ.Մ.Մելքոնի և Ռ.Միքարի արժեքավոր ուսումնասիրությունները, ինչպես նաև միշտ այլ հեղինակների գործերը:⁴

Թեմայի առանձին հարցերի շուրջ հետաքրքիր ու հանգամանալից անդրադառներ կան նաև Սփյուռքում, մասնավորապես ԱՄՆ-ում լույս դեսած ինչպես փարբեր հեղինակների հայերեն աշխարհանքներում, այնպես էլ ընդհանուր բնույթի փարեցույցներում, որոշ պարբերականների հորելյանական ժողովածուներում:⁵ ԱՄՆ-ի հայ գաղութի պատմության վերաբերյալ մեզանում հրապարակված առաջին հետազոտություններից հիշարժան են Ա.Գ.Արքահամյանի, Գ.Վ.Նակորյանի, ինչպես նաև ամերիկահայ Ն.Լ.Մանկունու աշխարհները:⁶

Ուսումնասիրության համար արժեքավոր փվյալներ ենք հայդնաբերել ԱՄՆ-ի առանձին համայնքների պատմությանը, ամերիկահայ քաղաքական կուսակցությունների, հայրենակցական, բարեսիրական, կրթասիրաց, մարմնակրթական և այլ միությունների, ընկերությունների, կազմակերպությունների ազգապահպան ու հայրենանպաստ եռանդուն գործունեությանը, ամերիկահայ եկեղեցուն (Առաքելական, Ավելափարանական), պարբերական մամուլին ու փազգրությանը, մշակույթին նվիրված, ինչպես նաև հայ և ամերիկացի ժողովուրդների պատմության առանձին ժամանակահարվածներին ու իրաղարձություններին առնչող անգլերեն և հայերեն բազմաթիվ աշխարհություններում, ժողովածուներում ու պարբերական մամուլում:

Նախազոդվող թեման առանձնապես հարստացել է շնորհիվ արդասահմանում և հայրենիքում լույս դեսած մի շարք իրապարակախոսական բնույթի աշխարհությունների, վավերագրական ժողովածուների, պարբերական մամուլի (հայերեն, անգլերեն), ինչպես նաև մունիքի հայոց պատրիարքարանի դիվանից (ավելի մանրամասն փեն սույն աշխարհությանը կից Հավերված բաժինը) և Հայաստանի Հանրապետության Պատմության պետական կենդրունական արխիվից բաղված բացառիկ արժեք ներկայացնող փաստաթղթերի (ավելի մանրամասն փեն սույն աշխարհությանը կից Օգովագործված աղբյուրների և գրականության ցանկ բաժնում): Վերջիններս մեզանում հրապարակվում են առաջին անգամ:

Վերոհիշյալ բազմաթիվ ու բազմաբնույթ աղբյուրներն ու գրականությունը, թեայն հաճախ գերծ չեն թերությունից, անկապարությունից ու անծփությունից, սակայն, իրենց ընդհանրության մեջ, հաղորդած փաստերն ու տեղեկությունները հազվագյուղ են ու բացառիկ, որոնց հանգամանորեն հավաքագրումով, վերլուծումով, համադրումով և ի մի թերությունից հնարավոր է դարձել ամրողացնել ԱՄՆ-ի հայ գաղութի մի կարևոր ժամանակահարվածի (սկզբնավորումից մինչև 1924 թ.) ընդգրկուն պար-մությունը:

Սույն ուսումնասիրությունը գիտական նորույթ է, քանի որ՝

1. Թե՛ մեզանում և թե՛ արդերկում ԱՄՆ-ի հայ գաղութի պապմության հիշյալ դարողունակ ժամանակաշրջանի վերաբերյալ հանգամանալից ու համակողմանի հետազոտությունն ի սպառ բացակայել է:

2. Առաջին անգամ գիտական ամրողական քննության առարկա դարձած հիշյալ թեմայի նորույթը նաև նրա ընդգրկած լայնածավալ ժամանակաշրջանն է (XVII դ. սկիզբ - 1924 թ.):

3. Աշխարհանքի գիտական նորույթը նաև հետազոտվող թեմայի համակող-մանի խորությամբ առաջադրված խնդիրների բազմազանությունն է:

4. Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել ԱՄՆ-ում, Թուրքի-այում և մասամբ Հայաստանում հրաժարական և անդիպ բազմաթիվ հայերեն ու անգլերեն սկզբնադրյուրներ և գրականություն՝ մեծապես նպաստելով ինչպես ողջ թե-մայի, այնպես էլ նրա առանձին կողմերի նորովի ուսումնասիրմանն ու եզրահանգում-ներին:

5. Առկա փաստագրական փվյալների հիման վրա նորովի հավաքագրվել, խրմ-րավորվել, այրեննական ու քանակական կարգով դասակարգվել և կազմվել են ինչ-պես ուսումնասիրության հիմնական խնդիրներին (պանդիստություն, գաղթ, գեղա-րաժխում, զրադաշտություն, կրոնակցություններ, միություններ, եկեղեցի, կրթություն), այնպես էլ առանձին հարցերին (աշխարհանք, աշխարհավարձ, եկամուկ, կենսամա-կարդակ, գրագիրություն, ապրեկաերաց, բարեգործություն, ընդունակություն, արդարագություն) առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ համադրական աղյուսակներ՝ առավել գենանելի դարձնելով հետազոտվող նյութը:

Ուսումնասիրությունն ունի ոչ միայն պարմագիտական ու մշակութարանա-կան արժեք, այլ նաև գործնական կարևոր նշանակություն, քանի որ փաստագրական նյութերի հիման վրա առարկայուրեն ներկայացված են ներկայում դեպի ԱՄՆ շարու-նակովոր արդարագություն պարմական ակունքներն ու պատճառները, ինչպես նաև ներ-գաղութային սոցիալ - քննդեսական, հասարակական, քաղաքական, հոգեսոր ու մշա-կութային կյանքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՂԱՅԵՐԻ ՀՈՍԹԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՐԱՎԱՆԵՐ
ԵՎ ԱՄԵՐԻԿԱՐԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ա. ՂԱՅԵՐԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱԾԻ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII դ. սկիզբ - XVIII դ. առաջին կես)

Ղերևս XVII դ. սկզբից Եվրոպայից դեպի Հյուսիսային Ամերիկա ուղևորված վերաբնակիչների թվում էին նաև առաջին սակավարիվ հայերը: Բրիտանական գաղութատիրության այդ ժամանակաշրջանում Ամերիկա մեկնած հայերի մասին պահպանվել են շատ քիչ, հաճախ նաև պատմական հավաստման կարոտ կցկոտուր տեղեկություններ: Այսպես, ըստ ամերիկացի պատմաբան Լ.Աղամիրի, 1607 թ. Լոնդոնի Վիրջինիա Ընկերության կողմից Ամերիկայի հյուսիսում Ձեյմսբառունում, հիմնված Վիրջինիայի գաղութը նույն քվականին բնակեցվել է լեհ, գերմանացի և հայ աշխատավորներով, որոնք եկել էին գաղութի «պատվար ու փրկիչ» հանդիսացող քսանյոթամյա կապիտան Զոն Սմիթի հետ՝ նրա հրամանատարության տակ չորս տարի Հունգարիայում թուրքերի դեմ կռվելուց հետո:¹ «Լեհերը, գերմանացիները և հայերը գաղութի աշխատավորներն ու արիեստավորներն էին և, ի տարբերություն գաղութատերերի, որոնք խորշում էին աշխատանքից, սրանք սովոր էին ծանր ու երկարատև աշխատանքի»:² «Կոպիտ շարժուձեր» ունեցող այդ մարդիկ հմտացել էին ձյութի, կուարի, օճառի փոշու, ապակյա համրիչների և էժան զարդերի արտադրության մեջ, որոնցով առևտուր էր կատարվում հնդկացիների հետ, ինչպես նաև մասնակցել են նրանց դեմ գաղութատերերի մղած կրիվներին նպաստելով նորաստեղծ Վիրջինիայի գաղութի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առաջընթացին»:³

Չնայած վերոհիշյալ իրողությանը, տասներկու տարի շարունակ հայերն ու նրանց հետ ժամանած մյուս աշխատավորները գտնվել են ստրկանման վիճակում և անգլիացիների աչքում դիտվել իրենք «ստորակարգ օտարականներ»՝ զուրկ քաղաքացիական, տնտեսական ու քաղաքական որևէ իրավունքներից:⁴ Այս թե ինչու, 1619 թ. Ձեյմսբառունում հայերը լեհ, գերմանացի և իուլանդացի աշխատավորների հետ միասին մասնակցել են «Ամերիկայում հասարակ մարդկանց իրավունքների ընդարձակմանն ուղղված քաղաքական գիտակցված առաջին ըմբոստությանը», որը միաժամանակ

հանդիսացել է Նոր Աշխարհում մարդկային իրավունքների ուժնահարման դեմ մղվող պայքարում տարբեր ազգերի ներկայացուցիչների միասնականության դրսնորման փայլուն օրինակ:⁵ Դայտնի է, որ ապստամբությունն ունեցել է «բարեհաջող ավարտ», քանի որ նույն թվին Ամերիկայում ստեղծված առաջին ներկայացուցչական ժողովը Զեյմսթաունի Քաղաքացիների Տունը, որոշել է, որ «նրանք (ապստամբած աշխատավորները - թ.Ա.) պետք է ազատ արձակվեն և լինեն ազատ այնպես, ինչպես այդտեղի ցանկացած բնակիչ»:⁶

Ուշագրավ է նաև այն փաստը, որ, որոշ աղյուրների համաձայն, Վիրջինիայի գաղութի 1620 թ. նշեցյալների ցանկում պահպանվել են Չորոբարել (հավանաբար Չորիապ Աբել?) և Ստեփան անունները,⁸ ինչպես նաև Զեյմսթաուն քաղաքի գերեզմանատանը օտար, հավանաբար հայերեն գրերով գրված մի տապանաքար,⁹ սակայն դրանց հայկական ծագումը ենթադրական է:

Դետագա տարիներին ամերիկան այդ շրջան ուոք դրած հաջորդ հայի մասին տեղեկանում ենք Անգլիայի Զեյմս I թագավորի կողմից գաղութային Ամերիկայի հարավային մասում տնտեսական, քաղաքական և առևտրական նպատակներով վերաբնակելի տարածք հոչակված Լոնդոնի Վիրջինիա Չենքերության մեջ հասած որոշ փաստաթրերից, որոնցում մի քանի անգամ հիշատակվում են «Մարտին Դայ» կամ «Զոն Մարտին Պարսիկ» անունները¹⁰ (հավանաբար նկատի է առնվել XVII դ. սկզբին Շահ Արասի օրոր նրա ստացած պարսկահպատակությունը):

Դեպի Նոր Աշխարհ Զոն Մարտինի ուղևորության դրդապատճառների մասին բավարար տեղեկություններ չկան: Պահպանված կցկուոր տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Մարտին Դայն Ամերիկա էր եկել 1618 կամ 1619 թվականներին որպես արմատական բարեփոխումներ իրականացնելու ծրագրով Զեյմսթաուն ժամանակաշրջանի Ամերիկայում «ոչ մի գնով հմուտ ծեռքեր չկային»,¹² բացի այդ, Նոր Երկիրի հարստություններն իրացնելու նպատակով ամեն կերպ խրախուսվում էր աշխատավոր ուժի մուտքն այդտեղ: Դետևաբար, կարելի է ենթադրել, որ Զոն Մարտինը Զ.Յարդիի վստահությունը վայելող համենատարար հին սպասավորներից էր, որը եկրոպա էր գաղթել հավանաբար 1610-1612 թթ.:¹³

Հատ չանցած 1619 թ., Զոն Մարտինը հազարից ավելի բնակիչ ունեցող Վիրջինիայում ստանում է բրիտանական հպատակություն՝ դառնալով գաղութային ժամանակաշրջանի «առաջին բնականացված (naturalized - թ.Ա.) մարդու ամերիկան մայրցանաքում»:¹⁴ Նա, որպես ազատ մարդ, դառնում է 95 ակր (1 ակր = 4.060 մ²) հողի տեր և գրաղվում Վիրջինիայում տարածված ծխախոտի մշակությամբ:¹⁵

Կարելի է եզրակացնել, որ ազատ գործելու արտօնությունները, որոնցից օգտընել է նաև Զոն Մարտինը, հնարավոր էին դարձել շնորհիվ նույն 1619 թ. Զեյմսթաունում մի խումբ օտար աշխատավորների կողմից իրականացված ընթոստ ելույթի, որի հետևանքով ծեռք էին բերվել որոշակի տնտեսական ու քաղաքական իրավունքներ:

Զոն Մարտինը, Ամերիկայում շուրջ չորս տարի գրադարձելով ծխախոտագործությամբ, 1622 թ. իր աճեցրած «ծխախոտի ծանրոցով» վերադարձել Անգլիա, որտեղ մաքսատանը նրանից, որպես օտարերկրացու, կրկնակի հարկ է պահանջվել: Այդ

կապակցությամբ Զոն Մարտինը դիմել է Վիրշինիա Ընկերության դատարանին: Պահպանվել է Վերահարկավորման մասին դատարան նրա ներկայացրած 1622 թ. մայիսի 8-ի թվակիր խնդրագիրը, որից մեջերում ենք մի հատված: «Զոն Մարտին Պարսիկը համեստ խնդրագիր է ներկայացնում Ընկերության բարեհաճությանը դիմելով մաքսատուրքի իր ընկեր հողագործներին՝ իրեն ազատելու կրկնակի հարկ վճարելուց, ինչը նրանք իրենից պահանջում էին որպես օտարականի, չնայած նա դարձել էր ազատ մարդ Վիրշինիայում այն ժամանակվա կառավարիչ Սըր Զորյ Յարուիի կողմից գաղութի կնիքը կրող վկայականով»:¹⁶

Զոն Մարտինին հաջողվում է շահել դատը. նրան թույլատրվում է Անգլիայի քաղաքացիների վրա դրվող սովորական հարկով իր ծխախտուի բաժինը ներմուծել Մայր Երկիր: Այսպիսով, Զոն Մարտինի գործով անգլիական դատարանը, առաջին անգամ լինելով, հստակեցրել է Մայր Երկրի և «օտար» գաղութաբնակների միջև տրնտեսական հարաբերություններն ընդհանրապես խթանելով առևտուի հետագա զարգացումը:

Զոն Մարտինը, կրկին վավերացվելով որպես բրիտանական քաղաքացի, ումեցել է դիրքի հետագա առաջնորդաց. նա դարձել է Լոնդոնի Վիրշինիա Ընկերության Մշտական Կոմիտեի անդամ և քվեարկելու իրավունքով մասնակցել նրա բազմաթիվ կարևոր նիստերին:¹⁷ Այսպես, 1623 թ. հոկտեմբերի 20-ին և նոյեմբերի 12-ին, 1624 թ. հունվարի 14-ին տեղի ունեցած «արտակարգ» և կարևոր հանդիպումնարի արձանագրություններում նա հիշատակվում է որպես «Մարտին Շայ»: Շայտնի է նաև, որ նա մի ոմն Լորդ Արգալի և յոթ այլոց հետ քվեարկել է Ընկերության խնդրագիրը թագավորին հանձնելու հարցի օգտին: Ալ.Բրաունն իր «Ալաջին հանրապետությունն Ամերիկայում» գրքում գրում է, որ Զոն Մարտինի իրական անունը հայկական հնչողությամբ Շովիաննես Մարթյան պիտի եղած լինի:¹⁸ Կարծում ենք հնարավոր է նաև Շովիաննես Մարտիրոսյան տարբերակը:

1624 թ. Ձեյմս I թագավորի կողմից Լոնդոնի Վիրշինիա Ընկերության լուժարումից հետո¹⁹ դադարել են նաև Զոն Մարտինի մասին տեղեկությունները:

Հետագայում, 1653 թ. Ամերիկա են գալիս Երկու շերամաբույժ հայեր՝ վերականգնելու ժամանակաշրջանի համար պետական ու առևտուական կարևոր նշանակություն ունեցող, սակայն անհաջողության մատնված, Վիրշինիայի գաղութի շերամաբույթունը և իրենց հմտությունները հաղորդելու տեղաբնիկներին: Այդ Երկու հայերը, որոնք իրենց հմտության ու փորձի համար հայրենի Երկրում մեծ հեղինակություն էին վայելում, Ամերիկա էին բերվել օսմանյան Թուրքիայից (հավանաբար՝ Զմյուռնիայից) Վիրշինիայի գաղութի Երևանի հեկավար Էրուարդ Դիզգեսի անձնական ջանքերով ու նյութական միջոցներով:²⁰ Նա, զբաղվելով մետաքսի առևտուով, շերամաբուծության ասպարեզում հայերի ունեցած հաջողությունների մասին տեղեկացել էր ժամանակին Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանի պաշտոն վարած իր հորից:²¹ Շայտնի է, որ շերամի հունդը Ռուսաստան էր մուտք գործում մեծ մասամբ Փոքր Ասիայի հայերի կողմից:²² Այդ Երկու հայերը խնամքով հետևել են եղ. Դիզգեսի շերամաբուծական տարածքում Ղենթիգի, Բելֆիդի (այժմ՝ Ուլիմսբերգ) և Ձեյմս գետի շրջակայքում, բոժոժների հասունացման համար անհրաժեշտ թթենինների աճին:²³

Դայերից մեկի «Զորջ Դայի» նասին տեղեկանում ենք 1656 թ. դեկտեմբերին Վիրջինիայի Խորհրդի կայացրած որոշումից, որտեղ ասված է. «...Զորջ Դայը, մետաքսի արհեստում իր ցուցաբերած աջակցության և նույնը շարունակելու նպատակով Երկրում մնալու համար, Խորհրդի կողմից պարզաւորվել է չորս հազար ֆունտ ծխախոտով»:²⁴ Նշենք, որ, հակառակ գործադրած ջանքերի, սկզբնական շրջանում զգալի արդյունքների չհասած հուսահատված հայերը նույնիսկ ցանկացել են հետ վերադարձնալով:²⁵

Սակայն շուտով շերամապահական գործն այնքան ապշեցուցիչ հաջողության է հասել, որ դրան «փութացան նպաստող» անգլիացի շերամապահ Զոն Ֆերրարը 173 տողերից բաղկացած Երկարաշունչ մի ներքող է հյուտել²⁶ «Ամենաազնիվ Դիգօնսին Թուրքիայից Վիրջինիա նրա երկու հայերի ժամանման կապակցությամբ» Վերնագրով: Ահա մի հատված.

Սակայն ազնիվ Դիգօնսը Դադանակ տարավ.
Նրա երկու հայերը Թուրքիայից բերված
Այժմ իր քաջ ծեռնարկով են մեծապես գրադար,
Եվ ունի նա բավական պաշար հաջորդ տարվան.
Տաս հազար ֆունտ Մետաքս այնքամ ի հայտ կցա,
Եվ Երկինք կրածրանա նրա գործն արժանապայել.²⁷

Շերամաբուժության զարգացումը մեծ կարևորություն է ներկայացրել բրիտանական իշխանությունների համար: «Վիրջինիան մատակարարեց Չարլզ Ա-ի թագադրության պատմուճանը: Իսկ Չարլզ Բ-ի մետաքսագօնեստը անտարակույս իր Վիրջինիայի տիրապետության մեջ մշակված խոզակներեն պատրաստված էին: Տիկ անունով պարոն մը հայեր բերել տվյալ Վիրջինիայի իր խոզակի արտադրության համար», - գոել է Էդգարեսթոնն անցյալ դարի վերջին:²⁸

Այսպիսով, Վիրջինիայում «Դայ միտքն ու ճարտարութիւնը կրցած է սատարել իր կազմութեան խանձարութիւնն մէջ Եղող Ամերիկեան մետաքսագործական ճարտարութեատին» դառնալով Նոր Աշխարհում շերամաբուժության ու մետաքսագործության առաջնեկները:²⁹

Դետագա տարիներին Ամերիկա եկած հայերի նասին պահպանվել են շատ սակավ, հաճախ ենթարական տեղեկություններ: XVII-XVIII դդ. ընդգրկող այդ ժամանակշրջանում հայերը հիմնականում եկել են Մեծ Բրիտանիայի հետ առևտրական առավել գործուն հարաբերություններ ունեցող Եվրոպական որոշ Երկրներից (հատկապես Յոլանդիայից), ինչպես նաև Դնդկաստանից,³⁰ և Վերաբնակվել ամերիկան նորաստեղծ տարբեր գաղութներում. Վիրջինիայից բացի, նաև՝ Մասսաչուսեթսում (1682 թ.) ծագումով հունգարակայ գիտնական Ստեփան Չադորին, հավանաբար՝ հայկական Չադորւրյան, Ասատուրյան կամ Աստվածատուրյան ազգանունների տարբերակը,³¹ Դարավային Կարույնայում (1719 թ.) քարոզիչ արժանապատիվ Փիբր Թուսթյանց, հավանաբար՝ Պետրոս Շուտրյան, և նրա թեմի անդամ Զեքըր Սադուրը, հավանաբար՝ Դակոր Սադուրյան, Ասատուրյան կամ Աստվածատուրյան³² և Զորջիայում (1738 թ.) հողագործ Ստեփան Թարրյանը, կամ՝ Թերյեն, Թարրյեն, հավանաբար՝ Տերյան):³³

Բրիտանական գաղութատիրության տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի ստուգ թիվը դժվար է որոշել, քանի որ ընդհուպ մինչև 1820 թ. նորեկների, այդ թվում նաև հայերի, գրանցման վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել:

Սակայն պատմական տվյալ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին հայերով չի պայմանավորվել հետագա տարիներին հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակառուղղված տեղաշարժը. նրանք սուսկ գաղթականության հիմնական հոսքից դուրս գտնվող անհատներ էին:

Ի մի բերելով բրիտանական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ հայերի մասին մեզ հասած կցկուուր տեղեկությունները, կարելի է եզրակացնել, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական հանգանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում ցրված հայեր էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք, առևտրական և այլ հանգանքաների բերումով առնչվելով Մեծ Բրիտանիայի հետ, միմյանցից տարբեր, հիմնականում անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակվող գաղուր և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում: Այս թե ինչու, նրանք մեծ մասամբ կրել են օտարացած անուններ, ինչպես նաև պատկանել քրիստոնեական հավատի այլ դավանանքների: Այսուհեն ներձ, ամերիկյան գաղութային պաշտոնական փաստաթղթերում նրանց հայկական ծագման մասին երեմն հանդիպող ակնարկները հավաստիացնում են այդ ժամանակաշրջանում նոր երկրում օտար վերաբնակիչների ազգային պատկանելիության նկատմանը եղած մեծ հետաքրքրությունը՝ դրանով իսկ ձեռք բերելով ազգային ու պատմական որոշակի արժեք:

Բ. ՀԱՅԵՐԻ ՊԱՆՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂԹԸ ԱՄՆ (1834-1924 թթ.)

XIX դ. առաջին կեսից սկսվել է հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս ամերիկյան բողոքական քարոզիչների օսմանյան թուրքիայում ծավալած լուսավորական գործունեության: 1810 թ. Բոստոնում ստեղծված Արտաքին Առաքելությունների Համամիսիոններական Ամերիկյան Խորհուրդը (American Board of Commissioners for Foreign Missions), որի նպատակն էր «Աւետարանը տարածել ի սփիւս աշխարհի», 1820 թ. իր առաջին քարոզիչներին է ուղարկել օսմանյան կայսրություն՝ «քննելու և հետազոտելու» Փոքր Ասիան, Հայաստանը, Միջագետքը, Պաղեստինը, Պարսկաստանը և այլն:³⁴ Սակայն, մահմետականների շրջանում քրիստոնեական քարոզներ իրականացնելիս հանդիպելով թուրքական կառավարության արգելքներին, արդյունքում «Միսիոնարները ամբողջ Թուրքիոյ մէջ ոչ մէկ թուրք յաջողած են քրիստոնեացնել. մէկ հատ միայն, ան ալ կառավարութիւնը կախաղան հանած է»:³⁵ Օսմանյան պետությունում ավետարանական քարոզներն անենից շատ ընկալվել են հայերի կողմից:

Այդ մասին է վկայում քարոզիչների Բոստոն ուղարկած տեղեկագիրը, ինչպես նաև նրանց հայտարարությունը, թե «ամբողջ Թուրքիոյ մէջ միայն Հայերն էին որ պատրաստ էին օգտուելու Աւետարանական ուսուցումներն»: Էմերիքըն Պօրտը սկիզբէն բնաւ մտքէն չեր անցըներ այս պարագան, երբ միսիոնարական գործը սկսաւ Տաճկաստանի մէջ»:³⁶ Այսպես, Թուրքիայի հայերի համար Կ.Պոլսի Բերեքի թաղամասում 1831 թ. հիմնվել է Ամերիկյան Խորհրդի Հայկական Առաքելությունը, որտեղ գործել են Ու.Գուղելը, որը հայտառ թուրքերնենի էր թարգմանել Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարանները, Դ.Դուայթը, որն իր քարոզները հայերեն էր կարդում, Է.Սմիթը, Ու.Շաուլը, Է.Ռեմլինը, Զ.Ռեմլինը, Բ.Շնայդերը, Ջ.Ռուդուրը և այլոր.³⁷

1846 թ. հովհանու 1-ին օսմանյան կայսրությունում Հայաստանյաց ավետարանական եկեղեցու հիմնադրումից և 1847 թ. ավետարանական համայնքի ձևավորումից հետո ընդուաւ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը ամերիկացի քարոզիչների ջանքերով ստեղծվել են ավետարանական եկեղեցիներ, դպրոցներ, կոլեջներ, որտեղ Եվլուպական և ամերիկյան կրթական մակարդակի դասընթացներ են հրականացվել: Հիշատակման են արժանի Ուրբերտ Կոլեջը (1862 թ., Կ.Պոլիս), Ամերիկյան համալսարանը (1864 թ., Բեյրութ), Կ.Պոլսի աղջկանց Կոլեջը (1873 թ., Կ.Պոլիս), Կենտրոնական Թուրքիայի Կոլեջը (1876 թ., Այնրապ), Եփրատ Կոլեջը (1878 թ., Խարբերդ), Կենտրոնական Թուրքիայի աղջկանց Կոլեջը (1882 թ., Մարաշ), Անատոլիա Կոլեջը (1886 թ., Մարզվան), Ար.Պողոսի հաստատությունը (1888 թ., Տարտու) և այլն:³⁸ Ամերիկյան գաղափարների «խաղաղ թափանցումին կերպը» հանդիսացող այդ հաստատությունները նաև մեծապես նպաստել են հայ ուսանողների արևմտամետ աշխարհայացքի ձևավորմանը:³⁹ Միաժամանակ, անժիշտելի է ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած լրսավորական գործունեության նշանակությունը օսմանյան կայսրության դարավոր հետամնացության և նահապետական բարքերի գերիշխանության պայմաններում խարիսափող հայության ազգային հոգեգիտակցական զարդումի գործում:

Հայ բնակչության շրջանում հիմնականում դրական ընդունելություն գտած ամերիկյան այդ քարոզիչների հրականացրած ավետարանական քարոզներն ու հաղորդած գիտելիքները, ինչպես նաև Նոր Աշխարհի վերաբերյալ ոգեշնչող գրույցները չեն կարող անտարբեր թողնել հոգևոր արքանցում ապրող ուսումնատենչ հայ երիտասարդությանը, որը հաճախելով ամերիկյան դպրոցներ ու կոլեջներ, աստիճանաբար իր հայացքը հառել է դեպի օվկիանոսից այն կողմում գտնվող ազատության և լայն հնարավորությունների երկիրը տեղի թարձրագույն կրթարաններում ժամանակակից մասնագիտություններ (հիմնականում աստվածաբանություն, բժշկություն, տեխնիկա) ուսանելու և, վերադառնալով, իր գիտելիքներն ի նպաստ ազգին ծառայեցնելու համար:

Ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ 1834 թ. դեպի ԱՄՆ հայ ուսանողների շարժման սկզբնավորողը Կ.Պոլսի միսիոներական դպրոցի սան տասնվեցամյա Խաչատուր Ռուկանյանն էր, որը, ավարտելով Նյու Յորքի համալսարանը, դարձել էր ճանաչված լրագրող ամերիկյան և հայ մամուլում: Նա, լինելով առաջին հայ մտավորական ԱՄՆ-ում և ծավալելով ազգանպաստ գործունեություն, անգլերեն հրատարակել է «Սոլքանն ու իր ժողովուրող» գիրքը, ամերիկյան հասարակությանը ժամոթացնելով հայոց պատմությանն ու մշակույթին, նաև՝ զբաղեցրել բազմաթիվ պաշտոններ

ամերիկյան տարբեր հաստատություններում (Նյու Յորքի մաքսատան գրագիր, Կոլումբիայի համալսարանի իրավագիտության գրադարանի վարիչ, Նյու Յորքի Մանհեթենի Անդամ, ապա՝ նախագահ, Նյու Յորքում օսմանյան թուրքիայի հյուպատոս):⁴⁰

Դեռագա տարիներին գլխավորապես ուսանելու նպատակով ԱՄՆ են սկսել մեկնել մի խումբ հայեր: Այսպես, 1837 թ. Ամերիկա է եկել Կ.Պոլսի ավետարանական դպրոցի սան Սենեքերին Տեր-Մինասյանը, որը, երկու տարի Փրինստոնի համալսարանում հետևելով աստվածաբանության ճյուղին, ապա ուսանելով բժշկություն, վերադարձել է հայրենի Երկիր գործնականում կիրառելու բժշկության նորագույն ձեռքբերումները:⁴¹

Տվյալ ժամանակաշրջանում հայերն ԱՄՆ են մեկնել նաև որպես բողոքական քարոզիչների սպասավորներ: Նրանցից եր, օրինակ, 1841 թ. քարոզիչ Շ.Դուայրի սպասավոր Թաղևոսյանը, որը հետագայում սկսել է գրադիվել ուսմաքարտ լոխումի արտադրությանը այն նորովի կոչելով «քաջի հալվա»:⁴² Նույն թվականին ԱՄՆ է եկել և Միության Աստվածաբանական դպրոց հաճախել հետագայում Կ.Պոլսում և Երուսաղեմում հայրապետի պաշտոններ ստանձնած Հարություն Կեհապետյանը:⁴³ 1842 թ. այդ նույն դպրոցում, ապա Յելի և Ենդրովերի համալսարաններում է ուսանել օսմանյան թուրքիայում ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ բողոքականություն ընդունած առաջին հայը՝ Դովիհաննես Տեր-Սահակյանը, որը նույնպես վերադարձել է Կ.Պոլս և Վարել բողոքական քարոզիչ պաշտոնը:⁴⁴

1843 թ. Եկած և քիմիայի, բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում մասնագիտացած Քրիստափոր Տեր-Սերոբյանը հանդիսացել է ամերիկահայ առաջին գյուտարարը և կարևոր ծառայություն մատուցել ամերիկյան պետությանը՝ հայտնագործելով Երկրի թղթադրամի (դոլար) դրամանենգման չենթարկվող և մինչև օրս գործածվող յուրահատուկ և կանաչ ներկերը: Ք.Տեր-Սերոբյանի գյուտն ամերիկյան կառավարության կողմից գնահատվել է որպես «Աստվածային պարզե», քանի որ այն վերջ տվեց խոշոր չափերի հասած դրամանենգությանը, իսկ հայտնագործության հերիխնակը պարզևատրվել է 6.000 դոլարով: Ք.Տեր-Սերոբյանը հետագայում վերադարձել է Թուրքիա և մինչև կյանքի վերջ պաշտոնավարել սուլթանական գանձարանում:⁴⁵

Ամերիկա մուտք գործած առաջին հայերից է նաև Կենետիկի Միսիսիպիայի Միաբանության հայը՝ Ղենդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբ Ալիշանը, որը 1845 թվականից որոշ ժամանակ բնակվել է Ուաշինգտոնում, ապա՝ Բոստոնում:⁴⁶ Ղեայի Ամերիկա եղբոր կատարած ճամբորդության առիթով Ղ.Ալիշանը Երկարաշունչ մի բանաստեղծություն է ծոնել նրան «Առ հարազատն ին. Ծովաչունով կԱմերիկա» վերնագրով, որն սկսվում է հետևյալ տողերով.

*Սիրով Սերոբիդ սիրտըս ծայն առած
Լուս միայնութեան ճրագիկըն վառած
Գիշերէ գիշեր յանժանօթ ճամբայ
Մինչև յԱմերիկ քո հետ կը թրթոյ,
Որ թողած սրտիդ հատորն աղուական
Դազար փարախով կերթաս բացական...⁴⁷*

1848-1850 թթ. ԱՄՆ է հասել և Բուտոնում ատամնաբուժություն ուսանել պուտեցի Սարգիս Խաչատուրյանը, որը, հետագայում վերադառնալով իր ծննդավայրը, Կ.Պոլսի Բերայի թաղամասում հիմնել է «Ս.Խաչատուրյան և Որդի» անունով ատամնաբուժարանը:⁴⁸

Քանի որ ամերիկյան քարոզիչների սկզբնական գործունեությունը սահմանափակված էր Կ.Պոլսով և շրջակա տարածքներով, հետևաբար շուրջ քսան տարիների ընթացքում ԱՄՆ ժամանակ մեկ տասնյակից ավելի վերոհիշյալ առաջին հայ ուսանողները պուտեցիներ էին, որոնք հիմնականում նաև գիտության տարբեր ճյուղերում: Նրանց համար ԱՄՆ-ը «կեանքի հանգրուան մը միայն եղած է, աշակերտութեան շրջան մը», որից հետո շատերը հիմնականում վերադարձել են հայերի երկիր:

Ամերիկյան քարոզիչներն օսմանյան թուրքիայի հայության կրթական համակարգը ժամանակակից նոր հիմքերի վրա դնելուց բացի պակաս ջանք չեն գործադրել նաև արհեստավորների հմտությունները զարգացնելու և կատարելագործելու ուղղությամբ հիմնական նպատակ ունենալով բարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու միջոցով արգելակել երկրից հայերի աստիճանաբար աճող արտահուքը: Այդ խնդրում մեծ ու անգնահատելի դեր է կատարել հանրահայտ քարոզիչ, Ուրբերտ Կոլեցի հիմնադիր Սիրուս Յեմլինը՝ դպրոցներին կից բացելով ժամանակակից արտադրության մերողներն ուսուցանող տարբեր արհեստանոցներ: Նա գտնում էր, որ «այս աշխատասեր ժողովուրդը իր երկրին մեջ պահելու միակ միջոցը արհեստ ուսանելն է, հետևաբար ուսման հետ արհեստն ալ սովորեցնելու է անոր»:⁵⁰

Այդուհանդեռձ, հայերի հոսքն Ամերիկա չի դադարել: Տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարները, ինչպես նաև նոր երկրում իրենց հայրենակիցների հուսադրող վիճակը ոգևորել են ոչ միայն հայ ուսանողներին, այլ, սկսած XIX դ. 50-ական թվականներից, նաև արհեստավորներին ու վաճառականներին: Նրանց մեծ մասը շուտով վերադարձել է իր ծննդավայրը, իսկ ոմանք, հանդիպելով բարենպաստ տնտեսական պայմանների, հաստատվել են այստեղ և, չխցելով կապը հայրենի երկրի հետ, երբեմն առևտրական հարաբերություններ հաստատել, նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերել հայրենակիցներին, ինչպես նաև նպաստել իրենց ընօրրանների եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքի բարեկարգմանը: Այդպիսին էին խասպուղի վաճառական, ամերիկահայ առաջին բարեգործ Սարգիս Սինասյանը, ավելի ուշ՝ տիգրանակերտցի մեծահարուստ Ասլան Սահակյանը և այլոք: Դակոր Մաքնոյանը Կ.Պոլսի եր ներմուծել նորոգույն սարքավորումներով հագեցած թուրքիայում ամենախոշոր տպարանը, իսկ Սինաս Կարապետյանը՝ կահույքագործության ժամանակակից մերողները:⁵¹

Նոր երկրում կրթություն ստացած և ապահովություն գտած առաջին սակավարիկ հայերն իրենց մասնակցությունն են բերել նաև ԱՄՆ-ի միավորման համար մղված Քաղաքացիական պատերազմին (1861-1865 թթ.)՝ տրամադրելով Յուլսիսային Բանակում մարտնչող 30 կամավորներ և զորակոչված մեկ շարքային գինվոր: Իսկ Ֆիլադելֆիայի հիվանդանոցներում անձնվիրաբար իրենց ծառայությունն են մատուցել շտապ օգնության վիրաբույժներ Սիմոն Մինասյանը, Կարապետ Գալուստյանը, Պարոնիկ

Մաթեոսյանը: Երկրի միավորման ու խաղաղության համար մարտնչող երևելի ու ազդեցիկ հռետորներից էր ամերիկյան հնագույն տոհմից սերված, ծագումով հունգարահայ փաստաբան ու քարոզիչ Թոմաս Շորվինը Օհայոյի նահանգից, որը վարել է պետական բարձր պաշտոններ (ԱՄՆ-ի Պետական գանձարանի քարտուղար, Օհայոյի նահանգապետ, երկար ժամանակ նույն նահանգի ներկայացուցիչը Կոնգրեսում, 1861 թ. Մերսիկայում ԱՄՆ-ի դեսպան):⁵²

Այս շրջանում կրթուրյուն ստանալու նպատակով Ամերիկա են մուտք գործել նաև կանացի սեռի առաջին ներկայացուցիչները:⁵³

XIX դ. երկրորդ կեսին, հատկապես Քաղաքացիական պատերազմից հետո, ամերիկյան տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքում սկսված վերածնունդը նպաստել է այնտեղ ուղևորվող հայերի թվի աճին: Այսպես, եթե 1850-1870 թթ. ԱՄՆ-ում կար ավելի քան 55 հայ,⁵⁴ ապա 1870-ական թվականների սկզբին նրանց թիվը հասել էր 70-ի:⁵⁵

1876 թ. օսմանյան Թուրքիայում սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությամբ և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը, ինչպես նաև հայաբնակ խոշոր կենտրոններում ամերիկյան քարոզիչների հոգևոր ու տնտեսական գործունեության ծավալունը խրանել են հայերի հետագա արտահոսքը երկրի գորեք բոլոր շրջաններից՝ ընդգրկելով ոչ միայն ուսանողների, արհեստավորների ու վաճառականների, այլև ծանր հարկերի տակ կքած գյուղացիների և ունեցրկված գործավորների: Նրանց մեծ մասը, մտադրություն չունենալով հաստատվել այնտեղ, ձգտել է ժամանակավորապես աշխատելուց և որոշ գումար ձեռք բերելուց հետո վերադառնալ հայրենի բնակավայրեր՝ բարելավելու իրենց ընտանիքների նյութական վիճակը: Սակայն այս նոր պանդոկստների առջև բացված աշխատանքային բարենպաստ պայմանները, երբ մեկ օրում վաստակում էին այնքան, որքան օսմանյան կայսրությունում մեկ ամսում կամ մեկ տարում, պատճառ են հանդիսացել, որ նրանցից շատերը նույնպես հաստատվեին այստեղ:⁵⁶

Եթե մինչ այդ հայությունն իր կյանքի պայմանները բարելավելու հույսով աշխատանք էր փնտրում իիմնականում Իզմիրում, Կ.Պոլսում, Ադանայում, ինչպես նաև Թուրքիայի մերձակա երկրներում, ապա այժմ նա իր հայացքն ուղղել էր օվկիանոսից այն կողմ գտնվող հեռավոր ափեր, ուր «Ամերիկան խոստանում էր ամեն ինչ... Առասպելական պատմություններն այստեղ կապացված էին արագընթացության հետ, որի շնորհիկ հարստություն է ձեռք բերվում այնտեղ»:⁵⁷

Դեռևս առաջնային տվյալ ժամանակաշրջանում ինչպի ԱՄՆ հայերի հոսքը պայմանավորված էր ոչ այնքան քաղաքական իրավիճակով, որքան տնտեսական ծանր կացությամբ:

XIX դ. 80-ական թվականներին դեպի Ամերիկա հայերի նոր և զգալի տեղաշարժը հիմնականում արդյունք էր նաև ամերիկյան քրոզիչների կողմից օսմանյան Թուրքիայի հայաբնակ բոլոր խոշոր կենտրոններում ավետարանական գործունեության ծավալնա, եկեղեցիների, նախնական ու քարտագույն դպրոցների, կոլեջների և մշակութային այլ օջախների բացման: Այստեղ կրթված բազմաթիվ երիտասարդներ մեկնում էին «մեծ պատեհությունների երկիր», ներգրավվում գործարար աշխատանք-

Անրում: Ընդ որում, մինչ տվյալ ժամանակաշրջանում եվրոպական շուկաներում արդեն իսկ իրենց գործունեությունը ծավալած հայ հարուստ վաճառականները ճեղնապահ էին մնում ԱՄՍ ներքափանցելուց, «միջին կարգի» գործարարները հաջողությամբ իրենց գործերը բացում էին Նոր Երկրում: Օրինակ՝ Դիարբեքիրից Փուշմանների ընտանիքը Զիկագոյում, Դակոր Խոկյանն ու Սեմուել Դոնյանը Նյու Յորքում և ուրիշներ իրմանել էին արևելյան գորգի մեջ գործեր և այլն:⁵⁸

Ազատ աշխատանք որոնողների այս նոր հոսքը սկզբնավորել են խարբերդցիները: Դետագա տարիներին նրանց թիվն ԱՄՆ-ում, այլ շրջանների հայերի թվի համեմատ, առավել մեծ չափերի է հասել, քանի որ Խարբերդի հարքավայրը, որն օսմանյան թուրքիայում «ամենից հարուստ Երկիրն էր և ամենից գրավիչ ու խոստումնալից քարոզական տարածքը», 1852 թվականից սկսած դարձել էր արևելյան թուրքիայում ամերիկյան քարոզիչների գործունեության կենտրոնատեղի, միաժամանակ այդտեղ էր գտնվում նաև 1878 թ. իհմնված հանրահայտ Եփրատ Կոլեջը, որը «լուսաւորութեան մեջ հաստատութիւն մը եղաւ տասնեակ տարիներով»:⁵⁹ Այնպես որ, «...ամերիկեան միսիոնարներուն մուտքը Խարբերդի մէջ եւ անոնց հիմնած կրթական հաստատութիւնները մեծ դեր կատարեցին որ գաղթը, մը դարերու կեսեալ Խարբերդէն սկսի եւ հետզինտ տարածուի միւս հայկական բնագաւառները»:⁶⁰ Ժամանակի ընթացքում «...Խարբերդի արտագաղթը աւելի տեւական եւ զանգուածային դարձաւ եւ ամենամեծ թիւով գաղթականներ յանձնեց աշխարհի չորս ծովերուն, գլխաւորապէս Միացեալ Նահանգներու հանրապետութեան»:⁶¹

Միաժամանակ, դեպի Նոր Երկիր Խարբերդի հայերի հոսքն ուներ նաև տնտեսական նախապայմաններ, քանի որ նրանք «քիչ թէ շատ բարեկեցիկ ըլլալով Ամերիկա գաղթելու անմիջական հարկադրութեան տակ չին»:⁶² Դետևաբար, «որքան ատեն որ կեանքը իր բնականոն հունին մէջ էր, Խարբերդի հայութիւնը գաղթելու մասին չէր մտածեր, բայց երբ բնակչութեան ածման հետևանքով ապրուստի պայմաններն ալ դժուարացան, այն ատեն Երիտասարդ թէ ամուսնացած նարդիկ ամերիկեան միսիոներու դրախտային նկարագրութիւններէն հրապուրուած թողուցին իրենց ծնողին ու ընտանիքը եւ ամէն վտանգ աչքի առած ուղղուեցան Ամերիկա»:⁶³

Հուտով Խարբերդում «ամերիկյան տեղն» այնքան է ուժեղանում, որ 1888 թ. վերջին Եփրատ Կոլեջի նախագահ Չ. Քարտոնն Ամերիկյան առաքելությանը տեղեկացնում է, թէ քաղաքից «...Ներկայուն 105 մարդ կամ ծանապարհին, կամ ԱՄՆ-ում են» արդեն, քեսրիկից շուրջ 100 տղամարդ պատրաստ է մեկնել, որոնց թիվը հաջորդ տարի կրկնապատկելու է, իսկ Դուսեյնիկից արդեն 200 հայ ԱՄՆ-ում է: Ըստ նրա հաղորդումների, Խարբերդի հարքավայրի գորեք բոլոր 100 գյուղերից արդեն հեռացել էին մինչև Երկու տասնյակ ու ավելի հայեր, շատերն էլ պատրաստվում էին հեռանալ:⁶⁴

Դայերը հեռանում էին ամերիկյան քարոզիչների ազդեցությանը ենթակա հայաբնակ այլ շրջաններից ևս, ինչպես օրինակ Մուշից ու Բիթլիսից, որտեղից, 1864 թ. ավետարանական առաքելություններ հիմնվելուց արդեն Երեք տարի անց զգալի թվով հայեր էին մեկնել Ամերիկա:⁶⁵

Քարոզիչները, մտահոգված 1880-ական թվականներին հեռացող հայերի աճող հոսքից, որոնցում թիվ թիվ չէր կազմում կրթական խավը, դառնությամբ նշում էին, որ

հայ ուսանողներն ու քարոզիչները «աղմկահովազ ընթացքով հեռանում էին դեպի ԱՄ-ի տարբեր շրջաններ, հատկապես Դարավային Կալիֆունիա, իրենց աշխատանքի դիմաց բարձր վարձատրվում, կարծ ժամանակ անց կարողության տեր դաշնում և իրենց լավատեսական հաղորդումներով ոգևորում երիտասարդների նորանոր խմբերի հետևելու իրենց օրինակին, որոնց անգլերենի ինացությունը միայն նպաստում էր այդ «անհաջող շարժմանը»»:⁶⁶ Այդ կապակցությամբ, աջակցելով ամերիկյան բարձրագույն հաստատություններում հայ ուսումնատենչ երիտասարդության կրթական մակարդակի բարձրացմանը, բողոքական քարոզիչներից շատերը միաժամանակ նաև շահագրգուված ու մտահոգ էին նրանց որպես օսմանյան կայսրության հայարձնակ տարածքներում նորանոր սերունդներ լուսավորելու իրենց հետևորդների, հայրենի երկիր Վերադարձով: Այդ է պատճառը, որ երեմն քարոզիչներն իրենք էին խոչընդոտել այս կամ այն երիտասարդի Ամերիկա նեկնելը: Օրինակ քարոզիչ Ջ. Քնափին ընդհանուրապես դեմ է եղել Միացյալ Սահանգների Կրթարաններում նման երիտասարդության ուսանելուն, քանի որ 40-ից միայն մեկն էր Վերադառնում: Իսկ XIX դ. երկրորդ կեսին եղել է մի պահ, երբ նույնիսկ որոշ քարոզիչներ հրաժարվել են իրենց ուսանողներին անգլերեն սովորեցնել կանխելու համար նրանց հոսքն Ամերիկա:⁶⁷

Այսուհանդեռձ, թեև Նյու Յորքի, Փրիմսթոնի, Ֆելի, Էնդրվերի, Բոստոնի, Թրոյի, Էմիերսթի, Չելերի, Ուիսկոնսինի և առաջնակարգ այլ համալսարաններում փայլուն հեռանկարներ խոստացող ժամանակակից բարձրագույն կրթություն ստացած և ազատական գաղափարներն իրենց սեփականությունը դադրած երիտասարդության համար դժվար էր Վերստին հարմարվել ու գործել պահպանողական, հետադիմական բարքերի պայմաններում, այնուամենայնիվ, մասնագիտություն ծեռք բերած հայերի մեծ մասը վերադառնում էր իր գիտելիքներն ու կարողություններն ի սպաս դնելու հայրենի երկրին:

1880-ական թվականների վերջից ԱՄ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ հայ հեղափոխական և նորաստեղծ ազգային-քաղաքական կուսակցական (Շնչալյան, Շաշնակցական) գործիչների համար, որոնք այլտեղ բնականացվելով որպես ամերիկյան քաղաքացիներ, անարգել մուտք են գործել Թուրքիա և հեղափոխական գործունեություն ժավալել հայերի շրջանում և կամ ամերիկյան ազատության նպաստավոր պայմաններում շարունակել իրենց ազգային ու հեղափոխական գործունեությունը: Ահա թե ինչու թուրքական պետությունը, որը մինչ այդ որոշակի ընդգծված քաղաքականություն չուներ ԱՄ մեկնող հայերի նկատմամբ, շուտով, դրսից ներքափանցող հեղափոխական վտանգից խուսափելու նպատակով, պարբերաբար սահմանափակումներ է նտցրել, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես արգելել հայերի գաղքն Ամերիկա:

Մինչև 1908 թ. օսմանյան կայսրությունը պաշտոնապես չէր ճանաչում իր հպատակների գաղթելու իրավունքը, ուստի խոչընդոտմեր էր հարուցում ոչ միայն անհատ հայ գաղթականների, այլ՝ հետագայում նաև նրանց ընտանիքների դեպի ԱՄ ազատ ելքի նկատմամբ: 1900 թ. սուլթանական Թուրքիան, ամերիկյան կառավարության մնջման տակ, հարկադրված էր ընդունել իրականում սակայն ծևականորեն, բնականացված ամերիկյան քաղաքացիներ դարձած իր նախկին հայատակների հարազատ-

Ների կանանց, երեխանների և այլոց, առանց արգելքի ԱՄՆ արտագաղթելու իրավունքը: Այդ համաձայնությունը երեք տարի շարունակ թուրքական պաշտոնյաների կողմից անտեսվելուց հետո, կիրառության մեջ է մտել 1903 թվականից, երբ, ամերիկյան բարձրաստիճան ներկայացուցիչների կարգադրությամբ, մի խումբ օգնության կարոտ հայ ընտանիքներ, ստանալով թուրքիայում ամերիկյան հյուպատոսարանի հովանավորությունը, թիկնապահների առաջնորդությամբ փոխադրվել են ԱՄՆ: Սրանով գործնականում վերացվել են հայրենիքում մնացած ամերիկահայերի ընտանիքների արտագաղթելու նկատմամբ բոլոր սահմանափակումները, թեև դժվարությունները պահպանվել են:⁶⁶

Այսպիսով, XIX դ. 80-ական թվականներից մեծ չափերի է հասնում հայերի արտահոսքը դեպի ԱՄՆ օսմանյան թուրքիայի գրեթե ողջ տարածքից՝ ընդգրկելով բազմաթիվ առևտորականների, արհեստավորների, գյուղացիների և ազատ աշխատանք որոնողների, ինչպես նաև ուսանողների ու քաղաքական փախստականների: Ընդ որում, «ամերիկյան տենդը» տարածվել էր գլխավորապես (95%⁶⁷) ամուրի երիտասարդության շրջանում, որն, իր հարազատներին ու ողջ կարողությունը թողնելով հայրենիքում, մեկնում էր օտար ափեր՝ հաջողություն, հարստություն և ազատություն ձեռք բերելու հույսով, որպեսզի, 1-2 տարուց վերադառնալով հայրենի օջախներ, վճարեր պարտքերը, տուն, հող, անասուններ գներ ու մարդավայել կյանքով պարեր:

ԱՄՆ մեկնած հայերի մեջ քիչ չին նաև այնպիսինները, որոնք, արտադրության և այլ բնագավառներում հասնելով հաջողությունների, հայրենի բնակավայրեր վերադառնալիս իրենց հետ բերում էին ժամանակակից հաստոցներ, գործարաններ և այլ սարքավորումներ տեղի հետամնաց տնտեսությունը զարգացնելու նպատակով:⁶⁸

Միաժամանակ, այս նոր պանդուխտներից շատերն ԱՄՆ-ում հանդիպելով տնտեսական, քաղաքական, մշակութային և կրոնական ազատության ու բարեկեցության, հաստատվել են նոր երկրում նվազեցնելով հայրենիք վերադարձողների թիվը, ինչպես նաև իրենց հայրենակիցներին ուղարկած ոգևորիչ նամակներով և դրամական օգնությամբ նպաստել դեպի Ամերիկա նորանոր հայերի տեղաշարժին: «...Առաջին հայը Ամերիկայն երբ յիսուն ոսկիի չէք մը դրկեց իր տունը, զայն տեսնող եւ լսող հայերուն սիրտերը բունդ ելան ... ու այնուհետեւ ամեն հայ փափաքեցաւ Ամերիկա զալ, իր քայլայուած տնտեսությունը վերականգնելու համար: Եւ, ահա այսպէս, երկրն սկսեց արտագաղթը դեպի Ամերիկա: Այս օրերուն ամեն հայու բերմին ծամոց էր եղած ըսելու.-

Տերտեր կայ նը մեղքն ի՞նչ է.

Ամերիկա կայ նը պարտըն ի՞նչ է ...

Եւ հետզհետտ երկրէն Ամերիկա եկողներուն համակրանքը այնքան բազմացաւ, որ Կ.Պոլսոյ Դայլոց Պատրիարքարանը և Բ.Դուռը տեսնելով զանոնք սարսափեցան...»:⁶⁹

Անցյալ դարավերջին «քախս որոնելու եկած» պանդուխտ հայերը, մշտական բնակություն հաստատելով ԱՄՆ-ում, աստիճանաբար երկրի հյուսիս-արևելյան նահանգներից տարածվել են դեպի միջին և արևմտյան նահանգներ, արդեն XX դ.

առաջին տասնամյակներին հայաբնակ դարձնելով լայնածավալ երկրի գործք յուրաքանչյուր տարածքը: Ամերիկյան կյանքին ընտելացած հաջողակ կրթված ու գործարար հայերը պայմաններ են նախապատրաստել հետագա տասնամյակներին պատճական ստիպողական հանգամանցների բերումով գաղթի դիմած հազարավոր հայրենակիցներին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու, ինչպես նաև համախմբվելու և որպես հանայնք կազմակերպվելու ուղղությամբ:

Մինչև 1899 թ. ԱՄՆ մեկնած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ 1820 թվականից մինչև 1898 թ. ԱՄՆ մոտաք գործած բոլոր գաղթականները համապատասխան գրասենյակի կողմից գրանցվել են ոչ թե ըստ ազգային պատկանելության, այլ ըստ աշխարհագրական ծագման բնակավայրերի, այսինքն համաձայն իրենց գաղթած երկրների: Ընդ որում, օսմանյան Թուրքիայից գաղթածները մինչև 1868 թ. գրանցվել են որպես «Եվրոպական Թուրքիայից», իսկ 1869 թվականից նաև «Ասիական Թուրքիայից» և «Դաշտաստանից» եկածներ: Դետևաբար, տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մոտաք գործած հայերի թիվը խիստ հարաբերական է: Միայն 1899 թվականից է, որ գաղթականները սկսել են գրանցվել ըստ իրենց ազգային պատկանելության, դրանով իսկ որոշակի դարձնելով ԱՄՆ գաղթած հայերի թիվը:⁷²

Ընդհանուր առնամբ, եթե 1880-ական թվականների սկզբին ԱՄՆ-ում կար շուրջ 500 հայ, ապա նույն տասնամյակի վերջին նրանց թիվը հասել էր շուրջ 1.500-ի (ըստ որում, 971-ը՝ «Դաշտաստանից», իսկ 450-ը՝ «Ասիական Թուրքիայից» և «Եվրոպական Թուրքիայից» մեկնածներն էին, որոնք կազմում էին կայսրությունից ժամանած 4.242 գաղթականների ընդհանուր թվի զգակի մասը): Միաժամանակ, ամերիկյան վիճակագրական տվյալների համաձայն, եկողները հիմնականում տղամարդիկ էին («Դաշտաստանից»՝ 92%, «Ասիական Թուրքիայից»՝ 85%):⁷³

Դայերի հոսքը Ամերիկա առավել մեծ չափերի է հասել XIX դ. 90-ական թվականներից սկսած: Ի հետևանս օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ու կոտղրածների նախկինում դեպի ԱՄՆ հայերի իրականացրած անհատական արտահոսքը վեր է ածվել զանգվածային գաղթի: Ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափող հայերի այլ տեղաշարժը, որում մեծ թիվ են կազմել հողամշակները, քաղաքների ու ավանների արհեստավորներն ու բանվորները, ներառել է կայսրության ողջ հայաբնակ շրջանները՝ Խարբերդ, Սվագ, Էրզրում, Տիապիզոն, Բիթլիս, Կիլիկիա և այլն: Նախորդ տարիների համեմատությամբ կրկին մեծ չափերի էր հասել խարբերդիների հոսքը՝ կազմելով ամբողջ հայ գաղթականության մոտավորապես 40%-ը:⁷⁴ «1884-էն 1895 ժամանակաշրջանին Խարբերդի գաւառուն մոտաւորապես ամեն տուն դարիա մը ուներ Ամերիկայի մէջ»:⁷⁵ Բողոքական քարոզիչների հիշատակությամբ 1891 թ. «ոչ մի տեղ դեպի Ամերիկա հայկական գաղթն ավելի արտահայտված չէ, որքան այս (Խարբերդ - Ք.Ա.) կայանից», ապա՝ ավելի ուշ նշվել է, որ «Վերջին մի քանի տարիների ընթացքում մեծ թվով հայեր են գաղթել Խարբերդի տարածքից»:⁷⁶ Քառողիչների հիշատակություններում նաև ասվում էր. «...Փայլում և ամենից խոստումնալից երիտասարդ տղամարդիկ ու կանայք և հատկապես դպրոցների լավագույն ուսուցիչները գաղթել են: Օրինակ՝ մի տարի Խարբերդում եկեղեցին ուներ 3.107 անդամ, և 2.413 հաջորդը: ... Բիթլիսում քարոզական (ավետարանական

– ք.Ա.) Եկեղեցու համայնքի մեկ չորրորդը նույնպես գաղթել է խմբով...: Թուրքիայի համար ավելի լավ կլիներ, եթե այս մարդիկ մնային տանը և իրենց ձեռք բերած գիտելիքներն ու իմունքները կիրառեին իրենց երկրի վերածննդի համար. սակայն անհնար է ժխտել, որ նրանք Միացյալ Նահանգներ գնացող բոլոր օտարականներից ամենից արժեքավոր գաղթականների շարքում էին»:⁷⁷

1891 թ. ԱՄ էր մեկել շուրջ 800, իսկ 1892 թ. 1.000 հայ երկու տարում շեշտակիորեն գերազանցելով ամբողջ քառորդ դարի ընթացքում տեղ գտած հայերի անհատական հոսքին.⁷⁸

Կարող, աշխատաեր ու բազմաշորի հայերից գրկվելու սպառնալիքից զբողված բուրքական կառավարությունը 1892 թ. խոչընդոտներ է հարուցել դեափի ԱՄ ընդհանրապես հայերի, և հատկապես խարբերդցիների տեղաշարժը դադարեցնելու նպատակով: Այսպես օրինակ՝ Սև ծովից մինչև Կ.Պոլսի փոխադրությունները բույլատրում էին միայն բուրքական նավերով դրանով իսկ նվազեցնելով հայերի ապահով տեղափոխությունը և մեծացնելով կողոպուտի հնարավորությունները: Դայերն այլևս ի վիճակի չին «Եւրոպական նաև մը նետել ինքանին և Ամերիկայի ճամբան ձեռք առնել», քանի որ օտար նավերի դիմողները ձերբակալվում և հալածվում էին: ⁷⁹ Դակառակ օսմանյան պետության հարուցած արգելվեների, «մարդիկ ստոյգ մահը աչքերին առած դժոխքն կը փախսին»:⁸⁰ Ծուտով, 1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Ջամիդ II-ի կողմից հայերի Ակատմամբ իրականացված զանգվածային ջարդերի տարիներին, ընդհանրապես արգելվում է գաղթել երկրից, թեև շատերը կարողանում էին տարբեր ճանապարհներով դուրս պրծնել ու փրկվել: Սակայն իիմնականում հայերի գաղթն առժամանակ նվազել է:

Այսպիսով, 1834-1894 թթ. ԱՄ են մեկնել շուրջ 4.000 հայեր, որոնք կազմել են տվյալ ժամանակահատվածում օսմանյան Թուրքիայից Ամերիկա մուտք գործած գաղթականների ընդհանուր թվի (9.472 մարդ) կեսից ավելին:⁸¹ Նշված թվից հանելով այդ ընթացքում հայերնի բնակավայրեր վերադարձած մոտավորապես 1.000 հայերին, կստացվի, որ 1894 թ. ԱՄ-ում կար շուրջ 3.000 հայ: ⁸² Իսկ 1891-1895 թթ. ընկած ժամանակահատվածում օսմանյան Թուրքիայից ԱՄ էր գաղթել 5.500 հայ, ընդ որում, 2.909-ը՝ «Դայաստանից», 2.668-ը՝ «Ասիական Թուրքիայից»: Սա կազմում էր այդ երկրից մեկնած ամբողջ 11.000 գաղթականների ընդհանուր թվի 40%-ը:⁸³

Ամերիկան Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, եթե մինչև 1894 թ. «Ասիական Թուրքիայից» Եկածների թիվը իսկստ նվազել էր, ապա 1895-1898 թթ. այն կտրուկ կերպով աճել էր կազմելով շուրջ 15.913 մարդ: Միաժամանակ, կասկածից վեր է, որ տվյալ ժամանակահատվածում նշված տարածքից մեկնած գաղթականների գերակշիր մասը՝ ավելի քան 10.000 մարդ, համիլյան ջարդերից ճողովրած հայերն էին:⁸⁴ Իսկ արդեն 1900 թ. ԱՄ-ում կար 15.000-20.000 հայ,⁸⁵ որոշ տվյալների համաձայն՝ նույնիսկ 25.000 հայ:⁸⁶ Եթե սրան ավելացնենք նաև XIX դ. 90-ական թվականների կոտորածների հետևանքով Սև և Միջերկրական ծովերով Ամերիկա գաղթող հայերնի բնակավայրեր վերադառնալու հնարավորությունից գրկված ու Բայկաններում (Դունաստան, Բուլղարիա), Եգիպտոսում, ինչպես նաև Կովկասում, Ղրիմում և այլուր ապաստանած տասնյակ հազարավոր արևմտահայ փախստական-

ների, ապա մոտավոր հաշվարկներով 1902 թ. աշնանն ԱՄՆ-ում բնակչում էր շուրջ 45.000 հայ:⁸⁷

Օսմանյան Թուրքիայում հայության նկատմամբ կազմակերպված գանգվածային կոտորածների հետևանքով ստվարացած գաղթը, երբ ամեն տարի ամերիկյան դպրոցների աշակերտների թիվը նվազում էր 25-30%-ով:⁸⁸ Մտահոգել է այդտեղ գործող ամերիկյան քարոզիչներին ու պաշտոնյաներին: Այսպես՝ Այնթապի Կենտրոնական Թուրքիայի կողեցի նախագահ Ա.Ֆուլերը խոստովանել է. «Մեր Երիտասարդության մեջ մասը հոսում է Ամերիկա: Ո՞վ է զարմանում»:⁸⁹ Իսկ արևմտահայերի տառապանքներին ականատես մեկ այլ միսիոներ գրել է. «Ընդմին Դիարքերի ողջ բնակչությունը կգաղթի, եթե հնարավորություն ստեղծվի, քանի որ հակառակ դեպքում նրանք հաջորդ ձմեռ կմահանան հյուծվածությունից»:⁹⁰ Ուստի նա դիմում էր ամերիկյան «Երկարուղիների թագավորին», որպեսզի Զմյուռնիայից հազարավոր փախստականներ վերցվեին և բնակեցվեին ԱՄՆ-ի արևմուտքում:⁹¹

Թեև ամերիկացի, Եվրոպացի և հայ բարերարները միջազգային կարմիր խաչի հետ միասին Թուրքիայի հայաբնակ շրջաններում մեծ չափերի հասնող նպաստանատուց գործունեություն էին ծավալել ջարդերի հետևանքով անտուն ու անօգնական մնացած հայերի նկատմամբ, այդուհանդերձ, շարունակվում էր մեծ թվով հայերի արտահոսքը Երկրից քաղաքական, տնտեսական ազատությունների բացակայության, ինչպես նաև նոր կոտորածների սպառնալիքից դրդված:⁹² «Նրանք, ովքեր մնացին, աղքատ էին և պակաս ծեռներեց»:⁹³

Դամիլյան ջարդերից ճողովրած և ԱՄՆ-ում ապաստանած հայերը նույնպես արժանանում էին ամերիկյան հասարակության համակրանքին ու կարենցանքին. Եկեղեցական, բարեգործական և այլ հաստատությունների միջոցով ամեն տեսակի օգնություն էր տրամադրվում անտեղության մատնված գաղթականներին նրանց համար հայթայթելով սնունդ, հագուստ, բնակարան, աշխատանք և այլն:⁹⁴

Ամերիկյան ժողովրդի վեհանձնությունն ու Նոր Երկրի «հրաշքների» մասին նկարագրվել են իրենց վիճակը բարվոքած հայերի հարազատ բնակավայրեր ուղարկած նամակներում՝ խթանելով հայության հետագա գաղթը «ոսկու և մեղրի» Երկիր:⁹⁵ Վեր. Զոգեֆ Գաֆաֆյան Թոմսոնը, օսմանյան կառավարության իրականացրած ջարդերի հետևանքով դեպի ԱՄՆ շարժվող հայ գաղթականներին համեմատելով ամերիկյան առաջին վերաբնակիչների հետ, գրել է. «Բարիս ծշմարիտ իմաստով, հայերը գաղթականներ չեն, այլ, 1620 թ. ուխտավորների նման, նրանք Ամերիկա Եկան կրոնական ազատությունների համար»:⁹⁶

Դարասկզբին դեպի ԱՄՆ հայ գաղթականությունը վերստին ամել է: Առանձնապես մեծ թվով հայեր են գաղթել Այնթապից, Սարաշից, ամերիկյան պաշտոնական տվյալների համաձայն, այդ նոր գաղթականության 4/5-ը Խարբերդի ու Դիարքերի գավառներից էր:⁹⁷ Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի հյուպատոս Թ.Նորքոնի վկայությամբ, 1901 թ. Ակզիբին մարդկանց խմբեր ուժքով Խարբերդից շարժվում էին դեպի Սամսուն նավահանգիստ «ավետյաց Երկիր» մեկնելու համար: Նա կառավարությանը տեղեկացրել էր, որ հաջորդ տարի սպասվում է գաղթականության հսկայական ած ի հետևանս ֆիզիկական հալածանքների ու տնտեսական շահագործման սաստկացման,

Երբ հայերը նույնիսկ հարկադրված էին ուազմական հարկ փրկագննան վարձ («քերել» - բուրք.) վճարել Ամերիկայում գտնվող արական սեոի իրենց հարազատների համար:⁹⁵ Արդեն ԱՄՆ էին մեկնում ոչ միայն օսմանյան թուրքիայում երբեկցե անվտանգ կյանք ունենալու հավանականության նկատմամբ հավատը կորցրած հայ Երիտասարդները, այլ նաև՝ հասարակական ճնշումներից համեմատաբար ազատ, հասարակության մեջ լավ դիրք գրադարձնող ու հարգանք վայելող ունեոր հայերը, որոնք իրենց ունեցվածքը զոհաբերում էին կայսրության քաղաքական ու տնտեսական անկանխատեսելի միջավայրից դուրս այժմնելու և իրենց զավակներին բարոյահասարակական «առողջ մթնոլորտում» տեղավորելու հատուկ նպատակով:

ԱՄՆ-ը հանգրվան է դարձել նաև ոռւսական կայսրությունից եկած բազմաթիվ հայերի համար, որոնք Նոր Երկրի մասին տեղեկացել էին XIX դ. կրոնական հայածանքների հետևանքով Ոռւսաստանից Կովկաս աքսորված և հատկապես Շիրակի դաշտավայրում բնակություն հաստատած դուխորություններից ու մոլոկաններից: Վերջիններիցս շատերն անցնելով Կանադայի Ուիննեփեր, իսկ մյուսները Միացյալ Նահանգների Լոս Անջելես քաղաքները, կովկասյան իրենց ընկերներին և հարևան հայերին ուղարկած ոգեսրից նամակներով խրախուսել են նրանց մեկնելն այդ վայրեր:⁹⁶

Ժամանակի ընթացքում Կանադայում հաստատված մի խումբ արևելահայեր շարժվել են դեպի Լոս Անջելես, սկզբնավորելով ոռւսական կայսրությունից հայության արտահոսքը դեպի ԱՄՆ, որը սկզբում շատ սակավաթիվ էր. մինչև 1898 թ. ԱՄՆ էր մեկնել ընդամենը 15 արևելահայ:¹⁰⁰

Դարասկզբին դեպի ԱՄՆ արևելահայ պանդխոտության նախակարապետները Մուշեղյաններն էին Շիրակի դաշտավայրից, որոնք մեկնել էին 1904 թ., համեմատաբար բարեկեցիկ բնակչություն ունեցող Կարսի Ղարաղալա գյուղից: Դետագա տարիներին նրանց օրինակին է հետևել գյուղի գրեթե ողջ բնակչությունը:¹⁰¹

Զգալի թվով հայեր էին ԱՄՆ մեկնել նաև Ալեքսանդրապոլից և հարակից Դուզենդ, Ղազարաբաղ, Սիվանիիրիլ, Աղջոլու և այլ գյուղերից: Ալեքսանդրապոլի այդ տարածքից առաջինն ԱՄՆ էր մեկնել և Լոս Անջելեսում հաստատվել Ղազարաբաղ գյուղի Երիտասարդ բնակչի Բագրատ Դարրությունյանը, որը Մուշեղյանների ազգական էր: Նրանով էլ սկզբնավորվել է Շիրակի դաշտավայրի հայության հոսքը դեպի Ամերիկա, որը սկզբում ներառում էր 18-35 տարեկան Երիտասարդների, ապա նաև բարձր տարիքի հայերի: Թողնելով իրենց ընտանիքները նրանք 2-3 տարով հեռանում էին աշխատելու, որպեսզի որոշակի դրամ վաստակելուց հետո վերադառնային ու բարվութեն իրենց և հարազատների տնտեսական վիճակը: Կովկասահայ պանդխոտների այս շարքում, չարքաշ աշխատավորների կողմին որոշ թիվ էին կազմում նաև կորթվածները:¹⁰²

XX դ. սկզբին ոռւսական կայսրությունում և կովկասում տիրող տնտեսական ու քաղաքական ճգնաժամն ընդարձակվել էր արևելահայության տեղաշարժը դեպի օտար ափեր՝ ներառելով նաև Իգդիրից, Կողբից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից ելած հայերի: Նրանք բնակություն էին հաստատել հիմնականում ԱՄՆ-ի արևմտյան ափին Կալիֆոռնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում: Արևելահայերի հոսքը Ամերիկա առաջել մեծ չափերի և հասել հատկապես 1908 թվականից սկսած և նվազել կապված Առաջին աշխարհամարտի սկսվելու հետ:¹⁰³

Մեծ մասամբ աղքատ գյուղացիներից բաղկացած արևելահայերի այս հոսքում շատ քչերն էին, որ ունեին իրենց ճանապարհաժամը վճարելու համար անհրաժեշտ գումարը, մինչդեռ այն կազմում էր մոտ 500 ռուբլի: Դետևաբար, «ոմանք ծախում էին իրենց անասունները, ոմանք տան կահ-կարասինները եւ իրենց զարդեղները: Սի մասը դրամի փոխառութիւն էին անում: Շատ քչերն էին, որ իրենց ունեցած միջոցներով էին ճամբրորդում»:¹⁰⁴ Արևելահայ պանդուխտներն ԱՄՆ մեկնելու նպատակով շոգեկառով հասնում էին Աևծովյան Բաքում կամ Բալթիկ ծովի Ռիգա և Լիեպայա նավահանգստային քաղաքներ, ուր տեղավորվում էին հատուկ հատկացված պանդոկներում փոխադրվելու համար սպասելով Ամերիկայի իրենց հարազատների ու բարեկամների օգնությանը»:¹⁰⁵

Ականատեսի վկայությամբ, «ովքեր, որ դրամ ունեին, շատ չեին սպասում, մի քանի օրից անմիջապես մեկնում էին, իսկ կային մարդիկ, որոնք սպասում էին Ամերիկայի իրենց բարեկամների օգնութեանը: Այդ օգնութիւնը ուշ էր հասնում: Նրանք շատ դժուարութիւնների էին հանդիպում, նոյն իսկ քաղցած էին մնում: Այդ ժամանակ մեր ազգային սերն ու միաբանութիւնը գործի էինք դնում՝ օգնելով շատ շատերին, նոր երկրից եկողների միջոցով»:¹⁰⁶

Արևելահայերի հոսքը դեպի ԱՄՆ, ի հակադրություն արևմտահայերի, մեծ չափերի չի հասել, ինչը բացատրվում է ոռւսական կայսրությունում առկա ազգային նվազ հալածանքներով ու տնտեսական համեմատաբար բարվոք վիճակով: Այսպես՝ 1900-1905 թթ. ԱՄՆ էր մեկնել 50, 1905-1910 թթ. շուրջ 300, 1910-1913 թթ.՝ 1.200 արևելահայ՝ մինչև Առաջին աշխարհամարտ ԱՄՆ մուտք գործած ոռւսահայերի ամբողջ թիվը կազմելով ոչ ավելի քան 2.500 մարդ:¹⁰⁷ Այդ հոսքը նվազել է պատերազմի տարիներին և չնչին չափով ավելացել ոռւսական պետությունում 1917 թ. առաջցած քաղաքական խառնաշփոր հրավիճակի հետևանքով: Այսպես արդեն 1920-1924 թթ. ԱՄՆ գաղթած ամբողջ 20.659 հայերից ընդամենը 168-ն էին եկել Ոռւսաստանից»:¹⁰⁸

Ընդհանուր առնամբ, ԱՄՆ-ի Գաղթականության գրասենյակի տվյալներով, 1899-1924 թթ. ոռւսական կայսրությունից Ամերիկա էր մեկնել ավելի քան 3.500 հայ:¹⁰⁹

Անվտանգ ապագայի նկատմամբ հավատը կորցրած ու հուսալքված հայերի հեռանալու ցանկությունն այնքան մեծ էր, որ գաղթելու մտադրությունից նրանց հետ չի կանգնեցրել նույնիսկ 1907 թ. և հետո ԱՄՆ-ում տիրող տնտեսական ճգնաժամն ու փողոցներում թափառող անգործ գաղթականների մասին ամերիկահայ մանուլում հայտնված նախագուշացումները: Այդ «դժվար ժամանակներին» հայերի ընդհանուր գաղթն աճում էր սովորականի պես. 1907 թ.՝ 2.644, 1908 թ.՝ 3.299 հայ:¹¹⁰

Նախքան 1908 թ. երիտրութերի հրականացրած բարեփոխությունները, օսմանյան կայսրությունից հեռանալը լուրջ դժվարությունների հետ էր կապված, քանի որ մինչև 1896 թ. գաղթել հնարավոր էր բացառապես սուլթանի թույլատրությամբ, իսկ 1896 թ. հոկտեմբերից բուրքական հպատակությունից հրաժարվելու, երկրի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու ու այլևս երբեք չվերադառնալու երաշխավորագրի ստորագրումից և հայոց պատրիարքի կողմից այն հաստատվելուց հետո միայն: Արդեն 1899 թ. սուլթան Աբդուլ Ջամիլ II-ը, չառարկելով գաղթականության ռեմ, իր պատրաստակամությունն էր հայտնել նույնիսկ վճարել կարիքավոր հայերի

ճանապարհածախսը, պայմանով, որ նրանք չպիտի վերադառնային թուրքիա: Յետանշտելով պատճական Հայաստանը հայաբափելու քաղաքականությունը, միաժամանակ, դրանով փորձ էր կատարվում Երկիրը գերծ պահել ամերիկյան հպատակություն ստացած, հետևաբար և անձեռնմխելիությամբ օժտված հայ ազգային գործիչների ներթափանցումից:¹¹¹

Հայերը ճանապարհորդելու անցագիրը շատ հաճախ ձեռք էին բերում կաշառով՝ սովորական 2 դոլար գնի տամնապատիկը ու նույնիսկ ավելին վճարելով և կամ փաստաթղթերը կեղծելով: Գաղթականները թանկ էին վճարում նաև հրավերի (վիզա) և շոգենավի տոմսի համար, որոնց միջին գինը կազմում էր 50-60 դոլար: Արհեստավորի երեք տարվա խնայողությունը կազմող այս գումարը մեծ մասմաբ աննատելի էր արտագաղթողների գերակշիռ մասի համար, ուստի շատերը, կաշառելով եվրոպական շոգենավերի դեկավարներին, անօրեն մուտք էին գործում այնտեղ, հաճախ՝ թաքնվում ծխնելով զններում: Ոնանք էլ անհրաժեշտ գումարը հայրայրում էին ճանապարհին մասն որ աշխատանքներ կատարելով. արդյունքում ամիսներ էր ծգծգվում նրանց գաղը: ¹¹²

1908 թ. օսմանյան թուրքիայում Աբրուկ Շամիլ II-ի բռնապետությունը տապալած երիտրուքերն իշխանության գալով և հոչակելով «Ազատություն, Արդարություն, Եղբայրություն» դեմոկրատական կարգախոսը սահմանադրական իրավունքներ շնորհեցին կայսրության քրիստոնյա բնակչությանը, ներման արժանացան հազարավոր քաղաքական բանտարկյալներ: Անձի, խոսքի, մամուլի, ճանապարհորդելու և տնտեսական ու քաղաքական ազատությունների վերաբերյալ նրանց սին խստումներին արժանացած հայ բնակչության գգալի մասը, անսալով նաև նոր իշխանությունների հետ հույսներ փայփայող ազգային որոշ գործիչների լավատեսական կոչերին, շարունակել է իր ստեղծագործ աշխատանքը հայրենի հողի վրա:

Սիրաժանական, արծագանքելով 1908 թ. երիտրուքական Սահմանադրության նկատմամբ հույսներ տածող Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության մի խումբ գործիչների «Դեպի Երկիր» կոչին, հարյուրավոր ամերիկաբնակ հայեր, վաճառելով իրենց ունեցվածքը, վերադարձել են հայրենի բնակավայրեր: Այսպես 1908-1914 թթ. ծննդավայր էր Վերադարձել 4.500 հայ: Նրանց մեծ մասը որոշակի արհեստ չունեցողներ էին ու մեծահասակներ: Երիտասարդները հիմնականում չեն խրախուսել այդ հետդարձը: ¹¹³

Այդուհանդեռձ, քիչ չեն նաև նրանք, ովքեր, չվստահելով այս ամենին և օգտվելով ընձեռված հնարավորություններից, երբ վերացվել էին ճանապարհորդության արգելմանը ու նվազել անցագործի («թեսքերե» - թուրք.) բարձր վճարումները, շարունակում էին հեռանալ օտար ափեր այժմ արդեն ամբողջ ընտանիքներով ու գերդաստաններով: Եթե մինչև 1908 թ. թուրքիայից գաղթել են հիմնականում գյուղացիները և ոչ հմուտ աշխատավորները, ապա տվյալ դեպքում, տնտեսական դրդապատճառներից ելնելով, հեռացել են նաև հմուտ արհեստավորները, ուսանողներն ու արհեստավարժները: Մեկնում էին նաև երիտասարդ կանայք հիմնականում անուսնանալու նպատակով. քչերն էին գնում ընտանիքների հետ վերամիավորվելու, ոմանք էլ գնում էին, քանի որ այդ ժամանակ հայկական որոշ տարածքներում Ամերիկա գաղթելը «ստիլ» էր դարձել: ¹¹⁴ Այնպես որ, մեկ տարվա մեջ՝ 1908 թ. հունիս 30-ից - 1909 թ.

հունիս 30-ը, ԱՄՆ էր գաղթել շուրջ 3.108 հայ: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մեծ տարբերություն չուներ: ¹¹⁵

1909 թ. Աղանայում երիտթուրքերի կողմից իրականացված զարհուրելի ջարդերը վերջնականապես ի դերև են արել իրենց «դեմոկրատական» հոչակած իշխանությունների նկատմամբ հայության փայփայած վերջին հոյսերը մնելով նրանց դեպի անձանոթ հորիզոններ: Թեև ջարդերը տեղի էին ունեցել Կիլիկիայում, հայերը հեռանում էին կայսրության հայաբնակ գրեթե բոլոր շրջաններից, քանի որ այդ վայրերում ևս ցանկացած պահին նույնապիսի իրավիճակում հայտնվելու սարսափը չափազանց մեծ էր: Կիլիկիայության կոտորածին ու նրանց թշվար վիճակին ականատես վեր. Սաքալլումը կոտորածներից վերապրողներին բժշկական, նյութական և այլ օգնություն ցույց տվող կազմակերպությանն առաջարկում էր ամբողջ գումարները հատկացնել հրաշքով փրկվածներին ԱՄՆ, Կանադա կամ Բրազիլիա տեղափոխելու համար, քանի որ պարզ էր, որ «հաջորդ ջարդը ընդամենը ժամանակի հարց է»: ¹¹⁶

Աղանայի արյունալի դեպքերից հետո 1909 թ. ԱՄՆ գաղթած հայերի ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատությամբ գգալիորեն աճել էր՝ կազմելով 5.508 մարդ: ¹¹⁷ Այս թիվը ցածր էր գաղթական ազգերի (արևելակորոպական հրեաներ, հարավային իտալացիներ, լեհեր) և բարձր ոչ գաղթական ազգերի (Ֆրանսիացիներ, իսպանացիներ) թվաքանակի համեմատ: ¹¹⁸

Այսպիսով, մեկ տասնամյակի ընթացքում 1900-1910 թթ. արդեն ԱՄՆ էր գաղթել մոտավորապես 26.000 հայ, որը տարեկան միջին հաշվով հավասար էր 2.127 մարդու կամ ամբողջի ընդհանունը 4%-ը: ¹¹⁹ Ընդ որում, տղամարդիկ կազմում էին ընդհանուրի 76,5%-ը կամ 20.282 մարդ, իսկ կանայք՝ 23,5%-ը կամ 6.216 մարդ: Այս տվյալները համարժեք են 4/1 հարաբերությանը: ¹²⁰ Ընդհանուր առմամբ, գաղթական հայերի մեծ մասը երիտասարդ և միջին տարիքի էին. 87%-ը կամ 45.269 մարդ 14-45 տարեկան էր, 9%-ը՝ կամ 4.726 մարդ մինչև 14 և միայն 4%-ը կամ 1.955 մարդ 45 տարեկանից բարձր: ¹²¹ Միաժամանակ, հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ 1899-1910 թթ. ԱՄՆ մեկնած 26.498 հայերի 5,8%-ը կամ 1.533 մարդ նախկինում առիթ էր ունեցել լինել այդտեղ: ¹²²

Դեպի ԱՄՆ հայերի աճող հոսքը պայմանավորված էր նաև երիտթուրքական կառավարության կողմից քրիստոնյա հպատակներին գինվորական ծառայության մեջ ներգրավելու փաստի հետ, որից խուսափել նրանք կարող էին միայն վճարելով հրաժարման վարձ՝ 50 թուրքական ոսկի (այսինքն 220 դոլար): ¹²³

Արևմտահայության մեծ մասը խուսափում էր թուրքական քանակում ծառայելուց, ինչը հիմնականում ծեռնտու էր հայերի հանդեպ մշտապես անվստահություն տածող թուրք պաշտոնյաներին, որոնք չէին խոչընդոտում երկրից հայ երիտասարդության հեռանալուն: ¹²⁴

Օսմանյան թուրքիայում շարունակվող քաղաքական ու տնտեսական անստույգ վիճակը ստիպում էր հարյուրավոր խուսահատ հայերի հրաժարվել ամեն ինչից, կես գնով վաճառել իրենց ունեցվածքը՝ տները, հողերը, անասունները և հեռանալ: ¹²⁵ Դայերի գաղթը չի դադարել նույնիսկ գյուղատնտեսության համար ազատ թերքահավաք խոստացող 1913 թվականին, երբ գաղթած հայերի ընդհանուր թիվը, նախորդ

տարիների համեմատությամբ, ամենաբարձրն էր կազմելով 9.355 մարդ: Ընդ որում, միայն Խարբերդից մեկնել էր ավելի քան 1.300 հայ: ¹²⁶

Կարող հայության հսկայական չափերի համար արտահոսքը երկրից համագոր էր «սպիտակ ջարդի»: Այն տագնապեցրել է նույնիսկ թուրք իշխանավորներին, որոնք դա նմանեցրել են պետության մարմնի վրա եղած «արյունոտ վերջի»: ¹²⁷

Ամերիկյան Գաղթականական համախմբի տվյալներով, ընդհանուր առմամբ 1895 թվականից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը ԱՄՆ էր մեկնել շուրջ 60.000 հայ, ընդ որում, 1899-1914 թթ.՝ 51.950 (եթե 1901-1906 թթ.՝ ԱՄՆ էր ժամանել 10.283 հայ, ապա 1907-1914 թթ.՝ արդեն 40.011): ¹²⁸ Գաղթականների մոտավորապես 50%-ը ընտանիքներին թողել էր հայենի երկրում, 37 %-ը ամուրի էր և միայն 13 %-ն էր եկել ընտանիքներով: ¹²⁹

Անցյալ դարի 90-ական թվականներից մինչև 1914 թ. դեպի ԱՄՆ տեղ գտած հայ և եվրոպական գաղթականությունների վիճակագրական տվյալների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 1890-ական թվականների հայերի գաղթը Ամերիկա հանդիսացել է համաեվրոպական մակարդակի մեծագույն արտահոսքն այդ երկիր, իսկ միջազգային տնտեսական ու քաղաքական բոլոր իրադարձությունների ժամանակ գաղթականական այդ երկու հոսանքներն ընթացել են միմյանց համաշափ: ¹³⁰

Վիճակագրական տվյալների համաձայն, 1899-1914 թթ. հայ գաղթականների 75%-ն ինքն էր գնել իր տոմսերը Թուրքիայի նավահանգիստներում կամ արտագաղթի ծանապարհին, իսկ 25%-ը մեկնել էր ԱՄՆ-ից ուղարկված տոմսերով: Վերջիններիս թիվը դարասկզբին ամեն էր. այսպես, եթե 1900 թ. նախօրոք պատրաստված տոմսերով մեկնել էր հայերի 12%-ը, ապա 1913 թ. այդ թիվն աճել էր՝ կազմելով ԱՄՆ գաղթածների 1/3 մասը: ¹³¹

1899-1915 թթ. մեծացել էր նաև անօրեն ճանապարհով Ամերիկա մոլուք գործած հայերի թիվը: Ընդհանուր առմամբ, տվյալ ժամանակահատվածում դեպի ԱՄՆ մոլուքն արգելվել էր շուրջ 2.356 հայերի, որոնք կազմում էին ամբողջի 4%-ը: Ընդ որում, 929-ը մերժվել էին մուտքի պահին իրենց մոտ նվազագույնը 25 դոլար չունենալու համար՝ մեխանիկորեն որակվելով որպես «պառապերներ կամ հասարակության համար հեշտությամբ բեռ դարձողներ», 577-ը՝ տրախոնա և այլ իիվանդությունների համար, 257-ը՝ որպես «անցանկալի մարդիկ»: ¹³²

Օսմանյան պետությունում մինչև 1911 թ. հայերն ԱՄՆ էին մեկնում որոշակի շրջաններից. արևմտահայկական տարածքներից գաղթողները՝ Սև ծովի գլխավոր Սամսուն նավահանգստից, իսկ Կիլիկյան տարածքից գաղթողները՝ միջերկրածովյան Ալեքսանդրետ և Բեյրութ նավահանգստային քաղաքներից: Չետագա տարիներին համեմատաբար թույլ ստուգման ենթակա այս վերջին երկու կայաններով Ամերիկա են մեկնել թուրքական ոստիկաններից փախուստ տվող շատ հայեր: ¹³³

Գաղթական հայերը դեպի այս նավահանգիստներն էին դիմում թե՛ ոտքով և թե՛ քարավանային կառաջարերով, երբ 8-10 կառաջարերում կիա տեղավորվում էին 40-80 մարդ: Նրանց առաջնորդում էին ավագակների հարձակումներից պաշտպանելու կոչված թուրք կամ քուրդ ուղեկցողները, որոնք էլ շատ հաճախ ինչն կողոպտում

կամ անտերության էին մատնում անապավեն գաղթականներին:¹³⁴ Վերջիններս ապահովության նպատակով հաճախ դիմում էին հայազգի ուղեկցողների («խաչխչի» - թուրք.) օգնությամբ, որոնք յուրաքանչյուր գաղթականից 10 օսմանյան ոսկի վերցնելով, իրենց հայտնի գաղթնի ճանապարհներով, ուղեկցում էին նրանց դեպի նավահանգիստներ: Օրինակ Խարբերդում ամենից հայտնի խաչխչին Յաջի Զատուրդ էր, որը թուրքական ազդեցիկ շրջանների հետ իր ունեցած կապի ու անծնալիան հնարամտության շնորհիվ հայերին անվտանգ հասցնում էր Սամսուն և հանձնում ֆրանսիական «Փաքե» շոգենավին: Շուտով, Խաչխչիների գործողություններին վերջ տալու և պետական գանձարանը հարստացնելու նպատակով Խարբերդի կուսակալ Յասան փաշայի կարգադրությամբ գաղթել ցանկացողներին հնարավորություն է տրվել, նույնքան 10 ոսկի (մինչև 10 տարեկան երեխանների համար 2 ոսկի) վճարելով, ծեռք թերել անցագիր և ազատ երթևեկել: Արդյունքում, ժամանակակիցների վկայությամբ, հետզինետե ստվարացող արտահոսքն անյացնում էր հայկական գյուղերը. «Ամէն ամիս հինգ կամ տասը կառքէր ճանփորդներով ու պիտանի իրեղեններով լեցուած ճամբայ կ'ելլին դեպի Աւետեաց Երկիրը»:¹³⁵

Օսմանյան Թուրքիայում ազատ գաղթի նկատմամբ եղած սահմանափակումների ու դժվարությունների պատճառով եվրոպական քազմաթիվ հայտնի փոխադրական ընկերություններ երկար ժամանակ այդտեղ չէին ներթափանցում: Միայն Երիտրությունների կողմից անց կացված բարեփոխումների հետևանքով շոգենավային մեծագույն ընկերություններից Ալլանյան ընդհանուր ընկերությունը, Ավստրո-ամերիկյան ուղին և Բրիտանական Լոյդ ուղիները սկսեցին սպասարկել նաև հայ գաղթականներին: Արդյունքում նվազեց Կ.Պոլսից Նյու Յորք ճանապարհածախսը, որը եթե 1900 թ. կազմում էր 34 դոլար, ապա 1913 թ. արդեն 24 դոլար:¹³⁶

Փոխադրական այդ ընկերություններն օսմանյան Թուրքիայից ԱՄՆ գաղթող հայերին հասցնում էին որպես կայան ծառայող եվրոպական Սարսել, Անտերպատեն, Ռոտերդամ և Լիվերպուլ նավահանգստային քաղաքներ, որտեղ հայազգի սմսարները (թուրք. անտեղյակ ճամբորդների ուղեկցողներ, միջնորդներ) նրանց տեղափորում էին ժամանակավոր անհարմար կացարաններում: Օրինակ Սարսելում հայերն իջևանում էին ցածր առաստաղներ, փոքր լուսամուտներ ունեցող գետնահարկ գիշերատներում, որտեղ խոնավ ու նուրբ սենյակներում ապրում էին 20-30 մարդ: Յայերի շրջանում տեղի ամենից հայտնի իջևանատունը Րյու Բելսուն փողոցի վրա գտնվող Յոթել Դ'Արմենին էր:¹³⁷

Խորամանկ սմսարները խաբում, կողոպտում և շահագործում էին լեզվին ու իրենց իրավունքներին անտեղյակ և ստիպված նրանց ապավինող անպաշտպան հայ գաղթականներին: Օրինակ՝ ԱՄՆ տանող շոգենավի վրա նիշին կարգի սենյակների համար վճարած ճանփորդներին տեղավորում էին բացօթյա նավածածկի տակ՝ հավելյալ դրամ կորզելու նպատակով, և կամ միամիտ գաղթականներին բանկ, սակայն անվավեր տոմսեր էին վաճառում: Սմսարներն այնքան էին առաջ գնացել իրենց խարդախություններում, որ դրանց սաստելու նպատակով ամերիկյան ու եվրոպական պաշտոնյաններն ամենուրեք անտեղյակ գաղթականներին ծանոթացնում էին իջևանատների վարձի, շոգենավի տոմսերի գնի և այլնի մասին:¹³⁸

Սմսարները միջամտում էին նաև գաղթողների նկատմամբ բժշկական քննությունների անցկացմանը: Օրինակ գաղթականների ընդունման Նյու Յորքի նավահանգստում ԱՄՆ մտնելն արգելվում էր Կոնգրեսի կողմից «Վտանգավոր վարակի» հիվանդություն ճանաչված և արևմտահայերի 40%-ի մոտ տարածված աչքի կոպերի բորբոքում՝ տրախոնա (մանրախտ) ունեցող հիվանդներին: Գաղթողների միջոցով վարակի տարածումը կանխելու նպատակով ճամփորդական կայաններ հանդիսացող եվրոպական նավահանգստներում ստեղծվել էին բժշկական կենտրոններ, որտեղ քննում և անհրաժեշտության դեպքում կարծ ժամանակում բուժում էին հիվանդ արտագաղթողներին:¹³⁹ Սակայն այդ կայաններում «...որջացող հայ սմսարները ... իրենց ծիրաններու տակ ինկող ճամբորդները որպես կալանաւոր կը պահեին, զանոնք անխմղորեն կողոպտելու համար»:¹⁴⁰ Բժշկական քննությունը կատարվում էր սմսարի ներկայությամբ: Այնպես որ, կաշառված բժիշկը «ճամբորդի աչքերը քննելէ առաջ կը նայէր սմսարի աչքերուն, անոր աչքի մէկ նշանն ճամբորդի աչքերը կ'ըլլային պօնօ կամ նո պօնօ (լավ կամ վատ - Ք.Ա.)», հատկապես, «Եթէ ճամբորդը գեղանի հայ կին մըն էր, կամ ապսպրանքով նկարի մը հետ նշանուած անտէր աղջիկ մը, անոնց աչքերը անպատճառ նո պօնօ ըլլալու էին»:¹⁴¹ Չայտնի էին սմսարներ Մամաս Խաչոն, Միհրան Զաքար, Վրբանես Փափազյանը և ուրիշներ:¹⁴²

Դաճախ սմսարները տրախումայով հիվանդ հայերին ուղեկցում էին արագ և էժան գներով դարձանող բժիշկների մոտ: Իրականում, խարեւաների ծեռքում հայտնը ված գաղթականները ոչ միայն չէին բուժվում, այլև կորցնում էին բավական դրամ ու ժամանակ: Երբեմն միջնորդները դրամ կորգելու նպատակով բժշկական կեղծ եզրակացություններ էին վաճառում հիվանդներին, որոնցով, իհարկե, հնարավոր չէր լինում մտնել ԱՄՆ, և կամ Կանադայի Սբ. Զօնն ու Սեբսիկայի Վերա Քրուզ քաղաքները տանող թանկ տոնմսեր, որտեղ այդ հիվանդության քննություններ չէին անցկացվում, հետևաբար հիշյալ վայրերից ավելի հեշտ ու հնարավոր էր Ամերիկա մուտք գործելը:¹⁴³

Ընդհանուր առամբ, օտարազգի այլ գաղթականների նման հայերը և Ամերիկա էին մուտք գործում Նյու Յորքի նավահանգստային Քենտրոլ Գարդը կայանից, որը 1892 թվականից փոխարինվել էր Էլիս Այլենդի վրա կառուցված հնօրյա ռազմանավի տեսք ունեցող մի անշուր շինությամբ:¹⁴⁴ Տասնամյակներ շարունակ թշվառության մեջ հեծող բազմահազար հայ գաղթականների երևակայության մեջ այդ կայանը նույնացվել է դեպի «Ավետյաց երկիր» տանող դարպասի հետ, որտեղով, սակայն, ոչ բոլորին էր բախստ վիճակվում անցնել: Այդտեղ նրանք գրանցվում էին, ենթարկվում բժշկական քննության ու մանրակրկիտ հարցաքննության: «Ամերիկա կոչուած «դրախտ» նախադուռը» համարվող այդ փոքրիկ կղզում, ուր գաղթականները գալիս էին «ձեռքերմին կանանց թուղթ մը, և կուրծքներնուն վիայ նօմերօ մը ասեղնագործուած», երկու քննություններից էին անցնում բժշկական, որը հիմնականում վերաբերվում էր աչքի տրախոնա հիվանդությանը, և դրամի, ըստ որի, ամերիկյան կառավարության պահանջի համաձայն, գաղթականն իր մոտ պետք է ունենար առնվազն 25 դոլար կամ էլ ամերիկաբնակ մերձավոր ազգականի երաշխավորությունը:¹⁴⁵ Այդ ամենի դրական ավարտից հետո է միայն, որ իրավունք էին ստանում մուտք գործել երկիր, հակառակ դեպքում պարզաբնումների համար գաղթականներն օրերով պահ-

վում էին կեղտոտ ու խոնավ սրահներում կամ էլ ընտանիքներից անջատվելով, հետ ուղարկվում: Ահա թե ինչու ներգաղթողները կղզին հաճախ անվանում էին «Արցունքի կղզի»:¹⁴⁶

1911-1912 թթ. իտալաքուրքական և 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների և հատկապես դրանց հաջորդող Առաջին աշխարհամարտի (1914-1918 թթ.) տարիներին օսմանյան կայսրությունում վերականգնվել էր երիտրուրքական սահմանադրությամբ Վերացված գաղթելու նկատմամբ արգելվություն ունեցող ազգականների օգնությամբ մեկնողների թիվը:¹⁴⁷ Առաջին աշխարհամարտի տարիներին Աներիկայում հայտնված փոքրաթիվ հայերը երիտրուրքերի կողմից 1915 թ. իրականացված Մեծ Եղեռնի բոհուրուհով անցած փախստականներ էին:

Եթե 1914 թ. ԱՄՆ էր գաղթել 7.785 հայ, ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ կերպով նվազել էր կազմելով 1915 թ. 932, 1916 թ. 964, 1917 թ. 1.221, 1918 թ. 221, 1919 թ. 282, այսինքն ընդամենը 3.620 հայ:¹⁴⁸

Պատերազմի տարիներին դեպի Միացյալ Նահանգներ սկսված և մեծ չափերի հասած գաղթականությունը կարգավորելու նպատակով 1917 թ. Կոնգրեսը վավերացրել էր «Որակավորման արգելք» կոչվող օրենքը, ըստ որի ԱՄՆ չէին կարող մտնել անգերեն կամ մայրենի ու այլ լեզուներ չինացող 16 տարեկանից բարձր անդրագետ այն գաղթականները, ովքեր չէին կարողանում իրենց հարազատ լեզվով կարդալ 30-40 բառ, բացառություն էին կազմում խնամքի տակ գտնվող մեծահասակները: Այս բոլոր արգելվողները սակայն, չէին վերաբերում քաղաքական ու կրոնական հալածանքներից ճողովրած գաղթականներին:¹⁴⁹

Ընդհանուր առնամբ, 1894-1917 թթ. ԱՄՆ էր գաղթել 73.980 հայ, որից, համելով այս ընթացքում հեռացած շուրջ 6.000 և մահացած շուրջ 5.000 հայերի և ավելացնելով շուրջ 15.000 այդտեղ ծնվածներին, կստացվի, որ արդեն 1917 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ:¹⁵⁰ Ընդ որում, վիճակագրական տվյալների համաձայն, գաղթական հայերի մեծ մասը շուրջ 79,8%-ը ժամանել էր սեփական միջոցներով, 19,6%-ը՝ ամերիկահայ բարեկամների օգնությամբ, 5%-ը՝ տարբեր միջոցներով:¹⁵¹ Միաժամանակ, ԱՄՆ ուժը դնելու պահին հայերն իրենց հետ ունեին միջին հաշվով մոտավորապես 37 դոլար, ինչը բարձր ցուցանիշ էր այլ ազգերի համեմատությամբ:¹⁵²

1899-1917 թթ. ընկած ժամանակահատվածում ԱՄՆ մուտք գործելու մերժում են ստացել միայն 2.477 հայեր, որոնց մեծ մասը աչքի տրախումա հիվանդության պատճառով:¹⁵³ Այլ ազգերի համենատությամբ հայերի շրջանում փոքր թիվ են կազմել նաև ԱՄՆ-ից հեռացածները. այսպես՝ 1908-1917 թթ. ժամանակ 40.484 հայերից այլ երկրներ են հեռացել շուրջ 5.852-ը այսինքն՝ յուրաքանչյուր 100 հայից՝ միայն 14-ը:¹⁵⁴

Պատերազմի ավարտից և Մուտքովի գինադադարից հետո (1918 թ.) օսմանյան Թուրքիայում սկսված քեմալական ազգայնական շարժման վերելքը (1919-1921 թթ.), որն ուղեկցվում էր Թուրքիան քրիստոնյա ազգերից, այդ բվում նաև հայերից մաքրագործելու նպատակով կազմակերպված շարունակական ջարդերով, ինչպես նաև Դայաստանի Առաջին Յանրապետության անկումը Անդրկովկասում (1918-1920 թթ.), նոր բարի են հաղորդել դեպի ԱՄՆ իրականացվող հայ գաղթականությանը՝ 1920 թ.

կազմելով 2.762, իսկ 1921 թ. արդեն 10.212 մարդ: Վերջինս ամենից բարձր ցուցանիշն էր նախորդ բոլոր տարիների համեմատությամբ:¹⁶⁵

Եթե մինչև 1919 թ. ԱՄՆ գաղթած հայերի գգալի նասը շուրջ 76% ը, տղամարդիկ էին և միայն 24%-ը կանայք, ապա 1921 թվականից ընդհակառակը աճել էր կանաց թիվը, որոնք մեծ մասամբ պարբերական ջարդերի հետևանքով այրիացածներ էին, և նվազել տղամարդկանցը: Գաղրողները հիմնականում 16-45 տարեկան էին և մեկնել էին ընտանիքների հետ վերամիավորվելու նպատակով:¹⁶⁶ 45 տարեկանից բարձր տարիք ունեցող գաղթականների թիվը համեմատարար փոքր տոկոս է կազմել, ինչը գաղթելու հետ կապված դժվարությունների հետևանք էր:¹⁶⁷ Կանայք կազմել են 52%, տղամարդիկ 27%, երեխաները 21%: Նրանց թվում էին նաև հայկական և ամերիկան բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև արևմտյան քարոզիչների կողմից բուրքական հարեմներից, ոչ քրիստոնյա ընտանիքներից, ճամբարներից ու որբանոցներից հավաքագրված հայերը:¹⁶⁸ 1917-1924 թթ. ԱՄՆ էին գաղթել պարբերական ջարդերի հետևանքով այրիացած 1.507 հայեր:¹⁶⁹

Արդեն 1920 թ. ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 100.000 հայ:¹⁷⁰

Առաջին աշխարհամարտի հետևանքով միջազգային ասպարեզում առաջացած քաղաքական որակապես նոր հարաբերությունները պատճառ էին դարձել ԱՄՆ-ի իշխանությունների կողմից երկրի գաղթականական օրենքների պարբերաբար վերանայման, ինչը խիստ սահմանափակել էր նաև հայերի գաղթն ԱՄՆ: Այսպես 1921 թ. հունիսին Կոնգրեսն ընդունել է Առաջին Բվուտայի Օրենքը, որով ԱՄՆ գաղթողների նվատմամբ մտցվել են թվական առաջին սահմանափակումները յուրաքանչյուր ազգի համար բույլատրելով ընդանընը 3% բաժին այն քանակից, որ նրանք ունեին համաձայն 1910 թ. ամերիկան մարդահամարի տվյալների: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ կարող էր գաղթել շուրջ 350.000 մարդ (բացառություն են կազմել ազատ երկրների բնակչությունը),¹⁷¹ որից միայն 2.757-ը՝ հայ:¹⁷² Միաժամանակ, որպես մարդասիրական նպատակներով կատարված բացառություն, Մերձավոր Արևելքում դեգերող գաղթական հայերի համար Միացյալ Նահանգների իշխանությունների կողմից լրացուցիչ կերպով հատկացվել էր որոշակի հավելյալ բաժին:¹⁷³

Բվուտայի Օրենքը պատճառ էր դարձել բազմաթիվ հայ գաղթականների հոգեկան տառապանքների, ընտանիքների բաժանման և այլ անախորժությունների: Օրինակ 1921 թ. Էլիս Այլենորի աներիկյան գաղթականական գրասենյակում 300 հայերի արգելվել է մտնել ԱՄՆ, քանի որ բուրքական անձնագիր ունեցող այս հայերի համար իրենց երկրի բաժինն արդեն ավարտվել էր: Հատերը հուսահատությունից նույնիսկ ինքնասպան էին լինում: Արգելքի ունեցած ողբերգական հետևանքների մասին Դայ գաղթականության բարօրության ընկերության գլխավոր քարտուղար Զորջ Ռ. Թուփարյանն ահազանգել է ԱՄՆ-ի պրեզիդենտ Ու. Շարդինգին, որի միջամտությամբ բացառության կարգով հայերի այդ խմբին բույլատրվել է մուտք գործել ԱՄՆ:¹⁷⁴

Դայ գաղթականների նկատմամբ բացառություն է կիրառվել նաև 1923 թ. Միսսիսիպի նահանգից սենատոր Ջոն Շարֆ Ռիչարդսոնի կողմից առաջարկված օրինագծով, ըստ որի ապօրինի մուտք գործած և ճերբարակված մի խումբ հայերի, ինչպես

նաև հայագի 75.000 չափահասների և 25.000 մանուկների արտոնվել է մուտք գործել ԱՄՆ Երկրի գյուղատնտեսական աշխատանքներին ներգրավվելու պատճառաբանությամբ: Այսուհենդեռ, ոչ միշտ էր, որ հավելյալ հայ գաղթականներ ընդունելու մասին օրինագիրը հավանության էին արժանանում ամերիկյան իշխանավորների կողմից:⁶⁵

Ծուտով, 1924 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը վավերացրել է գաղթականների թվական ամընդհատ (permanent) սահմանափակումների նոր օրենք Ազգային Ծագումների թվոտայի օրենքը: Դանածայն դրա, տարեկան ԱՄՆ կարող էր գաղթել ընդամենը 150.000 մարդ (կրկին բացառություն էին կազմում արևմուտքի ազատ Երկրներից գաղրողները), այսինքն յուրաքանչյուր ազգի համար 2% բաժին այն քանակից, որ նրանք ունեին համածայն 1920 թ. ամերիկյան մարդահամարի տվյալների:⁶⁶ Սա կազմում էր յուրաքանչյուր Երկրից ընդամենը 100 մարդ, որոնք միևնույն ժամանակ պետք է ԱՄՆ-ում ունենային նյութապես իրենց հովանավորողներ և տվյալ Երկրների ամերիկյան հյուպատոսարաններից գաղթելու թույլատրություն:⁶⁷ Այս նոր, ավելի խիստ սահմանափակումները նպատակ ունեին «արգելել ամերիկյան հասարակության քրնիկական կազմում հետագա հիմնավոր փոփոխությունները, որոնք կարող էին առաջանալ գաղթականների նոր հեղումի հետևանքով»:⁶⁸ Ըստ այս օրենքի, Դայաստանից տարեկան ԱՄՆ կարող էր գաղթել 124 հայ: Դայերը մեկնում էին նաև իրենց բնակված Երկրների բաժիններով:⁶⁹

Այնպես որ, տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի մուտքի թույլատրություն ստացած գաղթականների թիվը համապատասխանել է վերոհիշյալ սահմանափակումներին կազմելով 1922 թ. 2.349, 1923 թ. 2.396, իսկ 1924 թ. 2.940 հայ:⁷⁰

Վրդյունքում, գաղթելու պատրաստ հարյուրավոր հայեր ստիպված էին իրենց հպատակագրված Երկրների բաժինների (quota) ներքո տարիներով սպասել պատեհության: Վերացվեց հայ որբերին ու փախստականներին բացառության կարգով մուտքի արտոնություն շնորհելու որոշումը. այսուհետև նրանք գաղթելու էին Ազգերի Լիգային պատկանող նանսենյան անձնագրերով:⁷¹ ԱՄՆ-ում հայ գաղթականների հետզհետեւ նվազող թվի մասին է վկայում ամերիկացի մի գիտնականի հաշվարկը հայության համար հիմնական կենտրոնատեղի հանդիսացող առանձին վերցրած Մասսաչուսեթսի նահանգի համար, ըստ որի, եթե միայն 1913 թ. այդտեղ հաստատվել էր 2.367 հայ, ապա արդեն 1923 թ. նրանց թիվը կազմել է ընդամենը 192,⁷² իսկ 1932 թ. 45:⁷³

1924 թվականից հայ գաղթականությունը կտրուկ կերպով նվազել է: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի Գաղթականության հանձնախմբի տարեկան հաղորդումների համածայն, Եվրոպական և ասիական Թուրքիայից 1914-1924 թթ. ԱՄՆ է գաղթել 32.064 հայ,⁷⁴ մինչդեռ 1899-1924 թթ. շուրջ 76.229 հայ, որից հեռացել էր շուրջ 11.211-ը, ինչը կազմում էր ընդհանությի 14,7%-ը:⁷⁵ Դիշյալ վերջին ժամանակահատվածում, 35 տարբեր Երկրներից ԱՄՆ էր գաղթել շուրջ 12.200 հայ: Գաղթականության այս էտապում հայերի 90%-ը ժամանել էր ամերիկահայ իր հարազատների օգնությամբ կամ պարտքով, շատ քերին էր հաջողո՞ել սեփական միջոցներով վճարել ճանապարհածախսը:⁷⁶ (Տե՛ս Այցուսակներ I^{76a}, II^{76b}):

ԱՊՅՈՒՍՎԿ I

ՏԱՐԲԵՐ ԱՇԽԱՐՉԱՎԱՍԵՐԻՑ ԱՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԱՅԵՐԻ ԹԻՎԸ		
Աշխարհամասի անվանումը	1899-1910 թթ.	1911-1917 թթ.
Եվրոպա	2.865	4.922
Ասիա	22.658	21.203
Ասիական Թուրքիա	22.561	21.107
Աֆրիկա	975	2.434
Ընդամենը	26.498	28.569

ԱՊՅՈՒՍՎԿ II

ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԱՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԱՅԵՐԻ ԹԻՎԸ			
Երկրի անվանումը	1899-1910 թթ.	1899-1917 թթ.	1899-1923 թթ.
Ասիական Թուրքիա		43.668	52.048
Ավստրալիա		4	5
Ավստրո-Հունգարիա	12	43	49
Արևմտյան Հնդկաստան		18	
Բելգիա	10	12	15
Բոլոնիա			30
Բուլղարիա	95	158	202
Գերմանիա	20	41	48
Եգիպտոս		894	1.273
Եվրոպական Թուրքիա	1.267	2.806	8.988
Իսպանիա	5	5	6
Իտալիա	24	40	79
Խաղաղականի կղզիներ			1
Կանադա		1.577	1.959

Կենտրոնական Ամերիկա			2
Կուբա-Պուեռտո-Ռիկո			23
Հարավային Ամերիկա	822		843
Հարավսլավիա			28
Հնդկաստան	88		109
Հոլանդիա			2
Հունաստան	109	275	1.309
ճապոնիա			14
Մեծ Բրիտանիա	411	914	1.056
Մեքսիկա		8	13
Նիդեռլանդներ		2	
Նորվեգիա		3	13
Շվեյցարիա	1	1	4
Շվեցարիա	10	19	57
Չեխոսլովակիա			3
Չինաստան		10	38
Պորտուգալիա	1	4	4
Ռումինիա	69	95	115
Ռուսաստան	663	3.034	3.317
Ֆինլանդիա			1
Ֆրանսիա	160	377	866
Եվրոպական այլ երկրներ	2		
Այլ երկրներ		139	653
Ընդամենը	2.859	55.057	73.173

Առաջին աշխարհամարտի տարիներին և հետագայում թուրքական բռնություններից ճողովրած հայերի գերակշիր մասը Ամերիկա էր եկել հարազատների ու բարեկամների հետ վերամիավորվելու համար: Այսպես, եթե այդ նպատակով 1915-1919 թթ. ԱՄ էր մեկնել ամբողջ 3.620 գաղթական հայերի 90%-ը, այսինքն՝ շուրջ 3.203 մարդ, իսկ ընդհանուր թվի 2/3-ն իրաք էր վճարել ճանապարհածախսը,¹⁷⁷ ապա արդեն 1920-

1924 թթ. նրանց թիվը կազմել է ԱՄՆ մեկնած 20.659 գաղթական և 1.163 ոչ գաղթական հայերի ընդհանուր թվի 97%-ը:¹⁸

Հայերի շրջանում չնչին էր գաղթականական գրասենյակի մերժման հետևանքով երկրից վտարված անձանց թիվը, որոնք իհմնականում աչքի տրախոնմա իիվանդություն ունեցողներն էին: Օրինակ 1915-1919 թթ. մերժվել էր 199 հայերի մուտքն Ամերիկա, որոնցից միայն 26-ն էին արտաքսվել.¹⁹ Իսկ 1920-1924 թթ. երկրի գաղթականական օրենքներով նախատեսված բաժինների լրացման պատճառով մուտքի արգելք ունեցող հայերից մերժվել էր 536 մարդու, որոնցից, սակայն, վտարվել էին միայն 63-ը:²⁰ Հայերը չնչին տոկոս են կազմել նաև ամբողջ ԱՄՆ-ից վտարված գաղթականների ընդհանուր թվում: Օրինակ երկրից վտարված 4.366 օտարերկրացիներից միայն 19-ն էին հայեր, այսինքն ընդհանուրի 0,4%-ը:²¹

Տարբեր էր նաև հայ գաղթականների սոցիալական կազմը: XIX դ. 90-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը ԱՄՆ մեկնած հայերի գերակշռող մասը գրագետ էր: Այսպես 1899-1914 թթ. Նոր Երկրի գաղթած ամբողջ 51.950 հայերի մոտավորապես 3/4-ը կամ 76%-ը (35.391 մարդ) մայրենի լեզվով կարդալ ու գրել իմացող 14 տարեկան և բարձր տարիքի էին, գրել ու կարդալ չիմացողները կազմել են 24%:²² 1919 թ. ամերիկաբնակ հայերի 90%-ը կարող էր կարդալ ու գրել մայրենի լեզվով, իսկ 60%-ը անգլերենով:²³ Ամերիկյան Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, հայերն իրենց գրագիտության մակարդակով առաջին շարքերում էին ԱՄՆ մուտք գործած ազգային այլ խմբերի համեմատությամբ:²⁴ Այդ մասին է վկայում նաև հետևյալ վիճակագրությունը. 1921 թ., եթե դեպի ԱՄՆ հայության գաղթը հասել էր իր գագաթնակետին, կազմելով 10.212 մարդ, մինչև 16 տարեկան 7.755 չափահաս հայերից գրագետ էր ընդամենը 304-ը, որոնք անցել էին գրագիտության հարցախույզից (test) և գալիս էին ազգականներին միանալու և այլ հանգանակներից դրդված: ²⁵ (Տես Աղյուսակ III՝²⁶)

ԱՂՅՈՒՍԱԿ III

1899-1914 թթ. ԱՄՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ (%-ով)	
Ֆինն	99
հունգարացի	88
հայ	76
հրեա (արևելաեվրոպական)	74
լեհ	65
բուլղարացի, սերբ, մոնտենեգր	58
իտալացի (հարավային)	46

Տվյալ ժամանակահատվածում մեկնած հայերի մեծ մասը միջին խավի ներկայացուցիչներ էին հմուտ և արհեստավարժ աշխատավորներ (կոշկակարներ, դերձակներ, հյուսներ, ջուլհակներ և այլն), ինչպես նաև ազատ գործավորներ, որոնք, կապված չլինելով հողին, զերծ էին նաև սնանակացնող հարկերից ու տուրքերից և փոքրիշատե ի վիճակի էին վճարել իրենց ճանապարհածախսը: Որոշ ուսումնասիրությունների համաձայն, մինչև 1908 թ. «գաղթելու ի վիճակի էին միայն համեմատաբար բարեկեցիկները, քանի որ բավական դժվար էր առանց մեծ կաշառը վճարելու ուստիկանական պաշտոնյաներից ձեռք բերել «թեսքերե» (թուրք. անցագիր), ինչն անկասկած վեր է աղքատ դասակարգի միջոցներից»:¹⁸⁶ Իսկ երբ, 1908թ. օսմանյան թուրքիայում տեղ գտած դեմոկրատական փոփոխությունները հնարավորություններ էին ընծեռում ազատ և ցածր գներով տեղափոխվել. մեծացել էր նաև գյուղացիության արտագաղթը:¹⁸⁷

Այսպիսով, ԱՄՆ-ի Գաղթականական հանճնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1890-1917 թթ. հայ գաղթականների սոցիալական կազմը հետևյալ տեսքն ուներ. որակյալ արհեստավորներ՝ 39,3%, մտավորականներ՝ 2,3%, հողի մրշակներ՝ 23,5%, բանվորներ՝ 17,8%, խառը զբաղմունք ունեցողներ՝ 17,1%:¹⁸⁸ 1920-ական թվականների սկզբին պատկերն այսպիսին էր. արհեստավորներ ու բանվորներ՝ 56,6%, հողագործներ ու գյուղատնտեսական աշխատավորներ՝ 23,5%, առևտրականներ՝ 8,10%, մտավորականներ՝ 2,3%, առանց զբաղմունքի մարդիկ՝ 9,5%:¹⁸⁹ Սիածամանակ, եթե 1920 թ. ԱՄՆ մուտք գործած հայազգի տղամարդկանց շրջանում արհեստավոր էին 383-ը, իսկ արհեստավարժ՝ 93-ը, ապա 1924 թ.՝ համապատասխանաբար՝ 434-ը և 197-ը: Տվյալ ցուցանիշները բարձրերից մեկն էին Եվրոպական տարբեր երկրներից գաղթածների համեմատությամբ:¹⁹⁰

Ամփոփելով, նշենք, որ ըստ Ն.Մանկունու «Ամերիկահայ մարդահամարի» տվյալների, սկսած գաղութային ժամանակաշրջանից՝ 1618-1924 թթ., Ամերիկա էր մուտք գործել շուրջ 141.229 հայ:¹⁹¹ (Տե՛ս Աղյուսակ IV^{191ա}):

ԱՊՅՈՒՍԱԿ IV

1618-1924 թթ. ԱՄՆ-ի ՀԱՅԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ	
1618-1899 թթ.	25.000
1899-1924 թթ.	76.229
1618-1924 թթ. (ԱՄՆ-ում ծնված հայեր)	40.000
Ընդհանուր	141.229

Համելով մինչև 1924 թ. ԱՄՆ-ից հեռացած շուրջ 9.000 և մահացած ավելի քան 7.000 հայերի, արդյունքում ստացվում է. որ 1924 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 125.229

հայ:¹⁹² Ընդ որում, սկսած հայերի շրջանում ամերիկացի բողոքական քարոզիչների գործունեության պահից, ընդհանուր առմամբ, 90 տարիների ընթացքում (1834-1924 թթ.) ԱՄՆ էր մեկնել շուրջ 90.229 հայ:

1834-1890 թթ.	1.500
1891-1898 թթ.	12.500
1899-1914 թթ.	51.950
<u>1915-1924 թթ.</u>	<u>24.279</u>
Ընդամենը	90.229 ¹⁹³

(Տե՛ս Աղյուսակներ V^{193ա}, VI^{193բ}, VII):

Այսպիսով, սկզբնական շրջանում անհատական հոսքի տեսք ունեցող կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտ հայերի դեպի ԱՄՆ ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժը, ի հետևանս օսմանյան թուրքիայում հայերի նկատմանը կազմակերպված պարբերական ջարդերի եւ Մեծ Եղեռնի (1894-1896 թթ., 1909 թ., 1915 թ., 1920-1922 թթ.), աստիճանաբար վեր է ածվել զանգվածային գաղրի, ընդգրկելով տնտեսական, քաղաքական ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից գրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի: Իսկ Առաջին աշխարհամարտի հետևանքով օսմանյան թուրքիայում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տերությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստը ի չիք են դարձել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենից վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած, բազմահազար հայերի երազանքը՝ նրանց վերջնականապես ամրացմելով որդեգրած Նոր Երկրին:

ԱՂՅՈՒՍԱԿ V

ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԱՄՆ (1834-1898 թթ.)			
Տարեթիվ	ԵՎՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ	ԱՄՀԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
1834	1		
1835			
1836	3		
1837			
1838			
1839	1		
1840	1		
1841	6		

1842	2		
1843	5		
1844	10		
1845	3		
1846	4		
1847	2		
1848	3		
1849	9		
1850	15		
1851	2		
1852	3		
1853	15		
1854	7		
1855	9		
1856	5		
1857	11		
1858	17		
1859	10		
1860	4		
1861	5		
1862	11		
1863	16		
1864	11		
1865	14		
1866	18		
1867	26		
1868	4		
1869	18	2	
1870	6		
1871	23	4	


1872	20		
1873	53	3	
1874	62	6	2
1875	27	1	1
1876	38	8	3
1877	32	3	1
1878	29	7	1
1879	29	31	
1880	24	4	1
1881	72	5	15
1882	69		11
1883	86		19
1884	150		15
1885	138		39
1886	176	15	19
1887	206	208	121
1888	207	273	39
1889	252	593	96
1890	206	1.126	598
1891	265	2.488	812
1892	1.331		1.069
1893	625		552
1894	298		243
1895	2.767		233
1896	4 139		
1897	4.732		
1898	4 275		
Ընդամենը	25 385		3.890
Ընդհանուր		29.275	

ԱՊՅՈՒՄԸՄՆ VI

Տարեթիվ	ՍԵՐ		ԸՆԴՀԱՆՈՒՐ
	արական	իգական	
1899	471	203	674
1900	748	234	982
1901	1.364	491	1.855
1902	946	205	1.151
1903	1.424	335	1.759
1904	1.315	430	1.745
1905	1.339	539	1.878
1906	1.423	472	1.895
1907	1.874	770	2.644
1908	2.097	1.202	3.299
1909	2.595	513	3.108
1910	4.686	822	5.508
1911	2.643	449	3.092
1912	4.476	746	5.222
1913	7.893	1.460	9.353
1914	6.533	1.252	7.785
1915	685	247	932
1916	775	189	964
1917	1.017	204	1.221
1918	147	74	221
1919	196	86	282
1920	1.466	1.296	2.762
1921	4.986	5.226	10.212
1922	1.009	1.340	2.349
1923	1.018	1.378	2.396
1924	1.226	1.714	2.940
ԸՆԴՀԱՆՈՒՐ	54.352	21.877	76.229

ԱՐԵՈՒՏԱԿՎ ՎԻ

ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՄՆ
(1899-1924 թթ.)



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼ - ՏԱՏԵՍԱԿԱՆ ՎԻճԱԿԸ ԱՄՆ-ՊԱՅ

ա. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Տասնամյակների ընթացքում հայերը մեկնելով Միացյալ Նահանգներ, տարածվել են ողջ Երկրով մեկ և բնակություն հաստատել Երկրի գրեթե բոլոր նահանգներում: Օբյեկտիվ (լեզվի չիմացություն, նոր բարքերին հարմարվելու դժվարություններ, աշխատանքային բարենպաստ պայմանների առկայություն), ինչպես նաև սուբյեկտիվ (ազգային նկարագիրը պահպանելու և ուժացումից գերծ մնալու ձգտում) հանգամանքներից ելնելով հայ գաղթականների գերակշիռ մեծամասնությունը հակված էր հաստատվել ազգային համախմբումներ ունեցող նահանգներում ու քաղաքներում:

Ելիս Այլենդի Գաղթականական գրասենյակում (Նյու Յորք) կատարված գրանցումները տեղեկություններ են հաղորդում այն մասին, թե ափ իջած նորեկ հայերն ԱՄՆ-ի առավելապես որ նահանգներում են մտադրություն հայտնել բնակվելու: Այդ տվյալները, թեև ոչ ստույգ, սակայն մոտավոր պատկերացում են տալիս յուրաքանչյուր նահանգի հայ բնակչության թվաքանակի մասին, քանի որ հայերի շրջանում մշտապես նկատվել է միգրացիա, հատկապես Երկրի արևելյան շրջաններից դեպի արևմտյան շրջաններ՝ մասնավորապես Կալիֆոռնիայի նահանգ:

Եթե սկզբնական շրջանում՝ շուրջ չորս տասնամյակ (1834-1874 թթ.), առավելաբար ուսանելու նպատակով ԱՄՆ ժամանած հայերը կենտրոնացել էին գերազանցապես Նյու Յորքում և շրջակայրում, ապա հետագայում (հատկապես 1880-ական թվականներից), գաղթականության աճին գուգընթաց, ինչպես նաև աշխատանքային հանգամանքների բերումով նրանք աստիճանաբար տարածվել են Երկրի հյուսիս-արևելյան, ապա՝ հյուսիսային ու արևելյան, միջին ու միջին-արևևանտյան տարածքներում՝ իիմնական նախապատկությունը տալով քաղաքային կյանքին: Ընդ որում, նրանց տեղաբաշխումն ու բնակեցումն ԱՄՆ-ում տեղի էր ունենում որոշակի օրինաչափությամբ: Սկզբնապես Ամերիկա մեկնող ամուրի Երիտասարդները կամ իրենց ընտանիքները հայրենիքում թողած տղանարդիկ հաստատվել էին Երկրի հյուսիսային և արևելյան ափերին գտնվող արդյունաբերական քաղաքներում (Ուորքեսթեր, Նյու Յորք, Բոստոն, Ջերսի Սիթի, Ուեսք Նորքթեն, Ֆիլադելֆիա, Ջարրֆորդ, Նյու Բրիթոն, Լոուլենս, Լինն, Ուոթերթաուն, Լոուլել, Ուունսութեր, Փոթաքթեր, Սենթրուլ Ֆոլզ, Սիլվերի, Սենթոն, Ուաշինգտոն, Թրոյ, Սիրակուր, Նիագարա Ֆոլզ, Ոիչմոնդ, Բրոքթոն, Քեմբրիջ,

Աթլորո և այլն): Կստիճանաբար, պատմական հանգամանքների բերումով բնականիքների վերամիավորման նպատակով կանանց ու երեխանների ժամանումով և աշխատատեղերի նվազումով, նրանք շարժվել են դեպի միջին արևմուտք և արևմուտք (Դետրոյտ, Չայլընդփարք, Յեմերենմիջ, Մելվինություն, Դիրբորն, Ռոյալ Օք, Ուուդ Ֆլորդսըն, Դելորյ, Պոնտիաք, Ռեյսին, Սաութ Միլուուքի, Էվանսվորն, Չիկագո, Իսթ Ստեմփ Լուիս, Ուուդեգրեն, Ուեսթ Փուլման, Գրենիթ Սթրի, Մելիտուն, Ռեյսին, Գրենիթ Ռեյփիդս, Քլիվլենդ, Սոլք Լեյք Սթրի, Փորթլենդ, Սիրակուուզ, Թարոնա, Ֆրեզզին, Ռիվլի, Դիմուբա, Եղեմ, Թուլարի, Սելմա, Քինգզբրուուզ, Փարլիեր, Վարդքեն, Լու Անգելես, Սան Ֆրանցիսկո, Թերլի, Քըռթլըր, Սեվիլ, Դել Ռեյ, Սենկըր, Սենթրըվիլ, Վայսելիա, Թօրլաք, Փասադենա, Վան Նյուուզ, Իմփերիալ Վելի, Բեյքրուֆիլդ, Լոնգբրիչ, Թորրենս, Թերլի, Ռիվր-սայդ, Գլենդեյլ, Բրոքենք, Սան Դիեգո, Դելանո, Վենիս, Սան Փեդրո, Օշրն Փարք, Սան Ֆերնանդո, Սան Գարրիել, Սան Բերնարդինո, Լակտերչայմ, Ալիամբր և այլն), որտեղ աշխատանքային նոր առավել բարենպաստ պայմաններ էին առկա:

Ամերիկան Գաղթականական հանձնախնդիր վիճակագրական տվյալների համաձայն, 1899-1910 թթ. և 1911-1917 թթ. ժամանակահատվածում ԱՄՆ մուտք գործած և երկրի 42 նահանգներից առավելագեն 10-ում տարածված հայերի թիվ քանակական ու տոկոսային պատկերը ներկայացվում է կից:¹ (Տես Աղյուսակ VIII և):

ԱՂՅՈՒՍԱԿ VIII

Նահանգ	1899-1910 թթ.		1899-1914 թթ.		1911-1917 թթ.	
	Թվաքանակ	%	Թվաքանակ	%	Թվաքանակ	%
Նյու Յորք	8.492	32	15.943	31	8.899	31,2
Սասաչուսեթս	8.423	31,7	14.674	28	5.769	20,2
Ռոդ Այլենդ	2.668	10	4.740	9	2.255	7,9
Իլինոյ	1.208	4,6	3.220	6	2.105	7,4
Նյու Ջերսի	1.118	4,2	1.990	4	997	3,4
Փենսիլվանիա	982	3,7	1.851	4	1.020	3,6
Կոնեկտիկուտ	785	3	1.467	3	795	2,8
Կալիֆոռնիա	780	2,9	2.443	5	1.784	6,3
Միչիգան	361	1,4	1.213	2	1.010	3,5
Ուիսկոնսին	179	0,8			1.005	3,5
Այլ նահանգներ	1.502	5,7	4.409	8	2.920	10,2
Ընդամենը	26.498	100	51.950	100	28.559	100

Իսկ արդեն 1923 թ. ամերիկահայերի 90%-ը տեղաբաշխված էր հիշյալ 10 նահանգներում և յու Յորքում, Սասաչուսեթսում, Ռու Այլենդում, Էլլինոյում, Կալիֆոռնիայում, Միջիգանում, Փենսիլվանիայում, և յու Ջերսիում, Կոնեկտիկուտում, Ռիսկոնսինում: Այս նահանգների առավել հայաշատ քաղաքներն էին և յու Յորք, Բուտոնը, Ֆրեզնոն, Դետրոյտը, Փրովիդենսը, Ռուրքենսթերը, Ֆիլադելֆիան, Չիկագոն, Թրոյը:² (Տես Այսուսակ IX^{2a}, X^{2b}):

ԱՐՅՈՒԽԱԿ IX

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒԾ ԱՄՆ-Ի ՆԱՐԱՍԳՆԵՐՈՒՄ		
Նահանգ	1899-1917 թթ.	1899-1923 թթ.
Ալաբամա	58	61
Այսակա	3	3
Այդահո	8	9
Այովա	82	129
Արիզոնա	3	3
Արկանզաս	1	2
Արևմտյան Վիրջինիա	28	42
Դելավեր		3
Թենեսի	3	5
Էլլինոյ	3.313	4.067
Ինդիանա	167	235
Լուիզիանա	10	20
Կալիֆոռնիա	2.564	3.953
Կանզաս	11	21
Կենտուկի	11	19
Կոլորադո	61	72
Կոլումբիայի շրջան	28	76
Կոնեկտիկուտ	1.580	2.149
Հավայան կղզիներ	1	3
Հարավային Դակոտա	13	19
Հարավային Կարոլինա	1	2
Հյուսիսային Դակոտա		10

Դյուտիսային Կարոլինա	8	35
Մասսաչուսեթս	14.192	18.129
Մեյն	547	630
Մերիլենդ	43	67
Մինեսոտա	67	106
Միչիգան	1.371	3.151
Միսսիսիպի	6	24
Միսսուրի	649	735
Մոնտանա	5	15
Յուտա	65	72
Նեբրասկա	13	22
Նեվադա	1	4
Նյու Յեմփշիր	522	599
Նյու Մերսիկո	1	1
Նյու Յորք	17.391	22.800
Նյու Զերսի	2.115	2.904
Պորտո Ռիկո	4	4
Ջորջիա	3	18
Ռոդ Այլենդ	4.923	5.826
Վայոմինգ	2	14
Վերմոնտ	41	65
Վիրջինիա	133	217
Տեխաս	263	294
Ուաշինգտոն	71	125
Ուիսկոնսին	1.184	1.602
Փենսիլվանիա	2.002	3.078
Օհայո	401	725
Օկլահոմա	7	16
Օրեգոն	15	31
Ֆլորիդա	18	25
Ընդամենը	55.067	72.237

ԱՌՅՈՒՍԱԿ X

1917 թ. ԱՄՆ-ի 100-ից ԱՎԵԼԻ ԴԱՅ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԸ	
Նահանգ	Քաղաք
Իլինոյ	Չիկագո, Ուոքեգըն, Իսթ Սենթ Լուիս
Ինդիանա	Ինդիանապոլիս
Կալիֆոռնիա	Ֆրեզնո, Ռիվլի, Եղեմ, Սալեմ, Լոս Անջելես, Սենկըր, Ֆաուլեր
Կենտուկի	Լուիսվիլ
Կոլումբիայի շրջան	Ուաշինգտոն
Կոնեկտիկուտ	Ջարքֆորդ, Թոմսոնվիլ, Նյու Ջեվըն, Նյու Բրիթըն, Բրիչփորթ
Մասսաչուսեթս	Բոստոն, Ուոքեգըն, Լինն, Լոուլել, Ջեյվորիիլ, Ջոփուլյլ, Միուլ-բորո, Մոլտըն, Նյուբըն Ափըր Ֆոլդ, Նյուբըրիփորթ, Սամըր-վիլ, Սկրինգֆիլդ, Փիբըթ, Ջեմբրիջ, Ֆիչբուրգ, Ֆրանքլին
Մեյն	Փորթենդ
Մերիլենդ	Բալթիմօր
Մինեսոտա	Սենթ Փաուլ
Միչիգան	Ջայլըն Փարը, Դետրոյտ, Գրենդ Ռեյփիդս
Միսսուրի	Սենթ Լուիս
Նյու Ջեմփշիր	Մանչեսթեր, Նեշուա
Նյու Յորք	Արենեքքեդ, Յոնքերս, Նիագարա Ֆոլդ, Նյու Յորք, Բինգհեմ-թըն, Բրուքլին, Միրակուր
Նյու Զերսի	Յունյըն Ջիլ, Ուեսթ Յոբոքեն, Սամմիթ, Փաբերսոն, Նյու Արք
Ուու Այլենդ	Փրովիդենս, Ուունսութեր, Փաուլբութեր
Վերմոնթ	Ուինուսքի
Վիրջինիա	Ուիչմոնդ, Ջոփեվիլ, Սիթի Փոյնք
Ուաշինգտոն	Սիեթըլ
Ուիսկոնսին	Մեդիսոն, Միլուոքի, Ջենոշա, Ռեյսին
Փենսիլվանիա	Ֆիլադելֆիա
Օհայո	Եյքըրն, Թոլեդո, Ջիվլենդ, Սինսինաթի
Օրեգոն	Փորթենդ

Ընդհանուր առմամբ, 1920-ական թվականների սկզբին ԱՄԽ է չուրս տարածաշրջաններում տեղաբաշխված հայերի քանակական պատկերը հետևյալն էր:

1. Նոր Անգլիայի տարածաշրջան (Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Կոնեկտիկուտ և այլ նահանգներ) - շուրջ 30.000 հայ:
2. Արևելյան տարածաշրջան (Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա և այլ նահանգներ) - շուրջ 28.000 հայ:
3. Կենտրոնական տարածաշրջան (Իլինոյ, Օհայո, Միչիգան, Ուիսկոնսին, Միսսուրի, Մինեսոտա, Ինդիանա և այլ նահանգներ) - շուրջ 15.000 հայ:
4. Խաղաղական տարածաշրջան (Կալիֆորնիա և այլ նահանգներ) - շուրջ 19.000 հայ:³

Բ. ՀԱՅԵՐԻ ԶԲՈՂՄՈՒՏՆԵՐԸ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերը, տարածվելով ամերիկյան Նոր Անգլիայի, Միջին-Արևանտյան, Միջին-Արևելյան շրջանների, ինչպես նաև Կալիֆորնիայի նահանգներում ազգային կենտրոնացումներ են ստեղծել երկրի գործարաններ, ագրարակներ և արտադրական ու գործարար բազմաբնույթ ոլորտներ ներառող տարեր շրջաններում:

ԱՄՆ մուտք գործած հայերի զգալի մասը, իիմնականում գուրկ լինելով նյութական բավարար միջոցներից, որա փոխարեն ունենալով սկզբնական շրջանում իր գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ չնշին գումար, ի վիճակի չեղ սեփական գործ բացել կամ ագարակ գնել: Այսպես 1912 թ. ԱՄՆ ժամանած 5.222 հայերի 90%-ը, ներառյալ 14 տարեկանից ցածր երեխաները, ափ էին իջել իրենց մոտ ունենալով առավելագույնը մինչև 50 դոլարի չափ գումար:⁴ Միաժամանակ, անծանոթ լինելով օտար երկրի լեզվին, կենցաղին ու բարերին, նրանցից շատերը հարկադրված էին դիմել գործավորության (1919 թ. տվյալներով Ուորքեսթեր, Ֆրովիդենս, Թրոյ, Քլիվլենդ, Դետրոյտ քաղաքներում հայերի 60-65%-ը աշխատում էր գործարաններում⁵), իսկ հետագայում, ընտելանալով օտար միջավայրին և բարելավելով իրենց տնտեսական ու ֆինանսական վիճակը, ուղի հարթել տարբեր ասպարեզներում:

Հատերն աշխատանք էին հայրայրում հենց գաղթականության նախադուռը համարվող Նյու Յորքի նավահանգստում ամսեկան միջին հաշվով վաստակելով մոտավորապես 30 դոլար:⁶

Արդյունաբերական աշխատանքում ներգրավված հայերը իիմնականում կենտրոնացած էին հյուսիս-արևելյան տարածքի Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա, ինչպես նաև միջին-արևելյան Իլինոյ, Միչիգան, Օհայո նահանգներում:⁷

Մասսաչուսեթսի նահանգում, որտեղ բնակվում էր հայ աշխատավորության զգալի մասը (1915 թ. նրանց թիվը հասել էր շուրջ 4.239 մարդ, ընդ որում, 2/3-ը զբաղված էր արդյունաբերական արտադրությունում⁸), նրանք աշխատում էին Ուստրի (հետագայում Ուորքեսթեր), Բուստոմի, Ուորենբրաունի, Չելսիի, Լոուրենսի, Լինօնի, Ֆեմբ-

ոիցի, Լոռենի, Նորբերիչի, Միլֆորդի և այլ գործարաններում:¹¹ Ուստիր հանդիսացել է ամերիկահայ գործավորության առաջին կենտրոնատեղին: Այդտեղ էր գտնվում բողոքականներ Ֆ. Մունի և Չ. Ուշբըրնի կողմից 1858 թ. հիմնված համեմատարաք բարձր վարձատրվող մետաղաբելի հոլվա գործարանը, որտեղ աշխատում էին տարրեր ազգի շուրջ 7.000 ներկայացուցիչներ ամեն անիս արտադրելով 7.000 տոննա մետաղաբել ու զսպանակ:¹² Առաջին հայն այդտեղ աշխատանքի էր անցել դեռևս 1867 թ. հանդիսանալով ամերիկահայ առաջին գործավորը: Դայ պանդուխտներին Ուստիր մետաղաբելի գործարանում աշխատելու հնարավորություն ստեղծելու նախաձեռնությունը պատկանել է օսմանյան Թուրքիայի հայարքնակ տարածքներում գործող ամերիկահարողիներին, որոնք գաղափարապես իրենց հարած հայերին օգնում էին աշխատանք գտնել Վերոհիշյալ գործարաններում:¹³

Այն հայ գործավորները, որոնք «խորամիտ շաբաթավճարումներ» էին ստանում 5-10 դոլար, «այլևս իրենք զիրենք փրկուած կը սեպէին», քանի որ հայրենիքում «հազիւ հազ կրնային գումարին մէկ տասներորդը շահիլ եւ հալալ հաստ նըն ալ գրկուած մնալ»:¹⁴ Մինչդեռ «...Ամերիկայի մէջ ամեն բան աժան էր ու առատ: Սէկ երկվեցեակ հավկիթ 10 սենք, մէկ փառւըտ ոչխարի միս 25 սենք, եւ այսպէս ուրիշ կենսամթերքները ... երբ ամեն բան աժան էր, աժան էր նաեւ աշխատավարձքը: Եթէ բանուոր մը օրը 10 ժամ գործելով շաբաթը 20 տոլար ստանար, ինքզինքը լորտ կը հաշուէր»¹⁵ և, մի քանի տարի անց որոշ գումարի տեր դառնալով, կարող էր վերադառնալ հայրենի օջախներ իր ընտանիքի քայքայված տնտեսական վիճակը բարվոքելու: Դիշյալ հայերը «եթէ քաղաքացի էին, խանուք մը կը բանային, եթէ գիւղացի էին, կտոր մը հող կը գետին»:¹⁶ Այսպիսով, կարծ ժամանակում հայ աշխատավորների թիվը գործարանում ստվարացել է 1888 թ. կազմելով 266 մարդ, հակառակ որ, աշխատանքային պայմաններն այդտեղ սաստիկ դաժան էին, որի պատճառով հաճախ գործարանը ճանաչված էր «Ուստիր սպանդանոց» անունով:¹⁷ Այս «...իր հնոցներով, իր ինքնաշարժ ձուլարաններով, իր պողպատի փութերովն ու կտրող գործիքներով ծշմարիտ դժոխքի մը տպաւորութիւնը կը թողու այցելողին վրայ: Եւ իբրեւ այդ հայ գործաւորութեան արիւն ու միսը ծծել վերջ, անխորով հանդիսատեսը եղած է տխուր ու քստմնեցընող բանագործութիւններու, զգայացունց արկածներու, ողբերգական մահերու, տառապագին անդամահատութիւններու: իսկ «գործաւորները կը ննանին այն մարդերուն, որոնք այսօր ալ ողջ մնացած ըլլալուն աղօտ երջանկութիւնը ունին...»:¹⁸

Սահմանափակ միջավայրին ընտելացած հայ աշխատավորներից շատերի մտածողության մեջ Ամերիկան նույնացված էր Ուստիր քաղաքի հետ: «Ամերիկա ըսելով շատ մը հայեր կը հասկնային Ուստիր» և «...մինչև որ Ուստիր քաղաքը չհասնեին ինքնին Ամերիկա հասած չէին նկատեր...»:¹⁹ Ըստ նրանց, այդտեղ էր գտնվում երկրի միակ գործարանը, այնպէս որ, «Ուստիրն դուրս Ամերիկա չկար հայերուն համար, եւ «Կայր Միլըգ» էն ուրիշ գործարան չկար Ամերիկայի մէջ»:²⁰

Անցյալ դարի 80-ական թվականներին ԱՄՆ-ում առկա տնտեսական ճգնաժամն ու սպառնացող գործազրկությունը պատճառ էին հանդիսացել, որպեսզի մետաղաբելի գործարանի հայ աշխատավորների և դեկավարության միջև բարգմանի դեր կատարող հուսեյնիկցի Գր. Անդրեասյանն ու տիգրանակերտցի Տ. Խոհարապյանը հիշյալ գործարանի տերերի հանձնարարությամբ մի խումբ հայրենակիցների փոխադրեին աշխա-

տելու այլ քաղաքներ: Շատ շուտով հայ պանդուխտներն այդ գործառար մարդկանց ջանքերով աշխատանքի էին անցնում և որ Անգլիայի տարածքում գտնվող Փրովիդենս, Լինն, Չելսի, Սոլտըն, Լոուլել, Լոուրենս, Չելվըրիի և ուրիշ քաղաքներում:¹⁹

Դեպի Ամերիկա հայերի տարեցտարի աճող հոսքի հետևանքով ավելանում էր նաև աշխատավորների և գործարանատերերի թիջն միջնորդի ու բարգանի դեր կատարող, լեզվին տիրապետող ճարպիկ ու բանիմաց նարդկանց թիվը, որոնք բազմաթիվ հայերի ապահովում էին բնակարաններով, օգնում հարմարվել նոր պայմանների, իսկ երենմ էլ լեզու սովորեցնում ցանկացողներին:²⁰

Այսուհանդերձ, պատահում էին նաև հայերի անօգնականությունը չարաշահողներ ու կենեքրողներ: Օրինակ՝ Ուստի գործարանի բողոքական տերերի հետ կապված մի հայ իր հայրենակիցներին խոստանում էր աշխատանքի տեղափորել, պայմանով, որ նրանք սկսեին հաճախել ավետարանական եկեղեցիներ: ²¹ «...Գաղթականներ շատեր, որոնց մեջ պատուելիներ ալ կային, արդեն իսկ դիմած էին կեղծ կոսնափոխութիւններու, իրենց կաշին ապրեցընելու համար», իսկ «...թարգմանները, իրենց գաւառական սմսարութեան կողոպուտներէն չբաւականանալով, կաշառակերութեան ալ իբրև միջնորդ կը ծառայէին, կարծես խեղծ պանդուխտին արիւնը քանելու համար»:²² Նմանատիպ մեթոդներով հայերը կողոպտվում էին նաև ամերիկացի գործարանատերերի կողմից, սակայն հարկադրված էին լուել:²³

Տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ում հայության թվի աճի հետ զուգընթաց տեղի է ունեցել նաև նրանց տարածումը երկրի տարբեր արդյունաբերական քաղաքներում, ուր ներգրավվել են տեղի գործարաններում ու ֆաբրիկաններում: Օրինակ՝ Մասսաչուսեթսի նահանգի Բրոքթոն, Չելվըրիի, Լինն, Բուստոն, Ամսբըրի քաղաքներում հայերը հիմնականում աշխատում էին կոչչիկի (Բոստոնում էր գտնվում Շուդ Ռաբորի ռետինի խոչոր ընկերությունը, որը հայ գաղթականության հանար ամենից ծանր տարիներին աշխատանքով ապահովել էր ավելի քան 500 արդրու), Լոուլենսում բամբակե ու բրդե հյուսվածքների, Լոուլելում գործվածքներինի ֆաբրիկաններում, Ուայթինսվիլում ծովարաններում, Ռոդ Այլենդի նահանգի Փրովիդենս և Սենթրալ Ֆոլզ քաղաքներում մետաքսի և ներկի, իսկ Փառլերոքեր և Քրենսբոն քաղաքներում՝ գործվածքներինի ֆաբրիկաններում:²⁴ Նյու Յորքի հայությունը հիմնականում կենտրոնացած էր Զեներալ Էլեկտրիկի և Ծքենեքրետի գործարաններում, Նիագարա Ֆոլզ, Մենեա քաղաքներինը՝ այսումինի ու արևմտյան թրոյի երկարի, ինչպես նաև Թրոյի օձիքի և Վերնաշապիկի արտադրություններում:²⁵ Նյու Զերսի նահանգի Փաթերսոն, Քեմդըն, Ուեսթ Չորոքեն քաղաքներում հայերը զբաղված էին ածխարդյունաբերությամբ, Միչիգանի նահանգի Դետրոյտ, Պոնտիաք, Ֆլինթ քաղաքներում ավտոմեքենաների, իսկ Գրենդ Ռեյփի հյուսվածքում և Ուիլսոնսինի նահանգի Ռեյսին քաղաքում կահույքի գործարաններում:²⁶ Իլինոյի նահանգի Ուորեգըն, Ուեսթ Փուլման, Գրենիթ Սիթի քաղաքներում հայերն աշխատում էին երկարի ու պողպատի գործարաններում, ինչպես նաև Չիկագոյի սպանդանոցներում և այլուր:²⁷ Ներքափանցելով երկրի հեռավոր արևմտյան շրջաններ՝ հայերն աշխատանքի են անցել նաև Կանզասի, Արիզոնայի և այլ նահանգների արդյունաբերություններում:²⁸

Ուստական կայսրությունից եկած հայ պանդուխտները հիմնականում կենտրոնացած էին Միսսուրիի նահանգի Իսբ Սենթ Լուիս քաղաքի պողպատի գործարան-

ներում, Մինեսոտայի նահանգի Սենթ Փոլ քաղաքի Երկարուղաշինության բնագավառում, ինչպես նաև Կալիֆորնիայի նահանգի պահածոյի գործարաններում և Ռիվերսայդի շաղախի արտադրություններում:²⁹

Ընդհանուր առնամբ, Ուորքեսթեր, Փրովիդենս, Թրոյ, Ֆլիվենդ, Լոուրենս, Չեյվըրիիլ, Դետրոյտ և արդյունաբերական մի շարք այլ խոշոր քաղաքներում կենտրոնացած էր հայ բանվորների 60%:³⁰ Համաձայն ամերիկյան Գաղթականական հանճնախմբի վիճակագրական տվյալների, 1899-1917 թթ. ԱՄՆ-ում կար շուրջ 10.829 հայ բանվոր:³¹

Նոր Երկրում հայ գաղթականության առջև ծառացած ամենօրյա կարիքները գործարանային արտադրության մեջ էին ներգրավել ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց ու որոշակի տարիքի երեխաների: Այսպես, 1910 թ. ԱՄՆ-ի Գաղթականական հանճնախմբի տվյալներով, միջին հաշվով 98 աշխատող ընտանիքների շուրջ $\frac{1}{4}$ -ի կամ 26%-ի եկամուտը գալիս էր կանանց աշխատանքից: Եվ կամ թրոյում բնակվող հայ կանանց 3/4-ը կամ 75%-ը զբաղված էր տեղի վերնաշապիկի արտադրությունում, ի տարբերություն օտարածին կանանց միջին 35%-ի:³² Ի դեպ, ամերիկյան տնտեսության մեջ դա միակ արտադրությունն էր, որը երբեմն բռնվագաղաքացի շարունակել նաև տնային պայմաններում: 1902 թ. Լոուրենսի գործվածքներին ֆաբրիկայում աշխատում էին 300 հայ գգիրներ, մանողներ ու ջուլհակներ:³³

Հայ գործավորներն աշխատում էին բավականին վտանգավոր պայմաններում, երբ ամեն վայրկյան առկա էր հաշմանդամ դառնալու կամ գոյ գնալու սպառնալիքը: Խնկ այդ բոլորով հանդերձ, ԱՄՆ-ի մի շարք նահանգներում (օրինակ՝ Փենսիլվանիայի նահանգ) աշխատանքային դժբախտ պատահարների դեպքում տուժած գործավորների ընտանիքներին (այդ բվում նաև ԱՄՆ-ից դուրս գտնվող նրանց ընտանիքներին) նյութական հատուցում ցույց տալու մասին օրենք գոյություն չուներ:³⁴

Հայ գործավորն իր աշխատանքային առօրյայում ամենուրեք տեսնում էր «ածուխ ու փոշի, երկարի պայքար, Վիշապի պէս ֆշացող մեքենաներ, բարձրաբերձ ծխնելոյզներ ցցուած ամէն գիլ ու քաղաք: Եւ ասոնց մէջ օրական 10-12 ժամ չարաչար ու քրտնաջան աշխատասիրութիւն»:³⁵

Ծանր էր աշխատանքը Կալիֆորնիայի նահանգի Ռիվերսայդ քաղաքում գտնվող շաղախի գործարանում, որտեղ բժշկական քննություններից անցած շուրջ 300 արևելահայեր, իմենականում ոյուգքենդցիներ, փոշու և քունավոր օդի պայմաններում ամեն օր 94 փառւնդ կշռող շաղախով բեռնավորված պարկեր էին տեղափոխում, և կամ՝ Ռոդ Այլենդի նահանգի Փրովիդենս քաղաքում գտնվող ածխահանքերում ու ներկի գործարաններում, որոնց խոնավ ու քիմիական նյութերով հագեցած օդում աշխատելը բազմաթիվ հայերի համար «կենդանի մահ» էր:³⁶

Այդ «սատանայական գործարաններում» հայերի օրական միջին աշխատավարձը կազմել է 1 դոլար 62 սենթ, ինչը շատ չնչին էր ամերիկացու միջին 3 դոլար 60 սենթի համեմատությամբ: Հայ գաղթականը, շաբաթական միջին հաշվով վաստակելով 7-8 դոլար, հազիկ կարողանում էր խնայել 4 դոլար, այն էլ սննդի ու բնակարանի վարձի համար:³⁷ Այնպես որ, «...Հայ գործաւորը իր և իրենների գոյութիւնը ապահովելու և օրավարձի միմիմումով բավականանալու համար դիմեց աներևակայելի միջոցների

և ինքնազրկումների, որոնց չեր կարող ենթարկուել ոչ իրլանտացի, ոչ Ռուս, ոչ հյուածացի և ոչ էլ որուն գաղթական գործաւոր»:³⁸ Աշխատավճարման հարցերով զբաղվող ժամանակի ականավոր մասնագետ Փ.Ռոբերտսն այդ առիթով ասել է. «Եթե տեղացի միջին ընտանիքը մեր մեջ քաղաքում ապրեր օրական 1 դոլար 50 սենթով, ապա տասներկու ամսվա մեջ հեղափոխություն կլիներ, սակայն հազարներով օտարածին ընտանիքներ ապրում են կարիքի ու զրկանքի մեջ»:³⁹ Մինչդեռ տեղական լեզվին անժանոր հայր չեր հանդգնում գործարանատիրոջից աշխատավարձի հավելում պահանջել, քանի որ արդյունքում ունեցածն էլ կկորցներ: Այդուհանդեռ, հայ աշխատավոր գաղթականների տարեկան միջին աշխատավարձը գաղթական այլ ազգերի ներկայացուցիչների աշխատավարձի համեմատությամբ զգալի չափով ավելի բարձր էր, քանի որ, ի տարբերություն վերջիններիս, հայերը սեզոնային բանվորներ չեն, այլ, առանց հայրենիք վերադառնալու, աշխատում էին գրեթե ողջ տարին:⁴⁰ Այսպես, ճանուֆակտորային արտադրությունում աշխատող հայի շաբաթական միջին վաստակը 9 դոլար 73 սենք էր, մինչդեռ հույնինը՝ 8 դոլար 41 սենք, սիրիացունը՝ 8 դոլար 12 սենք: Ընդհանուր առնամբ, արդյունաբերական արտադրությունում զբաղված հայ բանվորության տարեկան միջին աշխատավարձը կազմել է 454 դոլար:⁴¹ (Տես Աղյուսակ XI 4^ա):

ԱՊՅՈՒՍԱԿ ԽI

ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՍԻԶԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ (ԴՈԼԱՐՈՎ)	
հրեա (արևելաեվրոպական)	531
սլովեն	484
իտալացի (հյուսիսային)	480
լիտվացի	454
հայ	454
սլովակ	442
լեհ	428
ռումինացի	402
ռուս	400
մաջար	395
սիրիացի	370
հույն	300
քուրք	281
սերբ	212

Համեմատաբար բարձր էր նաև հայ ընտանիքների տարեկան եկամուտը՝ 1920 թվականին այն միջին հաշվով կազմել է 730 դոլար: (Տես Աղյուսակ XII^{41թ}):

ԱՊՅՈՒՍԱԿ XII

ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ՏԱՐԵՐ ԱԶԳԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ (դոլարով)	
հայ	730
հրեա	685
իտալացի (հյուսիսային)	657
լիտվացի	636
հույն	632
լեհ	595
սիրիացի	594
սլովակ	582
իտալացի (հարավային)	569
ռուս	494
սերբ	462

Նույն թվականի տվյալներով, արդյունաբերական Նոր Անգլիայի տարածաշոғանում հայերը տասնամյակների իրենց քրտնաջան աշխատահրության շնորհիվ գրաղվածությամբ և գերակշռել են օտարազգի այլ ներկայացուցիչներին:⁴²

Գործարաններում հայը, որը մեծ մասամբ աշխատանք էր ծեռք բերում իր ազգակից անգլիախոս միջնորդների օգնությամբ, աստիճանաբար, նոր լեզվին ու բարերին տիրապետելով, «...իր գործը պահելու, եւ կամ աւելի լաւ ու բարձր վճարումով գործ մը ունենալու համար դիմեց կաշառքի»,⁴³ իսկ Նիհագարա Ֆոլզի տարածում, որտեղ մեծ թվով վանեցի գաղթականներ կային, կաշառք էին վճարում նաև հիվանդության դեպքում աշխատանքը չկորցնելու համար: Ընդ որում, դրամ չունեցող ներք գործարանատերերին նվիրում էին ամեն տեսակի թանկարժեք իրեր: Գաղթական հայերի թվի աճնան հետ զուգընթաց կաշառակերները «տարածվում էին սնկերի նման»:⁴⁴ Ու թեև առկա էր կաշառակերության դեմ պայքար, սակայն բազմաթիվ հայեր, աշխատանքը կորցնելու սպառնալիքի տակ, նախընտրում էին համակերպվել ու չբողոքել դրանով իսկ վաստակելով տեղացիների հակարանքը:

Դայ պանդուխտ աշխատավորները, որոնք գալիս էին հիմնականում միջին կարողության ընտանիքներից և սկզբնական շրջանում մեծ մասամբ նպատակ չունեին մշտական բնակություն հաստատել Նոր Երկրում, այլ ծգտում էին որոշ ժամանակ

աշխատելուց ու բավարար դրամ ձեռք բերելուց հետո վերադառնալ իրենց հայրենին օջախները, բնիկ ու այլազգի բանվորների համեմատությամբ չեն դժգոհել աշխատանքային ծանր պայմաններից և ցածր աշխատավարձից, բանի որ հոգեբանորեն իրենց չեն համարել բանվոր դասակարգի մի նասը: Իսկ պարբերական ջարդերի հետևանքով ԱՄ հասած հայ գաղթականները նույնիսկ «ամբողջովին մերկ, անօրի և թշուար վիճակում (էին – Ք.Ա.) բարի ընդարձակ իմաստով»:⁴⁵ Դետևաբար, շատ հաճախ «գոյության խնդրով» առաջնորդվող հայ աշխատավորներից շատերը գործադուլների ժամանակ «գործ գտնելու համար ... գործատերերին առաջարկում են ստոր գնով իրենց ֆիզիքական ոյժը, փոխարինելով գործաթողներին» դրանով իսկ դաշնալով գործարանատիրոց «ուշած» մարդը, իսկ տեղացի բանվորների համար «ատելի»:⁴⁶ «...Անգործութեան եւ անօրութեան վիճակն էր, որ գործադուլ աւրողի գէշ համբաւ մը ստեղծեց հայերուն շուրջ»:⁴⁷ Այսպես որ, գաղթականության առաջին շրջանում հայր «...ի յայտ կուգայ իբր հակուտնեայ տարր մը իր ապրած նոր միջավայրին մէջ»,⁴⁸ քանի որ «...ուր որ երևաց գործադուլ, այնտեղ ցցեց գործադուլ աւրող հայ գործատոր յամօթ իր ազգի ու ցեղի»:⁴⁹ «Պահեստի բանւորական գործի» վերածված այդ հայերը, որոնց անվանում էին «սքեբ» (անգլ. գործադուլաբեկ, շորեյխբորեխեր, դավաճան), առաջին անգամ նման քայլի դիմել են 1890 թվականին:⁵⁰ Դետագայում, «գործադուլ աւրելու» միջոցով աշխատանք ձեռք բերելու այդ ձեզ տարածվել է հայերի շրջանում: Այսպես եղել 1892 թ. Մասսաչուսեթսի նահանգի կաշվի և կոչիկի արտադրություններում տեղած գործադուլների ժամանակ, երբ աշխատանքը լքած բանվորների փոխարեն ֆարբիկատերերն ընդունել են հայրուրավոր անգործ հայերի, իսկ 1902 թ. Նյու Յորքի Փաթերսոն քաղաքում տեղի ունեցած մեկ այլ բողոքի ժամանակ՝ 300 հայերի: Նման դեպքեր եղել են 1907 թ. օգոստոսին Լինոնում Ա.Ֆ.Սմիթի և 1909 թ. օգոստոսին Բրիջուորթեռում Լ.Օ.Ուլայի Կոչիկի ընկերությունների, նույն թվականին Բոստոնի աշխատավորների գործադուլների ժամանակ և այլն.⁵¹ Ընդ որում, հայերն աշխատանքի էին ընդունվում չափազանց նվազ, շատ հաճախ գործադուլավորների վաստակի $\frac{1}{3}$ ից էլ պակաս աշխատավարձով, ինչին չէր համաձայնվի ոչ մի ամերիկացի: Այսպես 1893 թ. ճգնաժամի ժամանակ Ուորքեսթեր բերված զգալի թվով հայեր աշխատում էին օրական 85-90 սենք աշխատավարձով՝ նախկին աշխատավորների 3-4 դոլարով օրականի դիմաց: Եվ կամ հայերը, ուստի հրեաները, կանադացիները արժանացել են տեղացիների հակակրանքին Մասսաչուսեթսի գործարաններում նախկին 16-19 դոլարի դիմաց չնչին աշխատավարձով բանվորություն անելու համար:⁵²

Դայ աշխատավորների մոտ դասակարգային գիտակցության բացակայությունը, որն ուներ օբյեկտիվ (հայրենիքում բանվորության բացակայությունը) և սուբյեկտիվ (գործարանը որպես ժամանակավոր աշխատատեղ դիտելը, նոր երկրի տնտեսական ու հասարակական կյանքին հարմարվելու առօրյա հոգսերը) դրդապատճառներ, իհմք էին հանդիսացել դարասկզբին տեղացիների շրջանում հայերի հեղինակության անկանան: Այսպես որ, ամերիկյան ճամուլն անգամ գրել է, թե «այլ գաղթականների կողմից միակ առավել չսիրված ազգերը ... հայերն էին, հույներն ու սիրիացիները»:⁵³

Դայիոյանքը, կոչիվն ու ծեծը տեղ էին գտնում օտար կամ տեղացի ու հայ բանվորների միջև: Առավոտները ամերիկացի գործադուլավորները քարերով ու կղմինդր-

ներով էին «ոդիմավորում» իրենց մրցակից հայ գործադրուաբեկներին, կարծես նրանք «անտառներէն նոր բռնուած ու բերուած վայրենի կենդանիներ ըլլային»:⁵⁴ Այդ հարձակումների ժամանակ շատերը հաճախ ծանր փրավորվել են, եղել են նույնիսկ մահացության դեպքեր: Թշվար պանդուխտները վախենում էին անգամ փողոց դուրս գալ կոիվների մեջ ներքաշված չլինելու և ջարկոծվելու համար: «Այս աննպաստ պայմաններուն դիմագրաւելու համար, հայերը ստիպուած էին իրարու մոտ ապրիլ, իրարու հետ աւելի սերտ եւ մտերնօրէն վարուելու»:⁵⁵ Դատկապես սուր էր հակամարտությունը իշլանդացի բանվորների հետ, ինչի մասին արծագանքում էին անգամ տեղական թերթերը: Այսպես, երբ Լիննում գործադրուավորների և հայերի միջև սուր կրիվ էր բռնկվել և վերջիններս ինքնապաշտպանության նպատակով դիմել էին դաշույնի, ամերիկյան թերթերը տպագրել էին «վայրենի հայի» դաշույնի նկարը:⁵⁶

Մշտապես հալածանքների ենթարկվող պանդուխտ հայերը բազմիցս դիմել են թե կրոնական և թե պետական հաստատություններ՝ պաշտպանություն ակնկալելու հույսով, սակայն ապարդյուն: Դետապնդումները չեն դադարել, մինչև որ մի հուսեյնիկցի երիտասարդ Ուստրում տեղ գտած վայրագ կոիվներից մեկի ժամանակ ատրճանակով սպանել է նախահարձակ եղած մի քանի տեղացիների: ԱՄՆ-ի կառավարությունն արդարացրել է այդ արարքը, հայտարարելով, որ «...ամերիկեան սահմանադրութիւնը ի գօրու չէ դատապարտել այն մարդը որ կ'ապրի ամերիկեան օրենքի տրամադրութեան համաձայն եւ ստիպուած է պաշտպանել իր կեանքն ու ապրուստի միջոցները»:⁵⁷ Այս պաշտոնական հայտարարությունը զգաստացրել է անպատճելիության հետևանքով հանցագործ քայլերի դիմած բազմաթիվ տեղացիների, թեև չի վերացրել աշխատանքային մրցակցության պայքարից ծնված ատելությունը:

«Ազականված մթնոլորտը» մաքրելու, հայ աշխատավորների շրջանում բանվորական համերաշխության զգացում արբնացնելու և հետևաբար հայերի նկատմամբ օտարների հարգանքը վերականգնելու նպատակով հայ քաղաքական կուսակցությունների ականավոր գործիչներ ու այլ առաջավոր մտածողներ սկսեցին մամուլում և հավաքներում գաղթական ազգակիցներին կոչ անել միանալ արհեստակցական միություններին, որոնք և անգործներին կապահովեին աշխատանքով: ⁵⁸ Նրանք գտնում էին, որ հայ գործավորին հույժ անհրաժեշտ է «սերտ յարաբերութիւն տեղական բանտրական սօցիալ-դեմոկրատական սինդիկատների հետ եւ դրա շնորհով համերաշխութիւն իրար մէջ ու ամերիկացի բանտրներու հետ...»:⁵⁹ Անց են կացվել բացատրական աշխատանքներ արհեստակցական միությունների կողմից կազմակերպված ելույթների ու գործադրութերի կարևորության մասին բանվորների աշխատավարձների բարձրացման, աշխատանքային ու կենցաղային պայմանների բարելավման և տնտեսական հարաբերությունների բարվորման համար: Իսկ որոշ սոցիալ-դեմոկրատ գաղափարախոսներ, առաջ գնալով իրենց հայացքներում, գտնում էին, որ ազգային խնդիրների կողքին պետք է բարձրացվեն նաև դասակարգային պահանջներ: ⁶⁰

ԱՄ-ում պարբերաբար տեղ գտած տնտեսական ճգնաժամներն ու դրանց հետ ուղեկցվող գործազրկությունը խիստ հարվածել են դժվարությամբ աշխատանք գտած հարյուրավոր հայերի կյանքի պայմաններին, մատնելով նրանց անորոշության, իսկ շատերը հուսահատ նույնիսկ հարկադրվել են վերադառնալ իրենց նախկին բնօրրան-

ները: Երել են նաև ամերիկահայերի դիմումներ Կ.Պոլսի Դայոց պատրիարքությամբ արգելելու հայրենակիցների դեպի ԱՄՆ գաղթը:⁶¹

Այդուհանդեռձ, տնտեսական դժվարին ժամանակներում գտնվել են նաև այն պիսի ունենոր բարեգործ հայեր, որոնք իրենց վրա են վերցրել աշխատանքից ու ապրուստի միջոցներից զրկված հայրենակիցների հովանավորության հարցը: Այդպիսին էր Սովետ Գյուլեսյանը, որը Բոստոնի իր քիչի գործարանում ապաստան, ինչպես նաև նյութական ու բարոյական աջակցություն է ցույց տվել կարիքի մեջ գտնվող բազմաթիվ հայերի:⁶²

1888-1889 թթ. շուրջ 150 ամերիկահայեր դիմել են Ուաշինգտոնում թուրքական առաքելությանը արգելելու հայերի արտահոսքը դեպի գործարանային Ուստոր քաղաք քանի որ «նրանցից հարյուրները պարապ էին և աշխատանք ստանալու որևէ հեռանկար չունեին», հետևաբար շատերը հեռանում էին Փրովիդենս, Բոստոն և այլուր թեև սրանով չի դադարել հայերի դեպի ԱՄՆ հոսքը, բայց և այնպես, համաձայն ամերիկյան մամուլի, Կ.Պոլսից 30 հայեր հետ են կանգնել Նոր Երկիր մեկնելու իրենց մտադրությունից:⁶³

1893 թ. տնտեսական ճգնաժամն ԱՄՆ-ում գործազուրկ էր դարձրել Ուորքեսթերի Սետաղաքելի գործարանի հարյուրավոր հայ աշխատավորների: Արդյունքում քաղաքի 800 բանվորներից աշխատանք ունեին ընդամենը 100-ը, իսկ ողջ Երկրում մեկ բանվոր դասակարգի 1/10 մասը: 1907 թ. Նյու Յորքում աշխատանքից գուրք էին շուրջ 1000 հայեր, Ուորքեզբնում 300, իսկ 1913 թ. սեպտեմբերին Փրովիդենսի հայ աշխատավորների 1/3-ը: Նման պայմաններում պատահական չէին նաև բարոյալքման դեպքերը գործազուրկ հայերի շրջանում, որոնք իրենց առողջությունն ու վերջին կարողությունը վատնում էին խնարաններում ու խաղարաններում, ներքաշվում սրճարանային անպատվաբեր կրիվների մեջ: Գաղթականական մամուլի տվյալներով, 1913-1914 թթ. ծմբանը Դեմքոյսուում կային հուսալքության մատնված շուրջ 200 այդպիսի գործազուրկներ: Նմանատիպ հաղորդումներ են ստացվել նաև Ուորքեսթերից, Լոուրենսից, Միլֆորդից, Ուեսթ Փոլմանից, Լիլինոյից:⁶⁴

«Փողոցներում թափառող» գաղթականների տարեցտարի աճող թիվը մտահոգել է հայկական և ամերիկյան պատասխանատու հաստատություններին ստիպելով նրանց դիմել որոշակի կանխարգելող միջոցառումների: Այսպես, 1908 թ. Նյու Յորքի Քաղաքականատարանի ջանքերով ստեղծվել է Դայկական աշխատանքային տեղեկատություրո, Դայկական բարեգործական ընդհանուր միության (այսուհետև ՀԲԸՍ) Բոստոնի կենտրոնը բացել է զրադարձության գրասենյակ «գործարաններում գործարանատիրոջ և գործավորների միջև կապեր հաստատելու նպատակով», իսկ 1913 թ. ստեղծվել է Դայկական գթասիրական ընկերակցության Զքաղվածության գրասենյակ: Դրանք կոչված էին բազմակողմանի օգնություն ցույց տալու ապրուստի միջոցներից զրկված գաղթական հայրենակիցներին:⁶⁵

Տարիների ընթացքում, հասարակական ու պատմական իրադարձությունների փոփոխման հետևանքով, հայ բանվորների շրջանում ևս սկսվել է ծեսավորվել դասակարգային գիտակցությունը, ինչը արթնացրել ու ներգրավել է նրանց աշխատավորական ելույթների գործադուլների, ցուցերի ու այկենտների մեջ: Դա առանձնապես նկատելի է 1910-ական թվականներից սկսած, այսինքն, երբ աստիճանաբար մարդ-

Է հայ գարթականների շրջանում հայրենի օքախներ վերաբառնալու հույսը, և ԱՄԵ-ի վեր է ածվել նրանց մշտական հանգրվաճնի. Այսպես, 1912 թ. հունվարին 500 հայեր (այսինքն քաղաքի ողջ հայ բնակչության 2/3-ը) մասնակցել են Լոռիքենսի հայտնի թանհազարանոց գործադրութին, կազմակերպվել է Լոռիքենսի գործադրություն կոմիտեի հայլական մասնաճյուղ. Ծուրզ մեկ տարի մինչև ձմեռ ծգված այդ գործադրությունի փոփին սնանկացրել է հայ ընտանիքներին, բողնելով նրանց առանց սննդամբերի ու վառելիքի, իսկ առավել կարիքավորներին օգնության ծեռք են մեկնել ՀՅԴ և ՀԲԸՍ Բոստոնի մասնաճյուղերը: Նույն թվականի մայիսին հայերը մի ցույց են դեկավարել Շեյքրիիլում, իսկ Չելսիում անցկացրել հրեա գործադրութավորների հետ համերաշխության ելույթ, և նման շատ դեպքեր:՝⁶⁶

Դայ գործավորները դրամ խնայելու նպատակով բանվորական իրենց կյանքի սկզբնական շրջանում ապրում էին կիսաքրչվար պայմաններում: Բնակարաններ էին վարձում եժան փողոցների վրա, իին ու կեղտոտ տներում, որտեղ ապրում էին մեկ սենյակում 8-10, երբեմն մինչև 20 հոգի և ավելի, միասին խմբված, «միևնույն սենեակի մէջ եփելով, ուտելով, եւ պառկելով. հրաքանչիլու գործաւոր ինքն իր ճաշը պիտի պատրաստէր, ամանները լուար, սենեակը մաքրէր, լուացը ըներ, գոնէ շաբաթը անգամ նը»:⁶⁷ «Ննջասենեակները ընկերովի կը գործածէին համաձայն գործաժամի, մին կ'ելլոր, միւսը կը պառկէր եւ երբեմն ալ մէկ անկողնի մէջ միասին կը պառկէին, երկու հոգի: Այսպիսի համակեցութեան մէջ, բոլոր ծախքերը հաւասարապէս կը բաժնեին ամեն մի անձի վրայ: ... Այսպիսի համակեցութիւնը Դումանիայ կը կոչէին»:⁶⁸ Եվ քանի որ գործավորները իմանականում ամուսի երիտասարդներ էին, իսկ մաքուր հայկական ճաշարաններ հազարեալ էին պատահում, ապա որոշակի գումարով (յուրաքանչյուրից ամսեկան 1 դոլար) խմբովին խոհարար էին փարձում: Քչերն էին ի վիճակի առանձին ապրել և իրենց նիշոցներով կերակուր պատրաստէլ: Սենք Լուիսում բնակվող հայ աշխատավորների նկարագրած կենցաղային պայմաններն այն մասին, թե իրենք ապրում էին ախորի և գինետան կողքին գտնվող երեք հարկանի անհարմար տան մէջ, որտեղ «մուխը ծուխը կը մթնեցնեին և ստիպված էինք ցորեկ ատենը լույս վառել...», ընդհանրական էին ամերիկահայ բազմաթիվ պանդուխտների համար:՝⁶⁹

Բազմաթիվ հայեր հակասանիտարական պայմաններում գտնվող ու գերխընթագմած իրենց բնակարանների համար ենթարկվել են պատասխանատվության: Օրինակ այդ կապակցությանը, Խաք Սենք Լուիսում ծերբակալվել են շուրջ 60 արևելահայեր:՝⁷⁰

Տարիների ընթացքում սենյակների վարձը 10-15 սենքից աճել է 80 սենքի, ապա 1,5-2 դոլարի և ավելին:՝⁷¹

Անբարենպաստ տնտեսական պայմաններում համատեղ բնակվող հայերը մշտապես օգնում էին իրար, հատկապես գործազրկության տարիներին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալիս միմյանց: Դա ակներև է մի ամերիկահայ պանդուխտի վկայությունից: «Կեանքը շատ աժան լինելով նեղութիւն չէինք քաշում, օգնելով մէկը միւսին: Եթէ մէկ ընկեր գործում էր իրեն հետ պահում էր իմագ անգործ ընկերներ: Սէկ շաբար աշխատաւորը իրեն աշխատանքի վաստակով ապրում էր երկու ամիս: Ապրուստը այնքան չէր նտահոգում մեզ, որքան հայրենիքին մեր հարազատներին օգնելու համար մեզ օգնութեան էին հասնում մեր այստեղի բարեկամները, մեզանից առաջ եկողները, տալով մէկ փոխարինարար դրամ երկիր ուղարկելու: Սենք

բոլորս իրար շատ լաւ էինք հասկացել, այնպէս որ օտարութիւնը մեզ այնքան էր սիրով պահում, ինչպէս մէկ ընտանիք»:⁷² Սակայն, աստիճանաբար, հայ բանվորների աշխատանքային պայմանների բարելավմանը զուգընթաց, «ընկերաբար ապրող հայերու մէջ յառաջացաւ նախանձ, ատելութիւն եւ կոիլ: Խմբական կոմունարները լուծուեցան հայերն իրարն բաժնուեցան»:⁷³ Ոմանք սկսեցին օտար կամ հայ ընտանիքներուն առանձին սենյակ վարձել միաժամանակ վճարելով նաև համատեղ սննդի համար, իսկ ավելի բարեկեցիկներն առանձին բնակարաններ էին վարձում:

Եթե նախկինում հայ պանորուխտը դրամ տնտեսելու նպատակով հարկադրված էր կենցաղային բոլոր հարցերը սեփական ուժերով հաղթահարել, ավելորդ ժախսերից խուսափել ու սահմանափակ կյանքով ապրել, ապա հետագայում, իրենց վիճակը բարվոքած և որոշակի դրամի տեր դարձած բանվորներն արդեն ի վիճակի էին շաբաթական 10-20 սենթ հատկացնել սափրիչին, 50-60 սենթ լվացարարին, 2-5 դոլար ճաշարանում սնվելու համար:⁷⁴

Պանդխոտության սկզբնական շրջանում հարկադրաբար բանվորական կյանքի ուղի ընտրած հայ գաղթականների զգալի մասը, տաժանակիր ու համառ աշխատանքի շնորհիվ, փոքրիշատեն բարվոքելով իր տնտեսական վիճակը, հարմար պատեհություն ի հայտ գալու դեպքում հեռացել էր գործարանից և ներգրավվել իր կարողությանն ու հմտությանը համապատասխանող արհեստներում կամ փոքրիկ խնայողություններով սեփական գործ բացել: Այդ ամենը հենց սկզբից է եղել և նոր երկիր մուտք գործող ցանկացած հայի երազանքը, սակայն նյութական բավարար միջոցների բացակայությունը, ինչպէս նաև գերիշխող ուժեղ մրցակցությունը արգելք են հանդիսացել դրա իրականացմանը: Միաժամանակ, գործարանատիրոջ և բանվորների միջև առկա արտադրական փոխհարաբերությունները, գործարանային մեքենայացված արտադրությունը, ինչպէս նաև աշխատավճարման համակարգը խորթ ու անընդունելի էին ձեռքի աշխատանքի միջոցով նյութական բարիքներ ստեղծելու սովոր պահպանողական մտածելակերպ ունեցող հայ պանորուխտներից շատերի համար: Չոքեբանորեն նրանք չեն համակերպվել գործարանային կյանքին՝ այն նմանեցնելով բանտի, որտեղ «նրանք պէտք են ... իբրև միայն ֆիզիքական ոյժ ունեցողներ, իբրև մեքենայի մէկ անհիւր, մի թերը, մի մասը»,⁷⁵ որտեղ «...մեքենայի շնորհով ոչնչացած են ձեռագործ ամենըն, արհեստ ունեցողն ու չունեցողը, տղամարդը, կինը, երեխան կարող են լինել աշխատաւոր միատեսակ կերպով»:⁷⁶

Արդյունաբերական արտադրության մեջ ներգրավված բանվորներից բացի, հայերի շրջանում զգալի թիվ են կազմել նաև որոշակի հմտությունների տիրապետող արհեստավորներն ու մանր խանությանները. Կոշկակարները, դերձակները, հյուսները, ոստայնագործները, երկարագործներն ու պողպատագործները, վարսավիրները, հացթուխները, գրագիրներն ու հաշվապահները, որմնադիրները, մսագործները, գոհարագործները, մետաղագործներն ու թիթեղագործները, ապակեկանարները, մեքենագործներն ու մեքենավարները, կաշեգործները, ժամագործները, ծիսախոտագործները, նպարավաճառները, տպագրիչները, ներկարարներն ու լվացարարները, հագուստավաճառները, քաղցրավաճառները, ճաշարանատերները, իջևանատերները և այլք:

Ընդհանուր առմամբ, 1899-1917 թթ. վերոհիշյալ հայերի թիվն ԱՄՆ-ում կազմել է 14.026:⁷⁷

Երկորի գրեթե բոլոր հայաշատ կենտրոններում կային հայ նպարավաճառներ, դերձակներ, կոչկակարներ, ինչպես նաև վարսավիրներ, հագուստավաճառներ, գոհարավաճառներ, ճաշարանատերներ: Օրինակ Նյու Յորքում գոյություն է ունեցել հագուստի նորոգման և դերձակության շուրջ 500 խանութ, նույնքան էլ նպարավաճառնոցները ու կոչկակարանները:⁷⁸ Դայ արհեստավորներն ու խանութպանները հիմնականում կենտրոնացած էին Երկորի արևելյան ափի խոշոր քաղաքներում: Այսպես, 1915 թ. նրանց թիվը Նյու Յորքում կազմել է 843, Բոստոնում՝ 620, այսինքն տվյալ քաղաքներում գրաղվածների ընդհանուր թվի շուրջ 46%-ը:⁷⁹ Այս հայերն իրենց ընտանիքների գոյությունը պահպանելու, ինչպես նաև նոր Երկորի մրցակցային պայքարին դիմակայելու և առաջընթաց ունենալու համար հարկադրված էին գրեթե ողջ շաբաթը օրական 10-14 ժամ օրնիքուն աշխատել խղճուկ պայմաններում ժամր օդի մեջ, բույլ լուսի տակ և ցածր վարձատրությամբ:⁸⁰

Գաղթականական հանճնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, ԱՄՆ-ում բարձր էր նաև գործարար հայերի թիվը: Օրինակ՝ 1915 թ. միայն Կոնեկտիկուտ նահանգի Նյու Բրիտըն քաղաքում գործարարության մեջ ներգրավված հայերը կազմել են տեղի հայ բնակչության 6%-ը, ինչը գերազանցել է ամերիկաբնակ այլ ազգային ներկայացուցիչների թվին զիջելով միայն հրեաներին:⁸¹

Բազմաթիվ հայեր ներգրավված էին շոգենավային և երկարուղային ընկերությունների աշխատանքների կազմակերպելով թեռների փոխադրումը, ճանապարհորդական տոմսների վաճառքը, դրամի փոխանակման հարցերը և այլն: Այդ տեսակետից հայտնի էին Նյու Յորքում Ս.Ազարիզյանը, Բոստոնում Բ.Զանջիգյանը, Ուորքենթերում Ս.Սարացյանը և շատ ուրիշներ: ⁸²

Թեև հայ գաղթականները մեծ մասամբ ԱՄՆ-ում սկսել էին հաստատվել առավելապես XIX դ. վերջի Երկու տասնամյակներից ի վեր, այնուամենայնիվ, նրանցից շատերին հաջողվել է տքնածան աշխատանքի շնորհիվ դառնալ խոշոր խանութների սեփականատերներ: Ազգային նպարեղենի խանութներից հայտնի էին «Դայկական նպարեղենը», «Արևելյան նպարեղենը», «Արարատ մթերային խանութը» և այլն: Մասսաչուսեթսի Չելսիա քաղաքում հանրաժանոր էր Ստեփան Մուգարի «Աստղ» հսկա հանրախանութը, որը կարողացել էր դիմակայել անգամ տնտեսական ճգնաժամի հարվածները:⁸³ 1867 թ. ԱՄՆ պանդիստած Չեքք Արաքեյանը, սկզբնական շրջանում աշխատելով Մասսաչուսեթսի նահանգի Բեմբրիջի տպարանում, ծեռներեցության ու աշխատասիրության շնորհիվ շատ շուտով բացել էր ժամանակի խոշորագույն «Փիլգրիմ Փոնս» անունով իր սեփական տպարանը: Կյանքի վերջում նախկինում չքավոր այս հայի ողջ կարողությունը գնահատվել է 250.000-300.000 դոլար: ⁸⁴

Որոշ հայեր ներգրավվել են միանգամից մի քանի բնագավառներում: Օրինակ առավել երևելի էր 1890 թ. Բոստոնում սեփական գործի տեր դարձած Ս.Գոնստազյանը, որը հետագայում 1908 թ. համատեղության կարգով բացել էր նաև ճանապարհային փոխադրական հարցերով և գաղթականների բանկային հաշիվներով գրաղվող Դարփության և Գոնստազյան ընկերությունը: Եվ կամ՝ Գ.Թիոնաջյանը, հանդիսանալով Ուորքենթերի «Աստղ տղամարդկանց հարդարող խանութ» սեփականատեր, միաժամանակ գրաղվել է նորեկ գաղթականների ընդունան, աշխատանքով ապահովելու հարցերով, այդ կապակցությամբ կատարելով բարգմանի, գրագրի, նոտարի և այլ

պարտականություններ: ⁸⁵ Խոլ 1890-ական թվականների կոտորածներից մազաւուրժ բազմաթիվ հայերի հանար ժամանակավոր ապաստան է հանդիսացել ազգաւոր ծեռնարկատեր Սովոր Գուլեսյանի թիվեր արտադրող վեցհարկանի հսկա գործարակը: ⁸⁶ Դայերի սեփականությունն էին հանդիսանուն Բոստոնում, Նյու Յորքում և Չիկագոյում 10-160 քանվորներ ունեցող լուսավորագրության մի քանի գործարանները, ⁸⁷ 1890 թ. Բոստոնում հիմնվել և 1910-ական թվականներին Փիթրը փոլում, ապա նաև Կալիֆորնիայի և Օքլենդի նահանգներուն իր մասնաճյուղերն եր ունեցել Սարգս Շաղայանի կողմից ստեղծված շաքարեղենի մեջ գործարանը, իսկ 1903 թ. Սասսաչուսեթի նահանգի Ուենթըն քաղաքուն 200.000 հավեր ու 1 մլն ծուեր ունեցող ագարակի սեփականատեր Գևորգ Դակորյանի ջանքերով հիմնվել էր հավաքուժական խոշոր ֆաբրիկա: ⁸⁸

Ընդհանուր առմանը, 1899-1917 թթ. ԱՄՆ-ում կար հայագի 1.117 առևտրական, 17 հյուրանոցի, 9 բանկի, 8 գործարանի սեփականատեր և այլն: ⁸⁹ Վերջիններս հիմնականուն ներգրավված էին մանրածախ առևտրում (մինչև 1914 թ. ավելի քան 100 այդպիսի վաճառականներից սնամկացել էին միայն 4-5-ը⁹⁰): Մինչև Առաջին աշխարհամարտ հայերի շրջանուն վաճառականությունն առավելացես դրսերվել էր երկու հիմնական աւագարեզներուն երկրի արևելյան ափամերձ շրջաններուն արևելյան գորգի, իսկ արևմտյան շրջանուն գյուղատնտեսական ապրանքների առևտրում:

Նախքան աներիկահայ վաճառականության ծնունդը, օսմանյան Թուրքիայից և Ռուսաստանից որոշակի թվով հայեր առևտրական ծեռնարկներ են իրականացրել իրենց երկրերի և օվկիանոսով բաժանված հեռավոր ԱՄՆ-ի միջև: Օրինակ 1875 թ. Մինասյան Եղբայրները, ապա նաև ուրիշները «բավական բանով գործառնություններ» են իրականացրել Կ.Պոլսի և ամերիկյան տարբեր քաղաքների միջև: «Այս հայ առևտրականները սկզբուն երթևեկի վիճակ են ունեցել, իսկ XIX դ. 80-ական թվականներից նրանց մեծ մասը մշտական բնակություն է հաստատել Ամերիկայում»: ⁹¹ Դեռագայում, Դովիհաննես Թավշանջյանի, Արշակ և Միհրան Կարագյոյան եղբայրների, ճշմարտախոսյանի և արևմտահայ այլ «ճարտար գործագետներու և դրանատերու ծեռքով», հիմնականուն Թուրքիայից և Պարսկաստանից ԱՄՆ է սկսել արտահանվել արևելյան գորգը լայն տարածում ու ճանաչում գտնելով նաև այդտեղ: Արդեն 1880-ական թվականներին արևելյան գորգի խանութներ են բացվել Նյու Յորքում, Բոստոնում, Չիկագոյում: ⁹² Արևելահայ իրականության մեջ դեպի ԱՄՆ գորգի արտահանման մեջնաշնորհը պատկանել է Երևանի մեծահարուստ Գյուլբենկյան տոհմի ներկայացուցիչներ Պատրիկ, Գուլարի, Հարություն Եղբայրներին, որոնք 1890 թ. Նյու Յորքում հիմնելով իրենց ընտանեկան համընդիմանուր առևտրական գործառնությունների մասնաճյուղը, ներգրավվել են հատկապես արևելյան գորգի առևտրում: ⁹³

Արդեն 1890-ական թվականներից Նյու Յորքում գործել են Գյուլարի Գյուլբենկյանի, Արշակ և Միհրան Կարագյոյան եղբայրների, Սարգս Թելքեյանի, Շովկիաննես Թավշանջյանի, Պետրոս Ղազանջյանի, Թոփալյան Եղբայրների, Բոստոնում Հակոբ Պողոսյանի, Չիկագոյում Միհրան Կոստիկյանի, Փուշմանների ընտանիքի և Հակոբ Իսկանյանի հիմնած և լայն ճանաչում ու համբավ ծեռք բերած արևելյան գորգի խոշոր ընկերությունները: ⁹⁴

Բացի արևելյան գորգի մեծածախ առևտրից, հարյուրավոր գաղթական հայեր

Ներգրավվել են մանրածախ գորգարտադրության, գորգերի վերանորոգման ու լվացման, ինչպես նաև համապատասխան դազգահների արտադրության բնագավառներում: Ընդ որում, եթե 1899 թ. տեղական գորգարտադրությունից ստացված արտադրանքը կազմել է 48.000.000 դոլար, ապա 1914 թ. այն աճել է մինչև 69.000.000-ի:⁹⁵ 1915 թ. ԱՄՆ-ում կային արևելյան գորգի 75 խոշոր հայկական ընկերություններ և 200-ից ավելի վերանորոգման փոքր արհեստանոցներ: ⁹⁶ Սիայն նյու Յորք քաղաքում գորգի վերանորոգման ու լվացման արհեստանոցների թիվը հասել է 25-ի: Տարիների ընթացքում աճել է նաև գորգի գործով գրաղվող հայերի թիվը: Օրինակ 1920-ական թվականների սկզբին միայն Լոս Անջելեսում կար գորգի մեծաքանակ ու փոքրաքանակ 10-12 վաճառական:⁹⁷ Այնպես որ, իշխալ ասպարեզներում հայերը, շնորհիվ Թուրքիայում, Պարսկաստանում և այլ վայրերում իրենց ունեցած գործարար կապերի, մինչև Առաջին աշխարհամարտ հասել են մենաշնորհային դիրքի հաջողությանք մրցելով հույն, հրեա կամ պարսիկ վաճառականների հետ. ավելի քան մեկ տասնյակ, հիմնականում նյույորքաբնակ հայազգի վաճառականների կողմից ԱՄՆ-ի շուկաներն են ներմուծվել արևելյան գորգի 70-80%-ը:⁹⁸

Հսկայական էր արևելյան գորգի առևտրից ստացված եկամուտը: Այսպես, եթե 1893 թ. Նյու Յորք ներմուծված գորգերի արժեքը կազմել է 300.000 դոլար, ապա 1907-1914 թթ.՝ արդեն 4.000.000 դոլար և ավելին: Թուրքիայում 100 դոլարի արժեք ունեցող գորգը Նյու Յորքում 200-1000 դոլար էր: Պատահական չէ, որ հայ մեծահարուստ վաճառականները երկրի հասարակական կյանքում հեղինակություն վայելող անհատներ էին, որոնք, ուսկեսած շքեղ տների ու խանութների սեփականատերեր լինելով հանդերձ, գործուն մասնակցություն են ունեցել Նյու Երկրի և հայրենի բնօրրանի բազմաթիվ քարեգործական ձեռնարկներին:⁹⁹

Ընդհանուր առմամբ, հայ գործարարների շրջանում սեփական խոշոր գործերի (մեծ խանութներ, առևտրական տներ, գործարաններ և այլն), ինչպես նաև անշարժ գույքի ու կալվածքի տեր դարձածների թիվը համեմատաբար մեծ չի եղել (1912 թ. տվյալներով ամերիկահայ դրամատերերի կարողությունը հետկայալն էր. 100 հայ ուներ 10.000-100.000 դոլար, իսկ 8-10 ընտանիք մի քանի 100.000¹⁰⁰): Այդ համգամանքն ունեցել է ինչպես տնտեսական (գաղթականների մեծ մասը միջին և ցածր կարողության տեր էին), այնպես էլ քաղաքական (հայերը հիմնականում փայփայել են հայրենի բնակավայրեր վերադառնալու հույսը) նախադրյալներ:

Սակայն պատմական դեպքերի գարգացման արդյունքում Ողուսաստանում ծավալված բոլշևիկյան, ինչպես նաև Թուրքիայում սկսված քեմալական շարժումներն ի դերև են արել օտար ափերում ապաստանած հայ գաղթականների հայրենի օջախներ վերադառնալու նվիրական երազը՝ պատճառ դառնալով, որպեսզի նրանցից առավել ունակներն աստիճանաբար ավելի գործուն կերպով ներգրավվեին ամերիկյան տնտեսական կյանքում դառնալով խոշոր սեփականատերեր: Այնպես որ, արդեն Առաջին աշխարհամարտի ավարտին ԱՄՆ-ում ազգային խոշոր դրամատերերը (գորգի առևտրականներ, գործարանատերեր, խոշոր ագարակատերեր) կազմել են հայ բնակչության ընդամենը 0,5%-ը, մանր առևտրականները, արհեստավորներն ու փոքր ագարակատերերը 4,5%, իսկ աշխատավորները՝ 95%: Ընդ որում, սեփական տուն կամ

կալվածք ունեին վերոհիշյալ հայերի 3-5%-ը, իսկ 90%-ը գործարանների կամ ագարակների աշխատավորներ էին:¹⁰¹

Եթե ԱՄՆ-ի արևելյան տարածաշրջանում բնակություն հաստատած հայերն առանձնապես մեծ հաջողությունների էին հասել արևելյան գորդի ներուժման, վաճառքի, արտադրության ու վերանորոգման ասպարեզներում, ինչպես նաև գրադարձ էին համատեղ աշխատանք պահանջող գործարանային արտադրություններում, ապա արևմտացում նրանք ներգրաված էին ազգային նկարագրին առավել հոգեհարազատ գյուղատնտեսական արտադրությունում, որտեղ գերակշռողն անհատական աշխատանքն էր (հայերը գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացրել նաև արևելքում Նյու Ինգլանդի տարածաշրջանի Մեյն, Նյու Յեմփշիր, Սասսաքս և Բրուս, Ռոդ Այլենդ և այլ նահանգներում, սակայն տարրա մեջ բարենպաստ կլիմայական պայմանների կարծատև լինելը պատճառ է հանդիսացել, որ շատերն այդ վայրերից ևս հեռանային դեպի արևմուտք¹⁰²): Այս առումով, նրանց գլխավոր կենտրոնատեղին երկրի արևմտյան ափին գտնվող Կալիֆորնիայի տարածքն էր և հատկապես նահանգի սրտում գտնվող Սան Ռուֆին հովիտը: Միաժամանակ, Կալիֆորնիայում բնակություն հաստատած հայերի զգալի մասը 86%-ը եկել էր ԱՄՆ-ի արևելյան և կենտրոնական արդյունաբերական շրջաններից. այսպես մի վիճակագրության համաձայն, միջին հաշվով Ֆրեզնո ժամանած 192 հայերից 165-ը կամ 84%-ը նախկինում 5-7 տարի բնակվել էր երկրի վերոհիշյալ տարածքներում, իսկ մեկ այլ վիճակագրությամբ, Ֆրեզնո արքանական հայազգի 67 տղամարդկանցից 31-ը կամ 46%-ը արդյունաբերական հիշյալ տարածքների նախկին գործավորներ էին:¹⁰³ Նույնպիսի իրավիճակ էր տիրում նաև Լոս Անջելեսում, որտեղ բնակվող հայազգի տղամարդկանց առաջին սերնդի ներկայացուցիչների 2/3-ը ծննդել էր ԱՄՆ-ի արևելյան նահանգներում, նաև աշխատավայես՝ Մասսաչուսեթսում:¹⁰⁴

Դեռևս անցյալ դարավերջին Կալիֆորնիայի նահանգի Սան Ռուֆին հովիտն անապատ էր, «գետերը առանց այստեղով հոսելու օվկիանոսն էին հոսում ... հողը արժեք չուներ»:¹⁰⁵ Սան Ռուֆին հովիտն անապատից դրախտի վերածելու երկարամյա ու դժվարին գործում Կալիֆորնիայի նահանգի առաջին վերաբնակիչների շարքում իրենց անգնահատելի ավանդն են ներդրել նաև ամերիկահայ գաղթականները, որոնք, իրենց քրտինքը խառնելով գետերի հետ, որոգելի ու նշակելի էին դարձել ամայի տարածությունները: Սկզբում հող ծեռք բերելը դժվարություն չէր ներկայացնում. յուրաքանչյուր քաղաքացի կարող էր կառավարությունից անվճար վերցնել 160 ակր հող:¹⁰⁶ Դետագայում, երբ օրական 11 ժամ հողագործական աշխատանքը վարձատրվում էր 75 մետր, հնարավոր էր օրավարձի փոխարեն ծեռք բերել 1-ական ակր հող: Խսկ մինչ այդ, տասնամյակների ընթացքում 1 ակր հողի արժեքը կես դոլարից ամել էր մինչև 100, ապա նաև 700-800 և ավելի դոլարի:¹⁰⁷

12 գավառներից բաղկացած Սան Ռուֆին հովիտի կենտրոնը Ֆրեզնոն է, որը, հիմնականում շնորհիկ այդտեղ մեծամասնություն կազմող հայերի քրտնաշան աշխատանքի, «դաշտին ամենահարուստ ու ծաղկյալ մասն է և նահանգին բոլոր գավառները կը գերազանցե»: Բացի Ֆրեզնոյից, հայ երկրագործները հաստատվել են նաև Ֆառլերում, Ռիդլիում, Փարլիերում, Սենթկրում, Քինգզբրուգում, Տայնուպայում, Սելմայում, Թերլիում, Թովլարայում, Եղեմում, Օրոսայում, Սուլթանայում, Վայսիլիայում, ինչպես նաև Լոս Անջելեսում, Ուեյնենդում, Իմփերիալ Վելիում և հարակից այլ շրջաններում:¹⁰⁸

Երկրի արևելյան նահանգներից, ապա նաև աշխարհի հայաբնակ այլ վայրերից գյուղատնտեսական Կալիֆոռնիա ժամանած սահմանափակ կարողության տեր և մինչ այդ հողագործական աշխատանքի փորձ չունեցող հայերը (1898-1929 թթ. ընկած ժամանակահատվածում ԱՄՆ մուտք գործած 53.000 հայերից միայն 22,8%-ն էր նախկինում գրավվել գյուղատնտեսական աշխատանքով¹⁰⁹) սկզբնական շրջանուն բախվել են բազմաթիվ տնտեսական դժվարությունների: Նրանց մասին ասել են. «Ասոնք չամիչի հնայքեն բովուած, հոս եկած ու անմիջապես երկրագործներ եղած են առանց իրենց կեանքին մէջ բահի նը կորը բռնած ըլլալու, և բնականաբար իրենց հաջողութիւնը սահմանափակ եղած է», մինչդեռ «Երկրագործ հայերը շատ աւելի յաջողութիւն գտած են իրենց նախկին փորձառութեանը շնորհիւ»:¹¹⁰ Նրանցից շատերը դրամ վաստակելու նպատակով, 12-16 ժամ իրենց հողատարածքներում աշխատելուց հետո, աշխատուն էին նաև հարևանների տնտեսություններում: Նախապես գուրկ լինելով հողատարածքներ կամ այգիներ գնելու հնարավորությունից, հայերի մէծ մասն օրական միջին հաշվով 2 դրլարով վարձվել է որպես հողագործական աշխատավոր, մինչ մյուսները վարձակալել են զգալի չափով հողատարածքներ:¹¹¹

Ֆրեզնոյում բազմաթիվ հայեր, հիմնականում կանայք ու երեխաներ, ներգրավվել են գյուղատնտեսական ապրանքների փարեթավորնան աշխատանքներին գերակշիռ թիվ կազմելով ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչների համեմատությամբ. այսպես 1917 թ. տվյալ ասպարեզում տեղի աշխատողների 15%-ը հայեր էին: Թեև աշխատանքը հեռու էր հաճելի լինելուց, իսկ աշխատավարձը խիստ ցածր էր (օրական 10-ժամյա աշխատանքի դիմաց՝ 2-2,5 դրլար), այնուամենայնիվ, այն թույլ էր տալիս հայերին հայրայքել իրենց ընտանիքների ապրուստը և խնայել որոշակի գումար: Աստիճանաբար, գյուղատնտեսության մեջ ներգրավված և այլոց համեմատությամբ չափավոր ծախսեր կատարող հայ ընտանիքը համառ ու դժվարին աշխատանքի շնորհիվ դառնում է տան, անասունների, բանջարանցի և այլնի սեփականատեր վերածվելով ազատ ֆերմերի և նվազեցնելով վարձու աշխատանք կատարողների թիվը: Այսպես՝ 1908 թ. Ֆրեզնոյում խաղողահավաքածան աշխատանքներին ներգրավված 838 հոգուց ընդամենը 25-ն էր հայ, այսինքն՝ 3%-ը:¹¹²

Տարիների ընթացքում հայերն իրենց ձեռքն էին վերցրել նահանգի լավագույն հողատարածքներն ու այգիները, որտեղ հիմնական մշակությունը խաղողն էր: Այսպես, եթե դարասկզբին Ֆրեզնոյի և Թուլարայի հայերն ունեին ընդհանուր առնամբ 10.000 ակր հող՝ 2 մլն. դրլար արժողությամբ, իսկ 1912 թ. (երբ Վերոհիշյալ գավառներում հայերի թիվը չուրզ 5.000 էր)՝ 18.000-19.000 ակր՝ 3,5-4 դրլարի արժողությամբ, ապա արդեն 1922 թ. միայն Ֆրեզնոյում այն կազմել է 37.555 ակր՝ ավելի քան 30 մլն դրլարի արժողությամբ,¹¹³ ընդ որում, յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ միջին հաշվով 20-40, երենըն նաև 80 ակր հող: Իսկ ողջ Սան Ուուգին հովտում 1908 թ. հայերի ձեռքում էր կենտրոնացած 25.000 ակր հողատարածք, այսինքն՝ ընդհանուրի 3/5 մասը:¹¹⁴ ճապոնացի ագրարակատերերի հետ մրցակցության ընթացքում լավագույն հողատարածքներն իրենց ձեռքում պահելու նպատակով հայերը շատ հաճախ բարձրացրել են դրանց գները: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ դարասկզբին Կալիֆոռնիա մուտք գործած հայերից շատերը երկրի արևելյան արդյունաբերական նահանգներից որոշակի դրամագիլսով եկած նախկին գործարարներ էին: Օդինակ 1900-

1908 թթ. Սան Ուոգին հովիտ մեկնած հայերի թվում էին 17 խոշոր ազարակատերեր, որոնք ԱՄՆ-ի Գաղթականական հանձնախմբի փաստաթղթերում արձանագրվել են որպես «գյուղի տիպիկ հայ հողատերեր», քանի որ նրանց ֆինանսական ցուցանիշներն ամենից բարձրն էին նահանգի հողագործական ասպարեզում քանակապես ու որակապես գերազիր դեռ ունեցող այլազգի ներկայացուցիչների համեմատությամբ: Վերոհիշյալ 17 հողատերերը Կալիֆոռնիա են մուտք գործել ընդհանուր առմանք 52.150 դոլարի դրամական կարողությամբ (ամենացածրը 150 դոլար, ամենաբարձրը՝ 10.000 դոլար): Այնպես որ, հայերն իրենց հետ բերած «յուրաքանչյուր փենին ներդնում էին հողի մեջ»:¹¹⁵

Տարիների տքնածան աշխատանքի շնորհիվ մինչև Առաջին աշխարհամարտը նահանգի հայ երկրագործները հասել են եական հաջողությունների: Գաղթականական հանձնախմբի ուսումնասիրությունների համաձայն, վերոհիշյալ 17 ազարակատերերն արդեն սեփականացրել էին ընդհանուր առմանք 246.150 դոլարի կարողություն, որից, եթե հանենք 79.825 դոլարի բազմաթիվ պարտքերը, նրանց կարողության ընդհանուր գումարը կկազմի 166.325 դոլար: Ընդհանուր առմանք, ստացվում է 114.175 դոլարի աճ, որը յուրաքանչյուր ազարակատերից համար միջին հաշվով կազմում է ավելի քան 9.600 դոլար (17 ազարակատերերից 4-ը ուներ մինչև 5.000, 5-ը՝ 5.000-10.000, 5-ը՝ 10.000-25.000, 2-ը՝ մինչև 25.000 դոլարի կարողություն), այսինքն՝ ուր տարվա մեջ նրանց կարողությունը եռապատկվել, քառապատկվել էր:¹¹⁶

Կալիֆոռնիայի նահանգի հայերը, հիրավի, խոշոր ներդրում են ունեցել տեղի գյուղատնտեսության զարգացման գործում: Նրանց է պատկանում գյուղատնտեսական որոշ մշակություններ (ծնեբեկ, ծմերուկ, պարսկական, կասարայի, դիարբեքիրի, թուրքական, հայկական և այլ տեսակների սեխ և այլն) առաջին անգամ նահանգ ներմուծած և դրանք յուրատեսակ մերողներով աճեցրած լինելու, ինչպես նաև վերամշակելով, դրանք չորացնելու ու մերժան համար փաթեթավորելու պատիվը: Այսպես՝ անցյալ դարի վերջին Դաշի Աղա Փիթըըսը Պարսկաստանից ներմուծել էր ընկույզի, նուշի, պիստակի, կասարայի սեխի և բանջարեղենի որոշ տեսակների սերմեր, նրա գործը շարունակել էր Ա.Մինասյանը, որի ջանքերով պիստակի արտադրությունը զգալի չափով գերազանցել էր նույնիսկ աշխարհով մեկ հայտնի սիցիլիական տեսակին, թզի մշակությունը մեծապես բարելավվել էր Բ.Զ.Աղաջանյանի կողմից Զմյուռնիայից բերված սերմերի շնորհիվ, իսկ թզի սպիտակ աղրիատիկ և այլ տեսակների (մսքեր, ֆերզագո, զմյուռնիական) մեծաքանակ մշակությունն ու արտահանումը պատկանել էր հայր և որդի Մելքոն և Շենրի Սարգսյաններին:¹¹⁷ Նրանց հետևող մեղողոր Մարգարյանն աճեցրել էր քալիմիրնական և նոր «Սարգսյան» տեսակի թզեր, սեխի իր խոշոր ցանքատարածություններով մեծ ճանաչում ուներ «սեխի արքա» Գրիգոր Առաքելյանը և այլոր:¹¹⁸ Հայերի աճեցրած մրգերի 5-10%-ն արտահանում էր երկրից:¹¹⁹

Ամերիկահայերի ծեռքում էր կենտրոնացած նաև Կալիֆոռնիայի խաղողի մշակությունը: 1891-1904 թթ. նրանք գնել էին խաղողի մի շարք այգիներ Ֆրեզնոյի տարածքում, սեփականացրել 10.000 ակր Սան Ուոգին հովտում, այսինքն չամիչի և գինու արտադրության համար նախատեսված ամբողջ 94.600 ակր հողատարածքի 10,5%-ը: Ֆրեզնոյում չամիչ արտադրողների 1/4-ը կամ շուրջ 25%-ը հայեր էին: 1908 թ. խաղողի մշակության համար հայերի ծեռքում էր կենտրոնացած 16.000-20.000

ակը հողատարածք կամ ողջ չամիչի արտադրության 1/6-ը:²¹ Ամերիկյան Գարբականական հանձնախմբի տվյալներով, հիշյալ բնագավառում հայերը շատ ավելի հաջողակ էին, քան նույնիսկ Կալիֆորնիայի գյուղատնտեսական ասպարեզում մեծ համբավ ունեցող ճապոնացիները, քանի որ կարողացել էին արագ կերպով հարստանալ շնորհիվ իրենց աշխատասիրության, գործարար ճարպկության և խելամիտ տնտեսելու կարողությունների: Թեև անսպասելի փորորիկներն ու տեղատարափ անձրևները պատճառ են հանդիսացել, որպեսզի առատ բերքը երբեմն փչանա, բայց և այնպես, համբերատար հայ հողագործը լավագույն հեռանկարների հույսով հաղթահարել է դժվարությունները՝ ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկզբին վրա հասած տնտեսական ճգնաժամը, երբ շատ շտերը հարկադրված էին հեռանալ Ֆրեզնոյից:²²

Կալիֆորնիայի հայերը, հանձինս Սիմոն աղայի, ապա Վահե Քիրօրյանի և այլոց, գրադպել են նաև բլղուրի արտադրությամբ ու երկրով մեկ դրա վաճառքով, ինչպես նաև նարնջի, ծիրանի, ելակի, տարրեր տեսակի բանջարեղենների, հատապըտությունների մշակությամբ, թռչնաբուծությամբ, ծխախոտագործությամբ, գինեգործությամբ և այլն: Գյուղատնտեսական աշխատանքներից բացի, նահանգի հայերը ներգրավվել են նաև այլ ասպարեզներում: Այսպես Սան Ռուզին հիվանդ հայերը ներգրավվել են ոչ միայն երկրագործության, այլ նաև հանքագործության մեջ՝ մասնակցելով նավթի, արջասպի արդյունահանմանը:²³ Դայերի շրջանում եղել են ինչպես արհեստավոր, այնպես էլ արհեստավարժ ու գործարար մարդիկ: Մեծ թիվ են կազմել կոչիկ վերանորոգողները, վարսավիրները, դերձակները, նպարավաճառները և այլոք: Եղել են նաև բեղագործներ, բժիշկներ, իրավաբաններ, ինչպես նաև ժամագործներ, գոհարագործներ, լողարանների, գնդամուղի խաղարանների, ճաշարանների, կահույքի, ավտոմեքենայի, հեծանիվի ու չորացրած մրգերի խանութների սեփականատերեր և այլոք:²⁴

Այդուհանդերձ, գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված հայերի թիվը գգալի չափով գերազանցել է ոչ գյուղատնտեսականին: Դա պարզ երևում է Ֆրեզնոյի օրինակով. 1897 թ. քաղաքի գյուղական հատվածը կազմող 329 հայերից ընդամենը 0,18%-ը, այսինքն՝ միայն 51 մարդ էր զերծ գյուղական աշխատանքից և գրադպած այլ ասպարեզներում: Եվ կամ եթե 1905-1910 թթ. Ֆրեզնոյի գյուղական բնակչությունն աճել է 100%-ով, ապա ոչ գյուղականը՝ ընդամենը 40%-ով:²⁵

Կալիֆորնիաբնակ հայերի ջանքերով նահանգում առաջին անգամ հիմնվել է երկրի ատլանտյան ափամերձ շրջաններում մեծ համբավ վայելող արևելյան գորգը, որի առաջին սկզբանավորողն այդտեղ Իսկենդեր Բեյն էր 1893 թ.: Դարասկզբին ի հայտ են եկել գորգի մի խումբ վաճառականներ՝ Զ. Քարթմանյանը, Զ. Ֆիլիփսը, Ռուբենը, Ջ. Խալլովյանը, Ավ. Էնֆիաջյանը, Զ. Փաշգյանը, Զ. Լ. Նազարյանը, Ս. Յ. Փերնեյնը, Ք. Դարփությանը և այլոք: Առաջին աշխարհամարտի տարիներին, առկա քաղաքական հանգամանքներից ելնելով, հայերն աստիճանաբար կորցրել են գորգավաճառության ասպարեզում դեկավար դիրքը՝ ժամանակավորապես իրենց տեղը գիշելով ամերիկացի խոշոր վաճառականներին, թեև հետագա տարիներին միայն Սան Ֆրանցիսկոյի հայերի ծեռ շում կենտրոնացած էր հյուսիսային Կալիֆորնիայում արևելյան գորգի վաճառքի 50%-ը:²⁶

Լոսանջելեսարնակ հայերի շրջանում թիզ թվով հայեր են ներգրավված եղել գյուղատնտեսական աշխատանքներում (նրանք քաղաքամերձ տարածքներում փոքր ագրարակների, մրգատու այգիների սեփականատերեր էին), մեծ թիվ են կազմել հմուտ (արհեստավորներ, դերձակներ, կոչկակարներ, միջնորդներ, հագուստագործներ, վարսավիրներ և այլոք) և արհեստավարժ (հոգևորականներ, բժիշկներ, ատամնաբույժներ, ինժեներներ, քիմիկոսներ, ուսուցիչներ, ճարտարապետներ և այլոք) մարդիկ, որոնց տոկոսային հարաբերությունը բարձր էր նույնիսկ հարավ-արևելյան Եվրոպայի և օսմանյան կայսրությունից գաղթած ազգային այլ ներկայացուցիչների համեմատությամբ:²⁷ (Լոս Անջելեսի հայ հմուտ արհեստավորները կազմել են 39,5%, ագրարակներում աշխատողները՝ 23,5%, արհեստավարժները՝ 2,3%, այլ գրադարաններում՝ 34,7%²⁸): Բազմաթիվ հայեր զբաղված էին նավարեռնան կայաններում, այդուսաշինական և այլ գործարաններում, տարբեր խանութներում: Քաղաքի աշխատող հայերի 13%-ը ներգրավված էր տարբեր աշխատանքներում 10%-ը փայտամշակնան ու երկաթի գործարաններում, 2%-ը՝ նպարեղնի ու մսավաճառի խանութների սեփականատեր էր:²⁹

Լոս Անջելեսի հայերը, որոնցում մեծ թիվ էին կազմում արևելահայերը, հիմնականում ներգրավված էին աղբահավաքրման աշխատանքներում: Երբ 1908 թ. այդ ասպարեզում հայտնվել էր առաջին հայը, աղբահավաքրման գործի 75%-ը սևամորթների, 25%-ը իռլանդացիների և իտալացիների ձեռքում էր, իսկ հետագայում 75%-ն անցել է հայերին, 15%-ը՝ սևամորթներին, իտալացիներին, 10%-ը՝ ռուսներին:³⁰ Հայերի նաքուր աշխատանքը քաղաքավայետարանի կողմից բազմից արժանացել է գովեստների: Շատ հայեր վերոհիշյալ բնագավառում իրենց նվիրված աշխատանքի շնորհիվ զգալի չափով հարստացել և հաջողությամբ նրանց են այլազգի ներկայացուցիչների հետ: Առավել հայտնի էր աղբահավաքրման խոշոր ընկերություն ունեցող Զ.Թ.Աղաջանյանը, որն իր մասնաճյուղերը տարածել էր Սանտա Աննայում, Սան Փեղոյում, Ուիլմինգթոնում, Յարբրը Սիրիում, Սանտա Մարիայում և այլուր:³¹

Կալիֆորնիայի և մասնավորապես, լոսանջելեսարնակ կանացի սեռի հայ ներկայացուցիչներն իրենց ընտանիքների ապրուստը հոգալու նպատակով տնային պայմաններում զբաղվել են ազգային նկարագրին ու բնօրրաններին առավել հոգեհարազար աշխատանքներով՝ ձեռագործով և ասեղնագործությամբ, որոնց վաճառքով, գեղեցիկ ստեղծագործությունները, տարածվելով ողջ Երկրով, մեկ արժանացել են օտարների համընդհանուր ճանաչմանը, իիացմունքին ու բարձր գնահատանքին: Դայ կանաց ձեռքի աշխատանքներում զգալի մաս են կազմել ասեղնագործված ժանյակավոր տարբեր տեսակի թաշկինակները, օձիքները, թևնոցները, գոտիները, հագուստները, գլխարկները, վգլապները, բարձերը, վարագույրները, սեղանի ծածկոցները, նախաճաշանոցները, թեյարանները և այլն, որոնց արժեքը կազմել է 1-ից մինչև 50 և ավելի դոլար: Կանայք աշխատել են նաև չորացրած մրգերի, թխվածքեղնի խանութներում, ճաշարաններում, ծաղկանոցներում և այլուր:³²

Ընդհանուր առմամբ, Լոս Անջելեսում տղամարդկանց օրական միջին աշխատավարձը 2,50-4 դոլար էր, կանանցը՝ 2 դոլար կամ շաբաթական 10-18 դոլար: ³³ Հայ ընտանիքների ողջ շաբաթական եկամուտը կազմել է 18-135 դոլար, ինչը միջին հաշվով մեծ մասի համար հավասար էր 35 դոլար:³⁴

Կալիֆոռնիայի հայերի նյութական վիճակը շատ ավելի բարենպաստ էր, քան երկրի արևելյան և միջին արևմտյան նահանգերում բնակվողներինը, քանի որ առաջնները զերծ էին ծմեռվա վառելիքի և տար հագուստեղենի համար անհրաժեշտ ժախսերից: Յետևաբար, վերոհիշյալ գրադարձների տեր հայերի ստացած աշխատավարձը բավարարել է նրանց կենցաղային պահանջները, թույլ տվել խնայողություն կատարել մինչև անգամ աշխատավարձի կեսի չափով, որի դեպքում նրանց հաջողվել է սեփական գործեր բացել, ինչպես նաև օգնել հեռավոր երկրի իրենց հայրենակիցներին: Այսպես 1914-1920 թթ. Լու Անժելեսի հայերի կողմից այդ նպատակով առաքվել է շուրջ 75.000 դոլար:¹³⁵

Ամերիկաբնակ հայերի ուսման նկատմամբ ունեցած սերն ու մասնագիտական կրթություն ծեղոք բերելու անհուն ցանկությունը խթան են հանդիսացել նաև հարյուրավոր արհեստավարժ ամերիկահայերի ի հայտ գալուն: Նրանց շարքում մեծ թիվ են կազմել ուսուցիչները, հոգևորականները, գրականագետները, հայլեզու և անգլիալեզու բերերի խմբագիրները, դասախոսները, ինժեներները, գյուտարարները, ֆիզիկոսները, քիմիկոսները, բժիշկները, քանիդակորժները, արվեստագետները, երաժշտները, ճարտարապետները, իրավաբանները, ապահովագրական ընկերությունների կամ կալվածքների գործակալներն ու այլ մասնագիտությունների տեր մարդիկ (1899-1917 թթ. ԱՄՆ-ում կար 782 արհեստավարժ հայ): 1920 թ. տվյալներով ԱՄՆ-ուներ հայազգի շուրջ 100 հոգևորականներ, որոնցից 39-ը քարոզում էին ամերիկան ժողովարաններում, ավելի քան 200 բժիշկներ ու ատամնաբույժներ և 15 իրավաբաններ, որոնց հաճախորդների մեծ մասը ամերիկացիներ էին, ինչը վկայում էր նրանց ունեցած բարձր որակափորման մասին: Ամերիկյան առաջնակարգ կոլեջներում և համալսարաններում դասավանդում էին մեկ տասնյակից ավելի հայ դասախոսներ ու պրոֆեսորներ (Դարվարդի ատամնաբույժական դպրոցի ռազմական վիրաբուժության պրոֆեսոր, Լիհայի օրգանական քիմիայի դպրոցի և Փենսիլվանիայի համալսարանի ֆիզիկայի պրոֆեսորների օգնականներ, Սիչիգանի համալսարանի բժշկական դպրոցի և Յելի համալսարանի դասախոսներ և այլք):¹³⁶

Ամերիկյան բժշկության մեծագույն ներկայացուցիչը ԱՄՆ-ում և Եվրոպայում մեծ հոչակ վայելող դեմքի պլաստիկ վիրաբույժ Վարազդատ Ղազանջյանն էր: Յոգեբուժության ասպարեզում ճանաչված էր Նյու Յորքի Բելեվյու հիվանդանոցի դոկտոր, ամերիկան հոգեբանական հաստատության դեկանը Մինաս Գրեգորին: Ամերիկահայերի շրջանում եղել են մի շարք երևելի գյուտարարներ, որոնց շրջանում հանրահայտ էր ռենտգենյան ճառագայթների հայտնագործնան ասպարեզում աշխարհում առաջնեկ հանդիսացած և իր հայտնագործությանը զոհ գնացած բժշկագիտության դոկտոր Միհրան Գրիգոր Ղասարյանը՝ Ֆիլադելֆիայից:¹³⁷ Կալիֆոռնիայի համալսարանի շրջանավարտ Մուշեղ Վայգունուն հաջողվել էր բացահայտել խաղողի շաքարը գինեթրվի վերածելու սինթետիկ եղանակը: Սվազգի Ա.Ք. Ղերբաբը Լիննից, իր ձեռքով կառուցել էր զարմանալիորեն թերք (175-30 փաունդի դիմաց 25-19 փաունդ կծողությունը = 453,6 գր) հեծանիվներ: Առաջին աշխարհամարտի տարիներին ֆիզիկայի ասպարեզում Կարապետ Կիրակոսյանը հայտնագործել էր «Էներգիայից ազատ շարժի», այսինքն ազատ հղորության և հղորություն ստեղծելու սկզբունքը:¹³⁸

Ամերիկյան Գաղթականական հանձնախմբի Վիճակագրական տվյալների համաձայն, 1899-1917 թթ. ԱՄՆ-ում կային 12.453 առանց զբաղմունքի տեր հայեր, որոնց մեծ մասը կանայք էին և բարձր տարիքի երեխաներ: ¹³⁹ (Տես Այսուսակ XIII ^{139w}):

Այսպիսով, տասնամյակների ընթացքում հայերը հայտնվելով Ամերիկայում և օգտվելով երկրի ընծեռած լայն ու բազմակողմանի հնարավորություններից, հաջողել են ներգրավվել տարբեր բնույթի զբաղմունքներում իրենց մտավոր ու ֆիզիկական կարողություններն ամբողջովին ծառայեցնելով նախընտրած ասպարեզներին և իրենց նպաստը բերելով նոր որոշնորած երկրի առաջընթացին:

ԱԴՅՈՒՍԱԿ XIII

1899-1917 թթ. ԱՄՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ 55.067 ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ

Արիեստավոր	Թվաքանակ
Կոչկագործ	3.594
դերձակ	2.267
հյուսն	1.419
ուստայնագործ	950
դարբին	720
վարսավիր	718
երկաթագործ, պողպատագործ	474
հացքուխ	445
գրագիր, հաշվապահ	423
որմնադիր	254
դերձակուիհի	211
մսագործ	205
գոհարավաճառ	195
- մետաղագործ	176
թիթեղագործ	149
նկարիչ, ապակեվաճառ	141
կանացի հագուստի դերձակ	120
մեքենագործ	111
մեքենավար	110
խաղախորդ	106

Ժամագործ	96
պարտիզապան	80
փականակագործ	72
մեխանիկ	71
տպագրիչ	62
ծխախոտագործ	60
լուսամկարիչ	58
հնոցապան	52
նավաստի	47
քարտաշ	43
գործվածքագործ	35
թամբագործ, հեծելասարքագործ	35
հանքագործ	28
ջաղացապան	25
կազմարար	22
կահույքագործ	20
կահույքահարդար	20
փայտագործ	15
մուշտակագործ	11
փորագորող	11
կանացի գլխարկագործ	10
ծեփագործ	6
կապարագործ	6
սանձագործ	5
անվագործ	3
գլանակ պատրաստող	3
ծխախոտ պատրաստող	3
գլանակ հավաքող	1
գարեջրագործ	1
այլ արհեստավորներ	337
Ընդամենը՝	14.026

Արհեստավարժ	Թվաքանակ
ուսուցիչ	334
հոգևորական	107
ինժեներ	42
գոականագետ	40
բժիշկ	35
քանդակագործ, արվեստագետ	32
խմբագիր	20
դերասան	18
երաժիշտ	17
էլեկտրագետ	17
ճարտարապետ	17
իրավաբան	12
պետական պաշտոնյա	7
այլ արհեստավարժներ	84
Ընդամենը՝	782
Տարբեր զբաղմունքներ	Թվաքանակ
գործավոր	10.829
ագարակագործ	10.697
սպասավոր	3.386
ագարակատեր	1.281
առևտրական	1.117
միջնորդ	28
չորացնող	18
հյուրանոցապան	17
բանկի տեր	9
գործարանատեր	8
այլ զբաղմունքներ	416
Ընդամենը՝	27.806

Առանց գբաղմունքի	Թվաքանակ
Կանայք, երեխաներ	12.453
Ընդհանուր	55.067

Գ. ԱՄԵՐԻԿԱՅԱՅԵՐԻ ԿԵՆՍԱՍԿԱՐԴԱԿԸ

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի հայերն իրենց երկարամյա քրտնազան աշխատանքի, ինչպես նաև չափավոր, համեստ ու տնտեսող ապրելակերպի շնորհիվ հասել են զգալի հաջողությունների, բավականաչափ կարողության տեր դարձել էապես բարելավելով իրենց տնտեսական ու կենցաղային պայմանները:

Ամերիկահայերն իրենց կենսամակարդակով ու ապրուստի միջոցներով գրեթե չեն տարբերվել ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչներից: Ուներները, ինչպես նաև բարեկեցիկ կյանք ու միջին եկամուտ ունեցողները բնակվել են երկրի խոշոր և զիսավոր քաղաքների լավագույն ու հարուստ քաղանասերում՝ օգտվելով ամեն տեսակի բարիքներից, ծննդություններից և շայլություններից: Նրանք իհմնականում սեփականացրել են իրենց տները, ունեին լավագույն մակնիշի ավտոմեքենաներ, շքեղ կահկարասիններ, դաշնամուր, արվեստի թանկարժեք գործեր, արևելյան գորգեր, շատերն անշարժ գույքի, խոշոր կալվածքների սեփականատերեր են և այլն: Նրանց երեխաները հաճախում են լավագույն մասնավոր դպրոցներ, ուսանում կոլեջներում և համալսարաններում:

Այսպիսով, հայերը, ժամանակի ընթացքում հասնելով բարեկեցության, աստիճանաբար (հատկապես սկսած 1920 թվականից) լրել են քաղաքային իրենց խիստ բնակեցված ու աղմկոտ քաղանասերը և հաստատվել առավել հանգստավետ ու պատվավոր քաղանասերում:

Դամաձայն ԱՄՆ-ի Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների, Առաջին աշխարհամարտի ավարտին ԱՄՆ-ի արևելյան ու կենտրոնական նահանգներում իրենց բնակարանները սեփականացրած հայերի թիվը կազմել է 8,6%, ինչը բարձր էր ամերիկաբնակ այլազգի գաղթականների համեմատությամբ և ցածր՝ ամերիկահայ խոշորագույն գաղթօջախի Կալիֆոռնիայի հահանգի հայերի համեմատությամբ, որտեղ սեփական տուն ունեցողների թիվը կազմել է 75%:¹⁴⁰ (Տե՛ս Աղյուսակ XIV^{140a}):

ԱՂՅՈՒՍԱԿ XIV

1917 թ. ԱՄՆ-ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ով)	
հայ	8,6
սիրիացի	4,7
ռումինացի	2,6

հույն	1,5
ռուս	1,2

1918 թ. միայն Լոս Անջելես քաղաքում հայերն իրենց սեփականացրած տների և այլ անշարժ գույքերի չափով գերազանցել են այլազգի ներկայացուցիչներին:¹⁴¹ Գաղթականական հանձնախմբի 1920 թ. տվյալների համաձայն, հակառակ երկող տընտեսական անկայուն ու ճգնաժանային իրավիճակին, իրենց տները սեփականացնել հաջողացրել եր քաղաքաբնակ հայերի 52,7%-ը՝ ննանատիպ ամերիկացիների 46,9%-ի դիմաց:¹⁴²

Ամերիկահայերի և հատկապես կալիֆորնիաբնակ հայերի բարեկեցության մասին է վկայում նաև այն փաստը, որ 1922 թ. տվյալներով, ավելի քան 1.500 ֆրեզնաբնակ հայ, այսինքն յուրաքանչյուր չորս հայերից մեկը, ուներ սեփական ավտոմեքենա: Ամերիկահայ մի ժամանակակցի պատկերավոր արտօհայտությամբ, «...այն Դայերը, որ հայերնից մեջ հինգ տալերոց իշու մը վրայ նստելու բախտը ունեցած չեն իրենց ամբողջ կեանքերուն մէջ, իսու երկու հազար տալերոց օթօններուն մէջ նստած շուկայ կ'ելլեն»: Ֆրեզնոյի հայերի հարստությունը կազմել է քաղաքի ողջ բնակչության հարստության 1/8 մասը:¹⁴³

Ամերիկա ժամանած հայերն աստիճանաբար փոխել են նաև իրենց նիստ ու կացը. «Եթէ 1800 թուականներուն հայերուն արտօնուած չէր տան մէջ գործուած կապոյտ կտաւէ զատ որեւէ կերպասէ հագուստ հագնիլ, եւ այր մարդիկ իրաւունք չունեին ֆէս դմել, այժմ կացութիւնը տարբեր էր. Դայերը այլևս մետաքս կը հագնեին, դպրոցականներէն ոմանք երոպական տարագ, հարուստներու կօշիկները գօնտրա էին, աղքատութիւնը երթալով կը նուազէր. բարեկեցութիւնը ընդհանրացած էր»:¹⁴⁴

Նոր ժամանած կամ ցածր վարձատրվող գաղթական հայերը, ինչպես նաև թոշակով ապրողները հարկադրված էին բնակվել արդյունաբերական քաղաքների հետ ընկած ու աղքատ թաղանասերում՝ կենցաղային ու սանհտարական վատքար պայմաններում: Նրանք բնակվում էին խիստ խմբված և չօդակիսվող սենյակներում՝ առանց էլեկտրական հոսանքի, լուսավորության համար օգտագործում էին գազի լամպեր, իսկ կերակուրը պատրաստում էին փայտի վառարանների վրա կամ դրսում: Դատկապես անբարենապաստ էր լուսանցելեսաբնակ արևելահայ գաղթականների սոցիալ-տնտեսական վիճակը, որոնք, կատարելով ստորակարգ աշխատանքներ և վաստակելով ցածր աշխատավարձ, ստիպված էին բնակվել հետամնաց քաղամասների էժան կացարաններում երկու տասնյակ և ավելի հայերնակիցների հետ մի սենյակում խմբված: ԱՍՄ-ի Գաղթականական հանձնախմբի 1915-1916 թթ. հաղորդումներում խիստ կերպով քննադատվել են հայերի կենցաղային հակասանիտարական պայմանները, վատ կառուցված ու կեղսոտ տները: Դաճախ հիշյալ անբարենապաստ ապրելածներ լուրջ թշնամանքի տեղիք է տվել հայերի և այլազգի գաղթականների միջև՝ պատճառ հանդիսանալով բազմաթիվ խտրականական ընդհարումների, երբեմն նույնիսկ խոչընդոտել հայերի ազատ տեղաշարժը դեպի բնակության համար առավել հարմարավետ ու պատվաբեր թաղանասեր:¹⁴⁵ Այսուհանդերձ, հակառակ ունեցած սուլ միջոցների, արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ընտանիքներն իրենց

Վարձած սենյակների քանակությամբ և դրա համար վճարվող ամսեկան վարձով առաջ էին ամերիկաբնակ այլազգի գաղթականներից:¹⁴⁶ (Տես Աղյուսակ XV^{146w}):

Աղյուսակ XV

1917 թ. ԱՄՆ-ում ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՍՆԵՐԻ ՎԱՐՉԱԾ ԲՆԱԿԱՐԱՎՈՒՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ			
Ազգությունը	Բնակարանում վարձած սենյակների միջին թիվը	Յուրաքանչյուր բնակարանում զբաղեցնողների միջին թիվը	Ամսեկան միջին վարձը
բուլղար	2.41	6.19	5.91
իտալացի (իյուն.)	3.89	5.50	7.66
լեհ	3.82	6.06	7.30
լիտվացի	4.08	5.89	8.81
խորվաթ	4.01	7.65	8.55
հայ	4.83	4.98	11.17
հույն	4.13	6.13	9.02
ռուս	3.35	5.93	7.46
սերբ	4.88	9.62	9.78
սիրիացի	4.19	4.80	9.80
սլովակ	3.68	5.97	6.84

Նախորդ տարիների համեմատությամբ, 1917 թ. նվազել էր նաև յուրաքանչյուր սենյակում խնճված, ինչպես նաև գիշերօրիկներում և իջևանատներում համգրվանած հայերի թիվը՝ ի տարբերություն ամերիկաբնակ այլազգի գաղթականների:¹⁴⁷ (Տես Աղյուսակներ XVI^{147w}, XVII^{147p}):

Աղյուսակ XVI

1917 թ. ԱՄՆ-ում ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՍՆԵՐԻ ԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԾ ՏՆԵՐՈՒՄ		
Ազգությունը	Խմբվածությունը բնակարանում	Խմբվածությունը ննջարանում
բուլղար	2.53	3.20
լեհ	1.58	2.77

հայ	1.03	1.97
հույն	1.48	2.13
ռումինացի	2.57	3.72
սիրիացի	1.15	1.87
սլովակ	1.62	2.66

ԱՊՅՈՒՍԱԿ XVII

1917 թ. ԱՄՆ-ում ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐՈՒՄ, ԻԶԵՎԱՆԱՏՆԵՐՈՒՄ (յուրաքանչյուր 100 ընտանիքից)

ռումինացի	1223
բուլղար	829
սլովակ	322
հայ	196

Փաստացիորեն հայերի շրջանում չնշին թիվ են կազմել նաև բարեխնամ օգնության կարուտ չքավորները: Այսպես՝ Ռուրբեքերի Ընկերակցված գթասիրություններ կազմակերպության հաղորդումների համաձայն, 1896-1900 թթ. քաղաքում չքավոր հայերի թիվը կազմել է ուրեմն մարդ: Ամերիկյան «Բոստոնի Իվնինգ Թրանսֆրիփթ» թերթի համաձայն, 1893 թ. արդյունաբերական Բոստոն քաղաքում կար միայն մեկ չքավոր հայ, քանի որ «Դայը կոնախնութիւն աշխատել ամենուր, որտեղ կարող է, քան թե մուրալ կամ պարապ մնալ»:¹⁴⁸ 1917 թ. ՔԲԸ հաղորդած տվյալների համաձայն, Բոստոնում, Ռուրբեքերում, Չիկագոյում, Փրովիդենսում, Ֆիլադելֆիայում, Նյու Յորքում և ամերիկյան այլ խոշոր քաղաքներում վերջիններիս թիվը կազմել է միշտին հաշվով շուրջ հիսուն մարդ, այն էլ նրանց հոգածության հարցն իրենց վրա էին վերցրել հայկական բարեսիրական տարրեր կազմակերպությունները, ինչպես նաև մի շարք անհատ ամերիկահայեր: ¹⁴⁹ Նույն բվականին հայաշատ Ֆրեզնոյի գաղութում, հակառակ հայ բնակչության գերազիշտ թվի, նպաստի և գրաղվածության հանձնախումբ նրանց կատարած դիմումները կազմել են ընդհանուրի շուրջ 6%-ը: Միաժամանակ, 1917-1929 թթ. Ֆրեզնոյում հայ չքավորությունը կազմել է ընդհանուրի ոչ ավելի քան 2%-ը, թեև հայերն այնտեղ կազմում էին ողջ բնակչության 15%-ը:¹⁵⁰

Ամերիկահայերի սոցիալ-տնտեսական պայմաններից բխում էր նաև համապատասխան առողջական վիճակ, որը նույնպես թիւ էր տարբերվում ամերիկաբնակ այլ ազգերի առողջականից: Դիվանդություններն ու մանուկների մահացության տոկոսն առավելապես բարձր էր ցածր կենսամակարդակ ունեցող, այսինքն՝ կենցաղային ու աշխատանքային վատրար պայմաններում ապրող ու աշխատող հայերի շրջանում: Ամերիկահայ այդ խավերի մոտ լայն տարածում էր ստացել թոքախտը և թոքային այլ հիվանդությունները: Նշված հիվանդությունները հիմնականում հարվածում էին ծանր գործազրական աշխատանքներում ներգրավվածներին: Դա հատկապես վերաբեր-

վում էր Նոր Անգլիայի ֆաբրիկաներում, կաշվի, մետաղների արտադրություններում, հեկող մեքենաների փոշու պայմաններում, Կալիֆոռնիայի նահանգի ՈՒԿըրսայի շաղախի գործարանում և առողջության համար վնասակար այլ արտադրություններում աշխատող գործավորներին (օրինակ Լոուրենսի գործվածքներնի ֆաբրիկայում աշխատող գործավորների շուրջ 30%-ը մահացել էր թոքախտից), ողիս ու լուսից գերծ, թունավոր նյութերով հագեցած աշխատանոցներում աշխատող արհեստավորներին, հատկապես՝ դերձակներին ու կոչկակարներին և նույնատիպ վնասակար պայմաններում աշխատող ամերիկահայերին:¹⁵¹

ԱՄՆ-ի արևելյան արդյունաբերական գործարաններում իրենց առողջությունը քայլայած շատ ու շատ գործավորներ թե՛ թժիշկների խորհրդով և թե՛ անձնական նախաձեռնությամբ հետզինտեռ հեռանում էին դեպի արևմուտք դեպի մեղմ ու բարեխառն կլիմա ունեցող Կալիֆոռնիայի նահանգ: Վիճակագրական որոշ տվյալների համապատասխան 1915 թ. Ֆրեզնոյում մահացած 24 հայ տղամարդկանցից 16-ը, 1920 թ.՝ 37-ից 19-ը թոքախտավորներ էին կամ թոքային այլ հիվանդություններ ունեցողներ: Դարասկզբին այդ հիվանդությունների առաջն առնելու, ազդեցիկ բուժում իրականացնելու, ինչպես նաև կանխարգելելու և բնակչությունից հիվանդներին հեռու պահելու նպատակով ֆրեզնոյի հայ համայնքի դեկավորությունը քաղաքի Դայ առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի հետ միասին նույնիսկ որոշել էր 40 ակր հողատարածքի վրա հիմնել անհրաժեշտ բժշկական օգնությամբ բուժարան, թեպետ համայնքին չի հաջողվել իրականացնել հիշյալ ծրագիրը:¹⁵²

Ամերիկահայերի շրջանում բարձր էր երեխաների մահացության տոկոսը: Դա հետևանք էր մոր և երեխայի նկատմամբ նախաճննյան և հետծննյան բավարար խնամքի բացակայության: Բացի այդ, ծննդաբերության ժամանակ հայ կանայք, նյութական ու բարոյական հանգանանքներից ելնելով, խուսափել են դիմել մասնագետ թժիշկների. փոխարենը դիմել են իրենց նախկին բնակավայրերում ավանդական դարձած տատմերների օգնությանը, մինչդեռ ամերիկահայ թժիշկները մամուլով և բացատրական հանդիպումներում հայ կանանց կոչ էին անում ամեն կերպ հեռու մնալ հակասանիտարական պայմաններում գործող այդ մարդկանցից:¹⁵³

Թեև ԱՄՆ-ում հայերի մահացության տոկոսը, ընդհանուրի համեմատությամբ, միջին մակարդակի վրա էր, այսինքն ոչ շատ ցածր, ոչ էլ շատ բարձր, այդուհանդեռձ, բարձր էր մինչև մեկ տարեկան մասնուկների մահացության տոկոսը: Օրինակ՝ որոշ վիճակագրական տվյալների համաձայն, դարասկզբին միայն Ֆրեզնոյուն մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը կազմել է քաղաքի համապատասխան հայ բնակչության գրեթե 25%-ը:¹⁵⁴

Ընդհանրապես, ամերիկահայերը նախընտրում էին բժշկական քննությունների համար անհրաժեշտ գունարը վճարել մասնավոր թժիշկներին, քան թե օգտվել բուժարանների ծառայություններից:¹⁵⁵

Դ. ԱՄԵՐԻԿԱԿԱՅԱ ԸՆՏԱՆԻՔԸ. ԿԵՆՑԱՐՆ ՈՒ ԲԱՐՁԵՐԸ

Ամերիկահայ ընտանիքը, որպես սոցիալական միավոր, հատկապես իր գոյության սկզբնական շրջանում զարգանում էր շատ դանդաղ: Պատճառն այն էր, որ Ամերի-

կա մուտք գործած առաջին հայերն ամուրի երիտասարդներ էին կամ ընտանիքները հայրենիքում թողած տղամարդիկ, որոնք իմանականում մեկնում էին կարծ ժամանակով, որպեսզի դրամ վաստակելուց հետո հայրենի օջախները վերադառնային և բարելավեին իրենց տնտեսական վիճակը: Աստիճանաբար նոր երկորի ապրելակերպին ընտելացումը, ինչպես նաև հայրենի երկրում առկա քաղաքական ու տնտեսական պայմանները պատճառ են հանդիսացել վերադարձող հայերի ու նաև ամուրիների թվի նվազման մեծացնելով ընտանիքներն ԱՄՆ փոխադրողների, ապա նաև ամբողջ ընտանիքներով գաղրողների թիվը:

Այլ էր ամուրի երիտասարդության դրությունը. նրանց ազգային նկարագրին իմանականում խորը էր օտար ամուսնության գաղափարը, հետևաբար, մեծ մասը, մանավանդ գաղթականության սկզբնական էտապում, երբ փոքր էր նաև կանացի սեռի ներկայացուցիչների թիվը ԱՄՆ-ում (կանանց ու տղամարդկանց հարաբերությունը 1x10 էր, օրինակ՝ 1910-1917 թթ. Նյու Յորք քաղաքում բնակվող 15.595 տղամարդ և 2.334 կին հայերից ամուսնության տարիք ունեին 668 տղամարդ և ընդամենը 15 կին¹⁵⁸), իր կյանքի ընկերուն ընտրել է հեռու հեռվից մասնավորապես իր դպրոցական, հարկանական, բարեկամական շրջապատից, քանի որ հարսնացու փնտրելու նպատակով հայրենիք վերադառնալն այնքան էլ խոհեմ չէր: Թուրքիայում մինչև 1908 թ. նրանց կարող էին մեղադրել որպես գաղտնի գործող հեղափոխականների, իսկ 1908 թվականից հետո՝ նաև ուղարկել զինվորական ծառայության, եթե տվյալ անձը դեռ չէր հասցըրել ստանալ ամերիկյան քաղաքացիություն: Միաժամանակ, շատ հաճախ երիտասարդի հայրենիքում մնացած ծնողները, ազգականներն ու բարեկամներն իրենք են ընտրել թեկնածուին և ուղարկել: Նման դեպքերում զոյցքերի նախնական ծանրությունն իրականացվում էր լուսանկարների փոխանակման միջոցով, ինչը երբեմն քուրիմացությունների և դժվարությունների տեղիք էր տալիս: Չեին բացառվում նաև միջամտություններն ու դրամական գործադրները: Այսուհետերձ, ամուսնալուծությունների թիվը հայերի շրջանում ցածր էր, ինչը խոսում էր նրանց մտածողության ու ապրելակերպի բարոյական բարձր հատկանիշների մասին:

Ամերիկյան Գաղթականական հանճնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1909 թ. 30-44 տարեկան տղամարդկանց շրջանում ամուսնացածներն ու այրիացածները կազմել են ավելի քան 75%, իսկ 45 և բարձր տարիք ունեցողների շրջանում՝ ավելի քան 90%-ը: Այսինքն ԱՄՆ-ում միջին հաշվով յուրաքանչյուր հայ գաղթական տղամարդուց մնկն առժամանակ ապրում էր առանց ընտանիքի:¹⁵⁷ Միաժամանակ, ազգային սովորության համաձայն, ամերիկահայերը ևս հակված էին վաղ ամուսնությունների: Այսպես, 1919-1929 թթ. ֆրեզնոարնակ 210 հայ ամուսնացած գույգերի շրջանում իրականացված ուսումնասիրությունները պարզել են, որ 16-49 տարեկան կանանց համար ամուսնական միջին տարիքը 22, իսկ 19-59 տարեկան տղամարդկանց համար՝ 28 էր:¹⁵⁸

Ժամանակի ընթացքում հայերի շրջանում նկատելի են դարձել նաև օտարների հետ (իռլանդացի, շվեդ, ֆրանսիացի, անգլիացի, իրեա, բնիկ ամերիկացի և այլն) ամուսնության դեպքեր, որոնք պատահել են մասնագիտական բարձրագույն կրթություն ստացածների (դասախոսներ, բժիշկներ, հրավարաններ, ինժեներներ, քարոզիչներ և այլն) կամ հաջողակ և ունենոր գործարարների (վաճառականներ, գործարանա-

տերեր, կալվածատերեր և այլն) շրջանում: Օտարների հետ հայերի ամուսնությունների ցուցանիշները փոքրաթիվ էին և եական քանակ չէին կազմում, թեև տարեցտարի աճում էին: Օրինակ 1908-1912 թթ. նյու Յորը քաղաքում միջին հաշվով 91 ամուսնացած հայերից միայն 16 տղամարդ էր ամուսնացել օտարուհիների հետ, կամ նույն ժամանակահատվածում Սանհարանում և Բրոնքսում կնքված 164 ամուսնություններից կրկին ընդամենը 16-ն էին օտարների հետ,¹⁵⁹ ինչը կազմում էր հայերի ընդհանուր ամուսնությունների 9,6%-ը, մինչդեռ միևնույն ազգային խմբերի հետ հայերի ամուսնությունները՝ 90,4%:¹⁶⁰ 1920-ական թվականների սկզբին Լոս Անջելեսում օտարների հետ հայերի ամուսնության մոտավոր պատկերն այսպիսին էր. հայագի 12 տղամարդ ամուսնացել էր ամերիկուհիների հետ, 5-ը՝ իսպանուհիների, 5-ը՝ այլազգիների հետ, իսկ հայուհիներից 3-ը՝ ամերիկացիների հետ:¹⁶¹

Այլ ազգերի ներկայացուցիչների համեմատությամբ, հայերի շրջանում օտար ամուսնությունների թիվը շատ ցածր էր՝ 100 ամուսնությունից ընդամենը 9,63%, մինչ եվոպացիների շրջանում այն կազմել է 100 ամուսնությունների 10-50%-ը: Հայերը զիջում էին միայն կրոնական հանգամանքների բերումով ավելի փոքր թիվ՝ 100 ամուսնությունների 0,45-5%-ը կազմող հրեաների. սևամորթների և սիրիացիների նմանատիպ ամուսնություններին:¹⁶² Այդպիսի ամուսնությունները փոխադարձ հասկացողությունից բացի, պահանջում էին նաև մինյանց ազգային սովորությունների նկատմամբ հարգանքի և փոխըմբռնման դրսևորում: Դարասկզբին ամերիկահայ բժիշկ, գրող, հասարակական ու քաղաքական գործիչ Մ.Ս.Գաբրիելյանն այդ առիթով գտնում էր, որ, ելնելով զույգերի նվիրական վեհ զգացումներից, նման ամուսնությունները բույլատրելի են «...պայմանով որ այդ ամուսնութեան պատճառաւ հայ մը չկորսուի այլ հայ մը աւելնայ մեր ազգին վրայ»:¹⁶³ Միհաժամանակ, ամերիկահայ ազգայինները ծյուպատճեն համրես են եկել հայերի օտար ամուսնությունների դեմ, ահազանգելով, որ «...խառն ամուսնութիւնը, նոյն իսկ ամենէն ներդաշնակը, Ամերիկահայ ընտանիքին ջնջումը փութացնող տարր մըն է»:¹⁶⁴ Հարկ է նշել, որ հայերի շրջանում օտարների հետ ամուսնությունների թիվը երկրի արևելյան նահանգներում գերակշռություն է արևմտյանին: Այդ հանգամանքը տնտեսականից բացի, ուներ նաև երիկական նախապայմաններ, քանի որ արևմտատքում ընդհանրապես ուժեղ էր ազգային խորականությունը, որում բացառություն չեն կազմել նաև հայերը: Օտարների հետ ամուսնություններն առավել հաճախակի էին հայ ավետարանական ընտանիքներում:¹⁶⁵ Օրինակ՝ Կայիֆոռնիայում անցկացված ուսումնասիրության համաձայն, նման ամուսնությունների թիվն այդտեղ 50%-ով ավելի էր հայ առաքելական ընտանիքներից: Միևնույն ժամանակ, ամուլի երիտասարդությունը գերակշռող թիվ է կազմել արևելյան շրջաններում, որտեղ նրանք ներգրավված էին գործափորական կյանքին, քանի որ «արևելքի նահանգներուն մէջ Հայը ՊԱՍԴՈՒԵՏ մըն է, անհաստատ ու անկայուն դիրքով, գործերու բերմամբ միշտ տեղափոխուելու ենթակայ», հետևաբար այնտեղ փոքր թիվ են կազմել ամուսնացածները (բնակչության 10%-ը): Մինչդեռ արևմտատքի, մասնավորապես «...Ֆրէզնօի և շրջակայիթ հայութիւնը կապուած իր հողին, կը ներկայացնե՛ հայ Գաղութը և հայ Ընտանիքը» (ամուսնացածները կազմել են բնակչության 80%-ը):¹⁶⁶

Համաձայն ամերիկահայ Գաղութականական հանձնախմբի վիճակագրական

տվյալների, 1917 թ. ԱՄՆ-ում բնակվող 650 օտարածին հայերի նկատմամբ իրականացված հաշվարկները պարզել են, որ նրանց 2,2%-ը որքևայրի էր, 39,8%-ը ազատ, 58%-ը ամուսնացած: Ընդ որում, վերջիններից 49,2%-ն իր կանանց հետ ամուսնացել էր ԱՄՆ գաղթելուց հետո, իսկ 50,8%-ը մինչ այդ: Իրենց կանանց հայրենի երկրում թողած տղամարդ գաղթականների տոկոսային հարաբերությունն այլ գաղթականների համեմատությամբ ցածր էր:¹⁶⁷ (Տե՛ս Աղյուսակ XVIII^{167ա}):

ԱՂՅՈՒՍԱԿ XVIII

1917 թ. ԻՐԵՆՑ ԿԱՆԱՑ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐՈՒՄ ԹՈՂԱԾ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ՆՎ)	
մակերնացի	96,5
բուլղար	90,0
հույն	74,7
սերբ	64,5
հայ	50,8

Մինչև 1920-ական թվականների կեսը ամերիկահայ տղամարդկանց թվաքանակը գերակշռել է կանանց համեմատությամբ, ընդ որում, շատ էին ամուրինները (տղամարդկանց 40%-ը 20 տարեկան էր):¹⁶⁸ Զգալի թիվ էին կազմում նաև որբևայրիններն ու այրինները: Օսմանյան թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված պարբերական ջարդերի և Առաջին աշխարհամարտի հետևանքով ԱՄՆ գաղթածների շրջանում մեծացել էր կանանց ու երեխանների, հատկապես՝ այդիների ու որբերի թիվը: Պատերազմից հետո ԱՄՆ գաղթած կանայք ու երեխանները կազմել են ամերիկահայ ամբողջ գաղթականության 2/3 մասը:¹⁶⁹ Ամերիկահայ որոշ աղբյուրների համաձայն, Առաջին աշխարհամարտի ավարտին ԱՄՆ գաղթած հայերի 13%-ն իր ընտանիքը բերել էր մինչև պատերազմը, 50%-ը՝ բողել էր հայրենի երկրում, իսկ 37%-ը՝ ամուրի էր: Այդ թվում, 7-8%-ն ամուսնացել էր հայրենիքից եկած հայուհինների և կամ ամերիկուհինների հետ: Այնպես որ, արդեն 1919 թ. ԱՄՆ-ում կար ավելի քան 16.000 հայ ընտանիք: Միջին հաշվով 500 կին ուներ 3-ական երեխա, իսկ անզավակ էր 100-ից 6,5%-ը: Ընտանիքի վերաբերյալ հիշյալ ցուցանիշները գրեթե նույնն են ԱՄՆ-ի բոլոր շրջանների համար, բացի Կալիֆորնիայի նահանգից, որտեղ ծննդիլության տոկոսն ամենից բարձրն էր:¹⁷⁰

1920 թ. 53.740 ամերիկաբնակ հայերի նկատմամբ կատարված ուսումնասիրությունները պարզել են, որ նրանցից 37.647-ը օտարածին հայեր էին, 16.093-ը՝ տեղածին, ընդ որում 14.947-ը՝ երկողմանի հայ ծնողներ ունեին, իսկ 1.146-ը՝ միակողմանի, այն էլ՝ գլխավորապես հայը:¹⁷¹

Ավելի ստույգ, ամերիկայան մարդահամարի տվյալները վկայում են, որ նոյն 1920 թ. այդտեղ կար ԱՄՆ-ում ծնված 36.625 հայ երեխա, որոնց գերակշիռ մասը՝ ավելի քան 28.000-ը, ծնվել էր Նյու Ինգլանդի, Միջին Ատլանտյան, հյուսիսային, կենտրոնական և արևելյան նահանգներում: Ծննդիլությունն առանձնապես բարձր էր Մասսաչուսեթսի,

Կալիֆոռնիայի, Նյու Յորքի, Փենսիլվանիայի, Սիչիգանի, Նյու Ջերսիի, Ռոդ Այլենդի, Իլինոյի, Կոնեկտիկուտի նահանգներում:¹⁷² (Տես Աղյուսակ XIX^{172ա}):

ԱՂՅՈՒՍԱԿ XIX

1920 թ. ԱՄՆ-ի ՏԱՐԲԵՐ ՆԱՐԱՍԳՆԵՐՈՒՄ ԾՆՎԱԾ 36.625 ԴԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ	
Նահանգ	Թվաքանակ
Մասսաչուսեթս	8.640
Կալիֆոռնիա	5.687
Նյու Յորք	5.599
Փենսիլվանիա	2.932
Սիչիգան	2.498
Նյու Ջերսի	2.275
Ռոդ Այլենդ	1.850
Իլինոյ	1.715
Կոնեկտիկուտ	1.000
Օհայո	906
Պլիսկոնսին	904
Նյու Հեմփշիր	276
Պրաչինգտոն	259
Սիսուրի	181
Սինեսոտա	174
Վիրջինիա	164
Մեյն	142
Մոնտանա	140
Նեբրասկա	138
Ինդիանա	134
Այովա	101
Տեխաս	99

Յուտա	80
Նյուսիսային Դակոտա	75
Կոլումբիայի շրջան	63
Օրեգոն	63
Վայոմինգ	62
Վերմոնտ	55
Կոլորադո	46
Մերիլենդ	43
Արևմտյան Վիրջինիա	41
Ֆլորիդա	41
Կանգաս	30
Զորջիա	28
Լուիզիանա	27
Ալաբամա	22
Կենտուկի	20
Թենեսի	18
Դարավային Դակոտա	18
Օկլահոմա	15
Այդահո	13
Նեվադա	11
Նյուսիսային Կարոլինա	10
Արիզոնա	8
Արկանզաս	7
Դելավեր	6
Դարավային Կարոլինա	6
Նյու Մեքսիկա	2
Սիսսիսիպի	1

1000-ականից ավելի երեխաներ ծնվել էին հետևյալ քաղաքներում. Նյու Յորքում 3.779, Դետրոյտում և Չայլդրն Փարքում 1.967, Բոստոնում 1.472, Ֆիլադելֆիայում 1.393, Ֆրեզնոյում 1.273, Փրովիդենսում 1.234, Պատրում 1.225, Չիկագոյում 1.028:¹⁷³ Համաձայն ամերիկահայ Ն.Մանկունու հաշվարկների, եթե մինչև 1920 թ. ԱՄ-ում ծնված շուրջ 36.600 երեխաների թվին ավելացվի մինչև 1924 թ. ծնված միջին հաշվով մոտավորապես 7.000 երեխաների թիվը և ստացված 43.600 թվից համար շուրջ 3.600 մահացածների թիվը, ապա կստացվի, որ 1924 թ. ԱՄ-ում կար շուրջ 40.000 հայ երեխա:¹⁷⁴

Ամերիկահայ ընտանիքը բազմանդամ էր. միջին հաշվով բաղկացած էր 4-6 անդամից: Ազգային ավանդական սովորության համաձայն, ինչպես նաև նյութական միջոցներից ելնելով, ամուսնացած որդին, հատկապես սկզբնական շրջանում, բնակվում էր ծնողների հետ: Ինչպես բոլոր հայ ընտանիքներում, ամերիկահայ ընտանիքում ևս տղամարդու դերը գլխավորն էր: Հմանականում նրա վրա էր ծանրացած ընտանիքի նյութականի ապահովման խնդիրը:

Նոր երկրի տնտեսական ու հասարակական պայմանները խթանել են նահապետական հայ կնոջ կերպարի էական փոփոխությունը: Այժմ նրանք աշխատում էին թե տանը և թե դրսում: Տնային տնտեսության մեջ մասամբ պահպանում էին ազգային կենցաղը, նիստ ու կացը, անգամ կերպարատեսակները: Ամերիկյան կերպարների բազմազանության մեջ նրանք շարունակում էին տնային պայմաններում պատրաստել լավաշ, բլուլը, մածուն, փլավ, դոլմա, յալանչի դոլմա, սարմա, շիշ թթար, թաս թթար, քեզարթմա, քուլու բաշ, փաչչա, խաչլամա, քյուֆտա (կամ յոմա), հարիսա (կամ քեզկե), լահմաջուն, բաստրմա, սուրճուխ, բուրջու, փախլավա, խաղաիֆ և այլն:¹⁷⁵

Ի հակառակություն նախկին վիճակի, այստեղ՝ օտարության մեջ, մեծացել էր հայ կնոջ տեղը ու դերը ոչ միայն ընտանիքում, այլև աշխատանքում ու համայնքի կյանքում, քանի որ նա հոգում էր ոչ միայն տնտեսական, այլ նաև հոգևոր կարիքները: Նրա ուսերին էր դրված ծուլման և օտարացման համայնակուլ միջավայրում զավակ-ների հայեցի դաստիարակության դժվարին պարտականությունը: «...Հայ կինը ինչպես ամեն տեղ ու ժամանակ, այս տեղ ալ մեծ սատարն ու աւանդապահը եղած է Հայ լեզուին մանաւանդ Հայ կրօնի պահպանմանը»:¹⁷⁶

Նոր հասարակական հարաբերություններն ԱՄ-ում թելադրել են նաև նոր ընտանեկան հարաբերություններ: Նախկին նահապետական ընտանիքին փոխարի-ցելու է եկել ամերիկյան ազատական բարքերից ազդված և յուրաքանչյուր անդամի հավասարության սկզբունքների վրա հիմնված ամերիկահայ նոր ընտանիքը: Ամերիկահայ Լ.Մարտիրոսյանի կողմից հոգեբանական, սակայն փոքր ինչ կտրուկ ու խտացված գրյներով կատարված բնորոշման համաձայն, մասնավոր դեպքերում, «առաջ-ուայ հեզահամբոյր ու համակերպող կինը այժմ եղեր էր արհանարիոտ ու հրամայող», իսկ զավակներն այլևս հոր «շրթունքին ու մատի շարժումն» չեին նայում:¹⁷⁷ Ժամանակի ընթացքում ամերիկահայ ընտանիքում ձևափոխման էր ենթարկվել նաև հայ տղամարդու, որպես ամուսնու և հոր, նահապետական կերպարը, որն այլևս չէր ենթարկում բոլոր հարցերում նրա անառարկելի գերակայությունը ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: Աստիճանաբար ամերիկյան ազատական ապրելակերպին ընտելացած

«տղաքները հազիւ չափահաս անկախ դիրք նը կուգեն բռնել և օգտակար բաներու մէջ իսկ իրենց հօր ազդեցութիւնն ու խորհուրդը կարհամարհեն, իսկ կիները հետզիետ մոռնալու վրայ են, իրենց ամուսնին հանդէա ունեցած յարգանքն ու հնազանդութիւնը, որ Դայ կնոջ բնածին յատկութիւններէն մին էր Դայենի երկրին ու տանը մէջ»:¹⁷⁸ Այսուհանդերձ, ընդհանուր առնամբ, ամերիկահայ ընտանիքը առողջ, համերաշխ ու բարոյական միավոր էր հիմնված սիրու և փոխադարձ հարգանքի համընդհանուր սկզբունքների վրա: Ամերիկյան Գաղթականական հանճնախմբի Եզրակացության մէջ այդ կապացությամբ ասված է. «Դայերն արտասովոր չափավոր են, ունեն նաքուր ընտանեկան կյանք, և նրանց կանայք պարկեշտ են ... Նրանց բարոյական չափանիշներն ավելի բարձր են, քան համայնքներինը, որոնցում նրանք ապրում են»:¹⁷⁹

Ամերիկահայերի շրջանում ամուսնալուծությունները, որոնք մեծ մասամբ արդյունք էին հապճեա ու անխոհեմ ամուսնությունների, փոքրաբիկ էին, հատկապես, եթե համեմատելու լինենք ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Օրինակ՝ 1929 թ. տվյալների համաձայն, Ֆրեզմոնի հայ գաղութի պատմության ողջ ընթացքում տեղի էր ունեցել ընդամենք 50 ամուսնալուծություն, ընդ որում, այն իր բարձրակետին էր հասել հատկապես 1920 թ., երբ ամուսնալուծվածները կազմել են քաղաքի ամբողջ հայ բնակչության 1/10 մասը:¹⁸⁰

Այդուհանդերձ, վերոիիշյալ երևույթները ոչ մի կերպ չին կարող ստվեր գտնել ավանդական հայ ընտանիքի բարոյական նկարագրի վրա, որը տարեցտարի դառնում էր ավելի ամուր, հարատևող և օրինակելի: Ամերիկահայ կրտսեր սերունդն ավագ սերնդից ժառանգելով պարկեշտության ու ակնածանքի, արժանապատվության ու հապրոտության, աշխատասիրության ու ցանկացած ծեռնարկած գործի նկատմանը պատասխանատվության բարձր գիտակցության զգացում և առաջինի այլ հատկանիշներ, ոչ միայն դրանք կիրառել է կյանքում հանդիսանալով օրինավոր քաղաքացիներ նոր որդեգրած երկրի համար, այլ նաև ավանդել հաջորդ սերունդներին օտարության մէջ մշտապես անարատ պահելով ազգային նկարագիրը:

Աշխատասեր ու գործունյա ամերիկահայը ծամր, համառ, բայց նվիրված աշխատանքից հետո կարողացել է նաև լավագույնս կազմակերպել իր և իր ընտանիքի հանգիստը: Հարաբ-կիրակի օրերը շատերն անց էին կացնում միմյանց հյուր գնալով կամ հյուր ընդունելով: Մյուսները հաճախում էին ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, ակումբների, հարանվանական եկեղեցիների կողմից կազմակերպված փիկնիկներին, որոնք ոչ միայն օտարության մէջ ազգապահպան դեր էին կատարում, այլ նաև իրականացնում հայրենանպաստ ծեռնարկներ (հանգանակություններ և այլն) հօգուտ հեռավոր Մայր հայրենիքի ու կարոտյալ ժողովրդի: Փիկնիկները կազմակերպվում էին հաճելի վայրերում բնության գրկում, գետակի կամ լճակի ափին (օրինակ՝ Ուեստ Շորոքեն քաղաքի Շեֆքերսի դաշտում կամ Շուլդզոն ավանի զբոսայգում, Ուոլթեր քաղաքի Ուեյվերլի պուրակում, Բուստոն քաղաքի Ֆրանկլինի պուրակում և այլուր), որտեղ հավաքվում էին 500-ից մինչև 2000 և ավելի հայեր և միասին հաճելի ժամանակ անց կացնում, համտեսում հայկական ու արևելյան կերակուրներ, ունկնդրում նմանատիպ երաժշտություն, մասնակցում տարբեր տեսակի մրցությունների և արժանանում պարզաների և այլն:¹⁸¹ Նրանք միմյանց հետ շփվում

էին մայրենի լեզվով, տեղեկություններ փոխանակում անձնական, ազգային, քաղաքական և այլ հարցերի շուրջ, Վերականգնում իրենց ազգականների հետ նախկին կապերը, հաստատում նորանոր ծանրորդությունները: Փիկնիկներից բացի, ազգային հաստատությունների կողմից կազմակերպվում էին տարբեր տեսակի հավաքներ, գրոսանքներ, ինչպես նաև համերգներ, նրգույքներ, խաղեր, մարզական հանդիպումներ և այլն, որոնց ընթացքում հաղողական և առավել հաջողակներին շնորհվում էին տարբեր տեսակի մրցանակներ ու նվերներ: Նման միջոցառումներն անց էին կացվում հայերիտասարդության անքարենապատ միջավայրերից գերծ պահելու նպատակով: Ամերիկահայերն աշխույժ մասնակցություն են ունեցել նաև ինչպես ազգային, այնպես էլ տոնական օրերին և այլ առիթներով կազմակերպված տարբեր տեսակի միջոցառումներին ու հանդիսություններին: Նրանք համագողութային մասշտարով ամենայն հանդիսավորությանք նշել են ավանդական, եկեղեցական ու բազմաթիվ այլ համաժողովրդական հիշարժան տոնները Ամանորը, Սր. Ծնունդը, Սր. Զատիկը, Տեառնընդառաջը և այլն:¹⁸²

Վերոհիշյալից բացի, ամերիկահայերն իրենց հանգիստն անց էին կացնում ըստ նախասիրությունների: Կանայք այցելում էին միմյանց, միասին հաճախում խանութներ գնումների, գրադպում տնային տնտեսությամբ, ծեռագործով և այլն:

Տղամարդիկ, հատկապես ամուրիները, նախընտրում էին աշխատանքից ազատ իրենց ժամանակն անց կացնել արևելյան սրճարաններում, որտեղ զրուցում էին տարբեր հարցերի շուրջ, կարդում հայալեզու թերթեր, ծխում գլանակ, ծխախոտ, բուրքական նարգիլե, խաղում թուրք կամ նարդի: Այս հավաքներն երբեմն լինում էին աղմկալի, քանի որ ընթանում էին տաքարյուն վեճերով՝ հասարակական, տնտեսական, ազգային, քաղաքական և այլ հարցերի շուրջ: Դայկական սրճարանները հաճախ կատարում էին նաև հասարակական սալրանների դեր, որտեղ հավաքվածները խաղում էին շախմատ, դրմին, գնդամուղ և այլն, ունկնդրում երածշտություն, դիտում բռնցքամարտի մրցություններ, հյուրասիրվում թերթ խմիչքով, տարբեր տեսակի քաղցրավենիքներով, հյութերով ու խմորեղեններով՝ հիմնականում ազգային բնույթի: Ամերիկաներով, հյութերով ու խմորեղեններով կազմականում իրեն հեռու պահելով լայնորեն տարածված խաղանոլությունից և հարբեցողությունից:¹⁸³

Դաստիարակված լինելով նարդկային բարոյականության բարձր չափանիշ ներով՝ ամերիկահայ երիտասարդությունը ևս իր հանգիստն ու ազատ ժամանակը նելամտորեն էր կազմակերպում, ինչում նրան օգնում էին ազգային, քաղաքական, հասարակական ու կրոնական բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններն ու ակումբները (միայն Կալիֆորնիայի նահանգում դրանց թիվն անցնում էր 50-ից), ինչպես նաև եկեղեցիների ու կոլեջների հետ գաղտնի համագործակցող մասսանական կազմակերպությունները (1880-ական թվականների կեսերին Ֆրեզնոյում հիմնված և լու Անգելսում, Սան Ֆրանցիսկոյում, Օքլենդում, Սելմայում և այլուր նախաճյուղեր ունեցող Եռապատիկ X եղբայրություն կազմակերպությունը և այլն), որոնք իրականացնում էին հավաքներ, համերգներ, մարզական մրցություններ, բատրուններ, փրկնիկներ և այլն:¹⁸⁴ Այդ միջոցառումները նպատակ ունեին հայ երիտասարդությանը

մշտապես հաղորդակցման ու շփման մեջ պահել միմյանց հետ, դրանով իսկ գերծ պահելով նրանց օտար, շատ դեպքերում ոչ բարենպաստ միջավայրի բացասական ազդեցություններից, ծուլման, օտարացման և այլասերման մշտական վտանգից: Երիտասարդությունն իր ազատ ժամանակն անց էր կացնում նաև բատրուններ, կինոքատրոններ, համերգներ, ցուցահանդեսներ և բազմաթիվ այլ մշակութային միջոցառումներ հաճախելով, որոնց շնորհիվ հայ ընտանիքի նահապետական բարքերի գերիշխանության պայմաններում հասակ առած ամերիկահայ երիտասարդը, մտտիկից շփվելով, ծանոթանում էր նոր երկրի ժամանակակից բարքերին, սովորույթներին և ապրելակերպին, ինչն անհրաժեշտ էր նրան օտար միջավայրում դիմակայելու համար:

Միևնույն ժամանակ, նոր բարքերին հայ երիտասարդության ընտելանալու գործընթացն իրականանում էր ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին խոչընդոտմների հաղթահարման ճանապարհով. քանի որ ավանդապահ հայ ծնողներից շատ շատերի համար դժվար էր համակերպվել իրենց զավակների որդեգրած նոր մտածողությանն ու ապրելակերպին: Դետևաբար քիչ չէին դեպքերը, երբ ծնողները, խուսափելով նոր միջավայրի ոչ բարենպաստ ազդեցություններից, արգելում էին երեխաններին շփվել օտարազգի իրենց հասակակիցների հետ, երեկոյան ինքնուրույն փողոց դուրս գալ մինչև չափահաս տարիքը, ժամանակակից ամերիկյան «չիք թու չիք» և «ըրիսր թու բրիսթ» («այտը՝ այտին», «կուրժքը՝ կրծքին») պարերը պարել և այլն: Դայ երեխան դպրոցի ամենօրյա դասերի ավարտից անմիջապես հետո տուն էր վերադառնում և օգնում ծնողներին թե՝ տանը և թե՝ աշխատանքում:¹⁸⁵

Այսուհանդերձ, անհնար էր հեռու մնալ ամերիկյան գորեղ ազդեցությունից, ինչը տարեցտարի ավելի ու ավելի էր նկատելի դառնում ամերիկահայերի մտածողության, ինչպես նաև կյանքի բոլոր ասպարեզներում կենցաղում, նիստ ու կացում, վարք ու բարքում, ապրելակերպում, անձնական ու ընտանեկան հարաբերություններում և այլն:¹⁸⁶

Այսպիսով, տնտեսական, քաղաքական և այլ հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում ԱՄՆ մուտք գործած հայերը բնակություն են հաստատել լայնածավալ երկրի գրեթե ողջ տարածքում և ներգրավվել իրենց հնարավորություններին, կարողություններին ու նախասիրություններին համապատասխանող տարրեր գրադարձներում աստիճանաբար համակերպվելով նոր կյանքի պայմաններին ու բարքերին, կենցաղին ու սովորույթներին, այդուհանդերձ, չկորցնելով իրենց ազգային կերտվածքն ու նկարագիրը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՂԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ա. ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐ**

Ամերիկյան հողում հայերի ստվարացմանը զուգընթաց, օտարության մեջ ազգային նկարագիրը, լեզուն, սովորույթները մշտարթուն պահելու, մտավոր, բարոյական ու ֆիզիկական առումով առողջ ու բարեսեր սերունդ դաստիարակելու, ինչպես նաև հայրենի երկրի հետ կապն աճրապնդելու և հարատև դարձնելու նպատակով ամերիկահայերի գործուն քանքերի շնորհիվ XIX դ. 80-ական թվականների երկրորդ կեսից սկզբուն ԱՄՆ-ի արևելյան, ապա նաև արևմտյան ափին աստիճանաբար ստեղծվել են բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ, կազմակերպություններ, ընկերություններ ու ակումբներ, իրենց մասնաճյուղերն են հիմնել հայ քաղաքական կուսակցությունները: Ժամանակի անհրաժեշտ թելադրանքով ստեղծված այդ կազմակերպություններից շատերն ունեցել են երկարատև, մյուսները՝ կարճատև կյանք, շատերը բուռն ու հագեցած, մյուսները մակրներացություններով ու տեղատվություններով լի, բայց և այնպես իրենց մատուցած ազգանպաստ ու հայրենանպաստ գործունեությամբ դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլորը միասին էական դեր են կատարել իրենց առջև դրված տարրեր նպատակների ու ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ հաստատելով այն միտքը, որ «ժողովուրդի մը հավաքական կեանքը կը մարմնանայ նոյն ժողովուրդին ծոցէն ծնունդ առած կազմակերպութիւններու գործունեութեան մէջ»:¹

Ամերիկայի կազմակերպությունները, միությունները, ընկերություններն ու ակումբները գլխավորապես կրթասիրական, մարդասիրական ու հայրենասիրական բնույթի կմ և կոչված էն ծառայելու ինչպես ի նպաստ իրենց մերձավոր ու հեռավոր հայրենակիցներին, նույնպես և իրենց հյուրընկալած երկրին:

Քանի որ ԱՄՆ-ի «հայերէն շատեր անտեղեակ էն երկրին սովորութեանց և լեզուին, պանդուխտներ օտար երկրի մէջ, առանց բարեկամի, հայերէն խօսալու և հայու երես տեսնելու կարօտով կը մաշէին», հետևաբար՝ «այս դասակարգի հայոց համար միութեան կեդրոն մը հաստատելու, անոնց մէջ արենակցութեան կապերը

ամրապնդելու, հայ լեզուն և հայկական գգացումները վառ պահելու և հիւանդ ու կարօտ ազգայիններու որչափ հնար էր, օգնելու նպատակով» 1886 թ. Նյու Յորքում հիմնվել է ԱՄՆ-ում հայկական առաջին կազմակերպությունը՝ Հայկական միությունը, որի խնդիրն էր «ամերիկաբնակ Հայոց մէջ միութեան կապ հաստատել, ազգային գգացումներ մշակել, և ազգօգուտ ծեղնարկներ ընել»:² Նշանակալից էր միության հայանպատ ու ազգանպաստ գործունեությունը ինչպես Նյու Յորքի, նույնպես և մերձակա Նյու Ջերսիի նահանգի հայության կյանքում. «...արժանի էր տեսնել թէ առաջին տարիներուն մէջ հ՞նչ մեծ ուրախութեամբ ժողովասրահը կը հաւաքուին ժողովի բացուելու համար որոշեալ ժամանակէն առաջ, հայրենիքի կարօտը իրարմէ առնելու տեսչով: Հայերէն երգեր, հայաշունչ բանախօսութիւններ և հայրենիքի խապրիկներ կ'ոգեւորէին այս պանդուխտ հայերը և հայկական գգացումներ կ'արծարժէին անոնց մէջ»:³ Ամերիկահայոց այս առաջին կազմակերպության շնորհիվ պանդուխտ հայերը պատեհություն են ունեցել միջյանց հետ ծանոթանալու, մայրենի լեզվով խոսելու և հայրենի երկրի հոգսերով ապրելու: Մինչև անգամ բազմաթիվ թրքախոս հայեր միության ժողովներին հաճախելով սկսել էին հայերներ խոսել, հայոց պատմությանը վերաբերող գործեր կարդալ, իսկ ոճանք էլ դարձել էին ազգային եռանդուն գործիչներ:

Կազմակերպչական առումով միության անդամներն երեք կարգի էին գործուն, ցեսանս և պատվո: 1888 թվականից այն ուներ 17 հոդվածներից բաղկացած Ընդհանուր կանոնագիր և 46 հոդվածներից բաղկացած ներքին կանոնագիր: Հայկական միությունն ամերիկահայ առաջին կազմակերպությունն էր, որը վավերացվել էր ԱՄՆ-ի կառավարության կողմից: Շուտով միությունը հիմնել է ընթերցատուն, որտեղ ստացվում էին ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական թերթերի մեծ մասը ու մի շաբթ անգլիալեզու հանդեսներ: Այդտեղ էին անց կացվում լսարանական ժողովները, գործուն էր վարժարանը, ուր շաբաթական 5 օր շուրջ 55 հայ երկսեռ աշակերտների սովորեցվում էր ընթերցանություն, ուղղագրություն, արտասանություն, գրավարժություն, թերականություն, հայոց պատմություն: Շատ շուտով հիմնվել էր նաև գիշերային դպրոց, ուր շաբաթական երկու օր երիտասարդներին անգլերեն էին ուսուցանում:⁴ «...Հայկական Սիութիւնն եղաւ ոչ միայն վառարան ազգային գգացմանց, այլ եւ միջոց գոհողութեան ոգին արթնացնելու պանդուխտ Հայերու մէջ»:⁵ Միությունը ստեղծել էր «Կարուտելոց սնդուկ»՝ դժբախսության մեջ հայտնված, հիվանդ, անօգնական, անգործ ու կարիքավոր ամերիկահայերին օգնելու նպատակով: Վյն իր հովանավորության տակ էր վերցրել նաև հայրենիքում գտնվող երկու դպրոց, գգալի գումար հանգանակել ի նպաստ անցյալ դարավերջին հրկիզված Զեյթունի, Կ.Պոլսի Սր. Փրկիչ ազգային հիվանդանոցի և ազգային այլ հաստատությունների: Առաջին աշխարհամարտի նախօրեին միությունն արդեն ուներ ընդարձակ ու մաքուր շենք՝ ցերեկային ու գիշերային դպրոցներով, ընթերցարանով, լսարաններով, ննջարաններով, հյուրասարահներով և այլ հարմարություններով, որոնք կոչված էին հայ երիտասարդությանը հեռու պահել «քաղաքահայի վայրերէ ու բարոյասպան տուներէ».⁶

Այսպիսով, Նյու Յորքի Հայկական միությունը հանդիսացել է ամերիկահայ առաջին կազմակերպված միավորը, որն օտար հողի վրա հսկայական գործ է կատարել ԱՄՆ-ում աստիճանաբար ստվարացող հայությանը ծովանգից գերծ ու մի-

մյանց հետ մշտական շփման մեջ պահելու և նրանց ողջ ինարավորություններն ի նպաստ հայրենակիցների ու հայրենի երկրի գործադրելու ուղղությամբ:

Նյու Յորքի Հայկական միության օրինակով 1887 թ. սկզբին Զերսի Սիթիում ևս հիմնվել էր համանուն և նույնանման նպատակներ հետապնդող մի միություն, որը սակայն իր ծավալած հայանպաստ գործունեությունն ավելի արդյունավորելու նպատակով շուտով ձուլվել է առավել կազմակերպված ու հզրացած Վերոհիշյալ միությանը:⁷

1888 թ. Ուստորում հիմնվել էր Կաճառ Հայկական անվանումը կրող կազմակերպությունը ի հետևանս այդտեղ այցելած «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորբուգայսի հայաշունչ ելույթների, որոնցով նա օտարության մեջ խարիսխող ամերիկահայությանը կոչ էր անուն շուտափույթ կերպով լծվել ազգապահպանման համար անհրաժեշտ պայմաններ հանդիսացող եկեղեցու, լրագրի, դպրոցի ու կազմակերպության հիմնադրման գործին, քանի որ առանց դրանց անհնար էր հասնել ազգային ինքնամփոփման ու ինքնակազմակերպման: Կաճառի ստեղծման գործում իրենց ավանդն են ներդրել խարբերդիցները (ատենապետ Միքայել Թոփիհանեյսան): Կազմակերպությունն իր առջև խնդիր էր դրել հիմնել առանձին աղոթատեղի, իսկ մինչ այդ ստանձնել ազգային եկեղեցուն փոխարինելու պարտականությունը, ինչպես նաև հոգալ համայնքի հոգմերը, գրադպել փողոցներում օտար, գիշավորապես խոլանդացի ամբոխի կողմից հայերի նկատմամբ իրականացվող հարձակումներին կառավարական միջամտությամբ վերջ դնելու խնդրով և այլն: Շուտով, առանց հարանվանական խտրության գործոու կազմակերպությունից ավելտարանական հայերի հեռացումով, Կաճառ Հայկականը վերանվանվել է Կաճառ Հայկական Ուստորի լուսավորչական հայոց, որի անդամների թիվը հետզիետե աճել է:⁸

1888 և 1905 թվականներին ԱՄՆ-ի տարրեր քաղաքներում Ուստորում, Հոբրենում, Նյու Յորքում, Նյու Ջերսիում, Բոստոնում, Փրովիդենսում և այլուր Մ. Փորբուգայսնի իրականացրած հայրենասիրական կրակոտ ելույթները չեն կարող անտարբեր թողնել հայրենակարոտ ամերիկահայերին, որոնք, հետզիետե գաղափարապես համախմբվելով, ծեռնամուխ են եղել տեղերում ազգային կազմակերպությունների ստեղծմանը, որպեսզի դրանց միջոցով հնարավոր լիներ իրենց նասնակցությունը բերել հեռավոր հայրենիցին ու ժողովրդին քարոյապես ու նյութապես սատարելու, ազգային արժեքները բարձր պահելու գործին: Այդպիսի կազմակերպություններից էր Նյու Յորք փոխադրված ամերիկահայ առաջին հեղափոխական կազմակերպությունը՝ Հայոց հայրենասիրական միությունը, որի նպատակն էր «աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու թիւքահայաստանի մեջ, Հայ ժողովրդի տեղական պետքերին համեմատ»: Չնայած իր կարճատև գոյությանը (մինչև 1893 թ. հունիս), միությունը կարողացել է համախմբել հայրենավոր համախուների (շուրջ 300 անդամ):⁹

ԱՄՆ-ի հայ գաղթականության շրջանում ազգային ոգին ու զգացումները, հայրենի երկրի նկատմամբ սերն ու մայրենի լեզուն անմոռաց պահելու նպատակով հիմնվել էր Ամերիկայի հայ գաղթականների միությունը՝ 1889 թ. Պետերսոն քաղաքում և Հայ երիտասարդների թանգարանի միությունը՝ 1890 թ. Նյու Յորքում:¹⁰

Հայրենի երկրի որբերին հոգեկան ու բարոյական աջակցություն ցույց տալու

նպատակով Նյու Զերսիի նահանգում հիմնված բարեսիրական կազմակերպություններից էին Պետերսոնի Որբախնամ ընկերությունը (1889 թ.), Ուեսթ Շորոքենի Շայտիկնամ որբախնամ ընկերությունը (1892 թ.):¹¹

Դոգեպես ու ֆիզիկապես առողջ և ուժեղ սերունդ դաստիարակելու նպատակով 1889 թ. Ուեսթ Շորոքենում հիմնադրվել էր Շայ մարզական կաճառը, 1890 թ. Նյու Յորքում Արարատյան գունդ կոչված գինվորական կազմակերպությունը, ինչպես նաև տարբեր գինավարժական խմբեր:¹²

Շայերն ազգային միություններ են կազմակերպել ոչ միայն Երկրի արևելյան, այլ նաև արևմտյան հատվածներում: Ընկերային կյանք ստեղծելու առաջին այդպիսի միջոցը 1880-ական թվականների վերջին ստեղծված Ֆրեզնոյի Շայ գաղթականաց միությունն էր:¹³

Ամերիկաբնակ հայերի քաղաքացիական ու քաղաքական իրավունքների պաշտպանության, նոր Երկրի իրավական համակարգին նրանց ժանոթացման ու ընտելացման, ինչպես նաև հայերի դեպի ԱՄՆ գաղրն անարգել կազմակերպելու նպատակով 1889 թ. Ֆրեզնոյի հայերի շրջանում հիմնվել էր Շայ օտարների ակումբը: Այն եական դեր է կատարել գաղթական հայերին օժանդակ գրականությամբ ու դասախոսություններով ամերիկյան պատմությունն ու Սահմանադրությունն ուսուցանելու գործում: Նպաստելով նրանց արագ կերպով ԱՄՆ-ի քաղաքացիություն ձեռք բերելուն: Շետագայում կազմակերպությունն առավել ազգային ու հարազատ դարձնելու նպատակով 1892 թ. այն վերանվանվել է Ֆրեզնոյի հայոց գրադարանային միության: Նման խնդիրներ էր հետապնդում նաև 1906 թ. դարձյալ Ֆրեզնոյում հիմնված, սակայն կարճատև գոյություն պահպանած Շայ քաղաքացիների ակումբը:¹⁴

Ամերիկահայ վաղ շրջանի առաջին միությունների թվին էին նաև առևտորական ու գործարար բնույթի ընկերությունները, ինչպես օրինակ՝ 1898 թ. Ուստորում հիմնված Շայոց խնայողական միությունը և այլն:¹⁵

Մտավոր առողջ և զարգացած սերունդ կրթելու նպատակով աստիճանաբար ստեղծվել ու ժամանակի ընթացքում զորացել են բազմաթիվ գրադարան-ընթերցարաններ, լսարանային միություններ, որոնք կոչված էին հայոց լեզվին, գրականության ու պատմությանը վերաբերող գործերով, ինչպես նաև ոգեշնչող ելույթներով ամերիկահայ երիտասարդության շրջանում մշտապես բարձր պահել ազգային ոգին ու հոգևոր արժեքները, միաժամանակ, նպաստելով նրանց որպես լավ ամերիկացիներ հանդես գալուն: Այդպիսին էր 1899 թ. Ֆիլադելֆիայում կազմավորված Շայոց առաջադիմական ընկերությունը և այլն:¹⁶

Ժամանակի ընթացքում, դեպի ԱՄՆ հայ գաղթականության ամին ու ամբողջ Երկրով մեկ նրանց տարածմանը զուգընթաց, հայաշատ գրեթե բոլոր վայրերում ստեղծվել են կրթական, մշակութային, բարեսիրական, հոգևոր, սոցիալական, քաղաքական ու այլ բնույթի մեջ ու փոքր ազգային միություններ ու կազմակերպություններ, որոնք կարևոր դեր են կատարել ամերիկահայության ազգահավաքման ու ազգապահպանման, ինչպես նաև հեռավոր հայրենիքի կրթական, եկեղեցական, որբախնամ և այլ օջախներին նյութապես ու բարոյապես սատարելու գործում:

Ամերիկահայության ազգային նկարագիրը պահպանելուն էին ուղղված 1902 թ.

ԱՄՆ-ում հիմնված Հայ ավետարանական միության ջանքերը:¹⁷ Ուստի Դոբրենում 1904 թ. կազմավորված Հայ-ամերիկյան քաղաքացիական ընկերությունը նպատակ ուներ քաղաքական ու նշակութային կապեր հաստատել հայկական համայնքի և ԱՄՆ-ի միջև:¹⁸

ԱՄՆ-ում հայապահպանման ու հայանպաստ գործունեության ծավալման ասպարեզում իրենց գնահատելի ավանդն են ներդրել նաև բազմաթիվ հայուիհներ հիմնելով տարաբնույթ միություններ ու կազմակերպություններ: Այսպես, 1905 թ. բարեսիրական նպատակներով հիմնված Նյու Բրիթանի Տիկնանց ընդհանուր որբախնամ ընկերությունը կոչված էր հոգալու հայրենի բնակավայրերում «բախտի անմեղ զոհեր» հանդիսացած հայազգի երկսեռ որբերին:¹⁹ Նմանատիպ միություններից էր նաև Հայ տիկնանց որբախնամը, որը պատերազմի տարիներին հայ և օտար շրջաններում անձնվիրաբար իրականացրել էր Մեծ Եղեռնի հետևանքով ծնողազուրկ դարձած բազմաթիվ հայ որբերի որդեգրման գործը:²⁰ 1906 թ. էր կազմակերպվել Բոստոնի Եկեղեցակրոաց տիկնանց միությունը, որը կոչված էր քաղաքի ու շրջակայքի հայության ընտանիքների շրջանում մշտապես վառ պահել ազգային Եկեղեցու նկատմամբ սերն ու հաղորդակից դարձնել նրա հետ:

Դարասկզբին մի խումբ ուսույալ, ինչպես նաև ունեսոր ամերիկահայերի ազգանվեր ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել ԱՄՆ-ի տարբեր շրջաններում կազմակերպել ամերիկյան բարձրագույն կրթարաններում հայության ուսումնառությանը նյութապես ու բարոյապես աջակցող մի շարք ընկերություններ ու միություններ, որոնք, միաժամանակ, օգնում էին նաև հայրենի երկրի կրթարաններին ու այդտեղ ուսանողներին: Այդպիսին էր, օրինակ, գորգի հարուստ վաճառական Կարապետ Փուշմանի նախաձեռնությամբ 1906 թ. Զիկագոյում հիմնված Ամերիկահայ կրթասիրաց ընկերությունը՝ ի հիշատակ իր դատեր, որի վաղաժամ մահը կիսատ էր բողել ուսանող դառնալու նրա փափազը: Ընկերությունն առանձնապես նյութական օգնություն էր տրամադրում ամերիկյան համալսարանների ու կոլեջների արհեստավարժական, տեխնիկական բաժիններում, ինչպես նաև աստվածաբանական դպրոցներում ուսանող կարիքավոր, սակայն առավել արժանավոր երիտասարդներին: Որպես հիմնադրամ, Կ.Փուշմանն ընկերությանը հատկացրել էր 25.000 դոլար, որի տոկոսներով հոգացվել են ամերիկահայ կարուտյալ ուսանողների ծախսերը: Այսպես, մեկ տասնամյակ շարունակ 150 հայեր օգնություն են ստացել 3.500-4.500 դոլարի չափով: Առաջին աշխարհամարտի ավարտին ընկերության տարեկան եկամուտը, ներառյալ տարբեր տեսակի նվիրատվություններն ու պարզները, կազմել է շուրջ 6.000 դոլար: Մինչև 1916 թ., որպես պարզե, շուրջ 18.600 դոլար էր շնորհվել ավելի քան 70 ուսանողների:

1910 թ. Նյու Յորքում մի խումբ ուսանողների ու դասախոսների ջանքերով հիմնվել էր կրթական մեկ ուրիշ կազմակերպություն և Ամերիկահայ ուսանողների միությունը, որը նպատակ ուներ, առանց կրոնական, կուսակցական և այլ նկատառումների, համախմբել ԱՄՆ-ի ողջ հայ մատավորականությանը, դասախոսներին, ընթացակրտներին, ուսանողներին զարկ տալու օտար ափերում հայապահպանման կարևոր պայման հանդիսացող ազգային կրթական գործը: Միությունը գգալի դեր էր կատարել ամերիկահայ երիտասարդությանը կրթելու, նրանց մտավոր կարողություն-

Աերը տեղի լավագույն բարձրագույն կորթարաններում զարգացնելու և դրանք համապատասխան ասպարեզներում ծառայեցնելու, ինչպես նաև հայագիտ ուսանողների միջև ընկերական հարաբերություններ մշակելու գործում: Միությունը, որն ուներ շուրջ 250 անդամ, ամերիկահայ ուսանողներին ու աշակերտներին սատարելուց բացի, նպատակ ուներ նաև հրատարակել ամսագիր, մշակել ուսումնական դասընթացների ժրագրեր, պատրաստել հայերեն նորագույն դասագրքեր, որոնք հայագիտ բարձրակարգ մասնագետների հետ միասին պետք է առաքվեին նաև հայրենի երկու դպրոցներ, սակայն նյութական միջոցների սղությունը արգելք է հանդիսացել այդ ծրագրերի իրականացման համար:²³

Սի խումբ բարեկեցիկ ամերիկահայերի ջանքերով ստեղծվել են նաև քաղաքացիական կազմակերպություններ, որոնք օգնել են նորեկ հայերին տեղափորվել, ուսում, աշխատանք գտնել, նոր երկու բարքերին ու սովորույթներին ընտելանալ, իրենց իրավունքներն ու պարտականությունները գիտակցող նվիրված քաղաքացիներ դառնալ: Այդամիտն էր 1909 թ. Նյու Յորքում հիմնված և Զայկագոյում իր մասնաճյուղերն ունեցող Հայկական գաղութային ընկերակցությունը, որը, հիմնականում երկու ամերիկահայերի նվիրատվություններով, օգնում էր գաղաքական հայերին սկսած Էլիս Այլենդից պաշտպանում անօրինություններից, հեշտացնում նրանց մուտքն ԱՄՆ, ուղեկցում դեպի նախընտրած քնակավայրեր, աշխատանք հայթայթում, տեղափորում անգիտական դպրոցներում, տարին երկու անգամ կազմակերպում նոր երկու բարքերին ու օրենքներին ծանոթացնող ազատ դասախոսություններ և այլն:²⁴

Նույն թվականին Նյու Յորքում ստեղծվել էր մեկ ուրիշ կազմակերպություն ևս՝ Հայ առաջադիմական ընդհանուր ընկերակցությունը, որի նպատակն էր հայ տարագիրների շրջանում պահպանել ու զարգացնել տեղային՝ ծննդավայրի ժառանգությունները, ինչպես նաև նրանց մեջ բարձր պահել որոնք գրած երկու քաղաքացին լինելու պատիվը:²⁵

Արդեն դարասկզբին ԱՄՆ-ի հայաշատ խոշոր քաղաքներում (Բոստոն, Ռեյթեն, Նյու Յորք, Փոլվիդենս, Ֆրեզնո և այլն) գործում էին մի շարք մշակութային միություններ գրական ու գրադարանային ակումբներ ու միություններ, որոնք գաղութահայության շնորհիվ ժամանակի ընթացքում հարստացել են հայ և օտար գրականությամբ, դերասանական և երաժշտական խմբեր ու ակումբներ, որոնք «հայկական կեանք ներկայացներով եւ հայրենաշունչ երգերով կը խանդավառէին Հայ պանդուխտները» և այլն:²⁶

Արվեստի բնագավառում հիմնված Վաղ շրջանի միություններից էր Նյու Բրիթանի Հին ավանդ դերասանական խումբը (1910 թ.), որի գոյության նպատակն էր՝ «ներկայացնել Ազգային իին և նոր պատմութիւնները, և հայ լեզուի ու գեղարուեստի ճաշակ ստեղծել գաղութին մէջ»:²⁷ Ավելի ուշ Լոս Անջելեսում հիմնադրվել է Հայկական դաշնակցային արվեստների ընկերակցությունը, որը կոչված էր ամեն կերպ խթանել արվեստի բոլոր ասպարեզներում (քանդակագործություն, երաժշտություն, երգեցողություն, պար, նկարչություն, թատրոն և այլն) ամերիկահայերի ինքնադրսնորումը տաղանդավոր արվեստագետներին արժանացնելով տարբեր պարզաների:²⁸

Ամերիկահայ բազմաթիվ ու բազմաբնույթ ընկերությունների, միությունների

ու կազմակերպությունների շարքում հրենց ուրույն ու կարևոր դերն են կատարել ԱՄ-ում հաստատված հայկական ու հայաբնակ տարրեր տեղավայրերի հայրենակիցների կողմից հիմնված համախմբումները հայրենակցական միությունները: Ամերիկյան հոլի Վրա դրանք սկսել են ի հայտ գալ այդտեղ հայության թվի ստվարացմանը զուգընթաց, այսինքն XIX դ. 80-ական թվականների վերջից, երբ մեծացել էր նաև նոր Երկրում ծնված հայրենակիցների թիվը: Այնպես որ, ժամանակի ընթացքում ստեղծված հայրենակցական համախմբումներն աստիճանաբար ներառել են հայրենի գրեթե բոլոր քաղաքները, գյուղերն ու ավանները (Չուսենիկ, Քեսրիկ, Սորենիկ, Չողե, Դատեն, Փերչեն, Բազմաշեն, Յոկիի, Խոյլու-Թլկատին, Բալու Պաղին, Վարդարիլ, Եղեգի, Շենրիլ, Բաշաղակ, Քորբե, Զարսանճակ Բերի, Իջմե, Աղնջիգ, Քղի, Զմշկածագ, Ծովը, Ակն, Օձ, Ջապուսի, Խարբերդ, Սեբաստիա, Վրաբկիր, Ջագարի, Սալաթիա, Կեսարիա, Աղանա, Տիգրանակերտ, Եղեգի, Բալու Սաքրաթ, Մարաշ, Էվերեկ, Չոմախ-լու, Ներխի, Կարին, Ֆենեսե, Թոնմարզա, Չոր, Սուտի, Տարոն-Տուրութերան, Շապին Գարահիսար, Նեֆքարե, Թորատ, Ձերմուկ, Ուրֆա, Ջաճըն, Այնթապ, Յոզդատ, Իզմիր և այլն): Միաժամանակ, ամերիկաբնակ հայրենակիցների զգալի մասն անդամակցում կամ հարում էր հիշյալ միություններին, որոնք, ի դեպ, գերծ էին կուսակցական որևէ երանգավորումից:

Հիշյալ հայրենակցական միությունները լավ կազմակերպված և օրեցօր բազմամարդ դարձող ազգային միություններ էին, որոնք դեկավարվում էին հրենց Կենտրոնական գործադիր վարչությունների կողմից և առաջնորդվում իրենց առջև դրված նպատակների ու խնդիրների հստակ ծրագիր-կանոնագրերով: Ամերիկահայ հայրենակցական միությունները, ժամանակի ընթացքում ընդարձակվելով, իրենց մասնացուերն են հիմնել լայնածավալ Երկրի հայաշատ գրեթե բոլոր այն քաղաքներում, որտեղ բնակվում էին հրենց հայրենակիցները: Մասնաճյուղերը ենթարկվում էին կենտրոնին: Հայրենակցական միությունների հասույթը գոյանում էր անդամավճարումներից, բազմաթիվ ու բազմաբնույթ հանգանակություններից ու նվիրատվություններից, ինչպես նաև սեփական անշարժ գույքի (հողատարածք, տարրեր շինություններ և այլն) վարձակալումից: Միությունների տարեկան եկամուտը կազմել է հարյուրավոր դոլարներ, որոնք լիովին հատկացվել են հայրենանվեր ու ազգանվեր նպատակների հրականացմանը: Որոշ միություններ ունեին նաև հրենց հրատարակությունները:

Սկզբնապես ամերիկահայ հայրենակցական միությունները ստեղծվել են հայրենի բնակավայրերում ուսումնական ու կրթական գործն առաջ մղելու, հայ երեխաներին նախնական ու բարձրագույն նորանոր գիտելիքներ հաղորդելու, տեղի հայկական դպրոցների տեխնիկական, ուսումնական, դասավանդման ու ուսուցչական մակարդակները բարձրացնելու նպատակով: Հետևաբար, այդ հայրենակցականները ստացել են կրթասիրաց, Ուսումնասիրաց, Ղպրոցասիրաց անունները: «Ինչպես որ Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ չ մնացած քաղաք կամ գիլ մը, որ իւր ներկայացուցիչները չունենայ Ամերիկայ, նոյնպես Ամերիկայի մէջ չկան որեւէ քաղաքի կամ գիլի 20 կամ աւելի հայրենակիցներ, որ չունենան իրենց ծննդավայրին մէջ դաստիարակութեան գործին նպաստելու համար մասնաւոր կազմակերպութիւն»:²⁹

Ամերիկահայ առաջին հայրենակցական կազմակերպությունը Հուսեյնիկի (Խարբերդ) Ուսումնասիրաց ընկերությունն էր հիմնված 1888 թ. Ուստում: Դրան հաջորդել են հայաբնակ այլ վայրերի հայրենակիցների ջանքերով հիմնադրված կրթանապատ բազմաթիվ ընկերությունները, որոնց շարքում գերակշռել են Խարբերդի նահանգի տարրեր շրջանները ներկայացնողները, ինչը պայմանավորված էր հայերի, հատկապես հիշյալ տարածքից դեպի ԱՄՆ առկա զգալի չափով գաղթականությամբ: ԱՄՆ-ում Խարբերդի նահանգը ներկայացնող Ուսումնասիրաց ընկերությունների թիվն առանձնապես ստվարացել է 1890-ական թվականների ջարդերից հետո հասնելով շուրջ չորս տասնյակի, որոնք ընդգրկում էին նահանգի գրեթե բոլոր գյուղերն ու ավանները:³¹ Եղել են նաև մի շարք այլ ուսումնասիրաց ընկերություններ, որոնց հիմնադրման ստույգ թվականը կամ վայրը անհայտ են:³¹

Քանի որ հայրենի դպրոցները մեծ մասամբ գտնվել են տեղի եկեղեցիների հովանավորության ներքո կամ դրանց կից, բնականաբար հայրենակցականները ևս, մանավանդ իրենց գոյության սկզբնական փուլում, կրել են հարանվանական ընդգրծված տարանջատման կնիքը, որն արտահայտվել է միևնույն հայրենակցականի համար երկու թևերի լուսավորչականի ու ավետարանականի, առկայությամբ: Սովորաբար ամերիկահայ հայրենակցական ընկերության լուսավորչական թևը, ավետարանականի համեմատությամբ, ավելի բազմանդամ ու ավելի կազմակերպված էր և իր նյութական միջոցները հայթայթում էր ինքնուրույն, մինչդեռ նույն ընկերության ավետարանական թևը թեպետ սակավանդամ էր, սակայն, իր նյութական միջոցները հայթայթում էր նաև Ամերիկյան միսիոներական խորհրդի աջակցությամբ: Ժամանակի ընթացքում ամերիկահայ հայրենակցական Կրթասիրաց, Ուսումնասիրաց կամ Դպրոցասիրաց ընկերությունների ամրապնդման ու դրանց գործունեության ծավալման, հայրենի բնակավայրերում նորանոր դպրոցներ հիմնելու և հայրենանվեր այլ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունից ենելով, աստիճանաբար վերացվել է հայրենակցականների ներսում առկա հարանվանական տարանջատվածությունը՝ նպաստելով դրանց հետագա ամրապնդմանն ու հզորացմանը: Արդեն 1906 թ. ԱՄՆ-ում կային նյութական ու գործնական առումներով առավել լավ կազմակերպված շուրջ 27 ազգային հայրենակցական միություններ:³²

Յիշյալ հայրենակցականներն իրենց առջև խնդիր էին դրել բարձրացնել հայրենի բնակավայրերի կրթական մակարդակը, հոգալ տեղի դպրոցների, ինչպես նաև ուսուցիչների ու աշակերտների կարիքները, օգնության կարուտ երեխաններին հատկացնել կրթառոշակ, բացել երկսեռ արական և իգական դպրոցներ, երբեմն նաև տեղի դպրոցները վերածել կոլեջների, հիմնել գրադարաններ և դրանք ապահովել անհրաժեշտ գրականությամբ, կազմակերպել թատերական ներկայացումներ և այլն: Կրթական հարցերից բացի, հայրենակցական ընկերությունները զբաղվել են նաև հայրենի քաղաքների, գյուղերի ու ավանների հոգևոր հարցերով, հոգացել տեղի եկեղեցիների կարիքները, իրագործել տնտեսական խնդիրներ, սեփականացրել ու վարձակալել անշարժ գույք հողատարածք կամ տարրեր շինություններ, որոնցից ստացված եկամտով իրականացվել են հայրենանվեր ծրագրեր:³³

XIX դ. 90-ական թվականների ջարդերը ժամանակավորապես խոչընդոտել,

իսկ 1914 թ. սկսված Առաջին աշխարհամարտն ընդհանրապես արգելակել են հայրենակցական Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց ընկերությունների ծրագրերի հետագա իրականացմանը հայրենիքում ստիպելով նրանց կամ դադարեցնել կամ վերակազմել իրենց գործունեությունը այն ժառայեցնելով ռազմական պահանջներին: Երբեմն հայրենակցական ընկերությունները նույնիսկ վեր էին ածվում երիտասարդների հեղափոխական, ինքնապաշտպանական ջոկատները հաճախնբող կենտրոնների, որոնց խնդիրն էր օգնել երիտրութքական վայրագություններին գոհ գնացող իրենց հայրենակիցներին:

Անցյալ դարի 90-ական թվականներին, ապա XX դ. սկզբին և վերջապես Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրան հաջորդող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և օսմանյան Թուրքիայի հայաքնակ տարածքներում հայ բնակչության նկատմամբ իրականացված պարբերական ջարդերը, կոտորածներն ու Սեծ Եղեռնը, և որպես հետևանք առաջ եկած թշվառությունը, որբությունը, սովոր, համաճարակներն ու գրկանքները չեն կարող անարձագանք թողնել օվկիանոսից այն կողմում գտնվող իրենց հայրենակիցներին, որոնցից ամեն մնէր մի «հոգու հատոր» ուներ հայրենի երկրում թողած: Այս թե ինչու, ԱՄՆ-ում գործող Կրթասիրաց, Ուսումնասիրաց ու Դրայ-րոցասիրաց ընկերությունների կողքին, հատկապես 1900-ական թվականներից սկսած, աստիճանաբար ի հայտ են եկել հայրենի հուսալքված բնակչությանն ամեն կերպ սատարելու, ավերված բնակավայրերն ու կրթօջախները վերականգնելու, ինչպես նաև անհամար որբերին սատարելու կոչված բազմաթիվ հայրենակցական ընկերություններ ու միություններ, որոնք, սերվելով վերոհիշյալ ուսումնասիրացներից և ժամանակի ընթացքում ու պատմական հանգամանքների բերումով վերակառուցելով դրանց նախկին գործունեությունը, արդեն 1914 թվականից, իրենց առջև դրված նոր խնդիրներին համապատասխան, կրել են Այրիախնամ, Որբախնամ, Որբասիրաց, Աղքատախնամ ու Նպաստանատուց անուններ: Ընդ որում, սկզբնական շրջանում, մինչև Առաջին աշխարհամարտը, դրանց մի մասը գործել է նախորդ՝ Կրթասիրաց կամ Ուսումնասիրաց ընկերությունների հետ գուգակցված կամ նրանց անվան տակ, և միայն 1915 թ. Մեծ Եղեռնից հետո է, որ վերջիններիցս մեծ մասը, դադարեցնելով իր կրթասիրական գործունեությունը և վերակազմվելով, լիովին ձեռնամուխ է եղել թշվառության մեջ հայտնված հայրենակիցներին նյութապես ու բարոյապես սատարելուն, մինչդեռ մյուսները, կազմակերպչական ու ֆինանսական առումով ի վիճակի չլինելով իրենց գործունեությունը վերակառուցել և ծառայեցնել նոր, արտակարգ պայմաններին, ինքնալուծարվել են կամ դադարեցնել իրենց գործունեությունը: Իրենց հայրենակիցներին սատարելու կոչված վերոհիշյալ նոր ընկերությունների կողքին, դրանց հետ համագործակցված, գործել են նաև մի շարք հայրենակցականների Տիկնանց որբախնամ և Հիվանդանոցային օժանդակ ընկերություններ: Թվարկված բոլոր ընկերություններն եւ գգալի նյութական միջոցներ են հատկացրել տարագրված և հատկապես Դեր Զոր ու արաբական անապատի այլ տարածքներ քշված հայրենակիցներին հայտնաբերելու ու նրանց բազմակողմանի օգնություն ցույց տալու համար: Հայրենակցական հիշյալ ընկերությունները գգալի ներդրում են ունեցել նաև 1916 թ. կովկասյան, ապա՝ կիլիկյան կամավորական շարժումներին նյութապես ու բարոյապես, գինվորա-

կան ու ռազմական առումներով խթանելու ուղղությամբ, Ար. Եջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսարանների միջոցով դրամական օժանդակություն առաքել՝ ի նպաստ կարույալ հայրենակիցների, բոլոր միջոցներով աջակցել Մերձավոր Արևելքի նպաստամատույցի, ՀԲԸՍ և այլ կազմակերպությունների ազգօգուտ ջանքերին: Իրենց գործունեությունը նոր ժամանակների ստիպողական հանգամանքների համապատասխան վերակառուցելու նախկին կոթասիրաց միությունների հայրենանվեր գործերն արժանացել են համայն հայության հիացմունքին ու բարձր գնահատանքին: Այդ մասին է վկայում նաև ժամանակակցի հետևյալ խոսքերը. « Յարգանք ու պատիւ Կոթասիրացին, որ ... փրկարար օգնութեան ձեռք կարկառեց սպանդանոցներէն ու Տէր Զօրի անապատներէն ազատուող խեւակներուն, ու մայրական անհուն գուրգուրանքով սրբեց որդին արտասուը, բալասան դրա այրիին ու անկարին ծով ցաւերուն»:³⁴

Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ արդեն առկա էին երիտրուրքական պետության պարտության նշանները, ու դրանից հետո, երբ այդ պարտությունն արդեն իրականացված փաստ էր, հայության շրջանում ակտիվացել էր հայրենի քանդված օջախներ վերադառնալու և դրանք նորից նոր վերաշինելու նվիրական ցանկությունը, որը, ի հարկե, խարսխված էր եվորոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու նաև ԱՄՆ-ի կողմից կատարված պաշտոնական հավաստումների վրա՝ արձանագրված 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրով, 1920 թ. ապրիլի 19-26-ին Սան-Ռեմոյի և հատկապես նույն թվականի օգոստոսի 10-ին Սկրի պայմանագրերով:

Դայրենի ավերված բնակավայրերը վերականգնելու և նախկին խաղաղ ու ստեղծագործ կյանքը վերադաբնելու դժվարին գործն ԱՄՆ-ում ստանձնել էին այդ նպատակով կազմակերպված Վերաշինաց, ինչպես նաև Դայրենակցական անունները կրող միությունները: Դրանք իրենց առջև խնդիր էին դրել օգնել տարագիր հայրենակիցներին հետ վերադառնալ հարազատ բնակավայրերը, այնտեղ կառուցել հիվանդանոցներ, որբանոցներ, աշխատանքային արհեստանոցներ, վերաշինել դպրոցներն ու եկեղեցները, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ որբացածներին ու այրիացածներին, թշվառներին, կարիքավորներին ու անշխատներին և այլն: Դիշյալ միությունները բազմիցս կազմակերպել են հանգանակիչ հավաքներ, ժողովներ, հանդիսություններ ու բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հավաքված հասույթը տրամադրվել է ի նպաստ Բեյրութում, Յալեայում, Բաղդասում, Շամսում, Արենքում, Սալոնիկում, Սարսելում, Վաղդիվոստոկում և այլ վայրերում գտնվող տարագիր հայրենակիցներին միաժամանակ այդ վայրերում և իմբնելով թշկական, կրթական ու աշխատանքային կենտրոններ, որբանոցներ և այլն: Վերաշինաց ու Դայրենակցական միությունները հայրենակցական նակարդակի խնդիրներից բացի, ամենագործուն մասնակցությունն են ունեցել նաև համագային կարևոր ձեռնարկների, այդ թվում նաև հանգանակությունների իրականացմանը (օրինակ՝ 1918 թ. Ամերիկահայ ազգային միության կողմից կազմակերպված «1 մլն. դոլարի» հանգանակությանը, 1920 թ. Զորավար Անդրանիկի կազմակերպված հանգանակությանը և այլն), ամեն կերպ աջակցել ՀԲԸՍ, Մերձավոր Արևելքի նպաստամատույցի և հայանպատ այլ ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին և այլն: Անժխտելի է ամերիկահայ

հայրենական միությունների ծավալած գործունեության նշանակությունը նաև ԱՄՆ-ի հայ գաղթականների նկատմամբ:

Հայրենական միությունների բոլորանվեր ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել հասնել սկզբուն ամերիկահայ ցիրուցան պանդուստների ազգային համախմբման ու կազմակերպմանը, ապա նաև Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդող բախտորոշ ժամանակաշրջանում իրաշքով վերապրած հայության ԱՄՆ գաղթած բներոների վերականգնմանն ու ինքնահաստատմանը:

Ամերիկահայության ազգային, հասարակական-քաղաքական համախմբման գործուն իրենց ուրույն դերն ունեն ԱՄՆ-ում հաստատված հայ քաղաքական կուսակցությունները: Պանդուխտ հայերի Նոր Երկրում իիմնավորվելուց կարծ ժամանակ անց նրանցուն «...վար մնացած հայրենիքի սէրը կուգար պատրաստելու հայ կուսակցութեան գոյութեան ու յարատեւութեան իրական գետինը»³⁵ նպաստելով սկզբուն հնչայիան, ապա դաշնակցական կուսակցությունների մուտքն այդտեղ: Սրանք ԱՄՆ առաքված իրենց եռանդուն գործիչների ջանքերով, հայության տարածմանը գուգընթաց, իրենց մասնաճյուղերն են իիմնել Երկրի գրեթե բոլոր հայաշատ կենտրոններուն «...եւ Ամերիկայի հայ գաղութին նիւթական ու բարոյական ուժերով սնած, գործեցին ու խօսեցան ... եեռաւոր Հայրենիքի ազատութեան անունով եւ անոր շուտափոյթ իրագործումին ի նպաստո»:³⁶ Ըստ որում, ազգային խնդիրների իրագործման ճանապարհին նրանցից յուրաքանչյուրը, հետամտելով դրան հասնելու իր ուրույն սկզբունքները, ի վերջո ԱՄՆ-ը վերածեց հայ քաղաքական կուսակցությունների բուռն գործունեությունների համագույն կենտրոնատեղի: «...Ամերիկան եղած է հայ քաղաքական կուսակցութեանց նիւթական մեծագոյն աղբիւրը, եւ գլխաւոր կերտոնը միանգանայն: ... Այս հիւրընկալ Երկրին մեջ էր, որ իիմնուեցան ու յաւերժացան յեղափոխական բեմն ու մամուլը...»:³⁷

Նոր Երկրում ազգային կուսակցությունների ամերիկահայ մասնաճյուղի կորիզը կազմել են արմենական կուսակցության գործիչ Ս.Փորբուգայանի կողմից դեռևս 1880-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին իիմնաված կաճառ Հայկականը (Ուստոր), Հայոց հայրենասիրական միությունը (Ձերսի Սիրի), ինչպես նաև Ծաղիկ Հայաստանին (1890 թ., Բոստոն), Արծիվ Հայաստանին (1893 թ., Մոլտըն), Հայկական հարցը Ամերիկայի հայությանը ներկայացնելու կոչված նմանատիպ այլ խնբակներ, որոնք բոլորն էլ, ժամանակի ընթացքում ծուլվելով ու համախնդիրներու նախապատրաստել են 1890 թ. Մասսաչուսեթսի նահանգի Ուստոր քաղաքունքը ամերիկահայ քաղաքական պատմության մեջ առաջին հնչայիան կուսակցության առաջացումը:³⁸

Հնչայիան կուսակցությունը, հանդիսանալով ԱՄՆ-ում ազգային-քաղաքական կառուցվածք ստեղծած առաջին հայկական կուսակցությունը, ժամանակի ընթացքում իր մասնաճյուղերն էր իիմնել Նյու Յորքում, Փրովիդենսում, Ուորքեսթերում, Բոստոնում, Լոուելում, Սոլտլեյնում, Չիկագոյում, Ֆիլադելֆիայում և արդյունաբերական հայաշատ այլ քաղաքներում՝ ամենուրեք կազմակերպելով բազմամարդ ժողովներ, իրապարակային հավաքներ ու ցույցեր: ³⁹

ԱՄՆ-ի հնչայիան կուսակցության երևելի գործիչներից էին իիմնադիրներ Նշան

Կարապետոյանը (Ռուբեն Խան Ազատ), Կարապետ Փափազյանը, Գարեգին Չիթյանը, ինչպես նաև Արսեն Տիրանը, Վարդան Վրույրը, Շահան Նաբալին, Դրաշ Երվանդը, Սուրեն Պարթևանը, Միհրան Սվազլըն, Սապահ Սապահ-Գյույսանը և ուրիշներ։⁴⁶ Ամերիկահայության շրջանում կազմակերպված հնչակյան շարժման սկզբնավորող խարբերդից պատվելի Գ. Չիթյանն էր, որը դարձավ «ազատ ափերուն վրայ» «հայ յեղափոխութեան պերճաբան, հրաշունչ գաղափարախօսը» և «խաչի փրկագործութեան հետ քարոզեց նաեւ ինքնապաշտպանութեան ու գենքի ազատարար դեր...»։⁴⁷

ԱՄ-ում հնչակյան գաղափարախոսության տարածողներից էր Դարվարոի համալսարանի ուսանող, Դայ դատի Նվիրյալ Կ. Փափազյանը, որը նաև կարևոր կազմակերպչական աշխատանք էր ծավալել ամերիկացի հայասերների հայանպատ ջանքերը համախմբելու և որանք նպատակային ծառայեցնելու ուղղությանը։⁴⁸

Ամերիկահայ հնչակյանների վրա հատկապես մեծ էր սոցիալիստ-հնչակ Ա. Նազարենի գաղափարական ազդեցությունը, որի կրողներից էր 1893 թ. ԱՄ ժամանած և Բոստոնում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում ու հայաշատ այլ վայրերում իր հեղափոխական ու ընկերվարական ելույթներով աչքի ընկած ռուսահայ Ն. Կարապետյանը։⁴⁹

Հնչակյան կուսակցության ներսում սոցիալ-դեմոկրատական և ազգային երկու հոսանքների առկայությունը, որը 1896 թ. օգոստոսին հանգեցրել էր կուսակցության լիակատար մասնատման, անդրադարձել էր նաև հնչակյան ամերիկահայ մասնաճյուղի վրա, ուր պառակտումն առավել խորացել էր 1898 թ.: Դավատարիմ մնալով ամերիկահայոց հարցին, մերժելով ընկերվարականությունը որպես անհամատեղելի, ավելցորդ ու վնասակար գաղափարաբանություն կապիտալիստ-արոլետար սոցիալական հարաբերություններից զերծ հայ իրականության հանար, ինչպես նաև 1890-ական թվականներին հայերի նկատմամբ իրականացված համիդյան ջարդերից հետո հրաժարվելով «մասնակի ու ապարդյուն» ցույցերից և որդեգրելով հեղափոխական պայքարի խոհուն, հեռատես և անաղմուկ մերողները, հնչակյան կուսակցության գերակշիռ մեծամասնությունը կազմող ազգայնական քայլ, Վերակազմվելով, ստեղծել էր նոր Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը (Կենտրոնական վարչության կազմում Մ. Սվազլը, Ա. Արփիկիարյան, Կ. Փափազյան, Փ. Աղամյան) 1899 թ. Նյու Յորքում հիմնված, ապա 1900 թ. Ուորքեսթեր տեղափոխված «Զայն հայրենեաց» նոր թերթով (խմբ. Գ. Չիթյան), մինչդեռ Ա. Նազարենի սոցիալիստական կողմնորոշման հետևորդները՝ ին հնչակները, նախկին կուսակցության հիմքի վրա վերանվանվել են Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության 1903 թ. Բոստոնում հիմնելով «Երիտասարդ Դայաստան» թերթը (խմբ. Ս. Սապահ-Գյույսան), որը հետագայում տեղափոխվել է Նյու Յորք։⁵⁰

ԱՄ-ում հնչակյան հին ու նոր թևերի միջև առկա գաղափարական հակասություններն աստիճանաբար վեր են ածվել լուրջ ու անգիտում թշնամական պայքարի դրամից բխող ըղլոր ծանր հետևանքներով (իրապարակային փոխադարձ անհարկի վիրավորանքներ, հետապնդումներ, ահաբեկչություններ, եղբայրասպան կրիվներ), ինչ չի վրիպել անգամ ամերիկյան մամուլի ուշադրությունից արժանանալով համընդհանուր դատապարտման:

Դարասկզբին Հնչակյան, մասնավորապես Վերակազմյալ հնչակյան, կուսակցության շարքերում առկա հակասությունները նորից պատճառ են դարձել Վերակազմության 1907 թ. ստեղծելով այժմ արդեն Վերատին Վերակազմված հնչակյան կուսակցություն «Ազգ» թերթով (խմբ. Ս.Պարթևյան):⁴⁵

1918 թ. Վերջին վերակազմության էր Ենթարկվել նաև Հնչավյաս զուսացության Սոցիալ-դեմոկրատական հատվածը՝ բաժննելով Երկու թևերի՝ սապահական ների և բողոքական հնչավյանների։ Վերջիններս, ազդված ուսական բոլշևիկան հեղափոխությունից, գտնում էին, որ ժամանակն է հրաժարվել ազգային խնդիրների համար պայքարելուց և միանալ միջազգային կոնունիստական շարժմանն ու ազգային կոմկուսին։⁴⁶

1895 թվականից ԱՄ է մուտք գործել նաև Դայ հեղափոխական դաշնակցություն (ԴՀԴ) կուսակցությունը: Թեև 1890-ական թվականների երկրորդ կեսը «կուսակցական անզուտապ պայքարի տարիներ էին»,⁴⁷ երբ «կոչիւները մինչև իսկ տեղական դատարանները քաշուելու չափ յառաջ գացին»,⁴⁸ այդուհանդեռձ ԴՀԴ եռանդուն գործիչների ջանքերի շնորհիկ հաջողվել է կուսակցությունը դարձնել «...գաղափարական եւ կազմակերպական տեսակետից տիրական ոյժ ամերիկահայութեան մէջ»:⁴⁹ Աստիճանաբար վերջ դնելով քաղաքական ասպարեզում հնչակյանների գերիշխող վիճակին և ամուր հիմքեր հաստատելով Նոր Երկրում, ԴՀԴ կուսակցությունն իր մասնաճյուղերն է հիմնել արդյունաբերական հայաշատ կենտրոններում՝ Լոուրենսում, Ջեյվլրիկում, Փրովիդենսում, Ուորթեսթերում, Ուայթինսովիլում, Նյու Յորքում, Բուտոնում և այլուր:⁵⁰ Ժողովները, հրապարակային հավաքներն ու ցոլցերն անբաժանելի էին կուսակցության գործունեությունից, որը, ինչպես Դնչակյան կուսակցությունը, նույնաես գերծ չէր նաև ահաբեկչական մեթոդներից:

ՀՅԴ առաջին կուսակցությունները ԱՄ-ում սկսել են գործել Սիմոն Ծիյանի կողմից, հաստատում հիմքերի վրա դրվել «փորձառու ու հմուտ» Հովհաննես Յովանի ապա Ա. Վորամյանի ջանքերով: Կերպինս 1899 թ. Նյու Յորքում հիմնել էր կուսակցական առաջին պաշտոնաբերը «Դայրենիթը» (խմբ. թ. Չարչաֆյան), որը 1900 թվականից փոխադրվել էր Նյու Յորքից Բոստոն: ⁵²

1908 թ. Վերջին արմենական և վերակազմյալ հնչակյան գուսակցությունը պահանջում է ստեղծվել էր Յայ սահմանադրական ուժմկավար կուսակցությունը, վերամիավորումից ստեղծվել էր Յայ սահմանադրական ուժմկավար կուսակցությունը, որի հայտնի գործիչներից էին Սուրեն Պարթևանը, Լևոն Փափազյանը, Յակոբ Օղա-սապյանը և այլքը: Կուսակցության նշանաբանն էր «Կուսակցութիւնը ժողովուրդն է»:⁵⁴ Նորաստեղծ կուսակցության պաշտոնաթերթն էր Վերստին վերակազմված հնչակյան կուսակցության Շոտոնում հրատարակվող «Ազգ» թերթը: Երիտթուրքական

Կարապետյանը (Ռուբեն Խան Ազատ), Կարապետ Փափազյանը, Գարեգին Չիքյանը, ինչպես նաև Արտեն Տիրամը, Վարդան Վրույրը, Շահան Նաթալին, Դրաչ Երվանդը, Սուլեն Պարթևյանը, Միհրան Սվագլըն, Սապահ Սապահ-Գյուլյանը և ուրիշներ։⁴⁰ Ամերիկահայության շրջանում կազմակերպված հնչակյան շարժման սկզբնավորող խարբերոցի պատվելի Գ. Չիքյանն էր, որը դարձավ «ազատ ափերուն վրայ») «հայ յեղափոխութեան պերճաբան, իրաշունչ գաղափարախօսը» և «խաչի փրկագործութեան հետ՝ քարոզեց նաեւ ինքնապաշտպանութեան ու գենքի ազատարար դերը...»։⁴¹

ԱՄՆ-ում հնչակյան գաղափարախոսության տարածողներից էր Յարվարդի համալսարանի ուսանող, Դայ դատի Նվիրյալ Կ. Փափազյանը, որը նաև կարևոր կազմակերպչական աշխատանք էր ծավալել ամերիկացի հայասերների հայանպատ ջանքերը համախմբելու և դրանք նպատակային ծառայեցնելու ուղղությամբ։⁴²

Ամերիկահայ հնչակյանների վրա հատկապես մեծ էր սոցիալիստ-հնչակ Ա. Նազարբեկի գաղափարական ազդեցությունը, որի կրողներից էր 1893 թ. ԱՄՆ ժամանած և Բուտոնում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում ու հայաշատ այլ վայրերում իր հեղափոխական ու ընկերվարական ելույթներով աչքի ընկած ոուսահայ Ն. Կարապետյանը։⁴³

Դնչակյան կուսակցության ներսում սոցիալ-դեմոկրատական և ազգային երկու հոսանքների առկայությունը, որը 1896 թ. օգոստոսին հանգեցրել էր կուսակցության լիակատար մասնատման, անդրադարձել էր նաև հնչակյան ամերիկահայ մասնաճյուղի վրա, ուր պառակտումն առավել խորացել էր 1898 թ.: Դավատարիմ մնալով ամերիկահայոց հարցին, մերժելով ընկերվարականությունը որպես անհամատեղելի, ավելորդ ու վնասակար գաղափարաբանություն կապիտալիստ-պրոլետար սոցիալական հարաբերություններից գերծ հայ իրականության համար, ինչպես նաև 1890-ական թվականներին հայերի նկատմամբ իրականացված համիդյան ջարդներից հետո հրաժարվելով «մասնակի ու ապարդյուն» ցույցերից և որդեգրելով հեղափոխական պայքարի խոհուն, հեռատես և անաղոնուկ մերողները, հնչակյան կուսակցության գերակշիռ մեծամասնությունը կազմող ազգայնական թէր, վերակազմվելով, ստեղծել էր նոր՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը (Կենտրոնական վարչության կազմում Մ. Սվագլը, Ա. Արփիհարյան, Կ. Փափազյան, Փ. Աղամյան)՝ 1899 թ. Նյու Յորքում հիմնված, ապա 1900 թ. Ուորթեսքեր տեղափոխված «Զայն հայրենեաց» նոր թերթով (Խմբ. Գ. Չիքյան), մինչեւ Ա. Նազարբեկի սոցիալիստական կողմնորոշման հետևող հին հնչակյանը, նախկին կուսակցության հիմքի վրա վերանվանվել են Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության՝ 1903 թ. Բուտոնում հիմնելով «Երիտասարդ Դայաստան» թերթը (Խմբ. Ս. Սապահ-Գյուլյան), որը հետագայում տեղափոխվել է Նյու Յորք։⁴⁴

ԱՄՆ-ում հնչակյան հին ու նոր թեսերի միջև առկա գաղափարական հակասություններն աստիճանաբար վեր են ածվել լուրջ ու անգիծում թշնամական պայքարի՝ դրանից բխող բոլոր ծանր հետևանքներով (իրապարակային փոխադարձ անհարկի վիրավորանքներ, հետապնդումներ, ահաբեկչություններ, եղբայրասպան կրիվներ), ինչ չի վիճակ անգամ ամերիկային մամուլի ուշադրությունից արժանանալով համընդհանուր դատապարտման:

Դարասկզբին Հնչակյան, մասնավորապես Վերակազմյալ հնչակյան, կուսակցության շարքերում առկա հակասությունները նորից պատճառ են դարձել վերակազմության 1907 թ. ստեղծելով այժմ արդեն Վերստին վերակազմված հնչակյան կուսակցություն «Ազգ» թերով (խմբ. Ս.Պարթևյան):⁴⁵

1918 թ. վերջին վերակազմության էր Ենթարկվել նաև Հնչակյան կուսակցության Սոցիալ-դեմոկրատական հատվածը՝ բաժանվելով Երկու թերի՝ սապահական-Ենթի և բողոքական հնչակյանների: Վերջիններս, ազգված ոուսական բոլշևիկյան հեղափոխությունից, գտնում էին, որ ժամանակն է հրաժարվել ազգային խնդիրների համար պայքարելուց և միանալ միջազգային կոմունիստական շարժմանն ու ազգային կոմկուսին:⁴⁶

1895 թվականից ԱՄՆ է մուտք գործել նաև Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունը: Թեև 1890-ական թվականների Երկրորդ կեսը «կուսակցական անզուսա պայքարի տարիներ էին»,⁴⁷ երբ «կորիները մինչև իսկ տեղական դատարանները քաշուելու չափ յառաջ գացին»,⁴⁸ այդուհանդերձ ՀՅԴ Երանդուն գործիչների ջանքերի շնորհիվ հաջողվել է կուսակցությունը դարձնել «...գաղափարական եւ կազմակերպական տեսակետից տիրական ոյժ ամերիկահայութեան մէջ»:⁴⁹ Աստիճանաբար վերջ դնելով քաղաքական ասպարեզուն հնչակյանների գերիշխող վիճակին և ամուր հիճքեր հաստատելով Նյու Երկրում, ՀՅԴ կուսակցությունն իր մասնաճյուղերն է հիմնել արդյունաբերական հայաշատ կենտրոններում Լոռուենսում, Շեյքզերիլում, Փրովիդենսում, Ուորքեսթերում, Ուայթինսվիլում, Նյու Յորքում, Բոստոնում և այլուր:⁵⁰ Ժողովները, հրապարակային հավաքներն ու ցուցերն անբաժանելի էին կուսակցության գործունեությունից, որը, ինչպես Հնչակյան կուսակցությունը, նույնպես գերծ չէր նաև ահարեւէչական մերողներից:

ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության հիմնադիրներն էին Սիմոն Շիյանը (Սուլեմ), Հովհաննես Յուսուֆյանը, Արշակ Վուամյանը, Արամ Աշոտը, Կ.Սեքլեմյանը, Խ.Գալուստյանը, Շահան Նաբալին, Աստոմ Յարճանյանը (Սիամանթը) և ուրիշները:⁵¹

ՀՅԴ առաջին կուսակցություններն ԱՄՆ-ում սկսել են գործել Սիմոն Շիյանի կողմից, հաստատուն հիճքերի վրա դրվել «փորձառու ու հմուտ» Հովհաննես Յուսուֆյանի, ապա՝ Ա.Վուամյանի ջանքերով: Վերջինս 1899 թ. Նյու Յորքում հիմնել էր կուսակցական առաջին պաշտոնաբերը՝ «Հայրենիքը» (խմբ. Թ.Չարշաֆճյան), որը 1900 թվականից փոխադրվել էր Նյու Յորքից Բոստոն:⁵²

Որպես ազգային հեղափոխական ուժ ՀՅԴ-ն սկսել է Վերելք ապրել դարասկզբին Սաստոնի դեպքերի ընթացքում (1900-1904 թթ.) ընդհուա մինչև 1907 թ.⁵³

1908 թ. վերջին արմենական և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների վերամիավորումից ստեղծվել էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը, որի հայտնի գործիչներից էին Սուլեմ Պարթևյանը, Լևոն Փափազյանը, Հակոբ Օղասպյանը և այլոք: Կուսակցության նշանաբանն էր «Կուսակցութիւնը՝ ժողովուրդն է»:⁵⁴ Նորաստեղծ կուսակցության պաշտոնաբերն էր Վերստին վերակազմված հնչակյան կուսակցության վայրէնաբերը և Վերստին վերակազմված հնչակյան կուսակցության վայրէնաբերը՝ Երիտրութքական

Սահմանադրության հետ հույսեր փայփայող իիշյալ կուսակցության գործիչները ամերիկաբնակ շնորհալի ու աշխատասեր հայ գաղթականներին կոչ էին անում վերադառնալ հայրենի երկիր, ուր գյուղատնտեսության ու արդյունաբերության զարգացման, երկարուղիների կառուցման և այլ կարևոր ձեռնարկների հանար մասնագետների կարիք կար, և մասնակցել օսմանյան պետության վերակառուցմանը:⁵⁵

1921 թ. Արմենական, Վերակազմյալ հնչակյան և Սահմանադրական-դեմոկրատական կուսակցությունների միաձուլումով ի հայտ է Եկել Յայկական դեմոկրատական-լիբերալ (Ռամկավար-ազատական) կուսակցությունը, որի ականավոր գործիչներից էին Մ.Անանիկյանը, Ս.Մալեմեզյանը, Կ.Փափազյանը, Լ.Կյուլեսերյանը, Դ.Ծովիկյանը և այլոր: ⁵⁶ Կուսակցության պաշտոնաբերերն էին ԱՄՆ-ի արևելյան հատվածում «Ազգ-Պահակը», ապա՝ «Պայքարը» (Բուտոն), իսկ արևմտյան հատվածում «Նոր Կենաք-Արօրը», ապա՝ «Նոր օրը» (Ֆրեզոն): ՅՆԿ-ն իրեն հոչակել էր որպես գուտ ազգային կուսակցություն՝ գերծ օտար ազդեցություններից ու արտաքին ճնշումներից: ⁵⁷

Դա քաղաքական երեք կուսակցությունների (Յնչակյան, Դաշնակցական, Ռամկավար) ամերիկյան մասնաճյուղերը կառուցվածքային առումով խիստ կազմակերպված միավորներ էին բրգածն և հիերարխիկ կազմությամբ: Դրանցից յուրաքանչյուրը, Ենթարկվելով իր կուսակցության ԱՄՆ-ից դուրս գտնվող համապատասխան կենտրոնական բյուրոյին, միաժամանակ, ուներ նաև իր՝ ամերիկյան կենտրոնական կոմիտեն, որին Ենթարկվում էին երկրի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում գործող համապատասխան կուսակցությունների մասնաճյուղերը: Ստեղծվելով ռուսական հեղափոխական կուսակցությունների օրինակով հայ քաղաքական կուսակցություններն իրենց կառուցվածքով շատ նման էին վերջիններին: Կուսակցությունների ամերիկահայ մասնաճյուղերը համապատասխան ֆինանսական ներդրումներ էին կատարում իրենց կենտրոնական ինստիտուտներին, իսկ վերջիններս էլ բյուրոներին: Ամերիկահայ ազգային կուսակցությունների նյութական կարողությունը գոյանում էր անդամավճարումներից, նվիրատվություններից և տարրեր առիթներով կազմակերպված հանգանակություններից: Ընդ որում, անդամավճարումները որոշվում էին կուսակցությունների կենտրոնական կոմիտեների կողմից՝ հիմնված անդամների վճարողունակության սկզբունքի վրա. սովորաբար անդամավճարումները չէին գերազանցում վճարողի Եկամտի 2-3%-ից: Ամերիկահայ կուսակցություններին անդամագրվածների շարքում մտավորականների կողքին զգալի թիվ էին կազմում գործափորները, դարասկզբից նաև կանացի սեռի առաջին սակավարիկ ներկայացուցիչները: ⁵⁸

Ամերիկահայ քաղաքական կյանքում սկզբնական շրջանում (1890-ական թվականներ) գերիշխող դերը պատկանել է Յնչակյան կուսակցությանը, ինչը շուտով (1900-ական թվականներ) փոխանցվել է Դայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությանը: Վերջինս միմյա Առաջին աշխարհամարտ հանդիսացել է ԱՄՆ-ի ամենից մեծաթիվ ու արագ աճող քաղաքական կուսակցությունը: ⁵⁹ (Տես Այսուսակ XX^{59w}):

ԱՊՅՈՒՍԱԿ Խ

**ԱՄՆ-ՊԱՄ ՀՅԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՍ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ
(ըստ առանձին տարիների)**

Տարեթիվ	Կոմիտե	Անդամ
1903	36	—
1907	48	1.005
1914	77	1.728

Դարասկզբին ԱՄՆ-ի ՀՅԴ-ն իր անդամների թվով նույնիսկ հավասարվել, իսկ երեմն նաև գերազանցել է ազգային մյուս կուսակցությունների միասին վերցված թվաքանակին: Միաժամանակ, իդենտ հերթին Վերակազմական հնչակները գերազանցել են Դին հնչակներին. 1905 թ. դրանց հարաբերությունը համապատասխանաբար կազմել է 1.000 և 400-500 անդամ, իսկ 1914 թ. Ռամկավար կուսակցության անդամների թիվը՝ 1.200:⁶⁰

1921 թ. տվյալներով ԱՄՆ-ՊԱՄ հայ քաղաքական կուսակցություններին անդամակցածների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 13.000 մարդ: Ազգային գրեթե բոլոր կուսակցությունների կենտրոնները, ակունքներն ու պաշտոնաթերերը կենտրոնացված էին երկրի արևելյան ափին գտնվող հայաշատ Բոստոն քաղաքում, բացառությամբ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, որը հաստատվել էր Չիկագոյում:⁶¹ (Տե՛ս Այլուսակ XXI հայություն):

ԱՊՅՈՒՍԱԿ Խ

1921 թ. ԱՄՆ-ՊԱՄ ՀՅԴ ՔԱՅԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ	
Կուսակցություններ	Անդամներ
Հայ հեղափոխական դաշնակցություն	6.000
Ռամկավար-ազատական	3.000
Վերակազմական հնչակյան	
Ազատական հնչակյան	2.500
Ազգայնական հնչակյան	
Սոցիալ-դեմոկրատական հնչակյան	1.500
Ընդհանուր	13.000

Հայ քաղաքական կուսակցությունների գաղափարական հզոր գենքն էր մամուլը: Այն ընթերցվում էր ոչ միայն նրա կողմնակիցների ու համախոհների կողմից, այլ նաև հարազատ լեզվին, հայրենի լուրերին կարոտ, ոչ կուսակցական ուղղվածության բազմաթիվ տարագիր հայերի կողմից: Թերերի համարները ձեռքից ձեռք էին անցնում, կարդացվում հարյուրավոր հայերի կողմից: Այսպես, 1908 թվականից Ֆրեզնոյում լույս տեսնող դաշնակցական «Ասպարեզ» թերթի յուրաքանչյուր համար անցնում էր ամենաքիչը 200 հայրենաբաղդ հայերի ձեռքով:⁶²

Կուսակցություններն ԱՄ-ում ունեին նաև հասարակական-քաղաքական, մշակութային ու կրթական հավաքատեղիններ ու հաստատություններ ակումբներ, ընկերություններ, գրադարաններ, ընթերցարաններ և այլն, որոնք կարևոր ազգահավաքիչ ու ազգանպաստ դեր են կատարել հայրենի եզերքներից հեռու գտնվող ամերիկահայության համար: Սկզբնական շրջանում իրենց կուսակցական հավաքների համար գործունեության կենտրոնատեղիններ էին հանդիսանում թերերի գրասենյակները: Ժամանակի ընթացքում կուսակցությունները վարձում կամ գնում էին սենյակներ, որտեղ հաստատվում էին նրանց ակումբները: «Դաշնակցական», «Շնչակյան», «Ռամկավար» անուններով: Այդ ակումբներում տեղի էին ունենում ազգային կանոնավոր հանդիպումներ:

Նախքան ազգային կրթօջախների հայտ գալը, կուսակցական ակումբները կատարել են նաև կրթական ու լուսավորական յուրատեսակ դպրոց-կենտրոնների դեր՝ իրենց վրա վերցնելով համայնքի հայապահպաննան ու ինքնահաստատման կարևորագույն գործը: Ակումբների մշտական գործող գրադարաններն ու ընթերցարաններն իրենց այցելուներին էին տրամադրում հայոց լեզվին, գրականությանն ու պատմությանը վերաբերող նյութեր, այդ թեմաներով պարբերաբար անց էին կացվում հայերեն ու անգլերեն ուսուցողական դասախոսություններ, կազմակերպվում հանդիպումներ համայնքի կրթված անդամների, ծանաչված մտավորականների, ազգային ու հեղափոխական գործիչների հետ:

Հայ քաղաքական կուսակցություններն ԱՄ-ում ունեցել են նաև իրենց աջակցող երիտասարդական կազմակերպություններ: Դրանց թվում առավել գործուն ու մեծաքանակը, տարածվածն ու հեղինակավորը ՀՅԴ Կրտսեր կազմակերպությունն էր, որը հայտնի էր Հայ երիտասարդական ֆեդերացիա անունով: Օրեցոր աճող այդ կազմակերպությունն իր գործունեությունը տարածել է գաղութի ինչպես քաղաքական, այնպես էլ կրթական, մարզական ու հասարակական կյանքի ասպարեզներում:

Ազգային կուսակցություններն ԱՄ-ում կազմակերպել են նաև զինվորական դպրոցներ, որտեղ ամերիկահայ երիտասարդ կամավորներին մարզում էին ռազմական նպատակների համար պատրաստելով ապագայում հայրենիքի ազատագրմանը նվիրված վարժված զինվորներ: Այդպիսին էին 1891 թ. Ուստորում և Փրովիդենսում ստեղծված Զինվորական խմբերը, որոնք հետագայում ծովվել են հնչակյան մասնաճյուղերի հետ:⁶³ Ամերիկահայ առաջին կանոնավոր ռազմական դպրոցը հիմնվել էր 1899 թ. Փրովիդենսում, մեկ տարի անց՝ նյու Յորքում, ապա՝ Բոստոնում և այլուր: Թեև ռազմական ննանատիպ դպրոցները պահանջում էին նյութական մեծ ծախսեր, այրուհանդերձ, հայ քաղաքական կուսակցությունները, իրենց առջև դրված համազ-

գային կարևոր խնդիրներին համապատասխան, դրամական խոշոր հատկացումներ են կատարել ի նպաստ համայնքի երիտասարդության զինվորական պատրաստվածության։⁶⁶

ԱՄՆ-ում գործող հայ քաղաքական կուսակցություններն իրենց հետամտած համազգային նպատակների իրականացման ճանապարհին գերծ չեն մնացել ներկուսակցական բուռն վեճերից ու կատաղի ընդհարումներից, որոնք հաճախ վեր են ածվել բռնությունների արատավորելով ու նսեմացնելով նրանց գործադրած հյուենանվեր ջանքերը։ Ժամանակին այս հանգամանքը լուրջ մտահոգության արիթ է հանդիսացել ինչպես ամերիկահայության, այնպես էլ նրանց հետագա ճակատագրով մտահոգված և համայն հայության համերաշխությունն ու համախմբվածությունը երազող Ամենայն հայոց կաթողիկոս Մ.Խորիմյանի համար։ Վերջին 1907 թ. սեպտեմբերի 20-ին Սբ.Էջմիածնից հղած հայրապետական Կոնդակով սրափության կոչ է արել ԱՄՆ-ի հայ քաղաքական կուսակցություններին վերջ տալու անմիաբան ու ազգի համար կործանարար հետևանքներով առլեցուն քաղաքական վիճաբանություններին ասելով. «Ո՞հ, Որդես՝ կը իմ սիրեցեալը, սրափեցարութ ի թմրութեանց ձերոց և ի խոր քնոյ անգիտութեան և անհեռատեսութեան, և տեսէք, եթէ յորպիսում փափուկ ժամանակի գտանինք...»։⁶⁷

Իրենց գործունեության ընթացքում թույլ տված բոլոր թերություններով ու բացթողություններով հանդերձ, ամերիկահայ ազգային քաղաքական բոլոր կուսակցությունները հսկայական անգնահատելի դեր են կատարել ոչ միայն օտարության մեջ խարխափող հայ պանդոխաների շրջանում ազգային ոգին և հայրենի երկրի հետ կապը մշտարթում պահելու ուղղությամբ, այլ նաև նյութական ու բարոյական աջակցություն ցույց տվել հայրենի տառապյալ ժողովրդին, զգալի աշխատանք կատարել ԱՄՆ-ին և եվրոպական գորեղ տերություններին Դայկական հարցը ներկայացնելու և նրանց օգնությամբ Թուրքիայում հայանպաստ ձեռնարկներ իրականացնելու ուղղությամբ։

Ազգային կուսակցություններից բացի, դարասկզբին ԱՄՆ-ում սկսել են ձևավորվել նաև քաղաքական մի շարք այլ կազմակերպություններ, որոնք ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական հարաբերությունների արդյունքն էին։ Այդպիսին էր բանվորներ Դայկ Արամյանի, Արամ Զարդարյանի և այլոց կողմից հիմնված ամերիկահայ սոցիալիստական կուսակցությունը, որը սկզբում 1906 թ., խճակների, ապա կազմակերպությունների ձևով հաստատվել ու տարածվել էր Բոստոնում, Նյու Յորքում, Լինոնում, Դետրոյուտում, Չելսիում, Բրոքուորթում և այլուր որպես տեղական ամերիկահայ սոցիալ-բանվորական կուսակցության բաղկացուցիչ հայկական մասնաճյուղ։⁶⁸

Ամերիկահայ փոքրաթիվ 35-50 հազարի հասնող աշխատավորությունը, գործություններով իր սոցիալական պատկանելիության ազգային ավանդությներից, ինչպես նաև իրենց բաժին ընկած պատմական ճակատագրի թերությունով հեռու լինելով բանվորական շարժումներից, չուներ համապատասխան դասակարգային գիտակցություն, հետևաբար նրանց համախմբելը որոշակի դժվարությունների հետ էր կապված։ Սոցիալիստական կուսակցությունն ուներ իր ծրագիրն ու կանոնադրությունը, որը բխում էր «Բոլոր երկիրներու գործաւորներ՝ միացե՛ք» նշանաբանի ոգուց։⁶⁹ Սոցիալիստական

գաղափարախոսության կողմնակիցները պայքարում էին գործավորների աշխատաժամի կրծատնան, աշխատավարձի բարձրացման, աշխատանքային անվտանգության կանոնների պահպաննան, աշխատանքային դժբախտ պատահարների կամ անգործության դեպքում նրանց կյանքի պահպանագրման և նման այլ պահանջների իրականացման համար:⁷⁰ 1916 թվականից Դետրոյտում լույս էր տեսնում «Գործաւոր», 1920 թվականից Նյու Յորքում «Նոր Իոսանք», 1922 թվականից «Բանտոր» պարբերականները, իսկ արդեն 1924 թ. ԱՄՆ-ի բանվորական (կոմունիստական) կուսակցության հյակական հատվածի պաշտոնական ծուլումից հետո՝ «Պրոլետար» պաշտոնաթերթը:⁷¹

Ամերիկահայերի շրջանում գործել է նաև Հայ չեզզոքների (ոչ կուսակցականներ) հաճագային միությունը, որը, իմանվելով 1919 թ. Նյու Յորքում, նպատակ ուներ յուրաքանչյուր հայ քաղաքացու հասու դարձնել իր իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև պայքարել դրանց պաշտպանության համար:⁷²

Ամերիկահայ իրականության մեջ մշակութային, քաղաքական ու ներգաղութային կյանքի զանազան կողմերը ներառող ազգային այլ ակումբների, կուսակցությունների, ընկերությունների, միությունների, կազմակերպությունների կողքին իրենց արժանավոր տեղն ունենալ կուսակցական ու հարանվանական նկրտումներից հեռու կանգնած բարեսիրական միությունները՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՍ), Հայ կարմիր խաչը (ՀԿԽ) և այլն: Բնույթով համահյական այդ կազմակերպությունները, որոնց ֆինանսները գոյանում էին անդամավճարումներից, անձնական նվիրատվություններից ու հաճգանակություններից, իրենց ծավալած հսկայական նարդասիրական գործունեությամբ հայրենանպաստ և ազգանպաստ գործ կատարելով, նյութապես ու բարոյապես սատարել են ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ հայրենի ու աշխարհով մեկ սփոված իրենց բազմահազար կարիքավոր հայրենակիցներին:

Աղդպիսի խոշոր կազմակերպություններից էր 1906 թ. Կահիրենում հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միության ամերիկյան մասնաճյուղը, որը կազմավորվել էր Երկու տարի անց՝ 1908 թ. փետրվարի 24-ին Բոստոնում, Եգիպտոսից ժամանած ՀԲԸՍ ներկայացուցիչներ Վահան Քյուրքյանի, ինչպես նաև իրենց զգալի ավանդը ներդրած ավետարանական քարոզիչներ՝ Վերապատվելիներ Կ. Մանավյանի, Խ. Պենսեյանի, Մուշեղ Եպս. Սերոբյանի, Բարկեն Եպս. Կյուլեմերյանի և այլոց ջանքերով:⁷³ Հիմնադրման պահին ՀԲԸՍ ամերիկյան մասնաճյուղն ուներ ընդամենը 15 անդամ, իսկ մեկ տարի անց՝ արդեն 101:⁷⁴ Միության նպատակն էր. «Ա.-Օժանդակել հայ ժողովուրդին և մայր-հայրենիքին մտաւոր եւ բարոյական զարգացման: Բ.-Օգնել անոնց նիւթական եւ տնտեսական վիճակին բարելաւման: Գ.-Քաջալերել այն արդիւնքները յառաջ բերելու ծառայող ամեն ձեռնակ ու իրատարակութիւն»:⁷⁵ Ազգային արժանապատվության զգացումը միությանը թելադրում էր բարոյական այն սկզբունքը, համաձայն որի, «Հայը չպետք է իր ձեռքը Երկարի օտարի առջեւ»,⁷⁶ ուստի «Միութիւնը գորութիւն է», «Եղբայր Ենք մենք» կարգախոսներով կոչ էր անում համայն աշխարհի և, հատկապես, փոքրիչատե բարեկեցիկ ԱՄՆ-ի հայությանը համախմբված ու գորեղ աջակցություն ցույց տալ բոլոր, ի մասնավորի, օսմանյան թուրքիայի և

ցարական Ռուսաստանի իրենց կարույալ հայրենակիցներին: Շատ շուտով ՀԲԸՍ ԱՄՆ-ի մասնաճյուղը դարձավ միության հիմնական հենարանն ու առանցքային ուժը: Արդեն 1909 թ., գլխավորապես հայ ավետարանական հոգևորականների շնորհիվ, մասնաճյուղեր են հաստատվել Նյու Բրիթանում, Ուորթեսթերում, Փրովիդենսում, Բրոք-թոնում: Փառաւութերում: Նոյն թվականին հիմնվել է ՀԲԸՍ ամերիկյան մասնաճյուղի կարևոր սյունը դարձած Նյորքի մասնաճյուղը քաղաքի բարեսեր և ունեսոր խավի մասնակցությամբ: Ժամանակի ընթացքում արագ թափով աճել է միության մասնաճյուղերի և դրանց անդամների թիվը:⁷⁷ (Տես Այսուսակ XXII^{77a}):

ԱՊՅՈՒՍԱԿ ԽII

ՀԲԸՍ ԱՄՆ-Ի ՄԱՍՆԱՅՆ ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՄՍԵՐԻ ՔԱՂԱԿԱԿԱՆ ԱԲԸ		
Տարեթիվ	Մասնաճյուղ	Անդամ
1912	48	2.339
1913	54	2.407
1916	60	4.000
1924	100	8.000

Սիոնթյան կենտրոնատեղին քանից փոխադրվել է Բոստոնից Նյու Յորք՝ այսպես 1913-1915 թթ. Բոստոն, 1915-1918 թթ. փոխադրինաբար Նյու Յորք և Բոստոն, 1918-1925 թթ. Բոստոն, 1925-1980 թթ. Նյու Յորք, իսկ 1980 թվականից մինչև օրս Սեղմը Բրուք: 1921 թ. ՀԲԸՍ ամերիկյան մասնաճյուղը վեր է ածվել ինքնուլույն հատվածի:⁷⁸ Սիոնթյունն ունեցել է նաև Բոստոնում իրատարակվող իր պաշտոնաթերերը 1909-1910 թթ. «Դայ», իսկ 1914 թվականից «Յուշարար» պարերականները:⁷⁹

1909-1924 թթ. ՀԲԸՍ ամերիկյան հատվածի ընդհանուր հասույթը կազմել է 810.231 դոլար (1909-1919 թթ. 232.231 դոլար, 1919-1924 թթ. 578.000 դոլար), որը գերակշիր նաև ողջ ՀԲԸՍ ընդհանուր հասույթի հաշվարկում (1906-1922 թթ. ՀԲԸՍ ողջ հասույթի 632.231 դոլարը գոյացել է ամերիկյան մասնաճյուղերից, ընդ որում, միայն վերջին երեք տարիներին այն կազմել է շուրջ 400.000 դոլար):⁸⁰

Հսկայական էին ՀԲԸՍ ամերիկյան մասնաճյուղի ջանքերը Ասաջին աշխարհարտի տարիներին ու դրանից հետո: Այն իր վրա էր վերցրել նաև որբախնամ առաքելություն (1920 թ. միայն երկու ամսվա ընթացքում Կալիֆոռնիայի նահանգային մասնաճյուղն իր հովանու ներքո կազմակերպել էր ավելի քան 500 որբերի խնամքն ու կրությունը), Սերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերության հետ հայրենի կարույալների համար հանգանակել 23.400 դոլար, մասնակցել «Ուկե կանոն» ազգային բարեսիրական, 1919 թ. Զորավար Անդրանիկի կազմակերպած Ազգային փրկության, որբանոցներից արձակված և բախտի քնահաճույքին հանձնված չափահան հայ որբերին աջակցելու կոչված Ինքնօգնության հանգանակություններին՝ տրամադրելով հարյուր հազարավոր դոլարներ:

1917 թ. ԱՄՆ-ում կազմավորվել են նաև ՀԲԸՄ օժանդակ նարմիններ, ինչպես օրինակ՝ Տիկնանց որբախնամը (Սյու Յորը, Ֆիլադելֆիա, Կալիֆոռնիա և այլուր), որն իր կազմակերպած բազմաբնույթ միջոցառումներով ու հավաքներով գգալի որբանապատ գործունեություն է իրականացրել և այլն:⁸²

Դանագաղութային մակարդակի բարեսիրական կազմակերպություններից բացի, ԱՄՆ-ում գործել են նաև մի շարք ունեսոր ամերիկահայ գործարար անհատների ջանքերով հիմնված ընկերություններ, որոնք իրականացրել են համագույն կարևորագույն ձեռնարկմեր: Այսպես նյու Յորքում 1920 թ. ամերիկահայ հայտնի գործարար, մեծահարուստ ու բարերար Գուլարի Գյուլբենկյանը հիմնել էր Գյուլբենկյան հիմնարկությունը, 1921 թ. Միհրան Գարագոյանն ու ընտանիքը՝ Յովարդ Գարագոյան հիշատակային ընկերությունը: Այս երկու ընկերություններն եւ նպատակ ունեին բոլոր միջոցներով սատարել Հունաստանում, Սիրիայում, Լիբանանում և հարակից այլ տարածքներում ապաստանած իրենց տարագիր հայրենակիցների ազգապահպանությանը, կրթությանը, գրադարձությանն ու հոգևոր կյանքին՝ մեծապես աջակցելով Դայ Փախստականների կոմիտեների գործունեությանը:⁸³

Ամերիկահայ իրականության մեջ գնահատելի դեր են կատարել տիկնանց կազմակերպությունները: Դանդես գալով որպես տիկնանց միություններ, եկեղեցաւեր տիկնանց կամ օրիորդաց առաջադիմական, հայուհյաց որբախնամ ընկերություններ և այլ անվանումներով, սրանց հիմնականում ստեղծվել և գործել են համայնքի եկեղեցիներին կից ու նրանց հովանափորության ներքո: Կրթասիրաց, Եկեղեցափայտաց, որբախնամ և նման այլ բնույթի այդ կազմակերպություններն օտարության մեջ գգալի հայապահպան աշխատանք են կատարել խթանելով համայնքի ներսում եկեղեցու ազգահավաքից գործունեության առավել արդյունավետ իրականացումն ու ԱՄՆ-ի հայաշատ տարբեր վայրերում հոգևոր ու կրթական նորանոր կենտրոնների հիմնադրումը: Տիկնանց կազմակերպությունների ջանքերով ազգային եկեղեցիներին կից բացվել են կիրակօրյա դպրոցներ, որոնցում, հիմնականում մի խումբ ուսույալ ու նվիրյալ տիկնանց ջանքերով հայոց լեզվի, հայոց պատմության և այլ դասընթացներ ու հավաքներ են իրականացվել:

Տիկնանց կազմակերպություններից բացի, որոնց գործունեությունը սահմանափակվել է սոսկ հայաբնակ այս կամ այն տարածքով, շրջանով կամ քաղաքով, ԱՄՆ-ում հիմնվել էին նաև համագաղութային մակարդակի միություններ: Տիկնանց առաջին այլափի կազմակերպությունը՝ ԴՅԴ կուսակցության հովանու ներքո հիմնված Դայ կարմիր խաչն էր: Նախքան դրա վերջնական ծևափորումը 1903-1905 թթ. ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Թրոյում, Բուստոնում, Փրովիդենսում, Ուեսք Փուլմանում դաշնակցության ենթակայությամբ գործել են տիկնանց օժանդակ, հաճախ իրենց Դայ կարմիր խաչ անվանող խմբեր, որոնք, գործելով ԴՅԴ-ի կողքին, սկզբնական շրջանում այն ապահովում էին նյութական միջոցներով և կատարում տարբեր հանձնարարություններ: 1909 թ. Աղանայի ջարդերից հետո այդ ազակցությունը դարձել է առավել գործնական ու շոշափելի՝ խթանելով երկրի տարբեր վայրերում ցրված և կենտրոնական դեկավարությունից գրկված խմբերի կազմակերպումը: Այդ առաջելությունն իր վրա էր վերցուել 1910 թ. հունվարի 1-ին նյու Յորքում կազմավորված Կարմիր խաչի հայկական ընկերությունը, որը տարվա վերջին ականավոր դաշնակցական գործիչ Շ.Ակնունու (Խաչատուր Մալումյան) ջանքերով են-

թարկվել է կուսակցության վերջնական ծևավորմանն ու կազմակերպմանը վերանվանվելով որպես ՀՅԴ Կարմիր խաչ:⁸⁴ ՀՅԴ Կարմիր խաչի նպատակն էր. «Ա.-Խաղաղ ժամանակ նպաստել հանրօգուտ ծեռնարկներու եւ հիմնարկութիւններու: Բ.-Համաժարակի, պատերազմի եւ կամ ուրեմն աղյուս պահուն օգնել վիրաւորեալներու, կարութեալներու ու զոհերու ընտանիքներուն: Գ.-Օգնութեան հասնիլ ընկերներու կարօւ ընտանիքներուն ու զոհերու ընտանիքներուն»:⁸⁵

Մինչև Առաջին աշխարհամարտը ՀՅԴ Կարմիր խաչն իր գործուն մասնակցությունն է ցուցաբերել հայունի երկրում ազգային հիվանդանոցներին ու կրթական հաստատություններին սատարելու ջանքերին: Մեկ տարվա ընթացքում այն իր մասնաճյուղերն է հիմնել երկրի հայաշատ տարբեր վայրերում: 1915 թ. միությունն ուներ երկրով մեկ տարածված 33, իսկ 1919 թ. արդեն 54 մասնաճյուղեր: ⁸⁶ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումով միությունը 1920 թ. վերանվանվել է որպես Դատերք Հայաստանի:⁸⁷

Կազմակերպված, կրթված ու գործունյա տիկնացից բաղկացած Հայ կարմիր խաչը, միաժամանակ, նպաստավոր պայմաններ է ստեղծել նախկինում սովոր ընտանեկան հոգսերով սահմանափակված նահապետական հայ կոնջը հասարակական կյանքի մեջ ներգրավելու ուղղությամբ խթանելով նրա լիարժեք ինքնադրսնորումը:

Ֆիզիկապես, հետևաբար և հոգեպես առողջ և ուժեղ սերունդ ունենալու նպատակով ամերիկահայության ուշադրության կենտրոնում էին նաև երիտասարդության մարմնակրթական հարցերը: 1921 թ. Կ.Պոլսից եկած մի խումբ երիտասարդների ջանքերով Նյու Յորքում հաստատվել էր Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՍԸԸ), որը հետագայում իր մասնաճյուղերն էր հիմնել երկրի տարբեր հայաբնակ շրջաններում: ⁸⁸ Միությունը հանդիս էր գալիս «Բարձրացիք, բարձրացուր» նշանաբանով և նպատակ ուներ «ֆիզիքական դաստիարակութեան միջոցով հայ ցեղի ազնվացման սատարել. նոր սերնդին ներշնչել ոյժի ու գեղեցիկի ճաշակը. եւ անոր մէջ մշակել ձեռներցութեան, փոխադարձ օգնութեան ու մաքուր ընկերական յարաբերութեան ոգին»: ⁸⁹ ՀՍԸԸ ընդհանուր ժրագրի համաձայն, հայ մարմնակրթական կյանքն ԱՄՆ-ում նույնպես բաժանված էր չորս հիմնական մասերի՝ սկաուտական, շվեդական մարզաներ, դաշտային խաղեր, դաշտային մարզանքներ: ⁹⁰

Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո ամերիկահայերի շրջանում ստեղծվել են հասարակության տարբեր խավերն ընդգրկող բազմաբնույթ այլ կազմակերպություններ ևս: Այսպիս 1916 թ. ազգային որոշ գործիչների ջանքերով կազմակերպվել էր մասսանական Հայկական օթյակը, որի գաղափարական հիմքում ընկած էր հայոց անցյալի պատմության քաջարի հերոսների հիշատակի ոգեկոչումն ու նրանց փառավոր օրինակով հայրենիքին նվիրյալ նոր սերնդի դաստիարակումը: 1923-1924 թթ. Ռամկավար-ազատական կուսակցության ջանքերով Հայկական օթյակը վերակազմվել է Վարդանանց ասպետների եղբայրության ⁹¹ ազգային եերոս Վարդան Մամիկոնյանի ու նրա հետևորդների փայլուն սխրանքների ոգին ամերիկահայ երիտասարդությանը հաղորդելու նպատակով: Կազմակերպությունն իր մասնաճյուղերն ուներ ԱՄՆ-ի հայաշատ գրեթե բոլոր շրջաններում:

ԱՄՆ-ի հայ ավետարանականների ջանքերով 1918 թ. հունիսի 7-ին Ուստրում հիմնվել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը, որը, ի շարս այլ խնդիրների, ժրագրել էր Սերձավոր Արևելքում կազմավորել աստվածաբանական հաս-

տատություններ տեղի հայ ավետարանական Եկեղեցիներին, որպանցներին սատարելու նպատակով:⁹²

1918 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը ոգևորության ալիք էր բարձրացրել ԱՄՆ-ի հայերի շրջանում, որոնք ծեռնամուխ էին եղել արիեստավարժ հայերից կազմել մասնագիտացված ընկերություններ կոչված բոլոր միջոցներով սատարելու նորակազմ հայրենիքի ամրապնդանը։ Եյութական ու այլ բնույթի աջակցությունից բացի, ընկերություններն իրենց մասնագետներին ուղարկում էին հայրենիք տեղում իրենց նպաստը բերելու։ Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքի վերականգնմանն ու զարգացմանը մասնակցելու նպատակով ամերիկահայերը ստեղծել էին ճարտարագետների միությունը, որն իր առջև խնդիր էր դրել գարել տալ տարրեր ճարտարվեստների տարածմանն ու զարգացմանը, կարևոր տեղ հատկացնել հողագործությանն ու անտառամշակությանը և այլ։⁹³ Ստեղծվել էր նաև Բժշկական միությունը, որն իր մասնագետներին բացի Հայաստանից 1921 թ. ուղարկել էր նաև Կիլիկիա, ինչպես նաև օգնություն հասցրել Մերձավոր Արևելք և այլ տարածքներ տարագրված հայրենակիցներին։

1922 թ. ամերիկահայ «Կոչնակ» շաբաթաթրի ջանքերով Նյու Յորքում հիմնվել էր Հայկական հրատարակչական ընկերությունը, որը ծրագրել էր ազգային դպրոցների համար հայերենով հրատարակել առաջին դասարանի դասագրքեր, ինչպես նաև օտար ընթերցողների համար հայ գրականության լավագույն թարգմանություններ, իրականացնել հայանպատ այլ գործեր։⁹⁴

Նույն թվականին հիմնվել էր նաև Գաղթականության հայկական դեպարտամենտը, որը գաղութի հայության կրթական, սոցիալական հարցերին առնչվող խնդիրների հետ միասին զգալի ավանդ ուներ նաև ԱՄՆ ժամանած անպաշտպան գաղթականների առջև ծագած իրավական, քաղաքական, քաղաքացիական, հասարակական, տնտեսական, աշխատանքային, ֆինանսական և նման այլ հարցերը կարգավորելու, նոր երկրի պայմաններին նրանց ընտելացնելու և այլ կարևոր աջակցություն ցուցաբերելու գործում։ Գաղթականների յուրահատուկ այդ տունը միայն 1922 թ. մասնավոր հարցերով օգնություն էր ցույց տվել 2.400 գաղթականների, վարել 953 գաղթականների 368 գործ, այսինքն յուրաքանչյուր երրորդ գաղթական հայն օգտվել էր գաղթականական գրասենյակի ծառայություններից։⁹⁵

Այսպիսով, դեռևս անցյալ դարի 80-ական թվականների վերջից ԱՄՆ-ում ստեղծվել և հետագա տարիներին ստվարանալով իրենց մասնաճյուղերն են հիմնել հասարակության գրեթե բոլոր խավերը ներառող հայ բազմաթիվ մեծ ու փոքր ընկերություններ, միություններ, կազմակերպություններ ու կուսակցություններ (արդեն 1921 թ. միայն Բուստոնում կային 36-ից ավելի հայկական միություններից)։

Ենտամստած նպատակներով բազմարնույթ այդ կազմակերպությունները (գաղթականական, քաղաքական, քաղաքացիական, հասարակական, տնտեսական, առևտրական, ռազմական, մարզական, հոգևոր, մշակութային, կրթական, բարեսիրական, որբախնամ, հայրենակցական, հայրենակիրական, երիտասարդական, տիկնանց և այլ) իրենց կարճատև և կամ երկարատև գոյության ընթացքում ազգանպատ ու հայրենանպատ կարևոր դեր են կատարել խթանելով օտար ափերում հայահավաքնան ու հայապահպաննան դժվարին խնդիրների իրականացման, ինչպես նաև հեռավոր հայրենի երկրին ու ժողովրդին հնարավոր բոլոր միջոցներով (նյութական, մարդկային,

բարոյական և այլ) սատարելու, Հայոց հարցը ամերիկյան և եվրոպական հասարակայնության ու կառավարող պաշտոնական շրջաններին ներկայացնելու և այլնի ուղղությամբ:

բ. ԱՄԵՐԻԿԱՆԱՅԻՆ ԿԱՊԸ ԲՆՈՐՍՆԻ ԴԵՏ

Ամերիկահայության կապը հայրենիքի հետ եղել է մշտական, անընդհատ ու անկապտելի: Այն դրսերվել է հենց սկզբից՝ XIX դ կեսից, երբ ԱՄՆ մեկնածներից շատերը զգալի ջանքեր էին գործադրում ասիական հետամնացության մեջ խարիսխափող հայրենին երկրի հոգենոր ու տնտեսական զարգացումն ու բարգավաճումն ապահովելու ուղղությամբ. այդ կապն ավելի է ամրապնդվել ու խորացել հետագա տարիներին, նաև ավորապես, օսմանյան թուրքիայում հայության նկատմամբ ծավալված հալածանքների, բռնությունների ու պարբերական ջարդերի հետևանքով, երբ ամեն տեսակի օգնությանն ավելացել էր նաև գինականը:

Չինական օգնությունը, որն արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի (ազգային գործիչներ, կամավորներ) առաքումով և այլն, զիսավորապես իրականացվել է հայ քաղաքական տարրեր կուսակցությունների կողմից խիստ գաղտնիության պայմաններում: Սկզբնական շրջանում (մինչև Առաջին աշխարհամարտ) այդ ամենը, ի հարկե, բացասական մեկնաբանությունների տեղիք էր տալիս ազգային տարրեր խավերի ու նաև օսմանյան կայսրությունում գործող օտար, հատկապես ամերիկյան բոլորքական առաքելությունների շրջանում, որոնք նախազգուշացնում էին խուսափել թուրքական պետությունում ռազմական ընդհարումներին միջամտելուց և պահպանել չեզոքություն, քանի որ հակառակ դեպքում, նման գործողությունները լի էին հայրենի խաղաղ ու անպաշտպան բնակչության նկատմամբ անցանկալի ու անկանխատեսելի հետևանքներով, միաժամանակ, որանք անմիջականորեն կիարվածեին նաև օսմանյան թուրքիայում հաստատված օտարերկրացիների կյանքի ու գույքի անձեռնմխելիությանը:

Սակայն արդեն Առաջին աշխարհամարտի ընթացքում ու դրան հաջորդող տարիներին հայրենի ժողովրդի սատարմանն օրդոված ամերիկահայերի համագային ջանքերը դարձել են ավելի գործուն ու ծանրակշիռ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական, և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթը:

Պատերազմի հենց սկզբից ամերիկահայ մի խումբ ազգայինների ջանքերի շնորհիվ հենարավոր էր դարձել համախմբել տեղի հայ քաղաքական տարրեր ուղղությունները, որոնք ժողովրդի ու հայրենի երկրի համար ճակատագրական այդ պահին, որոշ բացառությամբ, հանդես էին բերել միասնարար գործելու պատրաստակամություն: Նման առաջին քայլն իրականացվել էր ամերիկահայ ազգային գործիչ, ռամկավար Մուշեղ Եպս. Սերորյանի ջանքերով, որը գաղութի ներսում կազմակերպված ու հավաքական շարժում սկզբնավորելու, ինչպես նաև կովկասահայության շրջանուն ծագած ինքնապաշտպանական շարժմանն արձագանքելու նպատակով իր բնակարանում հրավիրել էր ժողով՝ չորս կուսակցությունների (Սոցիալ-դեմոկրատական ինչակյան, Հայ հեղափոխական դաշնակցական, Վերակազմյալ ինչակյան, Հայ սահմանադրական ռամկավար) նաև ակտուարական մասնակցությամբ: Յուրաքանչյուր կուսակցությունից

ընտրված երկուական ներկայացուցիչներից բաղկացած միջկուսակցական մարմինը 1914 թ. նոյեմբերին Բուտոնում հրավիրել է Միջկուսակցական խորհրդաժողով. որն ընդունել է ազգային չորս կուսակցությունների համատեղ գործունեության ծրագիր: Խորհրդաժողովի նպատակն էր «աջակցել հայ պատարագութեամ համար ներկայացածին առթիւ ըլլակիք համազգային ջանքերուն, օգնել այժմ իսկ երկրի մէջ կրուող խումբերու, զինեալ շարժում յառաջ բերել, երբ կարելի ըլլայ Դաշնակց պետութեանց հաւանութիւնը եւ օժանդակութիւնը ստանալ, Դիվանագիտական հետապնդումներ կատարել»:⁹⁷ Խորհրդաժողովին հաջողվել էր ԱՄՆ-ի Կոնգրեսի հետ համատեղ ջանքերով Ուաշինգտոնում Ռուսաստանի դեսպանի միջոցով ստանալ ցարական կառավարության համաձայնությունն ու հովանավորությունը՝ Կովկասում ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստ ամերիկահայ երիտասարդ կամավորներ առաքելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ: Որոշվել էր կովկասահայ կովող խնդիրին հատկացնել հանձնախմբի տրամադրության տակ եղած ողջ դրամական միջոցների 25%-ը:⁹⁸

1914 թ. դեկտեմբերին Խորհրդաժողովին Ամերիկահայոց առաջնորդարամից երկուական ներկայացուցիչների մասնակցությունը համազգային բնույթ է հաղորդել հիշյալ միջկուսակցական մարմնին այն վերանվանելով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբի (ԱՊԱՀ):⁹⁹

Միաժամանակ, ՀՅԴ կուսակցության գործիչները կարողացել էին ստանալ ռուսական կառավարության պաշտոնական հավաստումը արևմտահայության ազատագրման վերաբերյալ, ինչպես նաև հասնել կամավորական շարժումը կազմակերպելու նպատակով Կովկասում (Թիֆլիս) Ազգային բյուրոյի ստեղծմանը: Այդ է պատճառը, որ հանձնախմբում դաշնակցության ներկայացուցիչները պահանջում էին կամավորական շարժմանն աջակցելու նպատակով ԱՄՆ-ում հանգանակվող գումարի կեսն առաքել Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից վավերացված Թիֆլիսի Ազգային բյուրոյին, իսկ մյուս կեսը՝ տրամադրել ինչպես ամերիկահայ կամավորների կարիքների, նույնպես և հայրենի երկրի տարբեր շրջաններում հեղափոխական շարժումներ առաջ բերելու համար: Այս առաջարկությունը չի ընդունվել հանձնախմբի կողմից, այլ որոշվել է հանգանակվող գումարի գգալի մասը հատկացնել Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո Սր. Էջմիածնում կազմավորված հարաց հանձնախմբին, իսկ 25%-ը ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպանի միջոցով փոխանցել Կովկաս: «մի միայն երկիր մեկնած կամ մեկնելիք Հայ կամաւորներուն անխտիր»: Արդյունքում տարբեր քաղաքական ուղղությունների միջև պահպանվող համերաշխ գործակցությունը խախտվել է, և ՀՅԴ-ն հեռացվել է հանձնախմբի կազմից:¹⁰⁰

Ընդհանուր առմամբ, Կովկասում հայ կամավորական շարժմանը սատարելու նպատակով հանգանակվել էր 160.000 դոլար, ընդ որում, ԱՊԱՀ-ն 60.000, իսկ առանձին ՀՅԴ-ն 100.000 դոլար: Դաշնակցությունը ընդհանունը երկու ամիսների ընթացքում Կովկաս էր առաքել 800 կամավորներ: ¹⁰¹

Անտանտի տերությունների առջև Հայ դատող ներկայացնելու նպատակով 1915 թ. ապրիլին Փարիզում հիմնված Ազգային պատվիրակության նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Կահիրենուն գործող ՀԲԸ ջանքերով, Եգիպտոսի օրինակով, մի խումբ ամերիկահայերի կողմից

(դրկտորներ Ս.Մ.Գաբրիելյան, Այվազյան, պատվ. Խ.Կ.Պեմնեյան և այլոք) ԱՄՆ-ում ևս ստեղծվել էր Ազգային շահերի պաշտպանության միությունը (ԱՇՊՄ): Այն բաղկացած էր հայ քաղաքական չորս կուսակցություններից, Դայ առաքելական և Դայ ավետարանական եկեղեցիներից ու ՀԲԸՒ-ից ընտրված ներկայացուցիչներից: ԴՅԴ-ն իրաժարվեց Ենթարկվել Ազգային պատվիրակության և անձամբ Պ.Նուբարի հսկողությանը և գործեց անկախ ընդուուպ մինչև 1917 թ. սկիզբը:¹⁰²

Պ.Նուբարի ջանքերով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբն ու Ազգային շահերի պաշտպանության միությունը համագործակցված զգալի օգնություն են առաքել Սր. Էջմիածին ի նպաստ հայ գաղթականների, Կովկասում ապաստանած փախստականների ու կամավորների: Ծրագրված էր նաև բոլոր միջոցներով սատարել Փարիզի Ազգային պատվիրակությանը Կիլիկիայի ազատագրման ու Եվրոպայում և Ամերիկայում Դայ դատի պաշտպանությունը հետամտող նրա քաղաքական, դիվանագիտական և ռազմական բնույթի ջանքերին:

1915 թ. սեպտեմբերին ազգային վերոհիշյալ երկու կազմակերպությունները (ԱՊԱՀ և ԱՇՊՄ) միավորվել են որպես Ազգային պաշտպանության Ամերիկայի միություն (ԱՊԱՄ) աջակցելու Փարիզի Ազգային պատվիրակությանը: Միությունը բաղկացած էր ազգային վեց կուսակցությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից (Սոցիալ-դեմոկրատական հինչակյան, Վերակազմյալ հինչակյան, Դայ սահմանադրական ռամկավար կուսակցություններ, ՀԲԸՒ, Դայ առաքելական և Դայ ավետարանական եկեղեցիներ): Նոր միության կազմում էին Ս.Սվագլըն (ատենապետ), Ա.Նազարեթյանը (ատենադպիր), Բարկեն Եպս. Կյուլեսերյանը և այլոր: Միավորման գործում մեծ էր ամերիկահայ ավետարանական եկեղեցու քարոզիչներ վերապատվելիներ Եարտըմյանի, Կ.Մանավյանի, Ս.Գալայճյանի դերը:¹⁰³

Ազգային-քաղաքական հիշյալ չորս միություններն եւ իրենց վարչական գործերը կարգավորում էին Ընդհանուր և Գործադիր ժողովների միջոցով: Ընդ որում, Ընդհանուր ժողովը բաղկացած էր տվյալ միության մեջ ընդգրկված յուրաքանչյուր կազմակերպությունից երկուական, ապա նաև երեքական ներկայացուցիչներից: Դամագաղութային հիշյալ միությունների հետ ԱՄՆ-ի Դայ առաջնորդարանի համագործակցությունից հետո Գործադիր ժողովի նիստերը սկսել է նախագահել ամերիկահայոց հոգևոր առաջնորդը:¹⁰⁴

Ազգային պաշտպանության Ամերիկայի միության ջանքերով կազմակերպվել են հայրենանպատ հանգանակություններ, որոնց արդյունքը բաժանվել է հետևյալ սկզբունքով. գումարի 100% բաժնի 25%-ը Դայոց կարողիկոսի միջոցով Կովկասի հայ կամավորներին, 25%-ը կրկին կարողիկոսի կամ Պ.Նուբարի միջոցով Կովկասում ապաստանած հայ կարույալներին, իսկ մնացած 50%-ը ուղարկվել է Փարիզի Ազգային պատվիրակությանը: Դետագայում, Պ.Նուբարի կարգավորությամբ, որոշվել է հանգանակությունների արդյունքները լիովին առաքել անձամբ կարողիկոսին գումարի կես բաժինը հատկացնելու Կովկասի կամավորներին, իսկ կեսը փախստականներին: Միությունն իր գոյության ընթացքում նյութական ու բարոյական զգալի օգնություն է տրամադրել նաև Կիլիկիո կարողիկոսին, Կ.Պոլսի հայոց պատրիարքին, Թիֆլիսում Դայաստանի վերաշինության հանձնախմբին, ինչպես նաև Ամերիկյան նպաստամատույց ընկերությանը, Ռուս-ամերիկյան նպաստից ընկերությանը և այլոց: Միությունը

բժշկական օգնություն, սնունդ, հագուստեղեն է առաքել Կովկասում ապաստանած հայ փախստականներին, մշտապես կազ պահպանել ԱՄՆ-ի պետական շրջանների ու հայասեր ամերիկացիների հետ, ջանքեր գործադրել Վերականգնելու ԴՅԴ-ի հետ համագործակցությունը:¹⁰⁵

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին սկսած 1915 թ. Կանի ինքնապաշտպանական կոհիվներից մինչև 1918 թ. Արարայի հերոսամարտը՝ Անտանտի տերությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք-կողքի քաջաբար մարտնչելով երիտրութեական ու քեմալական իշխանությունների դեմ:

Առաջին աշխարհամարտի հետևանքով օսմանյան Թուրքիայում արևմտահայության կյանքի ու գույքի անձեռնմխելիության պահպանման համար ստեղծված անբարենպատ ու օրեցօր վատթարացող պայմանները պատճառ էին հանդիսացել Թուրքիայի դեմ Կովկասում կովող ռուսական զորքերին սատարելու նպատակով այդտեղ հայրենասեր հայերից բաղկացած ջոկատների կազմակերպմանը: Կարծ ժամանակում սրբազն համարվել են ոչ միայն Կովկասից և Ռուսաստանի մյուս շրջաններից, այլ նաև աշխարհի տարբեր կողմերից (Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս), ինչպես նաև հեռավոր ԱՄՆ-ից ժամանակ վլեծով ու ատելությամբ, բայց և ազատատենչ ոգով տոգորված հայազգի անձնուրաց երիտասարդներով: Կամավորական շարժման նշանաբանն էր «Ինքնավարութիւն վեց վիլայեթներու և անոնց անբաժան նասը կազմող Կիլիկիայի Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»:¹⁰⁶

Կովկասում կամավորական շարժումը կազմակերպելու նպատակով 1914 թ. սեպտեմբերին Թիֆլիսում գործող Դայոց ազգային բյուրոյի կողմից ստեղծվել էր Դայոց կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը, որը որոշել էր տարբեր ուղղություններով Թուրքիա մուտք գործելու նպատակով կազմել կամավորական չորս խմբեր 2.500 կովողներով (առաջինում՝ 1.500, մյուս երեքում՝ 400-ական հոգի): Կամավորական խմբերը գործում էին Անդրամիկի, Դրոյի, Դամազասի, Ջեռի հրամանատարությունների ներքո, որոնց շուտով միացել էր նաև Զանկովայանի խումբը:¹⁰⁷

Ազգային բյուրոյի կոչերից ոգևորված Եվրոպայից ու հատկապես ԱՄՆ-ից մեծ խանդակառությամբ խումբ-խումբ Կովկաս էին ժամանում բազմաթիվ կամավորներ՝ համալրելու նոր կազմով գնճերը: «Ամերիկայից եկած կամաւորները գրեթ բոլորն էլ գալիս են իրենց սեփական ծախսով և միաժամանակ իրենց հետ բերում են մեծ քանակութեամբ ընտիր գենքեր: Սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ բոլոր բերած գենքերը, դրանց հետ նաև բազմաթի դաշտային հեռախոսներ և հեռադիտակներ Թիֆլիսի մաքսատանը ենթարկում են բեկվիզիցիայի Նիկոլայ Նիկոլայեվիչի և գեն. Եանուշեվիչի նենգ և հայատեաց կառավարութեան կողմից և մինչև վերջն էլ չեն տրում իրենց տերերին, - մի հանգամանք, որ յետագայում մեծապէս նպաստեց ամերիկահայ կամաւորական շարժերում լքումն առաջանալուն», - հիշատակվում է Ազգային բյուրոյի տեղեկագրում:¹⁰⁸

Ամերիկահայությունը Կովկաս կամավորներ տրամադրելուց բացի, զգայի նյութական նպաստ է հատկացրել վերոհիշյալ շարժմանը: Այսպես, միայն ԱՄՆ-ի ԴՅԴ կենտրոնական կոմիտեն 1915-1917 թթ. Թիֆլիսի Ազգային բյուրոյին էր ուղարկե-

328.047 ռուբլի գումար, իսկ ընդհանուր առմամբ, ողջ ամերիկահայությունը կովկասյան կամավորական շարժմանը տրամադրել էր շուրջ 342.000 դոլար:՝¹⁰⁹

1915 թ. դեկտեմբերին ռուսական Գերագույն հրամանատարության որոշմամբ կովկասյան հայ կամավորական խմբերի լուծարման որոշումը համընդհանուր լքման պատճառ դարձավ. հեռացան կամավորների զգալի մասը թրքահայերն ու ամերիկահայերը: Միաժամանակ, առաջ եկան նաև հարակից դժվարություններ կապված նպաստի, բժշկության, հաշմանդամության, հետղարձի և այլ նյութական ծախսերի հետ: Բյուրոն Բուստոնի կենտրոնական կոմիտեի միջոցով վճարել էր ամերիկահայ միայն 430 կամավորների վերադարձի ճանապարհածախսը ընդհանուր 60.600 ռուբլի արժեքով, ինչպես նաև նվիրատվություններից ու կազմակերպված տարբեր վաճառահանումներից ստացված գումարով սահմանել նպաստ գրիված կամավորների ընտանիքներին և այլը:՝¹¹⁰

Բայց և այնպես, Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և իր ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազն գգացումը և նա ծեռնամուլիս է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն: Այդ նպատակով արտասահմանի, մասնավորապես, Ամերիկայի հայությունը կարևոր բացառական աշխատանք է իրականացրել դաշնակից տերությունների շրջանում նրանցից ակնկալելով ինչպես քաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ նյութական ու ռազմական աջակցություն: Ամերիկահայության հայանպաստ ջանքերի շնորհիվ 1916 թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Դայոց օր», և, ի պաշտպանություն Դայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բոլորի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև հայօգուտ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն ու համերաշխությունն է արտահայտել քուրքական պետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա ազգություններին և նրանց ի նպաստ նվիրաբերել ավելի քան 30 մլն դոլար:՝¹¹¹

Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները Պ.Նուբարի մասնակցությամբ համատեղ համաձայնության էին եկել (1916 թ. հոկտեմբերի 27-ի Սայքս-Պիկոյի համաձայնություն): կազմել հայ, ինչպես նաև սիրիացի կամավորներից բաղկացած «Արևելյան լեգեոն» անվանումը կրող զորամիավոր, որը, իբրև օժանդակ ուժ, պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պիտի կրվեր բացառապես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, այնուհետև թուրքերի դեմ հաղթանակից հետո, որպես քաղաքապահ ուժ, ապահովեր ֆրանսիական հոգատարության ներքո կիլիկիայի հնքնավարությունը: «Արևելյան լեգեոնի» կազմակերպման ծախսերն իր վրա էր վերցնելու ֆրանսիական կառավարությունը, որը հոգալու էր կամավորների տեղափոխման ճանապարհածախսը, հիվանդության ու հաշմանդամության ծախսերը, կամավորները մարզվելու և դեկավարվելու էին ֆրանսիական սպաների կողմից, վարձատրվելու էին ֆրանսիական գինվորների նման: Լեգեոնը սկզբնապես հաստատվելու էր Կիպրոսում, ուր ժամանելու էին Մարսելի,

Բորդոյի և Փորտ Սահիդի գրասենյակներում գրանցված տարբեր վայրերից ժամանած հայ կամավորները:¹¹²

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել էր օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգենը», որի կորիզը կազմում էին 600 մուսալեցիներ: ¹¹³ Ֆրանսիական հրամանատարության ներքո արևմտահայության ծավալած կամավորական շարժումը կանոնավորելու նպատակով և հայանպատ այլ ձեռնարկներ իրականացնելու և վերահսկելու հատուկ միտումով 1917 թ. սկզբին եղիպատուում հայ քաղաքական երեք կուսակցությունների (ՄԴՅ, ԴՅԴ, ՀՍՈ), երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՇ ներկայացուցիչների ջանքերով ստեղծվել էր Հայ ազգային միությունը, որը մշտական կապի մեջ էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ համդիսանալով դրա յուրատեսակ ներկայացուցչական մարմինը Եղիպատում: ¹¹⁴ Միությունը ամերիկյան հետզհետե ստվարացող ու գորացող հայ գաղութը ևս իր լիազոր ու համախմբող մարմինն ունենալու նպատակով Պ. Նուրադի հանձնարարագրով մարտի սկզբին այդունք էր առաքել ազգային երեք կուսակցությունները ներկայացնող պատգամավորություն (Ս. Սապահ-Գյուլյան ՍԴՀ-ից, Ա. Դանճյան ԴՅԴ-ից, Մ. Տամատյան ՀՍՈ-ից), որը, միաժամանակ, եկել էր «ձեւ ու մարմին տալու համար կամաւորական շարժումին»: Վերջինս մեծ ոգևորություն էր առաջացրել ամերիկահայության շրջանում, քանի որ օվկիանոսից այն կողմն գտնվող այս գաղութը ևս «...կ'ալեկոծէր հայրենի հողերու ազտագրական շունչով» և «Ամերիկահայ երիտասարդութեան սիրու կ'եռար արդէն եւ նման առիթ մը կը փնտուր իր անտանելի դարձած սուգին վրէժն առնելու և հայ ազտագրութիւնը դարբնելու համար»: ¹¹⁵

Եղիպատահայ պատվիրակության ջանքերով և համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսերած բարձր գիտակցության շնորհիվ ինարավոր էր դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիւթեր, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՐԱՍ): Միությունը բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (ՄԴՅ, Վերակազմյալ հնչակյան, ԴՅԴ, ՀՍՈ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՇ ներկայացուցիչներից: ¹¹⁶ Ընտրվել էր միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին (ատենապետ Մ. Սվագլը): ¹¹⁷

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես ԴՅԴ-ն, միասնականություն էին հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացնան գործում: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: ¹¹⁸ Միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի ազատագրմանը, ինչպես նաև հայանպատ պրոպագանդա և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել: Միության հասույթը ձևավորվում էր անդամավճարումներից, հանգանակություններից, նվիրատվություններից: Այս իր գործունեությունը համաձայնեցնելու էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինն ԱՄՆ-ում: ¹¹⁹

Դայաստամի ազատագրության նպատակով Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ճեղքաբանությունը էր ամերիկահայության շրջանում կամավորական շարժման կազմակերպումը, որը մեծ խանդակառություն էր առաջ բերել գաղութում. «Դագարաւորմեն կը ծգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կեանք ու փայլուն ապագայ զօրացնելու համար կորիզը «հայկական բանակին»»:¹²⁰ Կարծ ժամանակում ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9 - նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին:¹²¹ Մեծ մասամբ քեսապցի, սերաստացի, խարթերցի, արարկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսենիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գործեր բոլոր հայաշատ նահանգներ (օրինակ միայն Սասսացուսեթսի նահանգից՝ 424 կամավոր, ընդ որում, շուրջ 1.000 հայ ունեցող Լուորենս քաղաքից՝ 78, Ուորքեսթերից՝ 76, Բոստոնից՝ 6):¹²² Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ:¹²³ «Արևելյան լեգենդ» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շաքր բարձրաստիճան գիմվորականներ (հրամանատարներ Զիմ Չանգալյան, Յայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Շերյան, Վահան Չուրկենց, Վահարշակ Վորդ, Արշակունի, Զոն Շիշմանյան և այլոք):¹²⁴

Ամերիկահայ կամավորներն «Արևելյան լեգենդի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում Արարայի անառիկ բարձունքների վրա թուրքական բանակին պարտության մատնելու գործում:

Թեև Կիլիկիայի ազատագրման համար գործադրած ջանքերը վերջիվերջո ծախողվեցին, այդուհանդերձ, անուրանալի էր ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը «Արևելյան լեգենդի» («Հայկական լեգենդ») ծեռք բերած մարտական հաջողությունների գործում, քանի որ նա «...չսակարկեց իր արեան գինը. կտրեց ովկեանոսը եւ մեր երեկի փառքին մէկ անկիւնը Կիպրոս կղզին եղաւ անոր առաջին փորձավայրը: Հազարաւորներ գրկեցին հրացանը, եղբայրացան անոր հետ, առին վառօդին հոտը, գգացին գինուորական կարգապահութեան ծանրութիւնը, ճաշակեցին գրկանքի լեղին եւ հաղորդուեցան գոյապայքարի արիւնովը...»:¹²⁵

1917 թ. ապրիլի 6-ին Արաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով, ինչպես նաև Ելենով փոխադրությունների կապակցությամբ առաջ եկած դժվարություններից, դադարել էր հայ կամավորների առաքումը Ֆրանսիա, ուստի ամերիկահայությունն իր ողջ ուժու ու կարողությունը ծառայեցրել է նաև հանուն որդեգրած հյուրընկալ երկրի պաշտպանությամ անդամագրվելով դաշնակցային գիմված ուժերի շարքերը:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով իր «փոքր դաշնակիցների» հայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել էր բարձր պարզեցների, շնորհել մեծ արտօնություններ ու նպաստներ: Մինչեւ ֆրանսիական դրոշի ներքո մարտնչած ամերիկահայ լեգենդականները հանձնվել էին բախտի քմահաճույքին և միայն Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ

Նրանց վիրավոր ու կարիքավոր մասը ստացել էր ընդհանուր առմամբ շուրջ 1.193 դոլարի օգնություն, իսկ բազմաթիվ ամերիկաբնակ կանավորների շնորհվել Միության Պատվո վկայագիր: ²⁶

Ամերիկայի հայ ազգային միությունը Կիլիկիայի ազատագրման նպատակով կազմակերպված կանավորական շարժմանն անմնացորդ մասնակցելուց հետո իր առջև դրված խնդիրների հետագա իրականացման նպատակով 1918 թ. մարտին ձեռնարկել էր 1 մլն դոլարի հանգանակություն, իսկ 1919 թ. փետրվարի 1-ին՝ գաղութի պատմության մեջ առաջին անգամ իրականացրել ազգային մակարդակի ընտրություններ պատերազմի ավարտից հետո Փարիզում գումարվելիք Դամագգային ժողովին ներկայացնելով չորս պատգամավորների (Ս. Դամբարձումյան, Ա. Միքայելյան, Զ. Մաթիլյան, Ե. Աղաքոն): ²⁷

Թեև Արագին աշխարհամարտից հետո ներքին կուսակցական, անմիաբանությունները պատճառ էին դարձել Ամերիկայի հայ ազգային միության թուլացման, այսուհանրերձ, այն երեք չի դադարեցրել իր հայրենանպաստ գործունեությունը: Միության ջանքերով Ուաշինգտոնում հիմնվել էր Ազգային պատվիրակության ներկայացուցչի գրասենյակ, որի ատենապետը՝ Պ. Նուբարի կողմից նշանակված ամերիկայի ազգային նվիրյալ Ս. Սվազլըն էր: Միաժամանակ, ամերիկյան մանուլում հայանպատ շարժում սկզբնավորելու նպատակով միությունը 1918 թ. նոյեմբերի սկզբին Նյու Յորքում հիմնել էր յոթ անդամներից բաղկացած Դայ ազգային միության Դանրականության գրասենյակ, որը հետագայում դարձել էր Մամլո գրասենյակ: Այս հիմնարկության գործունեությունն ապահովելու նպատակով հատկացվել էր ընդհանուր առմամբ 17.000 դոլար: Գրասենյակը համագործակցում էր ԱՄՆ-ում Դայաստանի Առաջին Դանրականության ներկայացուցչի Գարեգին Բաստրմաջյանի հետ և շատ հաճախ, չարաշահելով իր իրավասությունները, մանուկին Վերաբերող հարցերից բացի, միջամուխ էր լինում նաև քաղաքական ու դիվանագիտական հարցերին: Այս հանգամանքից դժգոհ Ամերիկայի հայ ազգային միությունը Նյու Յորքում հիմնել է մի նոր մարմին Դանրականության կոմիտե, որը նույնպես պետք է գործակեր Փարիզի Ազգային պատվիրակության հետ: Կոմիտեն իր ծրագրերի իրականացման համար 1920 թ. մարտին որոշել էր ստեղծել կազմակերպված մի միավոր, որը պետք է միջազգային շրջաններում ջատագովներ Դայաստանի անկախության ճանաչումն իր պատմական սահմաններում, հայ կարիքավորներին ապահովեր ամերիկյան օգնությամբ, մինչև որ ՀՀ-ն դառնար ինքնօգնության ենթակա երկիր, ինչպես նաև աջակցեր հայ կանանց ու աղջկների պատագրմանը նահմեդական հարեմներից ու տներից և այլն: Ազգային Միությունը, հավանություն տալով Դանրականության կոմիտեի այդ ծրագրին, դրա իրագործմանն ի խնդիր տրամադրել էր 15.000 դոլար: ²⁸

Հատ շուտով կազմակերպվել է Դայաստանի ամերիկացի բարեկամների Դայաստան-Ամերիկա ընկերությունը ֆիլարելքիացի հայտնի իրավաբան, հայասեր Ուոլֆեր Զորջ Սմիթի նախագահությամբ (քարտուղար Զ. Սոնթգոմների): Ընկերությունը, հայկական հանձնախմբի խորհրդատվությամբ, մինչև Լոզանի վեհաժողովը ամերիկյան հասարակության և կառավարության առջև իրականացնում էր Դայ դատին ի նպատակ ձեռնարկներ: ²⁹

ԱՄՆ-ի ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տվել է իր դրական արդյունքները. ԱՄՆ-ի նախագահ Ու. Ուկլսոնը Հայաստանի Հանրապետություն էր առաջել գեներալ Զ. Զարբրորի ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ տեղում ուսումնասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները. ինչպես նաև Հայաստանի նորահաստատ պետությանը տնտեսական օգնություն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ Ուլորդն Յարդինգ) 1918 թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին ու 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների Հայոց հարցին առնչվող հաղորդումները: Ելլույթ էին ունեցել Ամերիկայի հայ ազգային միության ատենապետ Ս. Սվագլըն, նրա գործակից Վ. Մելքոնը, ԱՄՆ-ի Արտաքին գործերի քարտուղարի օգնական Ու. Ֆիլիպսը, Նպաստանատույց Կոնհիտեի քարտուղարի օգնական Յ. Ֆեքուիթը և ուրիշներ: ¹³⁰

Ամերիկայի հայ ազգային միությունը ԱՄՆ-ի, ինչպես նաև Եվրոպական երկրների անտեղյակ հասարակայնությանը Հայ դատին ծանոթացնելու նպատակով հրատարակել ու տարածել էր քաղաքական, պատմական ու գեղարվեստական բնույթի մի շարք աշխատություններ: ¹³¹

Ազգային միության կազմակերպված ջանքերի շնորհիվ 1919 թ. նարախն ամերիկյան առաջավոր հասարակայնության 15.300 ներկայացուցիչներ (15.000 բողոքական և 75 եպիսկոպոսական եկեղեցականներ, 35 նահանգների կառավարիչներ, 200 կոլեջների ու համալսարանների նախագահներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին փորբացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի Խաղաղության ժողովում ձեռնարկվելիք ջանքերը և դրանք վերածելու գործուն քայլերի: ¹³²

Միությունը քաջալերել ու նյութապես օգնել է նաև 1919 թ. նոյեմբերին կազմավորված Ամերիկահայ տիկնանց միությանը, որը ամերիկացի քվեատու կանանց և բարձրաստիճան պաշտոնյաներին լուսաբանում էր Հայ դատը փորձելով նրանց միջոցով ազդել Կոնգրեսի վրա՝ վավերացնելու հայանպաստ որոշումները: ¹³³

Հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած ժամանակահատվածում հեռավոր հայրենիքին ու թշվառության մեջ հայտնված հայրենակիցներին սատարելու նպատակով նշանակալից գործունեություն ծավալած Ամերիկայի հայ ազգային միության ընդհանուր դրամագույշը գոյության հինգ տարիների ընթացքում կազմել է շուրջ 930.000 դոլար: ¹³⁴

Առաջին աշխարհամարտից հետո միությունն ԱՄՆ-ի և Եվրոպական պաշտոնատարների կողմից ճանաչված անցագիր-վկայականներ է տրամադրել դեպի հայրենիք մեկնող իր հայրենակիցներին:

Հմտու դիվանագետ Ս. Սվագլըի կողմից ղեկավարվող, նվիրված ու գործունյա անդամներ ունեցող Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ Խնդիրների իրականացումը հանգաղութային, մինչև անգամ միջազգային ու հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ԱՄՆ-ի պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել էր որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին: ¹³⁵

Միությունը գաղութի հայրենանվեր ազգային ու կուսակցական գործիչների հետ միասին ոչ մի ջանք չի խնայել հարթելու ՀՀ ստեղծումով Փարիզի Ազգային պատվիրակության ներսում առաջացած երկիրեղկանական պատվիրակության նախագահ Պ.Նուբարի կողքին ազգային խնդիրների իրականացման համար որպես նորաստեղծ պետության ներկայացուցիչ 1919 թ. սկսել էր հանդես գալ նաև դաշնակցական գործիչ Ա.Ահարոնյանը:

Ամերիկահայ ազգային միությունը երկրի ողջ հայության հետ միասին իր գործուն մասնակցությունն է ունեցել ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատուց կոմիտեի կողմից եղեռնից հրաշքով վերապրած հայ որբերին ու կարուտյալներին օգնություն ցույց տալուն, ՀՀ առաջին վարչապետ Հ.Քաջազնունու կողմից ԱՄՆ-ում ի նպաստ հայոց բանակին կազմակերպված հանգանակությամբ, ինչպես նաև Փարիզի Ազգային խորհրդի նախագահ Պ.Նուբարի հանձնարարությամբ 1919 թ. նոյեմբերին Զորավար Անդրանիկի և իրամանատար Դակոր Բոնապարտյանի Ամերիկա կատարած ազգանպատ առաքելությանը:¹³⁶

Ամերիկահայ գաղութի երևելիների հայրենանպաստ ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել համախմբել հայասեր ամերիկացիներին և 1919 թ. հունվարին կազմել Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե: Այն իր առջև խնդիր էր դրել բոլոր միջոցներով օգնել Հայաստանին, ամերիկյան ժողովրդի ու քաղաքական բարձրաստիճան շրջանների առջև լուսաբանել Հայկական հարցը, համակրանք ստեղծելու նպատակով փաստացի ներկայացնել Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի կրօս տառապանքները, ինչպես նաև ճնշում գործադրել ամերիկյան կառավարության վրա ճանաչելու Հայաստանի լիակատար անկախության իրավունքը: 60 հեղինակավոր անդամներից բաղկացած հիշյալ կոմիտեի նախագահն էր ամերիկացի խոշոր փաստաբան, Բեղյանում ԱՄՆ-ի նախկին դեսպան, սենատոր Ջեյմս Չերարդը:¹³⁷

Իր պատմության ընթացքում Եվրոպական դիվանագետների կողմից քանից հուսախար եղած հայությունը, գոտեանդված ամերիկահայ իր հայրենակիցների գորեղ աջակցությունից ու ծավալած հայանպաստ գործունեությունից, Հայ դատի լուծումը մշտակես կապել է ԱՄՆ-ի ու նրա հայասեր նախագահ Ու.Ուկիսոնի հետ հուսալով ամեն տեսակի, այդ թվում նաև քաղաքական, օգնություն: Սակայն ամերիկյան Կոնգրեսում հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողությունը հաստատելու վերաբերյալ Ու.Ուկիսոնի ներկայացրած առաջարկի մերժումը, ինչպես նաև միջազգային-քաղաքական ասպարեզում ստեղծված նոր պայմաններն ի դերս են արել բոլոր սպասելիքները:

Այդուհանդեռձ, ամերիկահայությունը, հավատարիծ իր արյան կանչին, մշտակես եղել է իր ժողովրդի կողքին քարոյապես ու նյութապես սատարելով հեռավոր երկրի կարիքներին: Ամերիկահայության նվիրվածությունն իր հայրենիքին առանձնապես զգալի չափեր է ընդունել Առաջին աշխարհամարտի տարիներին, եթե, համախմբելով գաղութի ողջ ազգային, նտավոր, մարդկային, նյութական և այլ կարողությունները, քաղաքական, դիվանագիտական, ռազմական, տնտեսական ու հնարավոր բոլոր այլ միջոցներով ձեռնամուխ է եղել հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանության ու ազատագրման գործին:

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐՈՇ

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՀՈԳԵՎՈՐ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ա. ԵԿԵՂԵՑԻՆ

Ամերիկահայ հատվածի հոգևոր կյանքը, որպես հավաքական ամբողջություն, զարգացել է Նոր Երկրում հայության թվի հետզիեստե ստվարացմանը գուգընթաց և տական առաջխաղացում ունեցել հասարակական-տնտեսական ու պատմաքաղաքական հանգամանքների բերումով ԱՄՆ-ում հայերի հետագա հիմնավորմանը համաքայլ։ Արդեն 1880-ական թվականների վերջին այստեղ հաստատվել էր ամերիկահայ առաջին Եկեղեցական կենտրոնատեղին, պարբերական մամուլն ու դպրոցը, որոնք հաջորդող տարիների ընթացքում ենթարկվելով ժամանակի, միջավայրի, ինչպես նաև ներգաղութային կյանքի տարաբնույթ պահանջների անհիջական ազդեցությանը, կազմակերպվել ու դարձել են օտարության մեջ հայերի հոգևոր-մշակութային կյանքի զարգացման, հայապահպանման ու ազգանպաստ կարևոր առաքելություն իրականացնող կարևոր ու անհրաժեշտ գործոններ։

Եկեղեցին, որպես գաղութի հոգևոր կյանքում առանցքային դեր ու նշանակություն ունեցող ազդակ, գնահատելի աշխատանք է ժավալել ամերիկահայության շրջանում ազգային ոգին ու նկարագիրը, պահանջույքներն ու սովորույթները, վարքն ու բարքը, հեռավոր հայրենիքի ու ժողովրդի հետ կապն ամուր պահելու ուղղությամբ։

Սկզբնական շրջանում հայ հոգևոր կյանքը ԱՄՆ-ում նախապատրաստական վիճակում էր. «աչքերը դեպի հայրենիք սևերեալ և վերադարձի բարեպատեհ օրուան ակնկառոյց սպասող հայ նժդեհը իր հոգեւոր սնունդը փշուանքներով միայն ստացած է»։¹ ԱՄՆ-ում ազգային Եկեղեցի ունենալու պահանջն առավել խիստ է զգացվել XIX դ. 80-ական թվականներից սկսած, այսինքն, երբ ժամանակավոր, հետ վերադարնալու հույսով մեկնած անհատ հայ պանդուխտներին աստիճանաբար փոխրինելու են Եկեղեցական ժամանակարգի հիմնավորվելու մտադրությամբ ժամանաժները՝ իրենց հետ բերելով ընտանեկան ծիսակարգի (ամուսնություն, մկրտություն, հողարկավորություն և այլն) պահպանման անհրաժեշտություն։ Ընդ որում, հայերն իրենց հետ ԱՄՆ էին բերել Երկու տեսակի կրոնական ժառանգություն՝ մեծարիկ հետևորդներ ունեցող հայ առաքելական Եկեղեցին և համեմատաբար փոքրարիվ՝ հայ ավետարանական Եկեղեցին՝ իր ժողովական ու երիցական հարանվանություններով։

Նախքան պաշտոնական եկեղեցի ունենալը, ԱՄՆ-ի հայերից շատերն իրենց հոգևոր մէսիթարությունը գտնում էին ամերիկյան եկեղեցիներ, հատկապես ավետարանական ժողովարաններ հաճախելով, որտեղ քարոզում էին ինչպես օտար, այնպես էլ հայագիտ պատվելիներ: Սակայն անգլերենի իմացության պակասը, նոր բարերին ու միջավայրին հարմարվելու դժվարությունները, ինչպես նաև տեղական եկեղեցական հաստատությունների կամխակալ վերաբերունքը հայ ազգային կրոնի հանդեպ բազմաթիվ խոչընդոտներ էին հարուցում: Այսպես որ, «...ժամանակուայ մի համար ջերմեռանդ Յայն Կ'ապրէտ անադօքք եւ անեկեղեցի»:² Ուստի եւ ներկ օտարության մեջ խարխափող հայրենակիցների հոգևոր կյանքի թելադրած անհրաժեշտություններից, արդեն 1880-ական թվականների սկզբին, այսինքն՝ ԱՄՆ-ում հայերի թվի աստիճանաբար ստվարացման հետ մեկտեղ, ազգային ավետարանական անհատ նվիրյալների ջանքերով ստեղծվել են կրոնական հավաքատեղիներ, ուր այցելում էին նաև լուսավորչական հայերը: Ամերիկահայ առաջին աղոթատեղին՝ ավետարանական Սարտիրոսաց հայ ժողովական եկեղեցին, հիմնվել էր 1881 թ. Ուստորում խարբերդի աստվածաշնչային դպրոցի շրջանավարտ Յովիհաննես Յազիջյանի կողմից: Երկու տարի անց 1883 թ., Վերջինիս օրինակով, բժշկության մի ուսանող Յ.Յազիջյանի բնակարանում հիմնել է կրոնական մեկ այլ հավաքատեղի:³

Վերոհիշյալից բացի, Ուստորում հետզհետեւ աճող հայությունը, հիմնականում ամերիկացի բողոքական քարոզիչների, ինչպես նաև գործարանատերերի հովանու ներք գտնվող աշխատավորների հորդորներով, առանց հարանվանական խորության, սկսել էին հաճախել Սամքը փողոցի վրա գտնվող ամերիկյան ավետարանական ժողովարանը (քարոզիչ պատվ. Յիշկով)՝ միաժամանակ, հավասարապես նաև նաև կազմակերպած հանգանակություններին, պատվելիների տարեթոշակների վճարումներին և այլն: Ժողովարանում քարոզում էին նաև հայ պատվելիներ. Ժողովականների կողմից պատվ. Ասատուր Անդրեասյանը, մկրտչականների կողմից պատվ. Կարապետյանը: Սակայն նրանք չեն կարողացել ինչպես հարկն է իրենց ներկայացնել:⁴ Ավելին, երբ տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ-ում և, հատկապես, բանվորական Ուստորում մեծ էր հայերի նկատմամբ խորականությունը և նրանց արհամարհանքով անվանարկում էին «քուրք», «քորուտ», «օտարական», հայ բողոքականներն էլ իրենց հերթին էին փորձում ազդել հայերի հոգևոր ներաշխարհի վրա՝ հայ առաքելական մայր Եկեղեցին, նրա ծեսերը դիտելով որպես «պատկերապաշտական», խորանը, խաչը, սկիիը՝ «կոապաշտական առարկաներ» և գտնում էին, որ «աղօթատեղի մի իր պարզությունով պէտք է փայլի»:⁵ Արդեն 1880-ական թվականների կեսերին որոշ հայեր աստիճանաբար դադարել են ժողովարան հաճախել, իսկ մի շաքք ձեռնհաս ամերիկահայեր ստանձնել են «ազգային կրօնական ինքնապաշտանութեան» գործը:⁶

Ամերիկահայության ազգային ու հոգևոր կյանքի կազմակերպման գործում շրջադարձային էր Սարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի խմբագիր Սկրտիչ Փորթուգալյանի այցը Ուստոր 1888 թ. սեպտեմբերին: Երբ հայ քարոզիչները նրան արգելել էին տեղի հայության համար հրապարակային ժողով անցկացնել իրենց մշտական հավաքատեղիում ամերիկյան բողոքական Եկեղեցում, քաղաքի հայերը վարձել էին

մի փոքր սրահ, ուր Մ. Փորբուգայյանի ատենապետությամբ տեղ էր գտել համագաղութային ճակարդակի վճռորոշ դեր ու նշանակություն ունեցող ամերիկահայ առաջին հրապարակային ժողովը: Ելույթ ունենալով տեղի շուրջ 250 հայերի առջև Մ. Փորբուգայյանը շեշտում էր ԱՄՆ-ի հայության ազգային ինքնահաստատման ու ինքնապահպանման առանցքային ու հիմնական նախապայմանների մասին ասելով. «Դայերը ուր որ գացած են, իրենց հետ տարած են նաև Հայ Եկեղեցին, Հայ Սամուլը և Հայ Դպրոցը, և այդ Ազգ Երրորդութեան շնորհիւ յաջողած են իրենց Ազգ գոյութիւնը պահել, հակառակ բոլոր օտարացուցիչ և աննպաստ պարագաներուն»:⁷ Նա իիմնավորում էր, որ ամերիկահայությունն առանձնապես պետք է գգոն լինի, քանի որ «հայերը մահմէտական Երկիրներու մէջ որքան ալ հալածուին, կրնան պահել իրենց ազգութիւնը և ուղան Եկեղեցին, բայց քրիստոնեայ Երկիրներու, մանաւանդ Ամերիկայի մէջ ահազին դժուարութիւններ կան ազգայնական և կրօնական պահպանումի տեսակետով»:⁸ Ամերիկահայության շրջանում հայապահպանման դժվարին գործն իրականացնելու, Եկեղեցի, կիրակնօրյա դպրոց, մանուկ և ազգային նշանակության այլ հաստատություններ իիմնելու նպատակով ժողովի որոշմանք ստեղծվել է «Կաճառ Հայկական» անվանումը կրոյ ամերիկահայ առաջին կազմակերպությունը, որտեղ, մինչև Եկեղեցու իիմնումը, ամեն կիրակի կրօնական ծիսակատարություններ էին իրականացվում:

ԱՄՆ-ում և, հատկապես, հայաշատ Ուստրում հոգևոր հովիվ ու ազգային Եկեղեցի ունենալու նպատակով Կաճառ Հայկականի ատենապետ Մ. Փորբուգայյանը 1889 թ. մարտին դիմել է Կ. Պոլսի հայոց պատրիարքությանը «գործունեայ եւ հայրենասէր Եկեղեցական նը» ունենալու ակնկալիքով:⁹ Պատրիարքարանի որոշմանք ամերիկահայ հովիվ պաշտոնին է ուղարկվել «խոհեն վարք ու բարք» ունեցող 40-ամյա «անկեղծ ու անշահախնդիր» Հովսեփ Վարդապետ Սարացյանը:¹⁰ Նա Ուստր էր ժամանել 1889 թ. հուլիսի 25-ին և երկու օր անց անդրանիկ պատարագը մատուցել Գրենդ Արմի Շոլում: Այդ խանդավառ ու աննոռանալի հանդիպմանը ներկա էր ամերիկահայության գգալի մասը: Ժամանակակցի վկայությամբ, «աննկարագրելի երջանկութիւն մի կ'ըլլայ այս հանդիսաւոր կիրակին, բոլոր հայու սրտով ու հայու պատարագով ապրելու վարժուած հոգիները կը փարին իրենց Մայրենի Եկեղեցին, կորսուած թանկագին էակ մը գտած ըլլալու ուրախութեամբ»:¹¹

Կարճ անց Յ. Վոր. Սարացյանը ձեռնամուխ է եղել ԱՄՆ-ում հայ առաջելական առաջին Եկեղեցի ունենալու խնդրին՝ այդ ծրագրի հրականացման նպատակով ընտրելով յոթ հոգուց բաղկացած հոգաբարձություն: Եկեղեցու շինության առիթով հոգաբարձությունում տարբեր կարծիքներ էին առկա. ոմանք, ելնելով ամերիկահայության ներկայից ու ապագայից, համաձայն էին նոր Եկեղեցու կառուցման գաղափարի հետ, իսկ ոնանք էլ, ելնելով Ամենայն հայոց հայրապետ Մ. Խրիմյանի այն տեսակետից, թե «տաղաւարիկ նը շինեցէք, ձեր վանքեր ու Եկեղեցիներ կը սպասեն, հոն է ձեր փառքը, և հոն պէտք է ըլլաք դուք, և ոչ թէ օտար աշխարհի մէջ», գտնում էին, որ առ ժամանակյա տարագրության մէջ գտնվող հայության համար լրիվ բավական էր մի շինություն գնելն ու այն ժամանակավոր Եկեղեցու վերածելը:¹²

Եկեղեցաշինության աշխատանքներին իրենց նյութական նպաստն են բերել ԱՄՆ-ի ողջ հայությունը, նաև Եվրոպական մի շարք քաղաքների հայ համայնքները:

Ընդհանուր առմամբ 9.460 դոլար արժողությամբ ամերիկահայ առաքելական առաջին Եկեղեցին մի գեղեցիկ փայտաշեն կառուցյ էր տեղավորված Լուսել բլիր կողքին: Այն ուներ 240 նստատեղիներով ժողովասրահ, հետագայում Եկեղեցուն առընթեր բացվել էր նաև Ազգային գրադարան, կիրակնօրյա դպրոց և այլն:¹³

1891 թ. հունվարի 6(18)-ին Յ. Վոր. Սարացյանի ձեռամբ տեղի է ունեցել Ուստրի Եկեղեցու օծումը Սր. Փրկիչ անունով: Մատուցվել է հանդիսավոր պատարագ, որին ներկա էին ինչպես Ուստրի, այնպես էլ շրջակա քաղաքների (Բոստոն, Սալեմ, Չեյ-Վլորիիլ, Նյու Յորք) հայերը:¹⁴

1892 թ. մայիսի 22-ին հոգաբարձության ջանքերով կազմակերպվել է նաև Գրադարան-ընթերցարանի միությունը:

Ուստի հովվապետի պաշտոնում իր անց կացրած չորս տարիների ընթացքում Յ. Վոր. Սարացյանը մեծ ջանքեր է գործադրել Երկրի հայարնակ այլ վայրերում ևս հայ առաքելական Եկեղեցիներ ունենալու նպատակով: Այդ ընթացքում նման Եկեղեցիներ են իհմնվել Շեյվորիիլում, Քեմբրիջում (Մասսաչուսեթսի նահանգ), Փրովիդենսում (Ուոդ Այլենդի նահանգ), Ջարթֆորդում (Կոնեկտիկուտի նահանգ) և այլուր:¹⁵

Ամենայն հայոց կաթողիկոս Մ.Խրիմյանի շրջաբերականով 1898 թ. հուլիսի 2-ին պաշտոնապես իհմնվել է Ամերիկայի հայ Եկեղեցու թեմը, որն արդեն ընդգրկում էր 30 համայնքներ, ընդ որում, Ուստրի Սր. Փրկիչ Եկեղեցին վեր էր ածվել Առաջնորդարանի (1923 թվականից Առաջնորդարանը փոխադրվել է Բոստոն, իսկ 1927 թվականից մինչև օրս՝ Նյու Յորքում է):

Ամերիկահայության ուղղված իր հայրապետական այդ Կոնդակով Խորիմյան Դայրիկը պատգամում էր. «Միրեցէք ձեր անարատ Սայր Ս. Կաթողիկէ Եկեղեցին...: Եկեղեցւոյ հետ սիրեցէք եւ հաստատուն պահեցէք ձեր Մայրենի լեզուն, այն Երկնապարգել լեզուն, որով խօսեցին եւ աղօթեցին, երգեցին եւ լացին ձեր հայրեն ու մայրեր իրենց հայրենեաց մէջ, իրենց պանդխտութեան մէջ եւ իրենց Եկեղեցւոյ մէջ. նոյն եւ սրբութեամբ աւանդեցէք ձեր որդւոց եւ ժառանգաց միշտ ամմոռաց պահել զայն. քանզի եթէ կորուսիք ձեր լեզուն, կորսնցուցած էք եւ ձեր ամեն ինչ: Հաստատուն մնացէք ձեր հայրենի աւանդութեանց, պահեցէք ձեզ մաքուր եւ անարատ ձեր ամեն կենցաղավարութեանց մէջ, ի բաց կացէք այն ամեն մոլութիւններէն, որ մարդուս դէպի կորուստ են առաջնորդում, միրեցէք սուրբ ամուսնութիւն եւ ընտանեկան մաքուր բարոյական կեանքը. բոլ նոր աշխարհի կեանքը իր ամեն շքեղութիւններով եւ փայլերով զգեց չիրապուրէ. յիշեցէք, որ դուք պանդուխտ էք այդ օտար Երկրում. յիշեցէք, որ մի օր Խսրայէլի նման Տէր Աստուած զգեց եւս պիտի համ այդ պանդխտութեան աշխարհէն դէպի ձեր հայրենի Երկիրը. յիշեցէք, որ օտարը միշտ օտար է»:¹⁶

Ամերիկահայ համայնքի խնդրանքով, այժմ արդեն թեմի առաջնորդի գահը զբաղեցնելու համար, նորից ԱՄՆ է ժամանել Յ.Սարացյանը՝ Եպիսկոպոսի աստիճանով: Նորաստեղծ ամերիկահայ Եկեղեցու թեմի մէջ Արևելյան և Սիծին Արևմտյան շրջանների հետ մտնում էին նաև Կալիֆոռնիայի և Ջարավային Ամերիկահայ հայ Եկեղեցիները ևս (Կալիֆոռնիայի տարածքը պաշտոնապես անջատվել էր ամերիկահայ Եկեղեցիների Արևելյան թեմից՝ 1928 թ. ստեղծելով առանձին Արևմտյան թեմ իր Առաջնորդարանով):¹⁷

Ամերիկահայ Եկեղեցական թեմն օրինական ձևակերպում է ստացել 1902 թ. հունիսի 21-22 (4-5)-ին Ուստի Սր. Փրկիչ Եկեղեցում գումարված առաջին պատգամավորական ժողովում, որը Արածնորդի, թեմական հովիվների, Ամերիկայի Դայաստանյաց առաքելական Սր. Եկեղեցու ժողովական ներկայացուցիչների մասնակցությամբ (24 ժողովականների 4 հոգևոր, 20 աշխարհիկ), քննարկել և ընդունել է 10 գլուխներից և 90 հոգվածներից բաղկացած Ամերիկահայ ազգային սահմանադրության նախագիծը այն վերջնականացես վավերացվել է սեպտեմբերի 6-ին Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խորիմյանի կողմից:¹⁸

Մինչև 1898 թ., իսկ պաշտոնապես 1902 թ., ԱՄՆ-ի հայ Եկեղեցիները, Ամերիկայի և Եվրոպայի մյուս հայկական Եկեղեցիների նման, գտնվել են Կ.Պոլսի հայոց պատրիարքության հովանափորության ներքո: Մինչեն արդեն XIX դ. վերջից հիշյալ վայրերում հայ քաղաքական կուսակցությունների ծավալած գործունեությունը, ազգային ու հակասութանական Ելույթները խոշոնդոտել են Բարձր Դոան հետ պատրիարքարանի հետագա հարաբերություններին: Բացի այդ, որոշ ամերիկահայեր ավելի նախապատվություն եր տալիս Սր. Էջմիածնից ուղարկված հոգևորականներին, պատճառաբանելով, թե «Թուրքիային Եկող Ջովիներ թրքասէր են, մինչ Էջմիածնի եպիսկոպոսները ազգասէր եւ լեզուազէտ»: Միաժամանակ, աշխարհով մենք ցրված հայության թվի աճի հետ մեկտեղ տարբեր գաղութներում արդեն սկսել էին ստեղծվել առանձին առաջնորդություններ: Ուստի, Ելենլով նշված հանգամանքներից, Կ.Պոլսի հայոց պատրիարքությունը Մաղաքիա արք. Օրմանյանի գլխավորությամբ, ինչպես նաև անձամբ Ամենայն հայոց կաթողիկոս Ակրտիչ Խորիմյանի համաձայնությամբ, Սր. Էջմիածնի կաթողիկոսությանն է հանձնել Ամերիկայի և Եվրոպայի Երկրների (բացառությամբ Բուլղարիա) հայ Եկեղեցական թեմերի նկատմամբ հովանափորության իրականացման գործը:¹⁹

Ամերիկահայոց Եկեղեցական թեմի ձևավորումից հետո Երկրի հայաշատ տարբեր վայրերում (Ֆեյջը Լաուն, Յունյըն Սիթի, Ուոթըրվիթ, Նյու Բրիթըն, Ուտքեն, Ուկինվուդ, Չելբենհամ, Նյու Յորք, Լուորթնս, Ուեսթ Յորքեն, Ելեմ, Ֆաուլեր, Լու Անգելես, Սաութթիլդ, Քլիվլենդ, Սիրակուազ, Թրոյ, Սաութ Սիլուորքի, Ուշմոնդ, Շիուի, Չիկագո Ֆոլդ, Փրովիդենս, Ույսին, Դետրոյտ, Չիկագո, Սան Ֆրանցիսկո, Լոուէլ, Էվանսթոն, Ուաշինգտոն, Սայամի, Բուստոն, Փելու Շեյքս, Գրինֆիլդ և այլուր) սկսել են հիմնադրվել հայ առաքելական նորանոր Եկեղեցիներ: ²⁰ (Տես Աղյուսակներ ՀՀIII^{20a}, ՀՀIV^{20c}):

ԱՄՆ-ում հայ առաքելական Եկեղեցիների ստեղծման, ամրապնդման ու տարածման, ինչպես նաև համայնքի համախմբման գործում իրենց ողջ եռանդն ու կարողությունն են ներդրել նոր Երկրի ժամանակ շատ հոգևորականներ՝ թե որպես թեմի առաջնորդներ և թե՝ առանձին Եկեղեցիների հովիվներ: ²¹

ԱՄՆ-ի հայաշատ տարբեր քաղաքներում կազմավորված հայ առաքելական Եկեղեցիներն իրենց հոգևոր հովիվների, համայնքի կարող ուժերից բաղկացած հոգաբարձուների խորհուրդների, առանձին բարերարների ու անհատ հայերի ջանքերով հնարավորությունների ներածին չափով հոգացել են թեմի հոգաերն ու կարիքները. Առաջնորդարանի նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվել են Երկրի տարբեր քաղաքներով մեկ ցրված հայրենակիցների մարդահամարներ,

ձեռնամուխ են Եղել օտարության մեջ խարիսափող հայության ազգային նկարագրի պահպանմանն ու հայանպաստ այլ գործունեության: Երկրի գրեթե բոլոր հայ առաքելական Եկեղեցիներում ստեղծվել են հայաշունչ գրադարաններ, որոնք ժամանակի ընթացքում հարստացվել են հայրենիքից բերված, ինչպես նաև համայնքի նվիրաբերած գրականությամբ ու մանուլով. քահանաների հսկողությամբ բացվել են Կիրակնօրյա, ավելի ուշ նաև ազգային ամենօրյա դպրոցներ:

Կանոնավոր Եկեղեցիներ ունեցող վայրերում իրականացվել են շաբաթօրյա, իսկ վարձու Եկեղեցիներում երկշաբաթյա կամ ամսեկան կրոնական ծառայություններ: Իրենց բնակավայրերում Եկեղեցիներ կամ հավաքատեղիներ չունեցող հայերը հաճախել են մերձակա շրջաններում գործող Եկեղեցիներ, իսկ հոգևոր հովիվներից զուրկ համայնքներում կրոնական ծառայություններն իրականացվել են շրջկ քահանաների կողմից:

Ամերիկահայերը սիրով էին հաճախում առաքելական Եկեղեցիներում անցկացվող կիրակնօրյա Ժիսակատարություններին: Դատկապես բազմանարդ էին տերունական հինգ տաղավարային տոնակատարությունները՝ Սբ. Ծնունդը, Սբ. Զատիկը, Քրիստոսի Պայծառակերպությունը, Սբ. Աստվածածինը, Սբ. Խաչը և այլն, որոնք բոլորն էլ անցնում էին ըստ պատշաճի կազմակերպված ու ծոխ: Գաղութի բազմաշերտ հավատացյալների համար Ժիսակատարությունները պատարագվում էին գրաբար ու աշխարհաբար, երբեմն նաև թուրքերեն, հետագայում ավելի նվազ անգլերեն:²²

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի հայ առաքելական Եկեղեցին, Ենթարկվելով ամերիկյան բոլոր ասպարեզներում անընդհատ տեղ գտնող բարեփոխումներին, ձերբագատվել է հնացած պաշտամունքային ծևերից ու Ժիսակարգից. Վերացվել էր Սուրբ օրերի հին օրացույցը, այևս պաշտոնապես չին տոնվում տարբեր սրբերի ու անվանակոչության օրերը, ինը երկրում շաբաթ օրերին նշվող կրոնական տոնները գործունյա ԱՄՆ-ում հիշվում էին կիրակի օրերին, վերացվել էին ցերեկային կրոնական ներկայացումներն ու իրիկնային ժամերգությունները, հավատացյալների կողմից Եկեղեցու պատերի ու սրբապատկերների համբուրելը և այլն: Աստիճանաբար դուրս էր մովում ազգային Եկեղեցակարգով 160 օր տևող ծոմապահությունը: Նոր Երկրի ու ժամանակի առաջադրած պայմաններին համաքայլ ամերիկահայ Եկեղեցական նորոգվող տոնացույցի մեջ սկսվում էին ներառվել նաև ամերիկյան որոշ տոներ (Աշխատանքի, Շնորհակալության, Մայրերի և այլն), ինչպես նաև ազգային սգատուներ (1894 թ. Սասունի ջարդը, 1915 թ. ապրիլի 24-ի հայոց Մեծ Եղեռնը և այլն):²³

ԱՄՆ ժամանած առաքելական քահանաների մեջ կային նաև այնպիսինները, որոնք միշտ չեն, որ գտնվում էին իրենցից պահանջվող բարձրության վրա: Նրանցին ոնանք, առավելապես թրքախոս լինելու պատճառով, հազիվ էին խոսում մայրենի լեզվով, Արևելահայատանից Եկածները բավարար չափով չէին տիրապետում գրաբարին, չգիտեին անգլերեն, լիակատար կրթության պակասը թույլ չէր տալիս նրանց ազատ ու անկաշկանդ հաղորդակցվել ժողովրդի հետ: Բացի այդ, ամերիկահայ հովվի պարտականությունը ստանձնած քահանաները, մեծ մասամբ լինելով առաջացած տարիքում, ի վիճակի չին վերափոխել իրենց ազգային պահպանողական,

նահապետական հայացքները ամերիկահայ իրականության նորագույն պայմանների համապատասխան, ինչը պատճառ էր դառնում Նոր Երկրում հայերի շրջանում իրենց հեղինակության աստիճանական բոլցացման:²⁴

Եթե հայրենի հողի վրա ծնված ու մեծացած ամերիկահայերի առաջին սերնդի ներկայացուցիչների համար հարազատ էր առաքելական եկեղեցիներում քահանաների անցկացրած կրոնական ծիսակատարությունների հնաօնությունն ու պահանջականությունը, ապա ամերիկյան կրություն ստացած ամերիկահայ Երկրորդ սերնդի ներկայացուցիչների համար արդեն ձանձրալի ու անընդունելի էր այդ ամենը: Ըստ այդմ, հետզինետե նվազում էր առաքելական եկեղեցիներ հաճախող ամերիկահայերի թիվը, որոնք նախընտրում էին հարազատ եկեղեցու հետ հաղորդակցվել առավելապես հայ եկեղեցական տոմերի և համազգային նշանակության միջոցառումների, ինչպես նաև հայության համար արտակարգ առիթներով: Ունաճք, վճարում էին տարեվարձը՝ պայմանով, որ հնարավորին չափ քիչ Ներկա գտնվեին ավանդական եկեղեցիների երկարաշուշ ծիսակատարություններին:²⁵

Ամերիկահայերը, որոնց գգալի նասը դեռևս հայրենի երկրում ամերիկյան բողոքական քարոզիչների ազդեցությամբ ավետարանականություն ընդունած պանդուխտներ էին, ԱՄՆ-ում հիմնել էին նաև ավետարանական եկեղեցիներ ու աղոթատեղներ, ուր անց էին կացվում ամենշաբաթյա քարոզներ: Սկզբում գործել են տնային աղոթաժողովներ (Ուստր, Նյու Յորք, Ֆրեզնո և այլուր), որոնք աստիճանաբար փոխադրվել են ամերիկյան ժողովական եկեղեցիներ: ²⁶

1881 թ. Ուստրում հիմնվել է ամերիկահայ առաջին աղոթատեղին՝ ավետարանական Մարտիրոսաց հայ ժողովական եկեղեցին ավետարանականներ դոկտ. Մինաս Կիրակոսյանի և Յովհաննես Յագիշյանի ջանքերով՝ քաղաքում կազմավորված տնային աղոթաժողովների իրենց հետևորդների համար:²⁷

ԱՄՆ-ում հայ ավետարանականները (ժողովականներ, Երիցականներ, մկրտչականներ, մերոդիստներ, Եպիսկոպոսականներ) մշտապես գտնվել են ամերիկյան համանուն կրոնական ուղղության բարոյական ու նյութական աջակցության ներքո (իրենց եկեղեցիները, մատուցները, ժողովարաններն ու սրահները բազմից սիրահոժար տրամադրել են հայ ավետարանականներին), հանգանաք, որից զուրկ էր ամերիկահայ առաքելական եկեղեցին:

1901 թ. դեկտեմբերի սկզբին Ուստրի հայ ավետարանականները քաղաքի Ավետարանական առաքելության նյութական օժանդակությամբ կառուցել են Մարտիրոսաց եկեղեցու իրենց սեփական աղոթատեղին (Եկեղեցու շինության համար անհրաժեշտ 12.000 դրամ ժամանակակից հայերը վճարել էին միայն 5.000-ը):²⁸

Ամերիկայն համամիսիններական խորհրդի գգալի աջակցության շնորհիվ ժամանակի ընթացքում Ուստրի օրինակով ավետարանական (հիմնականում ժողովական ու Երիցական հարանվանություններ) եկեղեցիներ են հիմնվել ԱՄՆ-ի հայաշատ տարբեր քաղաքներում (Բելմոնթ, Փրովիդենս, Նյու Յորք, Յեյվըրիիլ, Ուոթերթաուն, Ֆրեզնո, Յեյվըրթաուն, Փերզմուզ, Փերեսոն, Չիկագո, Ֆրաւլեն, Լու Անդելես, Թրոյ, Բուստոն, Փարլիեր, Երեմ, Սալեմ, ՍաութՓիլի, Քինգզբրուգ, Լուլենս, Դետրոյտ, Ռիոլի, Փասադենա և այլուր):²⁹

Թեպետ ամերիկահայ ավետարանական սպասավորները հիմնականում ամերիկան կրթություն ստացածներ էին, այդուհանդերձ. իրենց համայնքների կրոնական հարցերը հոգալուց բացի, նրանք զգալի ներդրում են ունեցել նաև գաղութի ազգային-կրթական մակարդակը բարձրացնելու, օտարացման աճող վտանգի դեմ տեղի հայ երիտասարդությանը համախմբելու, հայրենիքին ու ժողովրդին սատարելու և հայանապատ այլ ձեռնարկների կազմակերպման ու իրականացման գործում: 600 հայ մասնութերի համար բացվել էին կիրակնօրյա դպրոցներ, դեռահասների հոգևոր նկարագիրը պահպանելու նպատակով ամերիկահայ ավետարանականների ջանքերով ստեղծվել էին 500 անդամ ներառող քվով 12 քրիստոնեական ջանասիրաց ընկերություններ, կազմվել էին եկեղեցախնամ ու որբախնամ եռանդուն գործունեություն ծավալող Տիկնանց բարեսիրաց ընկերություններ և այլն:³⁰

Դարասկզբին երկրով մեկ տարածված ամերիկահայ ավետարանական եկեղեցիները միավորվել են ստեղծելով միջեկեղեցական կազմավորումներ (1901 թ. Ուստրում ԱՄՆ-ի Արևելյան նահանգների հայ ավետարանական եկեղեցիների միությունը, 1908 թ. արևմտակողմի՝ Կալիֆոռնիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունը): 1923 թ. առաջին միության կազմում կային կանոնավոր կազմակերպված ավետարանական 10 եկեղեցիներ և 14 առաքելություններ, իսկ երկրորդում՝ 7 եկեղեցիներ և 3 առաքելություններ: ³¹ (Տե՛ս Այսուսակներ ԽՎ Հ^{31a}, ԽՎI Հ^{31b}, ԽՎII Հ^{31c}):

Այդ երկու միություններն ամերիկան օրինակով 1918 թ. հունիսի 7-ին Ուստրում հիմնել են իրենց կրոնական գաղափարաբանության վրա հիմնված, սակայն առավելապես աշխարհիկ նպատակներ հետամտող Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը, որը կոչված էր բարոյապես ու նյութապես սատարել ինչպես ամերիկահայությանը, նույնպես և հեռավոր հայրենի ժողովրդի հոգևոր, կրթական, մշակութային ու առօրյա այլ կարիքներին, աջակցել ավետարանական եկեղեցիների կառուցմանը ԱՄՆ-ում և հայրենիքում, օգնել եղենից վերապրողներին, մասնակցել Դայաստանի Առաջին Դանրապետության վերաշինության աշխատանքներին և այլն:

Դայ ավետարանականները, որոնք մեծ մասամբ ամերիկան ժողովական հարանվանության հետևորդներ էին, առաքելականների համեմատությամբ, ԱՄՆ-ում ավելի հեշտությամբ են հարթել իրենց ճանապարհը, ինչը պայմանավորված էր վերջիններիս ավելի բարձր կրթական մակարդակով, քաղաքական վեճերից նրանց հեռու լինելով, ամերիկան աջակցությամբ և մի շարք այլ հանգամանքներով: Այնպես որ, Առաջին աշխարհամարտի նախօրենին հայ ավետարանականներն իրենց պարզ կահավորված ու համեստ արտաքին տեսք ունեցող փոքրաթիվ եկեղեցիներով ու ժողովարաններով, ի տարբերություն առաքելականների բազմաթիվ ծախսամեր եկեղեցիների, ամուր հիմքեր էին ստեղծել Նոր Երկրում: Բացի այդ, հայ ավետարանական քարոզիչները, ի տարբերություն առաքելական հոգևորականների, կրթված էին ու հիմնականում անգիտածու, քանի որ ուսանել էին օսմանյան Երկրում հաստատված ամերիկան միսիոներական կողեզներում կամ ԱՄՆ-ի հանապատասխան աստվածաբանական հաստատություններում: Ամերիկահայ ավետարանականները մշտապես կանգնած են եղել ԱՄՆ ժամանակ կամ մեկնել ցանկացող իրենց հայրենակիցների և, մասնավորապես, ավետարանական համայնքների պաշտպանության ու հովանավորության դիրքերում:

Կրոնագաղափարական տարածայնությունների հետ մեկտեղ ԱՄՆ-ի հայ ավետարանականները մշտապես համագործակցել են առաքելական Եկեղեցու հետ ազգային ու կրոնական հարցերին առնչվող առանցքային բոլոր խնդիրներուն վերջիններիս տալով նախապատվությունը:

Ամերիկահայ ավետարանական Եկեղեցին, սնվելով առաքելական Եկեղեցու քրիստոնեական դրույթներով և համարվելով նրա բաղկացուցիչ մասը, հեռու էր հայ Եկեղեցու նահապետական, հաճախ դոգմատիկ գաղափարաբանությունից, Վերջինիս նման կառչած չէր ազգային մշակույթի, Լեզվի, սովորույթների մեջ ավանդականի անվերապահ պահպանմանը: Դայ ավետարանականները քրիստոնեության մասին քարոզների հետ մեկտեղ լուսաբանում էին, որ նոր Երկրի հարափոփոխ կյանքում անհրաժեշտ է կողմնորոշվել դեպի առաջացածը, կոչ էին անում ընտրել ամերիկան գործնական մտածելակերպն ու ապրելատը: Այդ իմաստով ամերիկահայ ավետարանական Եկեղեցին յուրատեսակ կապող օղակ էր հայ ավանդական մշակույթի և առաջապահ Ամերիկայի միջև: Ամերիկահայ ավետարանականներն իրենց հոգևոր քարոզներն իրականացնում էին ինչպես հայերեն ու թուրքերեն, այնպես էլ անգլերեն: Ընդ որում, օտար կրթություն ստացած ավետարանականները, ի հակադրություն առաքելականների, ամերիկահայ Երիտասարդության շրջանում ավելի հաճախակի էին անցկացնում անգլերեն քարոզներ, ինչը բազմաթիվ քննադատությունների տեղիք էր տալիս:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ում հայության թվի ստվարացման հետ մեկտեղ իիմնվել են նաև կարողիկե Եկեղեցիներ ամերիկահայ փոքրարիկ կաթողիկե հետևորդների համար: Ամերիկահայ առաջին կաթողիկե հոգևորականը Մարտիրոս Սկրյանն էր, որը, 1899 թ. ժամանելով Նոր Երկիր, ստանձնել էր Բոստոնի հայ կաթողիկե համայնքի հոգևոր հովվի պարտականությունը: Շուտով հայ կաթողիկե համայնքներ են ծևավորվել նաև Փեթերսոնում, Ֆիլադելֆիայում, Ուորերափունում, Լոս Անջելեսում և այլուր:³² Սակավարիկ լինելու պատճառով հայ կաթողիկե ներկայացուցիչները չունեին սեփական Եկեղեցիներ կամ կազմակերպված ժողովարաններ և իրենց հոգևոր ծառայություններն իրականացնում էին տեղի ամերիկայան կաթողիկե Եկեղեցիներում, ունեին «հոգևոր եղբայրներ ու քույրեր» անվանումը կրող պաշտամունքային ծառայություններ իրականացնող խմբեր: 1910 թ. Նյու Յորքում ստեղծվել է հայ կաթողիկե առաջին ժողովարանը, որին հաջորդել են ևս իինգը: Դայ կաթողիկե Եկեղեցիներն ԱՄՆ-ում իմանվել են 1920-ական թվականների սկզբին՝ Քենքրիջում, Ուինվուրում և այլուր:³³ (Տե՛ս Աղյուսակ XXVIII՝ ^{33ա}):

Այսպիսով, սկսած 1880-1890-ական թվականներից ԱՄՆ-ում հայության թվի աճի ու այնտեղ նրանց հաստատմանը զուգընթաց Երկրի հայաշատ տարրեր վայրերում ստեղծվել են կրոնական համախմբումներ, որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվել ժողովարանների ու Եկեղեցիների: Ընդհանուր առմամբ, XX դ. Երկրորդ տասնամյակի վերջին ամերիկահայերի շրջանում շուրջ 70-80%-ը պատկանում էր հայ առաքելական Եկեղեցուն, 15%-ը հայ ավետարանական Եկեղեցուն (գերազանցապես՝ ժողովական և Երիցական հարանվանություններ), իսկ մնացյալ 5%-ը՝ կաթողիկե և քրիստոնեական այլ ուղղությունների կամ աղանդների (յոթերորդ օրվա

աղվենտիստմեր և այլն):³⁴ 1919 թ. ԱՄՆ-ում կային հայ առաքելական 15 եկեղեցիներ, ինչպես նաև ավետարանական 15 եկեղեցիներ և շուրջ 20 առաքելություններ: Դոգևորականների թիվը մոտ էր 100-ի, որից ավելի քան 50-ը ավետարանական քարոզիչներ էին (շուրջ 39-ը քարոզում էր նաև ամերիկյան ժողովարաններում):³⁵

Այսպիսով, հայ եկեղեցին, կրոնական և գաղափարական տարածայնություններ ունեցող իր հարանվանական ճյուղավորումներով, միմյանցից անկախ ու, միաժամանակ, միասնաբար, վճռորոշ դեր ու նշանակություն է ունեցել ամերիկահայ գաղութի կազմակերպման ու հայապահպանման գործում, գնահատելի հոգևոր, քարոյական ու նյութական նպաստ բերել ինչպես գաղութի, նույնպես և հայրենի երկրի հայությանը:

ԱՂՅՈՒՍԱԿ ԽIII

ԱՄՆ-ի ԴԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՍ)

Եկեղեցու անվանում	Վայր	Տարեթիվ				
		Հոգուոր առաջին ճայռական	Եկեղեցու առաջին ճայռական	Եկեղեցու առաջին ճայռական	Եկեղեցու (տարբան օնուն)	Եկեղեցու կառուցմ (օնուն)
Սուրբ Փրկիչ հայ առաքելական եկեղեցի	Ուորքսթեր (Մասսաչուսեթս)	1888 թ.			(1890 թ.)	1891 թ. (1891 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի	Ջեյվորիլ (Մասսաչուսեթս)	1890 թ.	(1923 թ.) 1930 թ.	1943 թ.	(1945 թ.)	
Մեծ Բոստոնի Ս. Երրորդություն հայկական եկեղեցի	Թեմբրիջ (Մասսաչուսեթս)	1890- ական թվակ.			1921 թ.	(1923 թ.)
Ս. Գևորգ հայկական եկեղեցի	Ջարբֆորդ (Կոնեկտիկուտ)	1897 թ.				1945 թ. (1953 թ.)
Ս. Սահակ և Ս. Մեսրոպ հայկական եկեղեցի	Փրովիդենս (Ռոդ Այլենդ)	1897 թ.			1913 թ.	(1914 թ.)
Ս. Ղևոնդի հայկական եկեղեցի	Ֆեյջ Լաուն (Լյու Ձերսի)	1898 թ.	1900 թ.	1934 թ.	(1941 թ.)	
Ս. Խաչ հայկական եկեղեցի	Յունյըն Սիրի (Լյու Ձերսի)	1899 թ.	1902 թ.			1906 թ. (1907 թ.)

Ս. Պետրոս հայկական Եկեղեցի	Ուռքըրվիլը (Սյուլ Յորբ)		1899 թ.	1911 թ.	(1916 թ.)
Ս. Դակոր հայկական Եկեղեցի	Ուռքերբառն (Մասսաչուսեթս)		1900 թ.		(1937 թ.)
Ս. Յարություն հայկական Եկեղեցի	Նյու Բրիթըն (Կոննեկտիկուտ)		1900 թ.		1925 թ. (1926 թ.)
Ս. Ստեփանի հայ առաքելական Եկեղեցի	Նյու Բրիթըն (Կոննեկտիկուտ)		1900 թ.		1925 թ. (1926 թ.)
Ս. Գևորգի հայկական Եկեղեցի	Ուռքեզըն (Իլինոյ)	1900- ական թվ.		1950 թ.	1957 թ. (1959 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական Եկեղեցի	Ֆիլադելֆիա (Փենսիլվանիա)	1902 թ.		1917 թ.	(1917 թ.)
Ս. Երրորդություն հայկական Եկեղեցի	Չելբենիեմ (Փենսիլվանիա)	1902 թ.		1917 թ.	(1917 թ.)
Ս. Սահակ և Ս. Մեսրոպ հայկական Եկեղեցի	Ուլմանուլ (Փենսիլվանիա)	1902 թ.		1917 թ.	(1917 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական Եկեղեցի	Նյու Յորք (Նյու Յորք)		1903 թ.	1911 թ.	(1950 թ.)
Ս. Լուսավորչի հայ առաքելական Եկեղեցի	Նյու Յորք (Նյու Յորք)		1903 թ.	1911 թ.	
Ս. Խաչ հայ առաքելական Եկեղեցի	Սորբ Ռոյալըն (Օհայո)	1903 թ.			
Ս. Խաչ հայկական Եկեղեցի	Լոուրենս (Մասսաչուսեթս)	1905 թ.	1905 թ.	(1927 թ.)	1931 թ. (1936 թ.)
Ս. Պողոսի հայկական Եկեղեցի	Սիրակուլ (Նյու Յորք)	1908 թ.	1911 թ.	1955 թ.	(1958 թ.)
Ս. Յովհաննես հայկական Եկեղեցի	Սաութթիլդ (Միչիգան)	1909 թ.			1931 թ. (1931 թ.)
Ս. Սարգսի հայ առաքելական Եկեղեցի	Դիբրորըն (Միչիգան)	1909 թ.	1920 թ.	1921 թ.	1962 թ. (1962 թ.)

Ս. Վարդանանց հայկական եկեղեցի	Զելմսֆորդ (Սասսաչուսեթս)	(1885 թ.) 1910 թ.		1916 թ. (1916 թ.)
Ս. Գրիգոր Նարեկացի հայկական եկեղեցի	Քլիվլենդ/Ոխ- մոնդ (Օհայո/ Վիրջինիա)	1911 թ.	1958 թ.	1964 թ. (1964 թ.)
Ս. Պետրոս հայկական եկեղեցի	Թրոյ-Ուորերվլիք (Նյու Յորք)	1911 թ.		
Ս. Ղակոր հայկական եկեղեցի	Ռիչմոնդ (Վիրջինիա)	1912 թ.		1957 թ.
Ս. Հարություն հայկական եկեղեցի	Սաութ Միլուուքի (Ուիսկոնսին)	1912 թ.	1924 թ.	(1924 թ.)
Ս. Թարգմանչաց եկեղեցի	Փրովիդենս (Ռոդ Այլենդ)	1913 թ.		
Ս. Ղակոր հայ առաքելական եկեղեցի	Նիագարա Ֆոլզ (Նյու Յորք)	1913 թ.		(1952 թ.)
Ս. Սարգիս հայկական եկեղեցի	Նիագարա Ֆոլզ (Նյու Յորք)	1913 թ.		1953 թ. (1953 թ.)
Ս. Ղակոր հայ առաքելական եկեղեցի	Ռեյսին (Ուիսկոնսին)	1914 թ.	1925 թ.	(1925 թ.)
Ս. Մեսրոպ հայկական եկեղեցի	Ռեյսին (Ուիսկոնսին)	1914 թ.	1918 թ.	1925 թ. (1925 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի	Չիկագո (Իլինոյ)	1915 թ.		1925 թ. (1926 թ.) (1964 թ.)
Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցի	Դետրոյտ (Միչիգան)	1915 թ.		
Ս. Վարդանանց հայկական եկեղեցի	Լոուլ	1916 թ.		
Ս. Ղակոր հայկական եկեղեցի	Եվանսբոն (Իլինոյ)		1917 թ.	1944 թ. (1945 թ.)
Ս. Սարիամ հայկական եկեղեցի	Ուոշինգտոն (Կոլումբիայի շր.)	1918 թ.		1963 թ. (1963 թ.)

Ս. Յովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցի	Մայամի (Ֆլորիդա)	1920- ական թ.		1950 թ.	(1953 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի	Բինգհեմթըն (Նյու Յորք)	1923 թ.		1928 թ.	(1930 թ.)
Ս. Յովհակիմ և Աման հայկական եկեղեցի	Փելոս Շեյթս (Իլինոյ)	1923 թ.		1958 թ.	(1958 թ.)
Ս. Յովհաննես հայկական եկեղեցի	Գրինֆիլդ (Ուիսկոնսին)		1923 թ.		1942 թ. (1942 թ.)

ԱՊՅՈՒԽԱԿ ՀՀԻՎ

ԱՄՆ-Ի ԴԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (ԱՐԵՎԱՏՅԱՆ ԹԵՍ)

Եկեղեցու անվանում	Վայր	Տարեթիվ			
		Դուռը առաջին ճառայրում	Եկեղեցական համայնքի ձևավորում	Եկեղեցու համայնքի գնում	Եկեղեցու կառուցման (օծում)
Ս. Երրորդություն հայկական առաքելական եկեղեցի	Ֆրեզն (Կալիֆոռնիա)	1895 թ.			1900 թ. (1900 թ.) 1913 թ. (1914 թ.)
Ս. Մարիամ հայկական եկեղեցի	Եդեմ (Կալիֆոռնիա)	1904 թ.			1911 թ. (1911 թ.)
Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի	Ֆաուլեր (Կալիֆոռնիա)	1906 թ.			1910 թ. (1910 թ.)
Ս. Խաչ հայկական առաքելական եկեղեցի	Փիքո Ռիվերա (Կալիֆոռնիա)	1907 թ.	1922 թ.		(1911 թ.) 1923 թ.
Ս. Յակոբ հայկական եկեղեցի	Լոս Անջելես (Կալիֆոռնիա)	1907 թ.	1922 թ.		(1911 թ.) 1923 թ.

Ս. Աստվածածին հայկական եկեղեցի	Եղին (Կալիֆոռնիա)	1909 թ.			
Ս. Խաչ հայկական եկեղեցի	Լու Անջելես (Կալիֆոռնիա)	1912 թ.			
Ս. Սահման և Ս. Մեսրոպ հայկական եկեղեցի	Բիոլի (Կալիֆոռնիա)		1912 թ.		(1924 թ.)
Ս. Յովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցի	Սան Ֆրանցիսկո (Կալիֆոռնիա)	1915 թ.		1941 թ.	(1942 թ.)

ԱՂՅՈՒՄԱԿ ԽՎ

ԱՄՆ-Ի ԴՎՅ ԱՎԵՏԱՐԱՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Եկեղեցու անվանում	Վայր	Տարեթիվ				
		Հոգևոր 1-ին առողջապահություն (Յառաջային)	Եկեղեցական համայնք	Եկեղեցական համայնքում	Եկեղեցու պահապահություն (Պահապահություն)	Եկեղեցու կառավագական
Դայ մարտիրոսաց ժողովական եկեղեցի	Ռուբեքեր (Սասսաչուսեթս)	1881 թ.			1881 թ. (1892 թ.)	1901 թ.
Դայ ավետարանական եկեղեցի	Նյու Յորք (Նյու Յորք)	1881 թ. (1896 թ.)			(1921 թ.)	
Բոստոնի առաջին հայկական ավետարանական եկեղեցի	Բոստոն (Սասսաչուսեթս)		1891 թ.	1908 թ.		
Դայ ավետարանական եփրատ եկեղեցի	Փրովիդենս (Ռոդ Այլենդ)	1891 թ.				
Դայ ավետարանական եկեղեցի	Փրովիդենս (Ռոդ Այլենդ)	1892 թ.			(1912 թ.)	
Դայ ավետարանական եկեղեցի	Դեյվըրիիլ (Սասսաչուսեթս)	1896 թ.				

Դայ ժողովական եկեղեցի	Նյու Յորք (Նյու Յորք)	1896 թ.		
Առաջին հայկական երիցական եկեղեցի	Ֆրեզնո (Կալիֆոռնիա)		1897 թ.	1901 թ.
Դայ հիշատակի եկեղեցի	Ուորերբաուն, Բոստոն (Սասսաչուսեթս)	1897 թ.	1905 թ. 1908- 1919 թթ.	
Պանդխտաց հայկական ժողովական եկեղեցի	Ֆրեզնո (Կալիֆոռնիա)		1897 թ. (1911 թ.) (1921 թ.)	
Դայ ճահատակաց ժողովական եկեղեցի	Դեյվըրբաուն (Փենսիլվանիա)	(1898 թ.)		1925 թ.
Ու. Շոբոքենի հայ երիցական եկեղեցի	Փերմոնզ (Նյու Զերսի)		1898 թ.	
Դայ ժողովական եկեղեցի	Ֆրեզնո (Կալիֆոռնիա)	1900 թ.		
Դայ ժողովական եկեղեցի	Չիկագօ (Իլինոյ)	1901 թ. (1911 թ.) 1916 թ.		
Առաջին հայ ժողովական եկեղեցի	Ֆաուլեր (Կալիֆոռնիա)	1903 թ.		
Դայ ավետարանական Գերսեմեն ժողովական եկեղեցի	Լոս Անջելես (Կալիֆոռնիա)	1905 թ.		
Միացյալ հայկական Գողգորայի ժողովական եկեղեցի	Թրոյ (Նյու Յորք)		1906 թ. 1916 թ.	1906 թ. 1916 թ.
Կիլիկիայի հայ ճահատակաց եկեղեցի	Բոստոն (Սասսաչուսեթս)	1907 թ.		
Դայկական Գերսեմենի ժողովական եկեղեցի	Լոս Անջելես (Կալիֆոռնիա)		1909 թ.	
Դայաստանյայց ավե- տարանական եկեղեցի	Ֆիլադելֆիա (Փենսիլվանիա)	1910 թ.		
Դայ երիցական եկեղեցի	Ռեյք Շոբոքեն (Նյու Զերսի)	1910 թ.		

Դայ ժողովական ծիթենյաց եկեղեցի	Փարիսը (Կալիֆոռնիա)	1911 թ.		
Արարատ հայ ժողովական եկեղեցի	Սալեմ (Եյու Շեմփչիր)		1912 թ.	
Եղեմի առաջին հայ երիցական եկեղեցի	Եղեմ (Կալիֆոռնիա)	1912 թ.		
Դայ ժողովական եկեղեցի	Սաութթիլդ (Միչիգան)	1915 թ.		(1925 թ.)
Բերզլ հայ ավետարանական ժողովական եկեղեցի	Լոուրենս (Սասսախուտթեմ)	1916 թ.		
Դայ մարտիրոսաց եկեղեցի	Թինգգրուրգ (Կալիֆոռնիա)	1916 թ.		
Դայ ավետարանական եկեղեցի	Չիկագո (Իլլինոյ)	1917 թ.		
Դայ ժողովական եկեղեցի	Ռիվի (Կալիֆոռնիա)	1920 թ.		
Դայ ժողովական եկեղեցի	Ֆիլադելֆիա (Փենսիլվանիա)	1920 թ.		
Դայ ավետարանական եկեղեցի	Ֆրեզնոն (Կալիֆոռնիա)	1921 թ.		
Դայլընդ Փարքի հայ ժողովական եկեղեցի	Ղետրոյստ (Միչիգան)	1921 թ.		
Փասադենայի հայկական ժողովական (Կիլիկիա) եկեղեցի	Փասադենա (Կալիֆոռնիա)	1922 թ.		
Աստծոն եկեղեցի	Ֆրեզնոն (Կալիֆոռնիա)	1923 թ.		
Գողգորա հայ երիցական եկեղեցի	Եղեմ (Կալիֆոռնիա)	1923 թ.		
Դայկական Սասիս եկեղեցի	Լոս Անջելես (Կալիֆոռնիա)	1924 թ.		

ԱՊՅՈՒՍԱԿ ԽՎԻ

ԱՄՆ-Ի ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎՈԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԺՈՂՈՎԱԿԱՆ)

Անվանում	Դիմնադրում	
	Տարեթիվ	Վայր
Ավետարանական առաքելություն		Սան Ֆրանցիսկո (Կալիֆորնիա)
Ժողովական առաքելություն		Թըրլաք (Կալիֆորնիա)
***	1889 թ.	Փասադենա (Կալիֆորնիա)
***	1892 թ.	Լոուրենս (Մասսաչուսեթս)
***	1896 թ.	Լոուել (Մասսաչուսեթս)
***	1896 թ.	Ուայթինսվիլ (Մասսաչուսեթս)
***	1897 թ.	Նյուբրուկիորք (Մասսաչուսեթս)
***	1897 թ.	Նյու Ռեվըն (Կոնեկտիկուտ)
***	1897 թ.	Ուեյլ (Փենսիլվանիա)
***	1897 թ.	Ֆրանկլին (Մասսաչուսեթս)
***	1902 թ.	Նյու Բրիթըն (Կոնեկտիկուտ)
***	1902 թ.	Չիկագօն (Իլինոյ)
***	1906 թ.	Էսթ Ուոթերաուն (Մասսաչուսեթս)
Կիլիկիացիների առաքելություն	1907թ.	Բոստոն (Մասսաչուսեթս)
***	1908 թ.	Լիօն (Մասսաչուսեթս)

ԱՄՆ-Ի ԴԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԵՐԻՑԱԿԱՆ)		
Երիցական առաքելություն	1898 թ.	Ունաբ Ջոբրեն (Սյու Զերսի)
***	1898 թ.	Փեթերսոն (Սյու Զերսի)
***		Թոնսոնվիլ (Կոնեկտիկուտ)

ԱՊՅՈՒՍԱԿ ԽՎԼ

ԱՄՆ-Ի ԴԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
Անվանում	Դիմնադրում	
	Տարեթիվ	Վայր
«Հոգևորական» եկեղեցի	1893 թ.	Լոս Անջելես (Կալիֆոռնիա)
Լման ավետարանական եկեղեցի Աստծոն	1912 թ.	
Դայ ավետարանական ոչ հարանվանական եկեղեցի	1921 թ.	Ֆրեզնոն (Կալիֆոռնիա)

ԱՊՅՈՒՍԱԿ ԽՎԻ

ԱՄՆ-Ի ԴԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ		
Անվանում	Դիմնադրում	
	Տարեթիվ	Վայր
Ս. Խաչ Ջոնեական կաթողիկէ հայկական եկեղեցի	1921 թ.	Քենբրիջ (Մասսաչուսեթս)
Ս. Նշանի եկեղեցի	1923 թ.	Ուինվուդ (Փենսիլվանիա)

Բ. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԾ ՈՒ ՏԱՐԱՆՆԵՐԸ

ԱՄ-ի հայության համախմբնան, նրա ազգային հոգևոր ու մշակութային կյանքի զարգացման և հայապահպանման գործում հսկայական դեր է կատարել տեղի հայ մամուլը, որը, սկզբնավորվելով Նոր Երկրութ հայության թվի ստվարացմանը զուգընթաց, կարևոր խթան է հանդիսացել ամերիկահայ գաղութի կազմավորման և նրա ազգային մտածողության ու սկզբունքների զարգացման համար:

Դիմնադրվելով ինչպես անհատ հայերի, այնպես էլ ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, միությունների և նկերությունների նախաձեռնությամբ, ամերիկահայ մամուլը գոյատևել է գլխավորապես բարերարների ու բաժանորդների նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ: Դրանց դադարեցումը, ինչպես նաև ներկուսակցական վեճերն ու կոիվները ճակատագրական վախճան են ունեցել նաև հայ մամուլի հետագա գոյության համար:

Ամերիկահայ առաջին պարբերական մամուլի հիմնադրման պատմիվ պատկանում է 1888 թ. ուսանելու նպատակով ԱՄՆ մեկնաժ տիգրանակերտցի Դայկակ Էկինյանին, որը սեփական թերթ հրատարակելու մտադրությամբ Վենետիկի Միիթքարյան միաբանությունից Ամերիկա էր փոխադրել հայտառ տպարան: ³⁶ 1888 թ. Զերսի Սիթիում «Ամերիկահայ լրագրության հայր» Յ. Էկինյանի ջանքերով լույս է տեսել ԱՄՆ-ում հայերեն առաջին թերթը ամենամյա «Արեգակը», որը, հակառակ իր կարճատև գոյության (ընդամենը 12 համար), արժանի տեղ է գրավում գաղութի մամուլի պատմության մեջ (ամերիկաբնակ 36 էրնիկ խմբերի կողմից հրատարակված առաջին պարբերականների շարքում «Արեգակը» 26-րդն էր՝ 1739 թ. լույս տեսաժ առաջին գերմաններեն լրագրից հետո): ³⁷ Յ. Էկինյանի հրատարակչական բեղուն գործունեության շնորհիվ հրատարակվել էին մի շարք այլ թերթեր ևս «Սուրիհանդակ» շաբաթաթերթը (1889-1890 թթ., Զերսի Սիթի), ³⁸ Երկշաբթարական «Ազատութիւնը» (1890-1892 թթ., Նյու Յորք), «Տիգրիսը» (1897-1899 թթ., Նյու Յորք), «Քաղաքացին» (1902-1909 թթ., Ֆրեզոն), «Նոր կեանքը» (1912 թ., Ֆրեզոն):

Ավելի երկար էր գոյատևել թիշկ ու ազգային գործիչ ակնեցի Մ. Սմբատ Գարիելյանի հրատարակած «Դայք» Երկամյա պարբերականը (1891-1898 թթ., Նյու Յորք): Տարբեր ժամանակահատվածներում ազգաւոր ու նվիրյալ մի խումբ անհատ հայերի ջանքերով ԱՄՆ-ում սկսել են լույս տեսնել բազմաթիվ այլ պարբերականներ ևս, որոնք, անկախ իրենց փոքրաթիվության ու կարճատևության, զգալի ներդրում են ունեցել ամերիկահայ մտավոր կյանքի զարգացման գործում, մանավանդ որ գոյատևել են դիմակայելով թե՛ ֆինանսական և թե՛ խմբագրական լուրջ դժվարություններ: Դրանք էին «Արմենիան» (1890-ական թվ., Բոստոն), «Դայոց աշխարհը» (1895 թ., Նյու Յորք), «Կայծակը» (1895-1896 թթ., Լինն), «Եփրատը» (1897 թ., Ուստր-Նյու Յորք) և այլն: Առաջնեկ այս թերթերից մի քանիսը, տպագրական միջոցների ու հնարավորությունների բացակայության պատճառով լույս են տեսել նաև խմբատիպ, ծեռագիր վիճակում: Նետագայում, տեխնիկական բարվոր պայմանների ի հայտ գալով, ամերիկահայ մամուլը ընդունել է իր ժամանակի պարբերականներին հատուկ ծև ու համապատասխան բովանդակություն: ³⁹ (Տես Այսուսակ ԽIX ^{39w}):

ԱԱՆ-ում հայ քաղաքական կուսակցությունների ի հայտ գալու հետ մեկտեղ ծնունդ են առել բազմաթիվ նոր պարբերականներ կուսակցական պաշտոնաթերթեր, որոնք, ի հակառակություն առանձին անհատների կողմից հրատարակվածների, գտնվել են իրենց կուսակցությունների մշտական հովանավորության ներքո, ստացել ֆինանսական աջակցություն, ունեցել արիեստավարժ խմբագիրներ, ինչպես նաև երկրի ներսում ու դրսում գործող գգալի թվով թղթակիցներ, որոնց լավ կազմակերպված գործունեությամբ ու բերդի տպաքանակի տարածման համակարգով էլ պայմանավորվել է կուսակցական մամուլի հեղինակությունն ու ժողովրդականությունը, ապահովվել երկարակեցությունը:

Ամերիկահայ կուսակցական մամուլի առաջնեկներն էին Վերակազմայլ հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ «Զայն հայրենեացը» (հիմնադիր՝ Գ. Չիբյան, 1899-1907 թթ., Նյու Յորք, Ռւստոն) և Դայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության «Դայրենիքը» (հիմնադիր՝ Պ. Չարչաֆճյան, 1899-մինչև օրս, Նյու Յորք, Բուստոն): 1922 թվականից Բուստոնում սկսել է լույս տեսնել նաև «Դայրենիք» ամսագիրը (հիմնադիր՝ Ռ. Դարբինյան): Ննչակյան կուսակցության պառակտումով Դին հընչակյան ամերիկահայ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության պաշտոնաթերթն է դարձել «Երիտասարդ Դայաստանը» (հիմնադիր՝ Ս. Սապահ-Գյուլյան, 1903 թվականից, Բուստոն, Նյու Յորք, Չիկագո, Փրովիդենս, Նորիջ՝ Նյու Յորք), իսկ Վերակազմայլ հնչակյան կուսակցությանը՝ «Ննչակը» (1890-ական թվականների սկիզբ, 1904 թ., 1907 թ., Ուորքեսթեր, Բուստոն): Վերջինս հանդիսացել է ԱԱՆ-ում լույս տեսնող հնչակյան առաջին պարբերաթերթը, որի համարների գերակշիռ մասը տպագրվել է Եվրոպայի տարբեր քաղաքներում: Մրանց հաջորդել են Սահմանադրական-դեմոկրատական կուսակցության «Ազգը» (հիմնադիր՝ Ս. Պարեկյան, 1907-1921 թթ., Բուստոն) և Վերակազմայլ հնչակյան կուսակցության «Պահակը» (հիմնադիր՝ Դրաչ Երվանդ, 1911-1921 թթ., Փրովիդենս, Բուստոն), որոնք շուտով՝ Դայ դեմոկրատական-լիբերալ կուսակցության ի հայտ գալով, միավորվել են՝ ստեղծելով «Ազգ-Պահակը» (հիմնադիրներ՝ Ե. Սեսիայան, Ա. Նազար, 1921-1922 թթ., Բուստոն), ապա՝ «Պայքարը» (1923 թ. մինչև օրս, Բուստոն, Ուորթերթառուն): Երկրի արևմտյան տարածաշրջանում ԴՅԴ կուսակցության ջանքերով լույս է տեսնել «Ասպարեզ» (1908 թ. մինչև օրս, Ֆրեզնո, Լոս Անջելես), իսկ Դայ դեմոկրատական-լիբերալ, հետևագայում Ռամկավար-ազատական կուսակցության կողմից «Նոր Կեանք» (1914-1921 թթ., Ֆրեզնո), ապա՝ «Արօր» (1919-1921 թթ., Ֆրեզնո) պաշտոնաթերթերը, որոնք շուտով՝ միավորվել են «Նոր Կեանք-Արօր» (1921-1922 թթ., Ֆրեզնո), ապա՝ Վերանվանվել «Նոր օր» (1922 թ. մինչև օրս, Ֆրեզնո, Լոս Անջելես) պարբերականների:

Ամերիկահայ կուսակցական մամուլի շարքում կային նաև բանվորական, կոմունիստական բազմաթիվ պարբերականներ ևս, որոնք հանդիսացել են ԱԱՆ-ի բանվորական կուսակցության հայկական հատվածի պաշտոնաթերթեր: Դրանց թվում էին «Գործատորը» (1916-1921 թթ., 1921-1926 թթ., Դետրոյտ, Նյու Յորք), «Նոր հոսանքը» (1921 թ., Նյու Յորք), «Աշխատաւորը» (1921-1922 թթ., Նյու Յորք), «Բանւորը» (1922-1938 թթ., Նյու Յորք), «Գործատորը» (1924 թ., Նյու Յորք), «Պրոլետարը» (1924-1929 թթ., Նյու Յորք), «Նոր աշխարհը» (1924-1930 թթ., Նյու Յորք): Ամերիկահայ

չեզոքների Ոչ կուսակցականների, միությունը հրատարակել է «Արշալոյ» (1920-1922 թ., Նյու Յորք), Դայ ազատական միությունը «Ազատ կարծիք» (1922 թ., Նյու Յորք) պարբերականները:

Պաշտոնաթերթերից բացի, ամերիկահայ ազգային կուսակցությունների կողմից լույս են տեսել ազգային, գրական, քաղաքական, բարոյագիտական բնույթի բազմաթիվ այլ պարբերականներ ևս: Այսպես Վերակազմյալ հնչայիան կուսակցությունը տպագրել է «Արագած» (1911 թ., Նյու Յորք), Սոցիալ-դեմոկրատական հնչայիան կուսակցությունը «Զայն» (1907-1908 թթ., Բրայտըն), «Սոփա» (1915 թ., Իսթ Ուոթերթառն), «Վերածնութիւն» (1918-1920 թթ., Բուստոն, Նյու Յորք), «Արդարութեան ձայն» (1919-1920 թթ., Բուստոն), «Կուան» (1919-1920 թթ., Չիկագո, Բուստոն), «Սոցիալիստ Դայաստան» (1921 թ., Չիկագո, Նյու Յորք, Բուստոն), «Սաղայէլ» (1921-1929 թթ., Նյու Յորք, Ուեսթ Հորորեն), Ռամկավար-ազատական կուսակցությունը «Նոր Կեանք-Սիսուան» (1920-1921 թթ., Ֆրեզնո) պարբերականները:

Միաժամանակ, ամերիկահայ կուսակցական պարբերականներն ազգային և այլ հրադարձությունների հորեայանական առիթներով հրատարակել են պարբերաբար կամ ամենամյա լույս տեսնող բացառիկ համարներ:

Ամերիկահայ թերթերը, որոնք, ԱՄՆ-ից բացի, լեզվական պարբերականներով տարածվում էին Թուրքիայում, Ռուսաստանում, ինչպես նաև Եվրոպական ու հայաշատ այլ երկրներում, իրենց էջերում գլխավոր տեղ էին հատկացնում ազգային խնդիրներին, անդրադառնում օտար բոնակալների գերիշխանության տակ հեծող հայրենի հեռավոր ժողովորդի թշվառ վիճակին ու նրա ազատագրման ուղիներին՝ շատ հաճախ նույնիսկ տուրք տալով կուսակցական անհարկի վիճաբանությունների: Թերթերում տպագրվել են հայոց պատմությանը, գրականությանը, լեզվին ու մշակույթին առնչվող հոդվածներ, հայ և օտար գրականության ննուշներ, ամերիկահայ գաղքականների կյանքին ու կենցաղին, նոր երկրի պայմաններին նրանց ընտելացմանն ու հարազատ երկրին մշտապես սատարելու կոչ անող նյութեր և այլն: Ընդ որում, երկրի արևմտակողմի հայ կուսակցական մամուլը, ենելով այդտեղ հայության աստիճանաբար հիմնավորվելու անառարկելի փաստից, ավելի հակած էր նրանց համար լուսաբանել ամերիկան ապրելակերպին, լեզվին, կարգ ու կանոնին, հպատակությանն ու կյանքի բարքերին հարմարվելու հետ կապված հարցերը, մինչդեռ, արևելակողմի մանուկը մշտարբուն էր պահում ամերիկահայության հայրենիք վերադառնալու փափագը՝ ԱՄՆ-ը համարելով հայ պանդուխտների ժամանակավոր կայան:

Ամերիկահայերն ունեին նաև իրենց կրոնական մամուլը: Առաջինը Ամերիկան ավետարանչական ընկերակցության և Ամերիկայում հայ ավետարանական եկեղեցու աջակցությամբ լույս տեսած «Կոչնակ» շաբաթթերըն էր (1900-1919 թթ., Բուստոն, Նյու Յորք), որը հետագայում հրատարակվել է «Կոչնակ Դայաստանի» (1919-1920 թթ., Նյու Յորք), «Դայաստանի կոչնակ» (1920 թվականից, Նյու Յորք) անուններով: Ավելի ուշ համամման պարբերական է լույս տեսել նաև երկրի արևմտյան ափին «Բեմ» վերտառությանը (1915-1917 թթ., Ֆրեզնո): Այդ հրատարակություններում ազգային ու գաղութահայ խնդիրները գերիշխող դիրք են գրավել կրոնականի նկատմամբ և լուսա-

բանվել են ամերիկյան ավետարանական գաղափարաբանության տեսակետից նպաստելով երկրի հայության արագ ամերիկացմանը: Միաժամանակ, ջանքեր չեն խնայվել հասարակության ու բարձրաստիճան շրջաններին հայ մշակույթն ու Հայկական հարցը ներկայացնելու խնդրում: Ամերիկահայ ավետարանական պարբերականներից էին նաև «Սբ. Գիրք ուսանողացը» (1912-1920 թթ., Բրուքլին), «Դայ աւետարանական եկեղեցին» (1912-1921 թթ., Նյու Յորք), «Ժողովրդին բեմը» (1913-1915 թթ., Բրուքլին), «Զանասերը» (1915-1921 թթ., 1922-1923 թթ., Ֆրեզնո, Նյու Յորք), «Աւետարանին փողը» (1919 թ., Դետրոյտ), «Եկեղեցին բերթիկը» (1919 թ., Նյու Յորք), «Փրկութիւնը» (1920 թվականից, Ֆրեզնո), «Դիտարանը» (1921-1922 թթ., Բրուքլին), «Դիտարանը և քրիստոնեան մունետիկը» («Դիտարանը և Քրիստոնի ներկայութիւնը») (1921 թվականից, Բրայտըն, Նյու Յորք), «Ամերիկայի հայ աւետարանական միութիւնը» (1923 թվականից, Ֆրայտըն, Նյու Յորք), «Լրատուն» (1923-1944 թթ., Նյու Յորք), «Դայ աւետարանական ընկերակցութիւնն Ամերիկայի» (1924-1926 թթ., Նյու Յորք), «Եռամսեայ լրատուն» (1924-1926 թթ., Նյու Յորք) և այլն:

Ամերիկահայ առաքելական եկեղեցու գաղափարներն արտահայտող պարբերականները, գերծ լինելով ավետարանական եկեղեցու ունեցած ամերիկյան հովանավորությունից, սկսել են լուս տեսնել համեմատաբար ավելի ուշ և գոյատել առավել կարծ: ԱՄՆ-ի հայ առաքելական եկեղեցին հրատարակել է «Դեեակ Լուսաւորչի» (1909-1910 թթ., Բրոդիո Քարինո), «Անսաքերթիկ» (1912 թվականից, Նյու Յորք), «Եկեղեցի Դայաստանեայց» (1916-1921 թթ., Նյու Յորք), «Լուսաւորիչ» (1916-1920 թթ., Դետրոյտ), «Էջմիածին» (1918-1919 թթ., Ֆրեզնո), «Շողակաթ» (1919-1923 թթ., Նյու Յորք), «Ծիածան» (1924 թ., 1924-1927 թթ., Սան Ֆրանցիսկո, Դետրոյտ) և այլ պարբերականները:

Ամերիկահայ նորանոր ընկերությունների, միությունների, կազմակերպությունների ի հայտ գալով երկրում սկզբնավորվել են նաև դրանց համապատասխան բազմաթիվ ու բազմաբնույթ պաշտոնաթերթ-պարբերականներ, որոնցից յուրաքանչյուրն իր էական ներդրումն է ունեցել ամերիկահայ կյանքի այս կամ այն ոլորտի զարգացման, ինչպես նաև հայրենի երկրի հետ կապն ամուր պահելու գործում: Այսպես Դայկական բարեգործական ընդհանուր միությունը հրատարակել է «Միութիւն» (1912 թվականից, Նյու Յորք), «Յուշարար» (1914-1916 թթ., 1922 թվականից, Բրուքլին, Նյու Յորք), «Յուշարար-Միութիւն» (1912 թվականից, Սեղըլ Բրուքլ պարբերականները: Ամերիկահայ հայրենակցական միություններից շատերը նույնպես ստեղծել են իրենց ուրուսն պաշտոնաթերթերը: Դրանցից էին ԱՄՆ-ի Տիգրանակերտոցինների միության կողմից հիմնված «Տիգրիս» (1917-1935 թթ., Նյու Յորք), «Նոր Տիգրանակերտ» (1917-1940 թթ., Նյու Յորք), Սեբաստիայի վերաշինաց միության «Ալիս» (1920-1935 թթ., Նյու Յորք), Չմշկածագի պատամեկան միության համանուն «Պատամեկան միութիւն» (1923 թ., Լոուրենս) և այլ պարբերականները: Դայ և ամերիկացի մտավորականների համատեղ ջանքերի շնորհիվ լուս են տեսել «Արարատ» (1891-1892 թթ., 1902 թ., Նյու Յորք), «Ամերիգա» (1916 թ., Դոբրեն), Ամերիկայի հայ հրատարակչական ընկերության կողմից՝ «Արաքս» (1905-1906 թթ., 1907 թ., Բրուքլին, Նյու Յորք), Դայ ճարտարագետների միության կողմից՝ «Դայ ճարտարապետների միութեան տեղեկագիր»

(1920-1921 թթ., Նյու Յորք), «Տեղեկագիր» (1920 թ., Նյու Յորք), Դայ լեգենդական միության կողմից Արարայի հերոսական ճակատամարտի հինգերորդ տարելիցի առթիվ «Արարա» (1923 թ., Բոստոն) և բազմաթիվ այլ պարբերականները:

Գաղութահայ, ազգային, գրական, գիտական, իմաստափական, հասարակական, քաղաքական կյանքին առնչվող բազմաբնույթ հարցեր էին շոշափվում «Լոյս» (1901-1907 թթ., 1907-1908 թթ., Քենտրոն, Բոստոն), «Գրասէր» (1904 թ., Ուջարերի), «Արծիւ» (1905-1906 թթ., 1908 թ., Բոստոն), «Շանթ» (1910 թ., 1918 թ., Բոստոն), «Ամերիկա» (1911 թ., Բոստոն), «Ամերիկահայ տարեցոյց» (1912-1913 թթ., Բոստոն), «Պայքար» (1914 թ., Ֆիլադելֆիա), «Ազատ» (1918-1919 թթ., Նյու Յորք), «Տարոս» (1918-1919 թթ., Բոստոն), «Սիսուան» (1918-1920 թթ., Ֆրեզնո), «Փիլիկ» (1918-1920 թթ., Բոստոն), «Կոռումկ» (1919-1927 թթ., Ֆիլադելֆիա), «Փարոս» (1922 թ., Ֆիլադելֆիա), «Նաւասարդ» (1922 թ., Նյու Յորք), «Հորիզոն» (1923-1924 թթ., Ֆիլադելֆիա), «Ամերիկահայ հանրագիտակ» (1925-1927 թթ., Բոստոն) և այլ պարբերականներում:

Տնտեսական ու առևտրական ուղղվածություն ունեին «Յուշարար հայ այգեպաններու» (1921 թ., Ֆրեզնո), «Արեւուր» (1922-1925 թթ., Նյու Յորք) և այլ պարբերականները:

Առողջապահության ու բժշկության խնդիրներ էին քննարկվում «Բուժակ» (1917-1919 թթ., 1900-1968 թթ., Փրովիդենս-Բոստոն, Նյու Յորք), «Դայ սիրտ» (1923-1932 թթ., Ֆիլադելֆիա), «Դայ բժիշկ» (1924-1926 թթ., Բոստոն) և նման այլ պարբերականներում:

Ամերիկահայ երեխաների, երիտասարդության ու նրանց ուսումնական կյանքի հրատապ խնդիրներն էին արծարծվում «Ուսանող» (1909 թ.), «Նախընծայ» (1913 թ., Նյու Յորք), «Նոր սերունդին պատկերազարդ տարեցոյցը» (1916 թ., Բոստոն), «Արի արանց» (1916 թ., Բոստոն), «Խուրձեր» (1921-1923 թթ.) և այլ պարբերականներում:

ԱՄՆ-ի հայերի շրջանում լայն տարածում ուներ նաև ազգային երգիծական մամուլը: ճանաչված պարբերականներից էին «Զուռնան» (1910-1911 թթ., Բոստոն), «Դայլայլիկը» (1910 թ., Բոստոն), «Ցախաւելը» (1915-1920 թթ., 1918-1920 թթ., Նյու Յորք, Բոստոն), «Չարլի Չափինը» (1916 թ., Փրովիդենս), «Դայելին» (1918 թ., Թրոյ), «Ալենապետը» (1919 թ., Չիկագո), «Կեմ-ո-Կոն» (1920 թ., Նյու Յորք), «Ալետիսը» (1921 թ., Ֆրեզնո), «Ծիծաղը» (1921 թ., Ֆրեզնո), «Փորձանքը» (1922-1923 թթ., Դետրոյտ), «Զուարթապատումը» (1924 թ., Բոստոն) և այլն:

Ժամանակի ընթացքում Նոր Երկրում հայերի քանակական աճի հետևանքով հայալեցու մամուլի կողքին ամերիկահայ առաջավոր մի խումբ մտավորականների ջանքերով սկսել են լույս տեսնել օտար, ինչպես նաև օտարացող հայ հասարակայնությանը հայ կյանքին, մշակույթին, գրականությանը, պատմությանը, քաղաքական վիճակին ու Դայոց հարցին ծանոթացնելու կոչված մի շարք անգլիական պարբերականներ: Առաջին այդպիսի հրատարակություններից էր Վերակազմյալ հնչայշան կուսակցության և անձանք Արշակ Սահետեսյանի կողմից լույս ընծայված «Armenia»-ն (1904-1930 թթ., Բոստոն, Նյու Յորք), որին սիրահոժար աշխատակցել են նաև հայասեր շատ ամերիկացիներ (խմբ՝ Զուլիա Ուորդ Դոու): Թերթը դրական ընդունելություն և

լայն տարածում էր գտել ոչ միայն ամերիկյան, այլ նաև անգլիական բարձրաստիճան պաշտոնյաների ու հաճապատասխան նտավորական շրջաններում: Սակայն 1907 թ. Վերակազմյալ հնչակյան կուսակցության պառակտումով այն դադարել է գոյություն ունենալ, ապա՝ նորից վերակենդանացել Ա.Մահտեսյանի ջանքերով, որին հաջողվել է հրատարակել նախորդի անավարտ թողած ծրագրերը կյանքի կոչելու պատրաստ մի նոր պարբերական «The New Armenia»-ն (1915-1929 թթ., և յու Յորը): Սրան աշխատակցել են միջազգային հեղինակություն ունեցող այնպիսի անձինք, ինչպիսին էին Լորդ Բրայսը, Մորգանը, պրոֆ. Պ. Շարթին, Ռ. Վայգին, Զ. Ֆերարդը, Շ. Մորգենթաուն, Կիպինզը, Դիքսոնը և այլոք:

Դայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը ևս ԱՄՆ-ում ունեցել է իր անգլիալեզու մամուլը՝ հրատարակելով «Asbarez» (1908 թվականից, Գլենդեյլ), «Hairenik Monthly» (1922 թ., 1934 թվականից, Բոստոն) պաշտոնաթերթը:

Ազգային, հասարակական, քաղաքական, գրական, մշակութային, համայնական ու այլ հարցեր են արծարծվել «Armenian News» (1903-1904 թթ., Չիգուել), «Armenian Observer» (1910 թ. մինչև օրս, Լու Անժելես, Չոլիվուդ), «The Oriental World» (1913-1914 թթ., և յու Յորը) պարբերականներում:

Ամերիկյան հասարակայնության ու դեկավար շրջաններին Դայ դատի հետ առնչելուն, նրանցից բարոյական, քաղաքական ու նյութական աջակցություն ակնկալելուն էին ուղղված Դայ ազգային միության «The Armenian Herald» (1917-1919 թթ., Բոստոն) և Դայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի «Information Bureau» (1919-1920 թթ., և յու Յորը) պարբերականները:

Կրոնական անգլիալեզու մամուլի շարքում աչքի էին ընկնում ամերիկահայ ավետարանական եկեղեցու հրատարակությունները: Առաջին այդպիսի պարբերականներից էր և յու Յորը Դայ ավետարանական եկեղեցու տեղեկագիրը «The Armenian Evangelical Church of N.Y. Bulletin»-ը (1912 թվականից, և յու Յորը):

ԱՄՆ-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության անգլիալեզու հրատարակություններից էին «Hooshgar»-ը (1914 թվականից, Սեռըլ Բրուք), «Armenian General Benevolent Union Bulletin»-ը (1921 թվականից, Յունյուն Սիթի): Ամերիկահայ ուսանողական միությունը նույնպես ուներ իր անգլիալեզու պաշտոնաթերթը «The Armenian Student»-ը (1919 թ., և յու Յորը):

ԱՄՆ-ում հաստատված կիլիկիայ թրքախոս հատվածը ևս ունեցել է իր պարբերական մամուլը: Այդտեղ նրանց համար հայերենով և հայատառ թուրքերենով լույս են տեսել «Կիլիկիա» (1916 թ., 1917-1919 թթ., և յու Յորը), ինչպես նաև միայն հայատառ թուրքերենով «Կիլիկիա Սալնամէսի» (1918 թ., և յու Յորը), «Րահնիւմա» (1919-1933 թթ., և յու Յորը) բազմաբնույթ պարբերականները:

ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում հայ մամուլի ի հայտ գալով սկզբնավորվել են ամերիկահայ առաջին տպարանները, ուր, պարբերականներից բացի, հրատարակել են գաղութահայ բազմաբնույթ գրականություն: Այսպես, Զերսի Սիթիում գործել են «Արեգակ», «Դ. Էկինեան», և յու Յորում՝ «Դ. Էկինեան», «Կոչնակ», «Արմենիա», «Երիտասարդ Հայաստան», «Արարատեան», «Մ. Ա. Գարիելեան», «Արաքս», «Էլմաս Սաթին», «Լրաբեր», «Դայրենիք», ««Դայրենիք» լրագրի», Բոստոնում՝ ««Դայրենիք»

լրագրի», «Զայն հայրենեաց», ««Ազգ» լրագրի», «Ատլանտեան», «Կրան», ««Երիտասարդ Հայաստան» լրագրի», ««Պահակ» լրագրի», «Փրես», «Ծիրակ», «Հանք», «Թումանեան եղբայրներ», «Կիլիկիա», ««Պայքար» լրագրի», Ֆրեզնոյում «Քաղաքացի», «Ասպարեզ», «Փրկութիւն», «Սոր օր», Փրովինիանում «Պահակ», Չիկագոյում «Երիտասարդ Հայաստան», Կալիֆորնիայում «Ա.Տումանեան», Ֆիլադելֆիայում «Միաժինեան եղբայրներ», Ղետրոյտում «Ծինարար», Ուոքսբերիում «Փիլիպոսեան և Տիրանեան», Ռեյմինում «Երիտասարդ Հայաստան» տպարանները և այլն:⁴⁴

Այսպիսով, ԱՄՆ-ում հայ մամուլի սկզբնավորումն ու ծավալումը, դրա հետ մեկտեղ նաև տպագրության զարգացումը շրջադարձային կարևոր նշանակություն են ունեցել գաղութի մտավոր կյանքի կազմակերպման ու առաջընթացի համար:

ԱՊՅՈՒԽԱԿ ԽXIX

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ (1888-1924 թթ.)

Անվանում	Դրատարակության տարեթիվ, վայր	Գաղափարական պատկանելություն, իիմնադիր-հրատարակիչ, խմբագիր
ԱԶԱՏ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍՈՒՄ		
Արեգակ	1888 թ., Տերսի Սիրի	Դ.Էկինյան
Սուրհանդակ	1889-1890 թթ., Տերսի Սիրի	***
Ազատութիւն	1890-1892 թթ., Նյու Յորք	***
Տիգրիս	1897-1899 թթ., Նյու Յորք	***
Քաղաքացի	1902-1909 թթ., Ֆրեզն	***
Նոր կեանք	1912 թ., Ֆրեզն	***
Արմենիա	1890-ական թվ., Բուստոն	Մ.Ս.Գաբրիելյան

Դայք	1891-1898 թթ., Նյու Յորք	
Դայոց աշխարհ	1895 թ., Նյու Յորք	
Կայժակ	1895-1896 թթ., Լինն	
Եփրատ	1897 թ., Ուստր-Նյու Յորք	Ս.Շաղալյան

ԿՈՒՍԱԿՑԱՎԱՎԱԾ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԵՐ

Դնչակ	1890-ական թվ. սկիզբ, 1904 թ., 1907 թ., Ուորքեսթեր, Բոստոն	Վերակազմյալ հնչակյան կուսակցություն
Զայն հայրենեաց	1899-1907 թթ., Նյու Յորք, Ուստր, Բոստոն	*** Գ.Չիբյան
Պահակ	1911-1921 թթ., Փրովիդենս, Բոստոն	*** Դ.Երվանդ
Դայրենիք	1899 թ. մինչև օրս, Նյու Յորք, Բոստոն	Դայ հեղափոխական դաշնակցություն կուս., Պ.Չարշաֆճյան
Ասպարեզ	1908 թ. մինչև օրս, Ֆրեզնո, Լոս Անջելես	***
Դայրենիք ամսագիր	1922 թվականից, Բոստոն	*** Ռ.Դարբինյան
Երիտասարդ Դայաստան	1903 թվականից, Բոստոն, Նյու Յորք, Չիկագո, Փրովիդենս, Նյու Յորք	Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուս., Ս.Սապահ-Գյուլյան
Ազգ	1907-1921 թթ., Բոստոն	Սահմանադրական- դեմոկրատական կուս., Ս.Պարթևյան
Նոր կեանք	1914-1921 թթ., Ֆրեզնո	Դայ դեմոկրատական- լիբերալ կուս.

Արօր	1919-1921 թթ., Ֆրեզն	***
Ազգ-Պահակ	1921-1922 թթ., Բուստոն	***
Նոր կեանք-Արօր	1921-1922 թթ., Ֆրեզն	Ե.Մեսիայան, Ա.Նազար Ռամկավար-Ազատական կուս.
Նոր օր	1922 թ. մինչև օրս, Ֆրեզն, Լու Անջելես	***
Պայքար	1923 թ. մինչև օրս. Բուստոն, Ուոթերֆաուն	***
Գործաւոր	1916-1921 թթ., 1921-1926 թթ., Ղետրոյստ, Նյու Յորք	ԱՄՆ-ի բանվորական կուս. հայկական հատված
Նոր հոսանք	1921 թ., Նյու Յորք	***
Աշխատաւոր	1921-1922 թթ., Նյու Յորք	***
Բանւոր	1922-1938 թթ., Նյու Յորք	***
Գործաւոր	1924 թ., Նյու Յորք	***
Պրոլետար	1924-1929 թթ., Նյու Յորք	***
Նոր աշխարհ	1924-1930 թթ., Նյու Յորք	***
Արշալոյս	1920-1922 թթ., Նյու Յորք	Ամերիկահայ չեղողների (ոչ կուսակցականներ) միություն
Ազատ կարծիք	1922 թ., Նյու Յորք	Դայ ազատական միություն
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂՎԱՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅՑԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԿՈԽՍԱԿՑԱԿԱՆ ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Զայն	1907-1908 թթ., Բրայտոն	Սոցիալ-դեմոկրատական կուս.

Սովհա	1915 թ., Իսր Ուորերքառուն	***
Վերածնութիւն	1918-1920 թթ., Բոստոն, Նյու Յորք	***
Արդարութեան ձայն	1919-1920 թթ., Բոստոն	***
Կոամ	1919-1920 թթ., Չիկագո, Բոստոն	***
Սոցիալիստ Դայաստան	1921 թ., Չիկագո, Նյու Յորք, Բոստոն	***
Սաղայէլ	1921-1929 թթ., Նյու Յորք, Ուեսթ Հորորեն	***
Արագած	1911 թ., Նյու Յորք	Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն
Նոր կեաճը-Սիսուան	1920-1921 թթ., Ֆրեզնո	Ռամկավար-Ազատական կուսակցություն

ԿՐՈՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոչմակ	1900-1919 թթ., Բոստոն, Նյու Յորք	Ամերիկահայ ավետա- րանական Եկեղեցի, պատվ. Սանդիկյան, Յ.Ալեք
Մբ. Գիրք ուսանողաց	1912-1920 թթ., Բրուքլին	***
Դայ աւետարանական Եկեղեցի	1912-1921 թթ., Նյու Յորք	***
Ժողովրդին բեմը	1913-1915 թթ., Բրուքլին	***
Բեմ	1915-1917 թթ., Ֆրեզնո	***
Զանասէր	1915-1921 թթ., 1922-1923 թթ., Ֆրեզնո, Նյու Յորք	***

Աւետարանին փողը	1919 թ., Դետրոյտ	***
Եկեղեցին թերթիկը	1919 թ., Նյու Յորք	***
Կոչնակ Դայաստանի	1919-1920 թթ., Նյու Յորք	***
Դայաստանի կոչնակ	1920 թվականից, Նյու Յորք	***
Փրկութիւն	1920 թվականից, Ֆրեզն	***
Դիտարան	1921-1922 թթ., Բրուքլին	***
Դիտարանը և քրիստոնեութեան մունետիկը	1921 թվականից, Բրայտըն, Նյու Յորք	***
Ամերիկայի հայ աւետարանական միութիւն	1923 թվականից, Նյու Յորք	***
Լրատու	1923-1944 թթ., Նյու Յորք	***
Եռամսեայ լրատու	1924-1926 թթ., Նյու Յորք	***
Հայ աւետարանչական ընկերակցութիւն Ամերիկայի	1924-1926 թթ., Նյու Յորք	***
Դդեակ Լուսաւորչ	1909-1910 թթ., Բորջիո Քարինո	Ամերիկահայ առաքելական Եկեղեցի
Աճսաթերթիկ	1912 թվականից, Նյու Յորք	***
Լուսաւորիչ	1916-1920 թթ., Դետրոյտ	***
Եկեղեցի Դայաստանեայց	1916-1921 թթ., Նյու Յորք	***
Եջմիածին	1918-1919 թթ., Ֆրեզն	***

Ծողակաբ	1919-1923 թ., Նյու Յորք	***
Ծիածան	1924 թ., 1924-1927 թթ., Սան Ֆրանցիսկո, Դետրոյտ	***
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Արարատ	1891-1892 թթ., 1902 թ., Նյու Յորք	Դայ-ամերիկան մտավորականների միություն
Ամերիգա	1916 թ., Դոբրոց	***
Արաքս	1905-1906 թթ., 1907 թ., Բուստոն, Նյու Յորք	Ամերիկայի հայ հրատարակչական ընկերություն
Միութիւն	1912 թվականից, Նյու Յորք	Դայկական բարեգործական ընդհանուր միություն
Յուշարար-Միութիւն	1912 թվականից, Սեղըլ Բրուք	***
Յուշարար	1914-1916 թթ., 1922 թվականից, Բուստոն, Նյու Յորք	***
Տիգրիս	1917-1935 թթ., Նյու Յորք	Տիգրանակերտցիների միություն
Նոր Տիգրանակերտ	1917-1940 թթ., Նյու Յորք	***
Տեղեկագիր	1920 թ., Նյու Յորք	***
Դայ ճարտարապետների միութեան տեղեկագիր	1920-1921 թթ., Նյու Յորք	Դայ ճարտարագետների միություն
Ալիս	1920-1935 թ., Նյու Յորք	Սեբաստիայի վերաշինաց միություն

Արարա	1923 թ., Բուստոն	Դայ լեգենդական միություն
Պատամեկան միութիւն	1923 թ., Լոուրենս	Չմշկածագի պատամեկան միություն

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լոյս	1901-1907 թթ., 1907-1908 թթ., Քենբրիջ, Բուստոն	գաղութահայ, ազգային, գրական, գիտական, իմաստասիրական, հասարակական, քաղաքական
Գրասեր	1904 թ., Ուուսթերի	***
Արժիւ	1905-1906 թթ., 1908 թ., Բուստոն	***
Շանթ	1910 թ., 1918 թ., Բուստոն	***
Ամերիկա	1911 թ., Բուստոն	***
Ամերիկահայ տարեցոյց	1912-1913 թթ., Բուստոն	***
Պայքար	1914 թ., Ֆիլադելֆիա	***
Ազատ	1918-1919 թթ., Նյու Յորք	***
Տաւրոս	1918-1919 թթ., Բուստոն	***
Սիսուան	1918-1920 թթ., Ֆրեզն	***
Փիւնիկ	1918-1920 թթ., Բուստոն	***
Կռունկ	1919-1927 թթ., Ֆիլադելֆիա	***
Նաւասարդ	1922 թ., Նյու Յորք	***

Փարոս	1922 թ., Ֆիլադելֆիա	***
Հորիզոն	1923-1924 թթ., Ֆիլադելֆիա	***
Ամերիկահայ հանրագիտակ	1925-1927 թթ., Բուստոն	***
Ուսանող	1909 թ.,	մանկական, երիտասարդական, ուսումնական
Նախընծայ	1913 թ., Նյու Յորք	***
Արփ արանց	1916 թ., Բուստոն	***
Նոր սերունդին պատկերազարդ տարեցոյցը	1916 թ., Բուստոն	***
Խուրձեր	1921-1923 թթ.,	***
Դայլայլիկ	1910 թ., Բուստոն	Երգիծական
Չուռնա	1910-1911 թթ., Բուստոն	***
Ցախաւել	1915-1920 թթ., 1918-1920 թթ., Նյու Յորք, Բուստոն	***
Չարլի Չափիկն	1916 թ., Փրովիդենս	***
Յայելի	1918 թ., Թրոյ	***
Ատենապետ	1919 թ., Չիկագո	***
Կեն-ո-Կո	1920 թ., Նյու Յորք	***
Աւտիսիս	1921 թ., Ֆրեզն	***
Ծիծաղ	1921 թ., Ֆրեզն	***
Փորձանք	1922-1923 թթ., Դետրոյտ	***

Զուարքապատում Բուժակ	1924 թ., Բոստոն 1917-1919 թթ., 1900-1968 թթ., Փրովիդենս, Բոստոն, Նյու Յորք	*** առողջապահական, բժշկական
Դայ սիրտ Դայ բժիշկ	1923-1932 թթ., Ֆիլադելֆիա 1924-1926 թթ., Բոստոն	*** ***
Յուշարար հայ այգեպաններու	1921 թ., Ֆրեզն	տնտեսական, առևտրական
Առեւտուր	1922-1925 թթ., Նյու Յորք	***

ԱՆԳԼԻԿԱՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Armenian News	1903-1904 թթ., Չիգուել	ազգային, հասարակական, քաղաքական, գրական, մշակութային, համայնքային
Armenian Observer	1910 թ. մինչև օրս. Լու Անգլիես, Շոլիվուդ	***
The Oriental World	1913-1914 թթ., Նյու Յորք	***
Armenia	1904-1930 թթ., Բոստոն, Նյու Յորք	Վերակազմյալ հնչակյան կուսակցություն, Ա.Մահտեսյան
The New Armenia	1915-1929 թթ., Նյու Յորք	***
Azbarez	1908 թվականից, Գլենդոյլ	Դայ հեղափոխական դաշնակցություն կուս.
Hairenik Monthly	1922 թ., 1934 թվականից, Բոստոն	***
The Armenian Evangelical Church of N.Y. Bulletin	1912 թ., Նյու Յորք	Դայ ավետարանական եկեղեցի

Hoosharar	1914 թվականից, Սեղմ Բրուք	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
Armenian General Benevolent Union Bulletin	1921 թվականից, Յունյօն Սիթի	***
The Armenian Herald	1917-1919 թթ., Բոստոն	Դայ ազգային միություն, Ս.Սվագլը
The Armenian Student	1919 թ., Նյու Յորք	Ամերիկահայ ուսանողական միություն
Information Bureau	1919-1920 թթ., Նյու Յորք	Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՖԵՐԵԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կիլիկիա	1916 թ., 1917-1919 թթ., Նյու Յորք	
Կիլիկիա Սալճամէսի	1918 թ., Նյու Յորք	
Րահմիւմա	1919-1933 թթ., Նյու Յորք	

գ. ԿՐԹԱԿԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ամերիկահայության կյանքում կարևոր տեղ էր գրադեցնում նաև կրթության հարցը, այնպես որ նյութական միջոցներից սուր ընտանիքներն անգամ հոգում էին, որ իրենց երեխաները ստանային գոնե նախնական կրթություն: Պատահական չէ, որ օտարները հայերին բնութագրում էին որպես «Արևելքի մտավոր սերուցք», «Արևելքի անգլոսաքոններ», «Արևելքի ֆրանսիացիններ» և նման այլ արտահայտություններով:

Թեև հայերն ԱՄՆ էին եկել համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրներից (օսմանյան Թուրքիայի բնակչության 70%-ը և ցարական Ռուսաստանի 80%-ը անկարող էր կարդալ կամ գրել մայրենի լեզվով), այդուհանդեռձ, նրանց 83%-ը գրագետ էր կարող էր կարդալ և գրել առնվազն մեկ լեզվով:⁴¹ Այս առավելության շնորհիվ էլ նոր երկիր գաղթած տարբեր ազգերի շարքում հայերի անգրագիտության տոկոսն անհամենատ ցածր է եղել: Այսպես 1899-1910 թթ. ԱՄՆ մուտք գործած հայերից ընդամենը 23,9%-ն էր անկարող կարդալ կամ գրել իր մայրենի լեզվով: (Տե՛ս Աղյուսակը XXX^{41w}):

ԱՊՅՈՒՍԱԿ ՀՀՀ

**1899-1910 թթ. ԱՄ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ՏԱՐԵԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՎ ԴԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ՆՎ)**

պորտուգալացի	68,2
հոտալացի (հարավային)	53,9
սիրիացի	53,3
բուլղարացի	41,7
ռուս	38,4
լեհ	35,4
հույն	26,4
հրեա	26,0
հայ	23,9

Խսկ ԱՄ ժամանած ուսյալ հայերն ընդիանուր առօճանք իրենց կրթական մակարդակով, լեզուների իմացությամբ, գիտության ու արվեստի բնագավառներուն ունեցած ձեռքբերումներով զգալիորեն գերազանցել են համանման այլ ազգերի ներկայացուցիչներին, որոշ դեպքերում անգամ ամերիկացիներին (քացառություն էին կազմում սկանդինավյան երկրներից, Մեծ Բրիտանիայից և բրիտանական գաղութներից ժամանածները):⁴² (Տե՛ս Աղյուսակ ՀՀՀ^{42ա}):

ԱՊՅՈՒՍԱԿ ՀՀՀ

**1917 թ. ԱՄ-ի ԴԻՆ ԵՎ ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՌՈՒԹՅԱՎ ԴԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ՆՎ)**

Դին գաղթականներ	Նոր գաղթականներ
շոտլանդացի	99,5
անգլիացի	98,8
գերմանացի	98,0
դանիացի	97,6
իոլանդացի	95,8
պորտուգալացի	92,1
հույն	80,5
ռուս	74,5
սիրիացի	63,6
	47,5

Դարասկզբին ԱՄՆ-ի Գաղթականական հանձնախմբի կողմից երկորի արդյունաբերական և գյուղատնտեսական տարբեր արտադրություններում ներգրավված քազմագծ գաղթականների շրջանում անցկացված հետազոտությունները պարզել են որ բանվորության ու գյուղացիության շարքերում ևս բարձր է եղել հայերի գրագիտության տոկոսը: Այսպիսի արդյունաբերության տարբեր բնագավառներում գրադված և ավելացած երկու տասնյակ ազգեր ներառող 500.329 աշխատավորների կազմում կարդալ կարող է լինել հայերի 92,1%-ը, իսկ կարդալ և գրել 90,5%-ը:⁴³ (Տես Աղյուսակ XXXII՝^{43w}):

ԱղՅՈՒՍԱԿ XXXII

1917 թ. ԱՄՆ-ում ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ով)		
Ազգություն	Կարդալ	Կարդալ և գրել
հայ	92,1	90,5
հույն	80,5	79,5
բուլղարացի	78,1	76,8
սիրիացի	63,6	62,0

Կալիֆորնիայի նահանգի գյուղատնտեսության ասպարեզում կարդալ և գրել կարող է լինել հայերի 94,7%-ը:⁴⁴ (Տես Աղյուսակ XXXIII՝^{44w}):

ԱղՅՈՒՍԱԿ XXXIII

1917 թ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ԿԱՐԴԱԼ ԵՎ ԳՐԵԼ ԿԱՐԴՈՂ ԱՄՆ-Ի ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԱԳՐԱԿԱՎՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ով)	
Խուալացի (հյուսիսային)	95,0
հայ	94,7
հույն	91,9
գերմանացի	87,0
չինացի	84,6
խուալացի (հարավային)	66,3
մեքսիկացի	50,5
հնդիկ (արևելյան)	44,9
պորտուգալացի	41,4

Անհամեմատ բարձր էր նաև հայ կանանց գրագիտության մակարդակը: Այն կազմում էր 84,9%, մինչդեռ գերմանացիների մոտ՝ 75,3%, ճապոնացիների մոտ՝ 73,1%:⁴⁵

ԱՄՆ-ի հայ աշխատավորների շրջանում բարձր էր նաև անգլերենի իմացության մակարդակը: Օրինակ Կայիֆոննիայի գյուղատնտեսության բնագավառի հայերի մոտ այն կազմում էր 64,9%, իսկ կոչիկի արտադրության մեջ ներգրավվածների մոտ՝ 82,9%:⁴⁶ (Տես Աղյուսակներ XXXIV^{46a}, XXXV^{47b}):

ԱՊՅՈՒՍԱԿ ԽՍԽԻՎ

1917 թ. ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՐԱՎՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԱԾԳԼԵՐԵՆ ԽՈՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ով)

հայ	64,9
հույն	59,5
գերմանացի	43,5
իտալացի (իտարավային)	40,0
իտալացի (իյուսիսային)	22,6
մեքսիկացի	21,7

ԱՊՅՈՒՍԱԿ ԽՍԽՎ

1917 թ. ԱՄՆ-ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԿՈՇԿԻ ԱՐՏԱՊՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՇԽԱՏՈՂ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԳԼԵՐԵՆ ԽՈՍԵԼՈՒ
ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ (%-ով)

հայ	82,9
հույն	65,5
լեհ	50,6

Ընդհանուր առմամբ, ամերիկահայերի շրջանում հայերենի իմացության մակարդակը կազմել է ավելի քան 90%, անգլերենինը՝ շուրջ 60%:⁴⁷

Նոր երկրում հայերի գերակշիռ մասն ուներ երկեզվախոսակցական մակարդակ, ինչը կապված էր տեղի օտար (հանրային և գիշերային), ինչպես նաև հայկական դպրոցներում, ապա նաև ամերիկյան բարձրագույն կրթարաններում (կոլեջներ և համալսարաններ) նրանց ուսանելու փաստի հետ:

Դանրային դպրոցներ հաճախում էին մինչև 14 տարեկան երեխաները: Ամերի-

Կյան Գաղրականական հանձնախմբի կողմից 1908-1909 թթ. երկոր 37 քաղաքների հանրային դպրոցներում անցկացված ուսումնասիրությունների համաձայն (ցավոք հայաշատ Ու. Չոքորեն և Ֆրեզնո քաղաքները չեն ներառված), դրանցում սովորութիւն 1.031 հայ երեխաներ։⁴⁶ (Տես Աղյուսակ XXXVI՝ ^{46ա}):

ԱՂՅՈՒՍԱԿ XXXVI

1908-1909 թթ. ԱՄՆ-ի 37 քաղաքների ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՎԱԾ 1.031 ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ	
Ուսումնաբեր	197
Նյու Յորք	190
Փրովիդենս	153
Բոստոն	133
Ֆիլադելֆիա	74
Լինն	63
Նյու Բրիթըն	38
Լու Անջելես	37
Լոււել	29
Չելսի	28
Ջեյվորիիլ	20
Չիկագո	15
Յոնքերս	12
Նյու Արք	9
Սենթ Լուիս	9
Դետրոյտ	4
Նյու Բեդֆորդ	3
Սան Ֆրանցիսկո	3
Քիւվլենդ	3
Մանչեսթեր	2
Սիլվուքի	2
Ֆինցինատի	2

Փիթսբուրգ	2
Ֆոլ Ռիվը	2
Սքրենթըն	1

Մրանց զգալի մասն ուսանում էր մանկապարտեզից մինչև 8-րդ դասարանը ներառող տարրական դասարաններում, հատկապես՝ 1-3 դասարաններում։ Օրինակ նյու Յորքում տարրական դասարան էր հաճախում գաղթական հայ երեխաների 83%-ը, իսկ Ուորքեսթերում՝ 78%-ը։ Միաժամանակ, եթե իտալացի, պորտուգալացի, գերմանացի ուսու և այլազգի դպրոցականները, աշխատել սկսելու և այլ հանգամանքներից ելնելով շատ հաճախ իրենց թույլ էին տալիս վաղ հասակից հեռանալ դպրոցից, ապա հայերի մոտ ընդունված էր առավելագույնս օգտվել դպրոցի ընձեռած հնարավորություններից։ Այդ նն վկայում նաև հետևյալ փաստերը. 1917 թ. տվյալներով միայն Ֆրեզնոյի հանրային դպրոցների վերջին՝ բարձր դասարաններում ուսանողների 50%-ը հայեր էին, կամ 1923 թ. Լու Անջելեսի հանրային դպրոցներում սովորում էին շուրջ 350 հայեր։⁴⁶

Թեև հայ երեխաների շրջանում ևս բացառված չէին աշխատելու պատճառով դպրոցը թողնելու փաստերը, այդուհանդերձ, դրանք թիվ էին։ Փոխարենը, առկա էին դեպքեր, երբ ԱՄՆ ժամանած և նոր լեզվին անտեղյակ բազմաթիվ հայ երիտասարդներ, հաղթահարելով հոգեբանական խոչընդոտները, ստիպված էին լինում ուսանել իրենցից փոքր տարիքի երեխաների հետ։ Անգլերենին անտեղյակ գաղթական հայ երեխաների համար կային նաև ոչ աստիճանակարգված «շոգենավային դասարաններ», ինչպես նաև կիրակնօրյա դպրոցներ։ Օրինակ՝ դեռևս 1890-ական թվականներին Մոլտըն քաղաքի մկրտական եկեղեցում ամերիկացի բողոքական Քորին ընտանիքի ջանքերով բացվել էր կիրակնօրյա դպրոց նորեկ հայերին երկրի լեզվին, բարքերին ու սովորույթներին ծանոթացնելու և ընտելացնելու նպատակով։⁵⁰

Դանրային դպրոցներից բացի ԱՄՆ-ում գործել են նաև գիշերային դպրոցներ, որոնք հետևանք էին անցյալ դարի 80-ական թվականներից աշխարհի տարբեր վայրերից դեպի Խոր Երկիր սկիզբ առած գաղթականության մեջ հոսքի, երբ անգլերենին տիրապետելու ու ամերիկյան պատմության վերաբերյալ նախնական գիտելիքների իմացությունը հրատապ անհրաժեշտություն էր դարձել։ Այդ կապակցությանք մի շարք նահանգներում նույնիսկ ընդունվել էին համապատասխան որոշումներ։ Այսպես 1886 թ. Մասսաչուսեթսի նահանգի իշխանությունների ընդունած որոշման համաձայն, 10.000-ից ավելի բնակչի ունեցող քաղաքների այլազգի նորեկ գաղթական փոքրամասնությունները պարտավոր էին հաճախել գիշերային դպրոցներ անգլերեն գրել և կարդալ սովորելու նպատակով։ 1913 թ. Բե՛ նահանգում ազգային փոքրամասնության 16-21 տարեկան ներկայացուցիչը, ամերիկյան 4-րդ դասարանի կրթական մակարդակ (այսինքն՝ անգլերեն խոսել, գրել, կարդալ) չունենալու դեպքում, անկախ գրադմունքից, սեղից և ընտանեկան վիճակից պետք է հաճախել գիշերային դպրոց։ Տեղական համայնքի հրավասության ներքո գտնվող գիշերային դպրոցները հաճախ վերահսկվում

Էին հանրային դպրոցների կողմից և տեղավորված էին այդ նույն դպրոցներում:⁵¹ Ամգլերենին անտեղյակ և օրվա ընթացքում գործավորությամբ գրադարձ գաղտականների համար գիշերային դպրոցներն ասես պարզ լինեին. քանի որ դրանց շնորհիվ նրանք ձեռք էին բերում գործարանը թողնելու և հեռանկարային աշխատանք ընտրելու հնարավորություն: Գերբեռնված ու աղմկոտ դասարաններով գիշերային դպրոցները գործում էին ամեն երեկո: Այստեղ օրական 75 սենթով դասավանդում էին համենատաքար ցածր որակավորում ունեցող կամ սկսնակ ուսուցիչներ, որոնց մեջ կային նաև հայեր: Օրինակ՝ Ուորքեսթերի գիշերային դպրոցը միայն 1900 թ. ուներ երկու հայ ուսուցիչ, իսկ 1911 թ. այստեղ սովորում էր հայ բնակչության 20%-ը:⁵² Նոր երկրի հասարակական կյանքի մեջ ներառվելու, ինչպես նաև սեփական իմացալան մակարդակն ընդլայնելու գգտումը գիշերային դպրոցներ էր մղում ամգամ պատկառելի տարիք ունեցող և համապատի կրչված բազմաթիվ հայերի:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի հայաշատ տարբեր քաղաքներում, գլխավորակնես գաղտական հայերի երկրորդ սերնդի ներկայացուցիչների համար, հանրային ու գիշերային դպրոցների կողքին ստեղծվել են նաև մի շարք հայկական դպրոցներ ու ճեմարաններ: 1880-ական թվականների վերջին եվրոպեական Բարտեղ Վարդուկյանի կողմից Նյու Յորքում հիմնվել է ԱՄՆ-ի հայկական առաջին դպրոցը Վարդուկյան վարժարանը:⁵³ Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը հայ առաքելական և հայ ավետարանական եկեղեցիների ջանքերով հայկական դպրոցներ են բացվել ԱՄՆ-ի հայաշատ գրեթե բոլոր վայրերում: Դրանք եկեղեցու թեմական դպրոցներ չեն, այլ գործում էին տարբեր հարանվանությունների պատկանող հայ երեխանների համար: 1890-ական թվականների կեսերին Ուստրում Ս. վրդ. Տերունյանի կողմից իր հովվության ընթացքում հիմնվել էր ազգային կրթարան, որը գոյատևել էր ընդամենը երկու ամիս: 1899 թ. հայ ավետարանական քարոզիչ տիգրանակերտցի Պետրոս Թորոսյանի ջանքերով Ու. Չողոքենում բացվել էր տեղի հայկական առաջին դպրոցը, ուր առանց հարանվանական կամ ազգային խստրության հաճախում էին 5-16 տարեկան աշակերտներ հետևյալ դասակարգմանք:

Կրոնական ուղղություն	Տղա	Աղջիկ
Առաքելական	30	21
Ավետարանական	13	9
Կաթողիկե	2	
Ասորի	2	1

Դիշյալ դպրոցը գործել է յուրաքանչյուր երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթօթին, հանրային դպրոցներում դասընթացների ավարտից հետո:⁵⁴

Դետագայում հայկական դպրոցներ են հիմնվել երկրի հայաշատ այլ վայրերում (1905 թ. Նյու Յորք, 1908-1911 թ. Ֆրեզնո, 1912 թ. Եդեմ, 1914 թ. Նյու Յորք և այլուր):⁵⁵

1910 թ. փետրվարին Ռուբրոքենի Սր. Խաչ Եկեղեցում գումարված ամերիկահայ առաքելական Եկեղեցու երեսփոխանական ժողովի ատենագրության մեջ առկա տվյալներից պարզ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, ժամանակի հայշատ խոշոր քաղաքներից ընդամենը հինգում կային հայկական դպրոցներ: ⁵⁶ (Տե՛ս Այսուսակ 33XVII համար):

ԱՊՅՈՒՍԱԿ 33XVII

1910 թ. ԱՄՆ-ում գործող ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ			
Քաղաք	Դպրոցների քանակ	Երկսեռ աշակերտների քանակ	Հոգաբարձություն
Ֆրեզն	1	106	Ֆրեզնոյի հայկական համայնք
Ռոբրոք	1	60	Ռուբրոքենի Տիկնանց կրթասիրաց միություն
Նյու Յորք	1	50	Նյու Յորքի Հայկական միություն
Ֆառվեր	1	40	Ֆառվերի հայկական համայնք
Եդեմ	1	20	Եդեմի հայկական համայնք

Հայկական դպրոցները մշտապես գտնվել են հոգևորականների, ուսուցիչների, համայնքի անդամների և հատկապես՝ ազգային դպրոցների հիմնայումը հանդիսացող տիկնանց ամենօրյա հսկողության ու հոգածության ներքո: Կարիքավորները սովորում էին ձրի:⁵⁷

Հայկական դպրոցներում դասընթացները կազմակերպվում էին ամեն օր կեսօրից հետո ուշ ժամերին՝ հանրային դպրոցներում դասընթացների ավարտից հետո կամ կիրակի առավոտյան: Այստեղ, մայրենի լեզվին արդեն ընտանեկան միջավայրից ծանոթ երեխաններին ուսուցանում էին հայոց լեզու (գրել, կարդալ), հայոց և ընդհանուր պատմություն, կրոն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլ առարկաներ: Դասագրքերը մեծ մասամբ հայթարթվում էին դրսից: Դասարաններն աղքատիկ էին, գերբեռնված ու փոքր: Ուսումնական տարեվերջին, շնորհալի երեխանների մասնակցությամբ, կազմակերպվում էին հանդեսներ ու այլ միջոցառումներ, հանձնվում առաջդիմությունը խրախուսող պարզեներ:

Ամերիկահայ համայնքում գործող ծենարաններից առավել հայտնի էր 1917 թ. Նյու Յորքի ճահանգի Ռւեսթ-Սենթ Լեյք վայրում հիմնված Հայկազյան ծենարանը: Այն ուներ միջին և բարձր դասարաններ, ուր ԱՄՆ-ում ուսանած առաջնակարգ հայ մասնագետներն ամերիկյան կոլեջներին համազոր ակադեմիական դասընթացներ էին իրականացնում գիտական երկրագործության և գյուղատնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ խնդիր ունենալով ամերիկահայ երիտասարդությանը նա-

խապատրաստել երկրի բարձրագույն կրթարաններում իրենց գիտելիքները խորացնելու, ապա նաև դրանց հայրենիքի վերաշնորհյան գործին ծառայեցնելու:

Ազգային դպրոցների կողքին ամերիկահայության հայապահպանան գործության կարևոր դեր ու նշանակություն ունեին նաև երկրի հայաշատ տարբեր վայրերու հիմնված ընթերցասրահներն ու գրադարանները (1875 թ. Նյու Յորքի Արամյան ընկերության գրադարանն ու թանգարանը, 1889 թ. Ուստրի Կաճառ Դայկականը, 1905 թ. Քենոչայի Դայկական ընթերցասրահը և Ու. Հոբոքենի Դայկական գրադարանի միությունը, ավելի ուշ՝ Լոս Անջելեսի Քաղաքային գրադարանի հայկական մասնաճյուղը և այլն):⁵⁸

Դակառակ սուր միջոցներին, ամերիկյան հանրային դպրոցների հայ շրջանավարտների գգալի մասն իր կարևոր և անհրաժեշտ խնդիրն է համարել տեղի բարձրագույն կրթարաններում ուսումնառությունը շարունակելն ու ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելը: Եվ պատահական չէ, որ ամերիկյան հանրային դպրոցներում, կոլեջներում ու համալսարաններում ամերիկաբնակ գաղթական այլ ազգերի համեմատությամբ մեծ թիվ են կազմել նաև հայ ուսանողները: Դետագա տարիներին ԱՄՆ գաղթած հայության թվի ստվարացմանը զուգընթաց մեծացել է նաև ամերիկյան բարձրագույն կրթական հաստատություններում ներգրավված հայագիտ ուսանողների թիվը: Այսպես, եթե 1907 թ. ԱՄՆ-ում կային շուրջ 50 հայ ուսանողներ, ապա արդեռ 1916 թ. ԱՄՆ-ի 75 կոլեջներում և համալսարաններում սովորում էին շուրջ 234-250 հայեր:⁵⁹

Ամերիկահայ ուսանողական միության իրատարակած վիճակագրական տրվավագիր վիճակագրական միության հաջորդ տարրում՝ 1917 թ., ամերիկյան բարձրագույն կրթարաններում ուսանող հայերի ընդհանուր թիվը հասել էր շուրջ 300-ի, իսկ 1923 թ.՝ 500-ի:⁶⁰ Սրանք տվյալ ժամանակահատվածում ամերիկահայերի ընդհանուր թվի, ինչպես նաև ԱՄՆ-ում բնակվող տարբեր ազգային խմբերի համանձնան ցուցանիշների համեմատությամբ բարձր թվեր էին: (Տե՛ս Աղյուսակ XXXVIII ռազմական):

ԱՂՅՈՒՍԱԿ XXXVIII

1910 թ. ԱՄՆ-ի ԴԱՍՐԱՎԵԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ԿՈԼԵՋՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՍՍԱՍՐԱՎՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՍԱԾ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԵՍՎԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 37 ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԱՍԱՐ			
Ազգություն	Թվաքանակն ԱՄՆ-ում 1910 թ.	Դպրոց	Կոլեջ, համալսարան
Խորվաթ	335.543	497	1
հույն	216.962	1.002	13
բուլղարացի	97.391	504	10
ռումինացի	82.704	1.265	9
սիրիացի	56.909	1.281	17
հայ	26.498	1.031	29

Ազգություն	Թվաքանակն ԱՄՆ-ում 1910 թ.	Դպրոց	Կոլեջ, համալսարան
Խորվաթ	335.543	497	1
հույն	216.962	1.002	13
բուլղարացի	97.391	504	10
ռումինացի	82.704	1.265	9
սիրիացի	56.909	1.281	17
հայ	26.498	1.031	29

Ամերիկահայերն ուսումնառության համար առավելապես ընտրում էին հետևյալ մասնագիտությունները ինժեներություն, աստվածաբանություն, բժշկություն, ատամնաբուժություն, մանկավարժություն, իրավունք, գյուղատնտեսություն, ճարտարապետություն, քիմիա, հանքարանություն, քաղաքանություն, փիլիսոփայություն, դեղագործություն, անտառաբանություն և այլ բնագավառներ: ⁶¹

ԱՄՆ-ում ուսանող հայերի մեծ մասը գրեթե 90%-ը, սեփական ուժերով էր հարթել իր կրթական ուղին. ուսումնառությանը զուգահեռ կատարել էր տարրեր աշխատանքներ հայրաբեկով ինչպես ապրուստի, այնպես էլ ուսման միջոցներ: ⁶² Միաժամանակ, կարող, սակայն կարիքավոր հայ ուսանողներին նյութապես սատարելու նպատակով ԱՄՆ-ի գործարար ու բարեսեր մի խումբ հայերի կողմից հիմնվել ու նպաստամատույց աշխատանք են ծավալել Կրթասիրաց տարրեր ընկերություններ: Խոշորագույնը, ինչպես արդեն նշել ենք, 1906 թ. Չիկագոյում գորգի հարուստ վաճառական Կարապետ Փուշմանի ջանքերով կազմավորված Դայ կրթական ընկերությունն էր, որն իր գոյության մեկ տասնամյակի ընթացքում շուրջ 18.000 դոլար էր հատկացրել 72 ուսանողների: ⁶³

ԱՄՆ-ի բարձրագույն կրթական տարրեր հաստատություններում ուսանող հայ երիտասարդությանը, շրջանավարտներին և առհասարակ հայ մտավորականությանը համախմբելու նպատակով 1910 թ. Նյու Յորքում հիմնվել էր Ամերիկահայ ուսանողների միությունը: Այն երկրի խոշոր կենտրոններում ստեղծած իր մասնաճյուղերով, ինչպես նաև պարերական հրատարակություններով հայապահպան կարևոր ազդակ է հանդիսացել օտարության մեջ իրենց մասնագիտական ուղին հարթող ամերիկահայ ուսանողության համար՝ նրան նախապատրաստելով ազգային վերածնության գործին: ⁶⁴

Ամերիկահայ ուսանող երիտասարդությունն իր բարեխիղծ աշխատասիրության և գիտության տարրեր բնագավառներում դրսնորած բացառիկ կարողությունների համար մշտապես արժանացել է տեղի ինչպես ուսանողական, այնպես էլ դասախոսական շրջանների հիմնարարություններով հայապահպան կարևոր ազդակ է հանդիսացել օտարության մեջ իրենց մասնագիտական ուղին հարթող ամերիկահայ ուսանողության համար՝ նրան նախապատրաստելով ազգային վերածնության գործին: ⁶⁵

Այսպիսով, կրթական լայն հնարավորություններ, բարձր մակարդակ և մեծ հեռանկարներ ունեցող ամերիկահայությունն իր աստիճանաբար ստվարացող առաջնակարգ գիտնական, դասախոս, ուսուցիչ մտավորականներով նպաստել է Ամերիկայի հայերի մտավոր համախմբմանն ու կազմակերպմանը՝ ի շահ գաղութի հետագա կենսունակության և հայրենի երկրի ու ժողովրդի վերականգնման:

Դ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ում կրթական ու մշակութային կյանքի զարգացման համար առկա հիմնականում բարենպաստ բարոյահոգեքանական մթնոլորտը մեծապես նպաստել է ազգային տարրեր խմբերի, այդ թվում նաև հետզհետև աճող ամերիկահայերի հոգևոր կյանքի անբաժանելի մաս կազմող մշակույթի գրականության, թատրոնի, երաժշտության, նկարչության, քանդակագործության և արվեստի այլ բնագավառների հնքնադրսևորմանն ու առաջընթացին բացահայտելով հիշյալ ասպարեզներուն կարող ու շնորհալի ուժերի:

Ամերիկահայ գրական կյանքը սկսել է ձևավորվել գլխավորապես դարասկզբին՝ շնորհիվ հայրենի տարրեր բնակավայրերից ժամանած կամ ԱՄՆ-ում հասակ առած սակավաթիվ անհատների ջանքերի: ԱՄՆ-ում երկար ժամանակ հայ մամուլը հանդիսացել է գաղութիւն գրական բազմաբնույթ ստեղծագործությունների հրատարակման հիմնական ու գլխավոր ասպարեզ: Մասնավորապես, իրենց էջերն այլ նպատակին էին տրամադրության հնչպես կուսակցական, այնպես էլ զուտ գրական ուղղվածություն ունեցող պարբերականները: Դիշատակման են արժանի ՀՅԴ պաշտոնաթերերը «Դայրենից» օրաթերթն ու համանուն ամսագիրը, որոնք «Եղան անփոխարինելի թեմ հայ գրականութեան ստեղծման, պահպանման, տարածման եւ քաջալերումին»:⁷⁷

Գրական բնույթի ամերիկահայ առաջին լուրջ պարբերականը «Փիւնիկ» ամսագիրն էր, որի խմբագիրը «հարուստ իմացութեան տէր, գրադատական կարողութիւններով օժուուած երիտասարդ» Նշան Տեստելյովն էր: Էտեղագայում նրան փոխարինել են գրական դեմքեր՝ բանաստեղծ Շահան Նաբալին, Սահակ Չքյանը, Ե. Մելեքյանը, Փ. Մինասյանը:⁷⁸ Ամերիկահայ գրականության պատմությունը համակողմանի ուսումնասիրած Արմեն Տոնյանը, անդրադարնալով գրական առաջին այս պարբերականին, իրավագիրեն նշում է, որ ««Փիւնիկ» անսահման ոգևորութեամբ եւ վարակիչ հաւատքով կու գայ հայ գրականութիւն, պատմութիւն եւ մշակոյթ տարածելու, իր շուրջ համախմբելով շնորհալի տարրեր եւ հիմը կը դնէ ամերիկահայ իրաւ գրականութեան»»:⁷⁹ «Փիւնիկի» էջերում իրենց գրական մկրտությունն են ստացել ապագա փայլուն դեմքեր Դամաստեղը (Դամբարձում Գելենյան), Վահե Դայկը, Զարեհ Որբունին, Երվանդ Մեսիայանը, Կարապետ Սիտալը, Երվանդ Սահակյանը և այլոք:

Ամերիկահայ գրական առաջին ստեղծագործությունների թվին էին պատկանում Դայկակ Էկինյանի «Վահան Դայկանուշ» վեպը (1899 թ.), «Ընկեր Պանդուխտին» չափածո ստեղծագործությունը (1890 թ.), Մովսես Պաղտասարյանի «Դաճի Պապա» վեպը (1904 թ.), Նազարե Մանկումու «Դացի համար» պատմվածքների շարքը (1914 թ.) և այլն: Միաժամանակ, ամերիկահայ առաջին մամուլի հիմնադիր Դ. Էկինյանը հեղինակ էր երկու տասնյակից ավելի բանաստեղծությունների, որոնցից պահպանվել են միայն 13-ը՝ «Դպարտ աղջիկ», «Առաջարկ», «Իմ կոտակը» և այլ ստեղծագործություններ:⁸⁰

Դարասկզբին Արմենակ Շիշմանյանի և Թովմաս Զավագավարճյանի ջանքերով սկիզբ է դրվել նաև ամերիկահայ առաջին թարգմանական գրականությունը: Դայկական, ինչպես նաև ամերիկյան մի շարք թերթերում («Ազատութիւն», «Թրիբյուն», «Թայմ», «Փրես» և այլն) հրատարակած իր ծաղրանկարներով հայտնի Ա. Շիշմանյանը նաև

շուրջ երկու տասնյակ թարգմանությունների հեղինակ էր, որոնց գգալի մասը գրված էր 1894-1896 թթ. հայկական ջարդերի անմիջական ազդեցության տակ: Դրանց թվում էին «Ողբ Մայր Յայաստանի», «Անօթելի ողջակեզը», «Արիւնոտ Կովկասը», «Ակամայ բարերարը», «Վարդանանց պատերազմը» և բատերական այլ գործեր, որոնք բեմադրվել էին նյու Ձերսի Յայ որբախնամ ընկերությունում և ու. Հորոցենի Յայ մարգական կաճառում:⁷⁰

Ամերիկահայ գրական կյանքը մեծապես հարստացել է նաև հայտնի բժիշկ, խմբագիր, հրապարակախոս Մ. Ս. Գաբրիելյանի, բանաստեղծ ու արձակագիր Զարուհի Գալեմբերյանի, ազգային գործիչներ Սուրեն Պարթևյանի, Մուշեղ Եպս. Սերոբյանի, ինչպես նաև որոշ ժամանակ ԱՄՆ-ում անցկացրած Սիամանթոյի բազմաբուվանդակ և ընդգրկուն ստեղծագործություններով:

«Ամերիկահայ գրականութիւն» ստվարածավալ աշխատանքի հեղինակ Ա. Տույանը մանրամասն ներկայացնելով և համակողմանի վերլուծելով ԱՄՆ-ի հայ գաղութի գրականության պատմությունը, այն ստորաբաժանել է ըստ ժամանակաշրջանների՝ առաջին փուլը ներառելով մինչև անկյունադարձային թվական հանդիսացած 1924 թ., այսինքն, երբ Յամաստեղը հրատարակել էր «իր սքանչելի գաւառաբոյր եւ գրականուն այնքան արժեքալող պատմուածք-պատկերներու հաստոր» «Գիւլը»:⁷¹ Այս շրջանը նախապատրաստական փուլ էր, քանի որ նոր էր ծևավորվում ամերիկահայ գրական կյանքը՝ նպաստելով գաղութի ներսում ազգային մշակույթի ընդհանուր զարգության: Արդեն կային գրական շատ դեմքեր իրենց բազմաժանր, գլխավորապես հայերեն ստեղծագործություններով, որոնք, սակայն չունեին անհրաժեշտ գրական-գեղարվեստական մակարդակ: Այս փուլում, հիմնականում ԱՄՆ-ում ուսանող հայ երիտասարդության ջանքերով իրականացվել են օտար հեղինակների, տարբեր ստեղծագործությունների թարգմանություններ, կատարվել են ամերիկյան, համաշխարհային, ինչպես նաև հայ դասական գրականության և իմաստասիրության գիտական, իմացական ու գեղարվեստական գործերի ուսումնահրություններ՝ պատշաճ նախասկիզբ հանդիսանալով հետագա տարիների ամերիկահայ բեղուն գրականության վերընթացի համար:

Ե. ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԱՐԿԵՏԱԾ (Քատրոն, շարժանկար)

Ամերիկահայ մշակութային կյանքը նշանավորվել է նաև բատերական արվեստի սկզբնավորումով: Առաջին թատերախմբերը կազմավորվել են գլխավորապես սիրողներից, քանի որ դեպի նոր Երկիր վաղ շրջանի հայ գաղքականության շարքերում գրեթե բացակայում էին արհեստավարժ դերասանները: ԱՄՆ-ում հայերեն առաջին ներկայացումը բեմադրվել էր 1890 թ. Ուորքեսթերի Գրենի Արմի Յոլում ի նպաստ տեղի Յայ երիտասարդաց ընկերության: Նետագա տարիներին հայերի աճող հոսքը խթանել է 1905 թ. Երկրի հայաշատ գրեթե բռլոր վայրերում ազգային թատերախմբերի ստեղծմանը և նորերի ի հատ գալուն: Մեծ համբավ ունեին Բոստոնի Դուլլի Սթրիթ Օփերա Յառլզի և նյու Յորքի Կարնեգի Լիցեյի հայկական խմբերը:⁷²

1906 թ. Ուիսկոնսինի նահանգի Ռեյսին քաղաքում «Ժիրայր» դերասանական խմբի կողմից բենադրվել է հայերեն առաջին ներկայացումը «Արարօն»:⁷³ Մեկ տարի անց 1907 թ., հանձինս Գ. Ֆրենկլյանի, Վ. Սանվելյանի և այլոց Փրովիդենսում ծևավորվել է կուսակցական համանուն դերասանախումբը (բեմադրել է «Դաւիթ Բեկ», «Սամուէլ», «Անմահ ժիրայր», «Անիի աւերումը» և այլ գործեր):⁷⁴ Նետագյուղում «Դայրենիք» օրաբերի օգնական-խմբագիր Սերգակ Թորմաջյանի ջանքերով ԱՍՍ-ում կազմակերպվել է ՀՅԴ «Աղամեան» դերասանական խումբը, 1908 թ. Փրովիդենսում ՀՅԴ «Ազատամարտ» թատերախումբը (մինչև 1925 թ. բեմադրել է 85 դրամա և 115 կատակերգություն),⁷⁵ 1909 թ. մի խումբ տիգրանակերտցի հնչակյանների ջանքերով «Փարամազ» դերասանական խումբը (ներկայացրել է «Զեյրուն», «Կարկառուն կամարներ», «Թալաարի անկումը», «Ներոսուիկին» հեղափոխական դրամաները և այլ գործեր):⁷⁶ 1910-ական թվականների սկզբին պաղմեցի Եղիա Խիմեթյանը, համախմբելով բեմական արվեստի սիրահար մի խումբ երիտասարդների, սիրողական խմբեր է հիմնել նաև նյու Յորքում, ապա նաև այլ վայրերում:⁷⁷

Կալիֆոռնիայի նահանգում և, մասնավորապես, Ֆրեզնոյում կազմավորված հայ սիրողական թատերախմբերից «ամենէն յարատէ, մնայուն և բեմի ընթրոնումներու տեսակետէն բարեկիդք» հանդիսացել է «Դուրեան» դերասանական խումբը, որի կարող ու հմուտ ուժերին մշտապես առաջնորդել է «թատրոնը թատրոնի համար» սկզբունքը: Խումբը հաջողությամբ հանդես է եկել «Արշալոյ», «Սանդուխտ» ներկայացումներով, մինչև որ 1913 թ. համարվել է ՀՅԴ նոր անդամներով և այդուհետև կոչվել ՀՅԴ «Դուրեան» թատերախումբ (բեմադրել է «Պատուի համար», «Կործանուածք», «Գորրադո», «Ուուզան», «Վրցունքի հովիտը» և նմանատիպ այլ գործեր, մինչև 1925 թ. ընդհանուր առմամբ 25-ից ավելի ներկայացումներ):⁷⁸

Ամերիկահայ հնչակյանների ջանքերով ԱՍՍ-ում ստեղծվել են մի շարք այլ դերասանախմբեր ևս: Դրանցից եր, օրինակ, Սփրինգֆիլդում կազմված «Աւարայր» թատերախումբը:⁷⁹

1916 թ. Կալիֆոռնիայի Ֆառվեր քաղաքում չեզոք հայացքներ ունեցող երիտասարդների ջանքերով ստեղծվել և իր հաջող գործունեությունն էր ծավալել «Շանթ» դերասանախումբը,⁸⁰ նույն թվականին կազմավորվել էր նաև նյու Յորքի Հայ դրամատիկ խումբը (մինչև 1925 թ. բեմադրել է 24 ներկայացումներ),⁸¹ 1917 թ. Դարք-Փորդում «Փարոս» թատերախումբը (մինչև 1925 թ. հանդես է եկել 18 ներկայացումներով), 1921 թ. Բոստոնի Հայ դրամատիկ խումբը (մինչև 1925 թ. բեմադրել է երկու տասնյակ ներկայացումներ), 1922 թ. Չիկագոյում ՀՅԴ «Շանթ» թատերախումբը (մինչև 1925 թ. ներկայացրել է 9 գործեր) և այլն:⁸²

Ընդհանուր առմամբ, բացի 1913 թ. ԱՍՍ-ում շրջագայություններով հանդես եկած Արևելյան թատրոնի, մնացած բոլոր խմբերը սիրողական հիմունքներով ստեղծված դերասանական խմբեր էին, որոնց անդամները, ոչ միայն ըստ արժանավույն չէին գնահատվում, այլև «յաճախ ցուրտ ընդունելութիւն կամ ժլատ գնահատութիւն միայն կը գտնէին»:⁸³ Քննադատներն ակնարկում էին բեմադրիչների պահպանողական ու սահմանափակ մոտեցումները, ներկայացումներում արևելյան նահապետական նախապաշտումներով կաշկանդված հայ կնոջ խաղը և բազմաթիվ այլ համգամանք-

Աեր: Ամերիկահայ թատերական արվեստի մակարդակով մտահոգված հայ մեծանուն գրող ու դրամատուրգ Ալ. Շիրվանզադեն, 1920 թ. լինելով ԱՄՆ-ի հայաշատ տարբեր վայրերում և իր ուշադրության արժանացնելով գաղութի դերասանական խճբերից շատ շատերը, գտնում էր, որ տեղի հայ դրաման աղքատ է ու ցածր որակի:⁸⁴

Այդուհանդերձ, ԱՄՆ-ի հայերը մեծագույն ուրախությամբ էին հաճախուն սիրողական թատերախմբերի կազմակերպած ներկայացումներին, որոնք հայրենի շունչ էին ներարկում օտար ափերում հարազատ լեզվին ու մշակույթին կարոտ իրենց հոգիներին: Հայ գաղրականների թատրոններում տիրող ոգևորիչ մքնուրոտին անդրադել էր անգամ օտար, մասնավորապես, Ֆրեզնոյի մամուլը՝ գրելով. «Փոքրիկ թատրոնը լցված էր մինչև դռները, տղամարդկանցից, կանանցից ու երեխաներից բաղկացած համդիսատեսները մեծ մասամբ հայեր էին, որոնք անհագործն լսում էին բեմից եկող հարազատ լեզվով հնչած խոսքերը»:⁸⁵

Ամերիկահայության շրջանում առանձնապես լայն ընդունելություն էին գտնուն Ռաֆֆու հայրենասիրական ստեղծագործությունների բնմականացումները՝ «Սամուէլը», «Խենքը», «Դ. Ուուրյանի «Ամիկի Կործանումը», Զավեն Պայքարի «Թուլը խաղացողները» և այլ հեղինակների բազմաթիվ գործեր: Ազգային թատերական կյանքից հեռու չեն նաև ԱՄՆ գաղրած հայերի բրգախոս հատվածը՝ կիլիկիացիները, որոնց համար նույնպես կազմակերպվում էին համապատասխան ներկայացումներ:

Սիրողական թատերախմբերով սկզբնավորված ամերիկահայ թատերական կյանքին նոր լիցք ու կենդանի շունչ են հաղորդել ԱՄՆ ժամանած հայ արհեստավարժ արվեստագետներ տիկնայք Մելիքյանն ու Վերժինե Մամուլյանը, տեր և տիկին Շովիաննես և Արաքս Զարիֆյանները, Սեդրակ և Մարիամ Սուլաբյանները, Անդրանիկ և Ազնիկ ամուսինները, Շովիաննես Աբեյյանը, Ա. Արմենյանը, Մ. Սամվելյանը, Ի. Ալիխանյանը, Եղիշե Ջարութքը, Սեդրակ Վարդյանը ու ուրիշներ:⁸⁷ Դիշյալ շնորհալի դերասանները, որոնք գերազանցապես թատերական ավանդույթներ ունեցող միջավայրում մասնագիտացած կովկասահայ արվեստագետներ էին, սեփական խճբեր ստեղծելու և նրանց հետ հանդես գալու հետ մեկտեղ, սիրով ներգրավվում էին նաև ոչ արհեստավարժ դերասանախմբերում իրենց հմուտ արվեստով և ուսանելի ու գերազանց խաղով հիացնելով բոլորին, միաժամանակ, մի նոր մակարդակի թարձրացնելով ամերիկահայ թատրոնը:

ԱՄՆ-ի հայ գաղութն իր «իրական, կեանքոտ թատրոնին սկզբնաւորութիւնը» պարտական է կովկասահայ դերասանապետ Շովիաննես Զարիֆյաննին, որը «թերեւս անօհուտակցարար, բայց ձեռնիասօրէն 1921 թ. սկզբներին եկաւ ամերիկահայ թատրոնն ապրեցնել, ուժեղացնել և իր կոչումին, իր դերին բարձր աստիճանին հասցնել»: Շովի. Զարիֆյանը և յու Յորքում հիմնած թատերախմբերով «իր տաղանդին փայլը պտտցուցած է Ամերիկայի մեկ ծայրէն միւլը» ներկայացնելով «Օթելլօ», «Շամլետ», «Ավրիլ Ակոստա», «Չար ոգի», «Շին աստուածներ» և այլ գործեր ամենուրեք արժանանալով համայնքի հայության ծերս ընդունելությանը, հիացմունքին ու բարձր գնահատանքին (ընդիանուր արմամբ, Շովի. Զարիֆյանը խաղացել էր 500 տարբեր ներկայացումներում): Նրան աշակցել են հայտնի դերասաններ տիկնայք Զարիֆյանը,

Շահենը, Արշալյանը, օրիորդ Ս.Գալստյանը, Տիգրան Խոյանը, Արտավազդը, Մ.Նուբրյանը, Խյմերյանը, Չերմոնը, Էլվան և այլոք:⁸⁸

Ամերիկահայ թատրոնը չեն է մնացել նաև Սեղրակ և Մարիամ Սուրաբյան ամուսինների շնորհիկ, որոնք, 1923 թ. ԱՄՆ ժամանելով, իրենց հիմնած թատրախմբով երկրի հայաշատ տարբեր վայրերում բենադրել են բազմաթիվ կատակերգություններ, զվարք օպերաներ («Արշին Մալ Ալան», «Ապուշը», «Զարտաշի թագուհին» և այլն):⁸⁹

Ամերիկահայ թատրոնը մեծապես հարստացել է 1923 թ. Եվրոպայից ԱՄՆ եկանած Հովհաննես Աբելյանի արվեստով: Նա հանդես է եկել «Օթելօ», «ճարպիկ փեսացուն», «Պատուի համար», «Արքա Լիր», «Դաւաճանութիւն» և այլ ներկայացումներում:⁹⁰

Այսպիսով, հիմնականում դարասկզբին ծևավորված և գերազանցապես սիրողներից բաղկացած ամերիկահայ մեծ ու փոքր թատերախմբերը զգալի ավանդ են ներդրել գաղուրի թատերական արվեստի ծևավորման ու զարգացման գործում հիմքեր նախապատրաստելով հետագայում մասնավորապես Առաջին աշխարհամարտից հետո, արհեստավարժ դերասանների, ինչպես նաև մնայուն ու բազմազան խաղացանկերով կազմակերպված թատերախմբերի ի հայտ գալուն: Միաժամանակ, Նոր Երկրի հայաշատ տարբեր վայրերում շրջագայություններով հանդես եկած ամերիկահայ առաջին թատերախմբերը, նախապատրաստական ժամանակաշրջանին հատուկ իրենց բացքողումներով ու թերություններով հանդերձ, մայրենի լեզվով ներկայացումներ ու առավելապես հայ հեղինակների ստեղծագործություններ ներկայացնելով, մեծապես նպաստել են օտարության մեջ խարխափող և ուժացման վտանգին դիմակայող հայության ստվար զանգվածների մշակութային ու ազգային նկարագրի պահպանը, ինչպես նաև իրենց համեստ մասնակցությունն են ունեցել գաղուրի և հայրենի երկրի հոգնոր կապի ամրապնդմանը:

XX դ. առաջին տասնամյակից սկսած ԱՄՆ-ում ի հայտ են եկել նաև շարժմանկարի առաջին սակավաթիվ հայ դերասանները, որոնք իրենց ավանդն են ներդրել իյուրընկալ երկրի կինոարվեստի զարգացման գործում:

Ամերիկյան կինոյուն նկարահանված առաջին հայը Ալլա Նազիմովան էր, որը, 1906 թ. ժամանելով ԱՄՆ, սկզբում խաղացել էր թատրոնում, ապա՝ «Մերկացում» ֆիլմով սկսել էր իր տևական գործունեությունը Հոլիվուդում:⁹¹

1920 թ. աշխարհի կինոէկրաններին աղմկալից հաջողությամբ ցուցադրվել էր 1915 թ. հայոց Մեծ Եղեռնի սահմուկեցուցիչ տեսարանները փաստող «Շոգու աճուրդ» («Շոշոտված Շայաստան») ֆիլմը, որի սցենարի հեղինակն ու գլխավոր դերակատարն էր Զարդերից ու կոտորածներից հրաշքով փրկված Օրորա Մարտիկանյանը:

1920-ական թվականներին և հետագայում ԱՄՆ-ի թատերական կյանքում մեծ համբավ ուներ Մոսկվայից և Նյու Յորք ժամանած «Զդիկ» թատրոն-կաբարեն, որի լուծարումով Հոլիվուդ են մուտք գործել նրա չորս անդամները՝ «Թամարների քայլեկը» թամարա Դեյկարխանովան, թամարա Շայնը (Շահինյան), թամարա Գեվան (Գևորգյան), թամարա Թունանովան (Թումանյան): Ամերիկյան կինոյի ասպարեզին

նվիրված դերասաններից էին նաև Ակիմ Թամիրովը (Դովակիմ Թամիրյանց), Քայ (Բյուզանդ) Թուրմայանը և այլոք:⁹²

Ամերիկայակարի շարժման գարգացման գործում անգնահատելի էր կինոյի և թատրոնի ռեժիսոր Ռուբեն Մամուլյանի դերը, որը նաև XX դ. համաշխարհային խոշորագույն ռեժիսոր-նորարարներից էր:⁹³

գ. ԵՐԳԱՐՎԵՍՏԸ

(Երգիչներ, նվագիչներ, երգահաններ, երգչախմբեր)

Ամերիկահայ մշակութային կյանքում գրականության, թատերական արվեստի կողքին իր ուրուց տեղն ուներ նաև երգարվեստը: Սիրողական մակարդակով այն իր վաղ դրսնորումն էր ունեցել դեռևս 1860-ական թվականներին հանձինս Միքայել Թոփիհանեցյանի, որի երգած ինքնատիպ մեղեդայնությամբ բուրքերն երգերը ամերիկացիների կողմից նոտագրվել են ջութակի և դաշնամուրի համար:⁹⁴

Հետագայում արդեն սկսել են հանդես գալ արիեստավարժ երաժիշտներ, երգահաններ ու երգիչներ, որոնք մեծ ընդունելություն, լայն ճանաչում ու գնահատանք են ստացել ոչ միայն ազգային, այլ նաև ամերիկյան համապատասխան շրջանների կողմից: Այսպես, 1880-ական թվականների երկրորդ կեսին ԱՄՆ-ում «Դայ Սովիսակ» անվանումով մեծ համբավ ուներ եվրոպական ու ամերիկյան երաժշտական հայտնի հաստատություններում ուսանած երգչուիի Ալեքսիա Պասյանը, 1900-ական թվականներին՝ դեռևս մանուկ հասակից համերգներով, ապա ամերիկյան երաժշտական ներկայացումներում հանդես եկած դերասան-երգչուիի Ֆլորա Զաբելը (Իզաբել Մանկասարյան), եկեղեցական երգչուիի Ագմեն Չոփուրյանը և ուրիշներ:⁹⁵

Ամերիկյան օպերային և հայ երաժշտության ասպարեզում 1910-ական թվականների սկզբին ճանաչված ու սիրված երգիչ-երգչուիիներից էին Փաուլ Անանյանը (բաս), Ֆիլիպ Բեննյանը (բարիտոն), Արմեն (Արման) Թոքատյանը (տենոր), Ալիծ Քյուրքյանը (լիրիկական սոպրանո), Թորգոն Պեզազյանը (բարիտոն), ավելի ուշ՝ տիկին Զաբել Արամը (Փանոսյան) (սոպրանո), Բագրատունին, Ժողովրդական երգիչ Արմենակ Շահմուրայյանը (տենոր), երգչուիիներ Մաննիկ Պերպերյանը, Մաշա Սուլաբյանը, Մարի Պարսիկյանը, Մարի Պաշյան-Պետիկյանը (դրամատիկ սոպրանո), Սիրանուշ Տեր-Սարգսյանը (լիրիկոդրամատիկ սոպրանո), Ռոզ Չոլայյանը (դրամատիկ մեցոս սոպրանո), Թագուիի Ավագյանը (կոնտրալոտո), Զարուիի Էլմասյան-Կարոյյանը, Նվարդ Շաղոյյան-Զիվելեցյանը (լիրիկական սոպրանո), Սիրուն Մանկիյանը, Ագատն Տոնցյանը, Զենիկու Թաթարյանը, S. Սարգսյանը, Շայկանուշ Տեր-Մարկոսյանը, Բարակյանը, Արաքսի Դակորյանը և ուրիշներ:⁹⁶

Դատկապես 1920-ական թվականների սկզբին ԱՄՆ-ում գգալիրեն աճել էր նաև հայ երաժշտ նվագիչների թիվը: Առավել հայտնի դաշնակահարներից էին Լևոն Տեր-Օհանյանը, Աստղիկ Գավուգյանը, Սարգս Քուշնարյանը, Սարգս Թեոնյանը, Լևոն Կարդանյանը, Գիսակ Վրույրը, Արփիմե Խնայեթյանը, ջութակահարներ Սիրարփի

Գոնսայանը, Մինաս Զաղացպանյանը, տավղահար Շելեն Մեհրաբյանը, թառահարներ Դայկ Դովիհաննիսյանը, ժորժ Հահ-Պարոնյանը և ուրիշներ:⁹⁷

Ամերիկահայ երգարվեստի առաջընթացի գործում իրենց անփոխարինելի ներդրումն են ունեցել նաև տաղանդավոր երաժշտագետ-երգահանները, որոնք հակառակ իրենց սակավ թվի, իմանել են ինչպես եկեղեցու ներսում, այնպես էլ նրանից դուրս գործող մի շարք երաժշտախմբեր: Դրանք կոչված են օտար միջավայրում կենդանի պահել, տարածել ու զարգացնել ոչ միայն ազգային աշխարհիկ, այլ նաև հոգևոր երաժշտությունը: Այս առումով մեծ համբավ ունեն երգահան, հայ իին ու նոր երաժշտության գիտակ Գրիգոր Փրոֆֆ-Գալֆայանը, Սյունին, Դարություն Մեհրաբյանը, Ռուբեն Տիգրանյանը և ուրիշներ:⁹⁸

Ժամանակի ընթացքում երկրի հայաշատ գրեթե բոլոր վայրերում իմանվել են նաև ազգային երգախմբեր: Սիրված էր Ֆրեզնոյի Դայկական երգախմբային միությունը, Ռեյխն քաղաքի հայ երգախումբը և այլն:⁹⁹

Մի շարք շնորհալի հայերի, գլխավորապես արևելահայերի, ջանքերով ԱՄՆ-ում ստեղծվել ու զարգացում էր ապրել նաև գաղութահայ պարարվեստը, որի սիրված ներկայացուցիչներից են Արմենուի Օհանյանը, Անիցա Ռզվանյանը, Մարի Սուրաբյանը և ուրիշներ:¹⁰⁰

Է. ԿԵՐՊԱՐՎԵՍԸ

(լուսանկարչություն, նկարչություն, քանդակագործություն)

Ամերիկահայերն իրենց տաղանդն ու հմտությունը դրսնորել են լուսանկարչության, ինչպես նաև նկարչության ու քանդակագործության բնագավառներում: Ամերիկյան լուսանկարչությունը մեծապես հարստացել է շնորհիկ հայազգի Սկրտիչ Կարոյի (Կարոյան), որն արդեն դարասկզբին լայն ճանաչում ուներ երկրում ոչ միայն իր նկարահանման ինքնատիպ արվեստի, այլ նաև գունավոր լուսանկարահանման եղանակը հայտնագործած լինելու համար:¹⁰¹ Շնորհալի արվեստագետ էր սաղաֆից և փղոսկրից մանրագարդեր (նողահիկա) պատրաստող Սեղրակ Գըլճյանը:¹⁰²

ԱՄՆ-ում ճանաչված հայ նկարիչներից են ամերիկյան և եվրոպական քաղաքացիների արժանացած Սարգիս Երկանյանը, Սանվել Ազատիկյանը, ծովանկարիչ Գ.Գալուստը, Միհրան Սերայյանը, բազմակողմանի կարողություններու օժտված հնագետ, գեղանկարիչ, որմնանկարիչ, մանրանկարիչ, գծանկարիչ ու քանդակագործ Արշակ Ֆերվաճյանը (առավել հայտնի գործերից են «Թրքական սուրբան դակը Անատոլիայի մեջ», «Մանուկ Դայաստան» և այլն), արևելյան հարուստ գույշներու յուղանկարիչ Շովսեփ Փուշմանը («ճառագայթներ», «Նուբիական արքայադուստրը»՝ «Երազներ», «Նիմֆերի պարը» և այլն), Փանոս Թերլեմեզյանը («Կոմիտաս Վարդապետ» և այլն). Սարգիս Խաչատրյանը, Շովիաննես Ալիհասյանը, Արշիլ Գորկի (Ոստանիկ Մանուկ Ալոյան) և ուրիշներ:

Ամերիկահայ քանդակագործության ասպարեզում ամենից համբավավոր դեմքը Դայկ Բատիկյանն էր («Դին պատմություն», «Մոխիրներից հարություն առնու Սան Ֆրանցիսկոն», ամերիկյան պետական ու քաղաքական գործիչների՝ Աբրահա-

Եինկունի, Սակկինի, Փերշինգի կիսանդրիները և այլ գործեր): Դիշյալ բնագավառում հայտնի էին նաև Շենրի Լայնը, Շակոր Գյուրջյանը, Մարտիրոս Մելիքյանը և այլոր:¹⁰³

Այսպիսով, հասարակական-տնտեսական, պատմաթաղաքական, ինչպես նաև մշակութային հանգանանքների բերումով ԱՄՆ անցած հայությունը Նոր Երկիր էր փոխադրել նաև իր հոգևոր կարողությունները՝ կյանքի նոր պայմաններում ու նոր միջավայրում նորովի զարգացնելով և առավել ինքնատիպ մակարդակի հասցնելով դրանք: ԱՄՆ-ում հայության թվի ստվարացման հետ մեկտեղ սկսած անցյալ դարավերջից և հատկապես ներկա դարագլխից հանդես են եկել մշակույթի և արվեստի տարբեր ճյուղերի՝ գրականության, թատրոնի, շարժանկարի, երաժշտության, նկարչության, քանդակագործության, լուսանկարչության և այլնի, հմուտ ու արհեստավարժ սկսնակ ու սիրող ներկայացուցիչներ, որոնք իրենց ստեղծած հոգևոր մշակույթի արժեքներով հուսալի հիմք հանդիսացան գաղութահայ մշակույթի ազգային նկարագրի պահպանման, հետագա զարգացման ու հարատևման համար, միաժամանակ՝ հայ արվեստը ներկայացնելով օտար հանրությանն ու արժանանալով նրա բարձր գնահատանքին:

ՎԵՐՁՎԲՎՆ

Ընդհանրացնելով ներկա ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների:

1. Դայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքներից ելնելով:

2. Առաջին սակավաթիվ անհատ հայերը Շյուսիսային Ամերիկա են ոտք դրել դեռևս XVII սկզբին անձնական դրդապատճառներով:

3. Թուրքական կայսրությունում ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած կրթալուսավորական գործունեությամբ 1834 թվականից սկսվել է հայերի նախատակային հոսքը դեպի ԱՄՆ: Սկզբում այն կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխս (գլխավորապես՝ ամուրի Երիտասարդներ) հայերի (ուսանող, առևտուրական, արհեստավոր, հողածակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժ էր, որը օսմանյան թուրքիայում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի և Մեծ Եղեռնի (1894-1896 թթ., 1909 թ., 1915 թ., 1920-1922 թթ.) հետևանքով վեր է ածվել զանգվածային գաղթի ընդգրկելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից գրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի:

4. Ժամանակի ընթացքում ԱՄՆ մեկնած հայերը տարծվել են լայնածավալ երկրով մեկ և բնակություն հաստատել գրեթե բոլոր նահանգներում (առավելապես՝ արևելյան ու հյուսիսային տարածք, Կալիֆոռնիա) նախապատվություն տալով հայկական համախմբումներ ունեցող շրջաններին:

5. Նոր Երկրում հայության թվի ստվարացումով և այդտեղ նրանց աստիճանաբար հաստատումով կազմավորվել են օտարության մեջ ազգապահպան կարևոր դեր ու նշանակություն ունեցող գործոնները՝ Եկեղեցին, դպրոցը, պարբերական մամուլը՝ Վերջնականապես ծևավորելով Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութը:

6. Նոր պայմաններում հայերը, օգտվելով ընձեռված լայն ու բազմակողմանի հնարավորություններից, ներգրավվել են տարբեր բնույթի գրադմունքներուն, իրենց

Ֆիզիկական, մտավոր ու հոգևոր կարողություններն ամբողջովին ծառայեցնելով նախընտրած ասպարեզներին և իրենց նպաստը բերելով նոր երկրի առաջընթացին:

7. Ամերիկահայերն իրենց երկարամյա քրտնաշան աշխատանքի, ինչպես նաև չափավոր ու համեստ ապրելակերպի շնորհիվ հասել են օգալի հաջողությունների, բավականաչափ կարողության տեր դարձել եապես բարելավելով իրենց տնտեսական ու կենցաղային պայմանները, աստիճանաբար ընտելանալով նոր կյանքի պայմաններին ու բարքերին, կենցաղին ու սովորույթներին:

8. Նոր երկրում հայ պանդուխտների և գաղթական բեկորների ազգային համախմբան ու կազմակերպման, ամերիկյան համայնակուլ միջավայրում հայկականության ոգին ու գիտակցությունը, կերտվածքն ու նկարագիրը, լեզուն ու սովորույթները մշտարթուն պահելու, ինչպես նաև հայրենի բնօրրանի և ժողովրդի հետ կապն ավելի գործուն ու հարատև դարձնելու նպատակով ստեղծվել ու ազգանպաստ մեծ գործունեություն են ծավալել բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ, կազմակերպություններ, կուսակցություններ, ընկերություններ և ակումբներ:

9. Դայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդող տարիներին ամերիկահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանության, ազտագրության ու վերականգնման նվիրական գործին:

10. Առաջին աշխարհամարտի հետևանքով օսմանյան Թուրքիայում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տերությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստը ի չիք են դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած բազմահազար հայերի երազանքը՝ նրանց վերջնականապես ամրացնելով որդեգրած նոր երկրին:



ՀԱՎԵԼՎՈԾ

ԹՈՒՐՔԻ ԴԱՅԱՀԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ԱՄՆԻ ԴԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒՅԹԱՆ ՍԱՍԻՆ

(XIX դ. վերջ - XX դ. սկիզբ)

Թուրքիայի հայաբնակ շրջաններից և Արևմտահայաստանից անձնական, կըրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում ԱՄՆ մեկնած հայ գաղթականները մշտապես պահպանել են կապը հարազատ Պոլսո Հայոց պատրիարքության հետ՝ այն համարելով իրենց հոգևոր, բարոյական ու գործնական մնայուն պատվար:

Այդ մասին են վկայում Թուրքի Հայոց պատրիարքարանի դիվանում (հիմնադրված 1461 թ.) մինչև օրս պահպանվող բացառիկ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերը, որոնց ինձ բախտ է Վիճակվել ծանոթանալ 1997 թ. Թուրքիա կատարած անձնական ուղևորության ընթացքում՝ շնորհիվ պատմագիտական արժեքների բաց գիտակ, Սուլը գրական հնագիտության թեկնածու, Թուրքի Հայոց ներկայիս Պատրիարք Ամենապատիվ S. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանի բարյացակամ աջակցության:

«Ամերիկա» ընդհանուր խորագիրը կրող ֆոնդում ամփոփված գործերը ներառում են երկարատև մի ժամանակաշրջան՝ սկսած 1880-ական թվականներից մինչև մեր օրերը: Փաստաթղթերն արխիվային գործերում դասակարգված են ժամանակագրական կարգով, հետևաբար հնարավոր է հստակ պատկերացում ստանալ պատմական այս կամ այն ժամանակահատվածի մասին: Այսպես, եթե 1880-ական թվականներից սկսվող գործերը տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ բավականին ստվար նյութեր են պարունակում, ապա Առաջին աշխարհամարտի, ինչպես նաև նախորդող տարիների գործերում նկատելի է փաստական նյութերի գգալի նոսրացում, իսկ հաջորդող տարիներին՝ ընդհանրապես անհետացում: Հետպատերազմյան շրջանի գործերում կրկին նկատվում է փաստաթղթերի որոշ ստվարացում, բայց արդեն ոչ նախկին չափով:

Հարկ է նշել, որ Թուրքի Հայոց պատրիարքարանի դիվանի գործերը, երկրում առկա պատմաքաղաքական ստիպողական հանգամանքների բերումով պարբերաբար

գտվել են, ինչպես նաև արտածվել Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլուր: Այդ է պատճառը, որ Ներկայումս մեզ հասած արխիվային նյութերը ընդհանուր առմամբ չեղոք բնույթի են՝ զերծ որևէ բաղաքական, կուտակցական, ազգայնական ու անցյալի պատմական երանգավորումներից: Այդուհանդերձ, պատմական իրադարձությունների բովով անցած, հրաշեռվ փրկված ու մեզ հասած այդ փաստաթղթերն իրենց ինքնատիպությամբ ու պատմագիտական կարևորությամբ սկզբնաղբյուրային բացառիկ արժեք են Ներկայացնում:

Փաստագրական այդ նյութերն ընդգրկում են ինչպես մինչև 1898 թ. (պաշտոնապես 1902 թ. Ամերիկահայոց առաջնորդությունն անցել է Սբ. Էջմիածնի կաթողիկոսության հովանու Ներքո) Պոլսո Հայոց պատրիարքության վիճակ հանդիսացած Ամերիկահայ թեմի, այնպես էլ հետագայում՝ նորաստեղծ Ամերիկահայոց առաջնորդարանի, գաղութահայ տարբեր կազմակերպությունների դեկապարների ու անհատների կողմից Թուրքիո Հայոց պատրիարքներին, ինչպես նաև ԱՄՆ-ի հայաշատ վայրերից Ամերիկայի հայոց առաջնորդներին ուղղված և հանգամանքների բերումով Պոլսում հայտնված բազմաթիվ նամակներ, խնդրագրեր, փաստաթղթեր: Հիշյալ սկզբնաղբյուր Ներում լուսաբանվում են՝ ԱՄՆ-ի հայ գաղթականության դրույթունը, սոցիալ-տնտեսական վիճակը, հայրենի բնակավայրեր վերադառնալու ցանկությունը, ամերիկահայ Երիտասարդությանն ու ճացումից զերծ պահելու նպատակով Պոլսից հայ որբուհիներ ուղարկելու նպատակահարմարությունը, հայ որբերի որբեգործանը, որբահավաքին ու որբախնամին, ամերիկահայ Եկեղեցիների կարիքներին, պատշաճ և կարող հոգևորականներ ունենալու անհրաժեշտությանը, գաղութահայ հարանվանական Եկեղեցիներին առնչվող հարցերը, Եկեղեցական ու բաղաքական պաշտոնական հարաբերությունները, ամերիկահայ տարբեր կազմակերպությունների գործունեությունը, Նրանց ազգանպաստ ու հայրենանպաստ ձեռնարկները, անձնական ու ընտանեկան խընդրանքները, Մեծ Եղեռնից վերապրած իրենց հարազատներին փնտրելու, Նրանց նյութական նպաստ ուղարկելու հետ կապված հարցերը, ինչպես նաև՝ առանձին դժգոհություններ, բողոքներ և այլն:

Այս բազմապիսի ու բազմաբնույթ փաստաթղթերը պատմական ու տրամաբանական շղթայի մեջ ներկայացնելու նպատակով կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ գաղթականական, հայապահպան-որբանպաստ, Եկեղեցական, անձնական, հասարակական, քաղաքական:

Գաղթականական բնույթի փաստաթղթերը ներկայացնում են օամանյան Թուրքիայում հայերի տարեցտարի աճող արտահոսքը Երկրից, որն անհատական պանդըստությունից վեր էր ածվել հայրենի բնօրրանի ողջ տարածքը ներառող մեծ չափերի հասնող զանգվածային գաղթի, նոր Երկրում գաղթականների թշվառ վիճակը, աշխատանքային ծանր պայմանները, բարոյական ու ազգային արժեքների կորուստը, զանգվածային բնույթի կրող ընտանիքներով գաղթականությունը կանխելու խնդրանք, ինչպես հայրենիքում անպաշտպան մնացած կարուտյալ հարազատներին, այնպես էլ հայրենի Երկրի տարբեր հաստատություններին առաքված նյութական օգնությունները, հետ վերադառնալու արգելվեները մեղմելու և անցագրեր ձեռք բերելու համար թուրքական կառավարությունից թույլտվություն ստանալու վերաբերյալ Պոլսո Հայոց

պատրիարքներին ուղղված անձնական խնդրանքներ, * դարասկզբին ԱՄՆ-ում տիրող տնտեսական ճգնաժամի անբարենպաստ ազդեցության հետևանքով դեպի Նոր Երկիր հայ գաղթականությունը կանխելու խնդրանքներ, ընդհուած մինչև 1914 թ. պատերազմը դեպի Թուրքիա հետդարձի և հայրենի Երկրի վերականգնմանը սատարելու պատրաստակամություն և այլն:

Եկեղեցական բնույթի փաստաթղթերը ներկայացնում են ԱՄՆ-ում «Կաճառ Հայկական» (1888 թ., Ուստր) և հոգևոր-Եկեղեցական այլ կազմակերպությունների, Ամերիկահայոց առաջնորդարանի, առանձին հոգևորականների և անհատների կողմից Պոլսու Հայոց պատրիարքության ուղղված բացառիկ վկայություններ, ամերիկահայ առաքելական Եկեղեցու կարիքները հոգալու, համայնքի հոգեբանությունը հասկացող կրթված, հայասեր, առաքելագործ արևմտահայ, մասնավորապես, պոլսահայ ու անգլիախոս հոգևորականներ ուղարկելու վերաբերյալ խնդրագիր-նամակներ, հայրենի Երկրում և Պոլսու Հայոց պատրիարքությունում տեղի ունեցող իրադարձություններին ամերիկահայության արձագանքներ և այլն:

Հայապահպան-որբանպաստ բնույթի փաստաթղթերը ներկայացնում են ամերիկահայ անհատների, ազգայինների և, հատկապես, հոգևոր դասի ներկայացուցիչների մտահոգությունն ու ձեռնարկած հայապահպան միջոցառումները՝ սպառնացող օտար ամուսնություններից, ձուլման ու այլասերման վտանգից համայնքի Երիտասարդությանը գերծ պահելու ուղղությամբ, ամերիկահայ Երիտասարդության ուժացումը կանխելու նպատակով ԱՄՆ հայ որբուհիներ ուղարկելու խնդրանքը, որը միաժամանակ որբանպաստ փրկարար առաքելություն պիտի դառնար թուրքական կոտորածների հետևանքով անտերության մատնված հայ որբերի համար, այդ նպատակով ԱՄՆ-ում ստեղծված Հայուից որբախնամ ընկերության գործունեությունը՝ նյութական առաքելումները Մայր Աթոռ Սուլր Էջմիածին և այլն, հետպատերազմյան Թուրքիայում իրենց ազգականների ու որբերի ճակատագրով մտահոգ ԱՄՆ-ի հայերի դիմումները ընդհուած մինչև ամերիկացի պաշտոնյաներին, ինչպես նաև պատվախննիր ու ազգային արժանապատվություն ունեցող գաղթական հայ Երիտասարդների ու Նրանց ծնողների անձնական դիմումները Պոլսու հայոց պատրիարքներին՝ կարգադրելու հայ օրիորդների հետ իրենց զավակների ամուսնության խնդիրը՝ «յօգուտ հայ ազգութեան», «որը մը խնդացներու» և ոչ հարազատ միջավայրում գոնեն հայաշունչ ընտանիքներ կազմելու նպատակով, ինչպես ուսյալ ու կրթված, այնպես էլ 1915 թ. Մեծ Եղեռնի հետևանքով հարկադրաբար փախստական դարձած և Թուրքիայի հայքնակ տարբեր շրջաններից Պոլսում ապաստանած հայուհիների հետ, որոնց ծնողներն իրենց զավակների փրկության համար պատրաստակամ էին նույնիսկ բաժանվել Նրանցից:

Թեպետ ամուսնանալ ցանկացող ամերիկահայ Երիտասարդները հոգում էին

* Մինչև 1896 թ. օսմանյան կայսրությունից գաղթել հնարավոր էր բացառապես սուլթանի թույլտվությամբ. իսկ 1896 թ. հոկտեմբերից՝ թուրքական հպատակությունից հրաժարվելու, Երկրի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու և այլևս Երբեք չվերադարձալու Երաշխավորագրի ստորագրումից ու Հայոց պատրիարքի կողմից այն հաստատվելուց հետո միայն (Տե՛ս R.Mirak, Զշվ. աշխ., 1983, էջ 61):

հայուհիների երթևեկի ծախսերը, Պոլսո պատրիարքություն ուղարկած անձնական խնդրագիր-նամակներին կցում էին նաև իրենց լուսանկարները, առողջական վիճակի մասին բժշկի եգակացությունը, ծանօթների կողմից իրենց բնութագրող երաշխավորությունը, այդուհանդերձ, շատ հաճախ նման պայմաններում կնքված ամուսնություններն անհաջող էին լինում՝ տեղի տալով ամուսնալուծությունների:

Այդ առիթով Պոլսո Հայոց պատրիարք Ամենապատիվ S. Զավեն արք. Տերեդիայանը (1913-1922 թթ.) պաշտոնագիր նամակ է հղել ԱՄՆ-ի հայոց առաջնորդություն՝ Վերջինից խնդրելով ավելորդ թյուրիմացություններից զերծ մնալու նպատակով ստանձնել հայրենի երկրից հարսնացու փնտրող ամերիկահայ երիտասարդների պատրիարքությանն ուղղված դիմումների, անձի ինքնությունն ու առողջական վիճակը հավաստող համապատասխան փաստաթղթերի պաշտոնական վկայականով հաստատման գործը: Ամերիկահայոց Առաջնորդական տեղապահ S. Բարկեն Եպս. Կյուլեսերյանի (1920-1921 թթ.) Պաշտոնական հայտարարությամբ վավերացվել են հիշյալ հարցի վերաբերյալ առաջնորդարանի մշակած պայմանները (Ինքնության և Առողջական վկայականներ, համապատասխան դիմումի ձև և այլն):

Վերոհիշյալից բացի, Թուրքիո Հայոց պատրիարքարանի դիվանի «Ամերիկա» ֆոնդում պահպանվում են անձնական, հասարակական, ինչպես նաև հատուկներ քաղաքական բնույթի փաստաթղթեր:

Անձնական բնույթի նյութերն ընդգրկում են տարբեր տարիքի ու գբաղմունքի տեր (ուսանող, հոգևորական, աշխատավոր և այլն) անհատների խնդրագրեր, դիմումներ, գանգատներ ու գոհացուցիչ նամակներ ուղղված Պոլսո Հայոց պատրիարքներին՝ հայրենի երկրում թողած իրենց հայրենակիցներին որոնելու, նյութական նպաստ առաքելու, բարոյապես սատարելու, ընտանեկան խնդիրները կարգավորելու, հետդարձի հնարավորության և այլնի մասին գանացան փաստաթղթեր:

Հասարակական բնույթի փաստաթղթերը ներառում են ամերիկահայ տարբեր կազմակերպությունների (հայրենական գաղաքական, որբանապատ, բարեսիրական, ուսումնակրթական, մշակութային, կրոնական և այլն) ստեղծման ու գործունելության, հայրենի երկրում տեղի ունեցող տոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունների մասին նրանց արձագանքների, ամերիկահայ գաղութի ու նրա առանձին համայնքների թվաքանակի, ազգային կյանքի, բազմաբնույթ անցուդարձերի և այլնի մասին տեղեկություններ:

Քաղաքական բնույթի սակավաթիվ նյութերը ներառում են ամերիկացի պաշտոնատար անձանց հեռագրեր, առանձին քաղաքական գործիչների նամակներ և այլն:

Թուրքիո Հայոց պատրիարքարանի դիվանում պահվող հիշյալ փաստաթղթերը, առաջին անգամ հրատարակվելով և գիտական շրջանառության մեջ դրվելով, իրենց ինքնատիպությամբ ու պատմաճանաչողական մեծ արժեքով կարևոր ներդրում են հանդիսանում ԱՄՆ-ի հայ գաղութի տվյալ ժամանակահատվածի ներհամայնքային կյանքի տարբեր ասպարեզների լուսաբանման և համակողմանի ուսումնասիրման ուղղության՝ պատիվ բերելով պատմաքաղաքական տարբեր փորձությունների բովով անցած և առ այսօր կանգուն մնացած Պոլսո Հայոց պատրիարքությանն ու հայ համայնքին:

սաւորչական հայոց» անուն ընկերութեան ընդհանուր ժողավոյն, որոյ ընկերք և անդամք, ի ներկայութեամբ խառն բազմութեան, ոտնկայս և գլխաբաց իլու ջերմեռանդութեամբ ունկն դրին անդ Նշանակեալ բարձրագոյն հրաւերի՝ պատկառելի ժողովոյն կրօնական, ժողովոյն ազգային կեղրոնական վարչութեան, յորմէ յետէ հետեւեալ որոշման յանգեցաւ ժողովն, հրահանգելով դիւանս ծանուցանել Զերդ բարձրաշնորհ սրբութեան ի տեղեկութիւն:

Նկատելով թէ, ազգային կեղրոնական վարչութեան կրօնական ժողովոյն խնդրած տեղեկութիւնք, ընկերութեանս կողմանտ տեղեկագրուած է ի կեդրոն, ի մասին Եկեղեցականի մը անհրաժեշտ կարեւորութեան և նորին նիւթական պիտոյից համար, ըստ մեր կարողութեան, օժանդակելու համար ևս նշանակելով. այսու գրութեամբ կուգամք աւելցնել միայն թէ, ամբողջ Միացեալ Նահանգաց Երկու երեք մղոն տարածութեան մէջ արդարէն երկու հազարի մօտ ազգայինք գտնուիլն հաւանականութենն զուրկ չէ, այլ մեր փափաքն է, և կարելի է յաջողութիւն միայն Ասլանտեանի Եզերաց վերայ կամ մօտերն, ինչպէս են քաղաքս Նիւ Եռոք, Պօսթոն, ճերգիսիրի ևն, որոց իրարմէ Եղած հեռաւորութիւնն միայն մէկ երկու հարիւր մղոնի չափ լինելով. Եկեղեցական հովիւն շատ դիւրութեամբ կարող է այցելել սոյն տեղերն և միսիթարել ազգայիններն, որոց թիւն հազարի չափ լինել կը կարծուի և որոնք թող ներուի մեզ ըսել թէ, ի պատի իւրեանց, առատապէս վճարելու յօժարութիւնն և կամք ունին: Ուստի Ընկերութեանս Դիւանն խոնարհաբար կեզրակացն թէ, գործունեայ և հայրենասէր Եկեղեցական մը հրաշքներ գործել կարող է այս երկրին մէջ, թէ իւր նիւթական և թէ ազգային շահերն ապահովելու մասին, և առանց մէծ դժուարութեան, զի արդէն իսկ գիտենք այս անգամ փորձերով թէ, քաղաքս գտնուող բողոքական Եղբայրներու ոմանք ևս յօժարակամ ստորագրած են կարողիկէ և առաքելական Եկեղեցւոյ Սրբակրօն պաշտօնի տարեկան թօշակի ցուցակն, իբրև հայ և քրիստոնեայ: Ներուի մեզ այս անգամ ևս յայտնել թէ, որոշեալ Եկեղեցականն անզիշագէտ կամ գոնէ զաղիագէտ լինելու է ըստ փափաքանաց ժողովրդեան, որպէսզի դժգոհութեան տեղի չտրուի:

Անմիջական կարգադրութեամբ կը համբուրենք Սուլը Աջն Զեր և մնամք հնագանդ որդիք Զեր և Վշտակիր ազգիս

ամենայն ակնածութեամբ կը համբուրենք Սուլը Աջն Զեր
և մնամք հնագանդ որդիք Զեր և Վշտակիր ազգիս

Ատենապետ
Կ.Յ.Թօփիանելեան

Ատենադիր
Յ.Կոստանեան

Ֆոնդ Ամերիկա, գործ 1880-1899 թթ., արձնգր. 122, թիվ - , թուղթ 2:

Ուրբեսթեր, 29 Սեպտ., 1897

Ամենապատիւ S. Մաղաքիա Ս. Արքեպ. Օրմանեան¹

Պատրիարք Յայց Թուրքիոյ ՚ի Կ.Պոլիս

... Որք աղջիկներու համար Զեր Սրբազնութիւնը շատ դժուարութիւններ կը տեսնէ (նախկին նամակիս յիշեալ պայմանով). սակայն պէտքը յոյժ զգալի է. երիտասարդներ սկսան օտար աղջիկներ փնտոնել. հետզհետէ մեծ խումբերով ասորի ընտանիքներ կուտան և աղջիկներ կը բերեն իրենց հետ հայերուն տպալու համար. ասոնք շատ վտանգաւոր էն: Այժմ խորհեցայ ուրիշ պայման նը. պիտի ջանամ, ընկերակցութիւն նը կազմելով, հայքայթել որք աղջիկներու ճանապարհածախսն ալ: Միայն պիտի հարցնէի Զեր Ամենապատութիւննեն, թէ Պատրիարքարանը յանձնառու պիտի լինի՝ գտնալ քիչ շատ հասուն, խելահաս և դպրոց տեսած որք աղջիկներ (զի Ամերիկայի երիատասարդները մի քիչ խստապահանջ ալ են) և հետզհետէ Երկ-Երկու, Երեք-Երեք դրկել՝ ճանապարհածախսերը հետզհետէ մեզմն ստանալով:

Մնամ Աղօթարար
Մաշտոց Վարդապետ,
Ընդհանուր Յովուրիւն Յայց Ամերիկայի



Ֆոնդ Ամերիկա, գործ 1880-1899 թթ., արձնգր. 1207, թիվ 2, թուղթ 1-2:

17 Փետրուար, 1898

Ամենապատիւ Ս. Պատրիարք Յայր,²
Բարձրաշնորհ նախագահ Պատկ. Քաղաքական ժողովոյ
Ազգ. Կեդր. Վարչութեան ՚ի Կ.Պոլիս,
Ամենապատիւ Սրբազն Յայր և Վսեմափայլ ժողովականք

Նախորդ թիւ 224 պաշտօնագրով մը (7 / 13 Յունվ.) բացատրած են, թէ այստեղի հայ ժողովուրդը ի՞նչ անել կացութեան մէջ է, մի կողմէն գարնան կը պատրաստուին Խարբերդէն հարիւրաւոր ընտանիքներ գաղթելու ... այլևս պանդխութիւնը գաղթականութեան փոխուեր է: Ահա ամենէն մեծագոյն գործը որ ազգային ամենամեծ կարևորութիւն ունի:- դարձան.- Երկիրը կը պարպեն, իսու թշուառներով կը լեցնեն, անլեզու, անարուեստ խե՞ղճ գիւղացիներ կու գան կը դիզուին իրարու վրայ,- իսու

¹ S. Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարք (1896-1908 թթ.):

² Նկատի ունի S. Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարքին (1896-1908 թթ.):

գործերը բոլորովին ընկած են, տեղացիներն իսկ հազարաւոր թուերով անգո ի՞օ են.- հապա ընտանի ք բերելը.- քանինե՞ր տեսած եմ խորին թշուառութեան մէջ փափուկ կիները, 12-13 տարեկան աղջիկները կը ստիպուին չարաչար աշխատի գործարաներու, ապականեալ մքնոլորտին մէջ ... ցամաք հաց մը ճարելու համար: Ոչ, այդ չէ, որ պիտի գրեմ, զայդ գիտք արդեն դուք, նախորդ պաշտօնագրով լաւ շեշտած են այդ պարագայն խնդրելով, որ ամեն միջոց ձեռք առնուի արգիլելու համար ընտանիօք գաղթականութիւնը:

Իմ խնդիրս աւելի ուրիշ պարագայի մը վրայ է, որ և առաջինին համար լաւ դարձան մ'է: խնդիր մը, որուն ակնարկութիւնն և ըրած եմ նախորդ պաշտօնագրիս մէջ:

Եթէ չ'ենք ուզեր, որ այստեղի պանդուխտները իրենց ընտանիքները բերեն երկրու պարտաւոր ենք յորորոնք և դիւրութիւն տալ, որ իրենք դառնան Յայրենիք, իրենց ընտանեաց ծոցը.- այդ դարձին դժուարութիւնները դուք ինձմն քաջ գիտք ... սակա՞յն, այս անգամ անկարելի է փախչիլ դժուարութիւններէ: Նախորդ նամակաւս ըսած էի և խնդրած էի, որ դիւրութիւններ գտնաք, այլ այս անգամ խնդիրը տարբեր երևոյք մ'ունի, այժմ ստիպուած պիտի լինեք դիւրութիւն գտնել: ... Գարնան հայրեաւոր անձեր պատրաստուած են Յայրենիք վերադառնայ Ամերիկայէն, զայդ սոուգեցի և կուգամ ինաց տալ Պատկ. ժողովոյ: Ավենոք տասնեակ տարիներ ՚ի վեր Ամերիկայի մէջ գործարաններու գարշահոտ անկիւններում փստող թշուառներ են. մինչև ցարդ իրենց արիւն քրտինքն մի քանի տոլար կ'աւելցնին և իրենց ընտանեաց կը դրկին: Այժմ այդպիսի կեանք մը բոլորովին ձանձրացած և զգուած որոշած են ամեն դժուարութեանց տոկալով, նեղուելով, գաղտնիօրէն անպատճառ վերադառնալ, հոս իրենց ոյժը, կեանքը, բարոյականը յամրօրէն կը ջլատուի, նախամեծար կը սեպէն իրենց ընտանեաց գրկին մէջ լինել և անոնց հետ նոյն իսկ իրենց հանգուցեալ դժքախտ եղբարց վիճակին ենթարկուիլ: Ամերիկայի օսմանեան հիւատոսները անցագիր չեն տար, Տաճկաստանի նաւահանգիստներում նեղութիւն և բանտարկութիւններ, ատոնց ճարը նայինք, և եթէ քննութիւն մը կայ ընելիք, թող հոս հիւատոսները ընեն և յետոյ անցագիր տամ որպէս զի ճամբան չնեղուին:- Եթէ այդպիսի դիւրութիւններ ձեռք բերելու յաջողինք, կատահ եղեք, Պատկ. ժողովականը, որ Ամերիկայէն հազարաւոր հայեր ետ պիտի դառնան: ճամբաններու և անցագիր դժուարութիւնը անոնցմէ մեծ մասը լրած և յուսահատցուցած է:

Կ'յուսամ, թէ արդէն որոշ կողի հասկցնել խնդիրը: Ամերիկայի ընտանեկարօտ հայերը ամծկանօք կը սպասեն Ձեր կարգադրութեամց:

Կ'աղերսեմ, Ամենապատիւ Ս. Պատրիհարք Յայր, Քաղաքական Պատկ. ժողովոյ ամենեն առաջին և կարևոր օրակարգներէն մին ընեք այս խնդիրը և մեզ միամտցուցէք:

Ընդունեցէք նուաստիս և ժողովրդեամս խոնարի յարգանքները

որով մնամ սպասող
Մաշտոց Վարդապետ,

Յոգևոր Յովիւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Յայոց Ամերիկայի

Փետր. 17 / 1 Մարտ 1898
Ուստըր
(պաշտօնականք թիւ 276)

22 / 3 Յունուար, 1899, Ռւստօք

Ամենապատիւ S. S. Մաղաքիա Ս. Արքեպ. Օրմանեան¹

Պատրիարք Յայոց Թուրքիոյ ՚ի Կ.Պոլիս

Ամերիկայի Փորթթւնտ քաղաքը բնակող Սեբաստոցի Յովսէփ Փիլիկեան անուն
ազգայնոյն հաղորդեցի այն տեղեկութիւնները զոր Զեր Սրբազնութեան 3965 համա-
րաւ և 1898 նոյ. 26 ամսաթիւ պաշտօնագիրը կը հաղորդէր ինձ ՚ի մասին յիշեալի
Կ.Պոլսոյ մէջ ունեցած պահանջց կարգադրութեան խնդրոյն:

Տաճկաստանի հայաբնակ գաւառաց բնակչներէն վերջին տարիները Ամե-
րիկա պանդստող ազգայիններէն ոմանք, դիմելով առ իս կը յայտնեն, թէ Ամերիկա
գալու համար, երբ դիմելով իրենց տեղական կառավարութեանը անցագիր պահան-
ջած են, տեղական կառաւարութիւնը առաջարկած է իրենց թողով Օսմանեան հպա-
տակութիւնը և խոստում տալ այլս չվերադառնալու իրենց բնակավայրերը, որպէսզի
թոյլատորի իրենց գալ Ամերիկա: Յիշեալ ազգայինք ալ ՚ի նկատի ունենալով ժա-
մանակի պատահարաց սարսափը, յանձն առին ընդունել և ստորագրել տեղական
կառավարութեանց առաջարկը: Այժմ այդ ազգայինները փափաք ունենալով վերա-
դառնալ իրենց հայրենիքը, կը խնդրեն տեղեկանալ Կ.Պոլսոյ Ազգային Պատրիար-
քարանէն, թէ արդեօք կարելի՞ է վերստին թոյլատութիւն տալ իրենց, իբրև օսմանեան
հպատակ, դառնալ իրենց հայրենիքը և ապրիլ իրենց նախկին գրադումներուվ, թէ
ո՞չ. կը խնդրեմ տեղեկութիւն տալ ինձ այս մասին այդպիսեաց հարցմանց պատաս-
խանելու համար:

Եթէ կարելի է, կը խնդրեմ հրամայեք որոց անկ ՚ Ս. Եկեղեցւոյս համար գնել
Մայր Մաշտոց մը ու դրկել. ՚ի հասանելն պատրաստ ենք արժեքը վճարել:

Մնամ Աղօթարար
Յովսէփ Եպիսկոպոս Ամերիկայի²

¹ S. Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարք (1896-1908 թթ.):

² Նկատի ունի Ամերիկահայոց առաջնորդ S. Յովսէփ Եպս. Սարանյանին (1898-1906 թթ.):

Ֆոնդ Ամերիկա, գործ 1902-1905 թթ., արձնգր. 653, թիվ 37, բուլղ 1-3:

Խաթ Փռովիտէնս, 12 Յունվար, 1905

Գերապատիւ S. Արսեն Վրդ. Վեհունի¹
Առաջ. Տեղ. Ամերիկայի Հայոց յՈւլտըր

Ս. Հայր,

Երկար տարիներու տաժանելի ու ճաշեցնող շրջան մըն է, որ կը բոլորենք, պանդխտութեան այս երկնքին տակ, զուրկ ծնողական և ընտանեկան գուրգուրանքներէ ու հետևաբար զանոնք ևս գրկած ըլլալով մեր որդիկան ու ամուսնական սերեն:

Աւելորդ կը համարենք ըսել, թէ այդ երկար տարիներու անջատում եղած է հակառակ մեր կամքին ու ամեն անգամ, երբ մտադրած ենք դառնալ դէպի հայրենի տուն, անմիջապէս՝ ՚ի նկատի առած ենք Օսմ. կառավարութեան արգելքներ առհասարակ բոլոր գաղթական հայերու վերադարձի նկատմամբ, ու այդ խորհրդով, իբր երկու չարեաց փոքրագոյն, ստիպուած ենք եղեր քիչ մը ևս սպասել, ու նամանաւանդ կը միխթարուիինք, խորիելով որ հոն ունինք ծնողը ու եղբայրներ, որոնք կը հոգային մեր հայրենական օճախին, ու անոնց հովանույն տակ քիչ ինչ կը միխթարուիին մեր դժբախտ երիտասարդ ընտանիքներ ու ճատադ զաւակները: Սակայն դժբախտաբար թուէ քանի մը ամիս առաջ երկրէն հասած նամակները եկան գումարու մեզ մեր ծնողաց և եղբոր մահեր՝ ՚ի խոր խոցելով մեր սրտերը, նամանաւանդ սա տխուր մտածումով, որ այսօր խումք մը տակաւին մանուկ որբեր ու որբուիիներ, ինչպես նաև մեր թշվուած ընտանիքներ, կը մնան անտէր ու անտիրական, ծգուած բոլորովին բախտին: Այս տխուր ու սառարադեցիկ իրականութիւնները կը ստիպեն զմեզ անշուշտ հայրենիք վերադառնալ, ՚ի միխթարութիւն այդ թշուած որբերուն ու ՚ի պաշտպանութիւն մեր հայրենի տան կալուածներուն, որ մանաւանդ արդիւնք է մեր չարչարանքներու և հոգնատանց աշխատութեան: Սակայն կրկին նկատի ունենալով Օսմ. կառավարութեան արգելքները, այսու երկտողիս կու գանք թախանձանօք Ձեզ դիմելու իբրև Ամերիկայի Հայոց Առաջնորդական տեղապահի, որ հաճիք Պատրիարքարանի միջոցաւ շնորհ ծեռք բերել զմեզ ապահով մեր հայրենիք դրկելու համար:

Որով անհուն գոհ և երախտապարտ պիտի կացուցանք թէ զմեզ և թէ հոն գտնուած այդ անտէր որբերը, հանդէա Ձերդ անփոխարինելի բարեպաշտութեան:

Համբուրելով Ձերդ Սրբութեան հայրական Սուլք Աջը

Մնամք խոնարի ծառայք Ձերդ Սրբութեան
Եղբարք Յակոբ և Պաղտասար Յ. Հայսիկեան
(Սշոյ յԱռինջվանք գիւղացի)

¹ Նկատի ունի Ամերիկահայոց առաջնորդ S. Շովսեփ Եպս. Սարաճյանի օրոք (1898-1906 թթ.) որպես առաջնորդական տեղապահ ծառայած S. Արսեն Վրդ. Վեհունուն:

Ֆրեզնօ, Կալիֆ., Փետր. 1, 1905

Ամենապատիւ S. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան¹

Պատրիարք Հայոց 'ի Կ.Պոլիս

Սրբազն Հայո,

Չաս անգամ մտադրած եմ տեղւոյս ազգայնոց վիճակին ու կացութեան մասին տեղեկագրել Ձեր Սրբազնութեան և Ձեր բարձր ուշադրութեան հրաւիրել անոնց վրայ, բայց գիտնալով Ձեր բազմադիմի հոգսերն, պէսպէս մտածումներն ու ցաւերն, յուսած եմ դիտաւորութենէս նոր մտահոգութիւն մ'ալ չաւելցնելու Ձեր արդէն ունեցածներուն վրայ:

Այժմ սակայն այնպիսի ողբալի կացութեան մը մէջ կը գտնուիմք, որ ստիպուած եմ այդ նկատառութեան ՚ի բաց թողով և Ձեր Սրբազնութեան լուրջ հոգածութիւնն հրաւիրել տեղւոյս Ազգայնաց վրայ:

Թերևս 'ի լրոյ գիտեք թէ այժմ հայերու մեծ գաղթականութիւն մը հաստատուած է տեղս ու արագածն կը ստուարանայ անոնց թիւը: Սեր փափաքանաց հակառակ տակաւին չկարողացանք ճշգրիտ վիճակագրութիւն մը պատրաստել, բայց մօտաւորապէս 3000ի կը հասնի այդ թիւն, որոց կեսեն աւելին բողոքական հայեր են և մնացածը լուսաւորչական, հաւանական հաշուով 1000-1200 անձինք, բայց ցաւալի է ըսել թէ մեր այս թիւը երթալով պակսած է ու կը պակսի այս 2-3 տարուան շրջանին մէջ, այնպէս որ այժմ իրապէս 200 անձինք հազիւ կը ճանչցուին իբր լուսաւորչական շնորհիւ մեր անկարող ու ապիկար հովիւներուն: Բաւական տարիներ իբր լուսաւորչական հայերն աննշան թիւ մը կը կազմին, Ահարոն Վ. Սահրուեանի հովանաւորութեանը Ենթարկուած էինք որոյ մտաւոր ու ֆիզիքական կարողութիւնն ըստ ամենայնի Ձեզ ծանօթ ըլլալով աւելորդ կը համարեն բան մի ըսել, բայց երբ իետզիետ բազմացաւ մեր թիւն, անհրաժշտ հարկը տեսնուեցաւ կարող հովուի մը: Իբր 3 տարի առաջ հովուութեան կոչեցինք՝ Վենետիկի վանքեն Ելած և լուսաւորչական Եկեղեցւոյ գիրկը դարձած Սահակ Վ. Նազարեթեանը. Վենետիկի վանքին մէջ ուսում և կորութիւն ստացած անձնաւորութեան մը վրայ մեծ էր մեր համարումն, բայց, աւանդ, տեսանք թէ խարուած ենք Եղեր ու անգամ մի ևս հաստատուեցաւ սա ճշմարտութիւնն թէ ամէն փայլուն բան ուսկի կամ աղամանի չէ և վերջ ՚ի վերջոյ սա եզրակացութեանն Եկանք թէ Վենետիկի վանքը իւր վրայէն արագ մը սրբելու համար դուրս նետած է զայն ու փորձանք մը աւելցուցած մեր ժողովրդեան գլխուն: Գիտնալով թէ սոյն վարդապետը կատարելապէս ճանչցուած է Ձեր Սրբազնութեան կողմանէ, աւելորդ կը համարեն նորա մանրամասն նկարագիրն ներկայացունել, բաւական է ըսել թէ իւր վարովն, ընթացքովն, գաղափարներովն ու սկզբունքներովը՝ եթէ երբեք սկզբունք մի ունի, ու ծայրայեղ թեթևաբարոյութեամբն բացարձակապէս անյարմար է, ոչ միայն այստեղի այլ ո՛ւ և է տեղւոյ մը հովուութեան պաշտօնը վարելու: Ու եթէ այսչափ ատեն զինքը

¹ S. Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարք (1896-1908 թթ.):

պահեցինք, պատճառն այն էր որ ստիպուած էինք, ու եթե ճամբեինք պիտի պարտաւորդինք գոցել եկեղեցին, քանի որ ուրիշ մը կարող չեղանք գտնալու: Այլև համբուրութիւննիւս սպառեցաւ և մեզմէ շատեր մինչև իսկ կը խորիին թէ լաւագոյն է գոցել եկեղեցին, քան այսպիսի մեկը պահել, թող որ ինքնին այդ վիճակին հասնելու վրայ է արդեն:

Արդ ներկայիս կու գամ աղաչել Զեր Սրբազնութենեն, որ կարող ու այս ժողովուրդին և տեղւոյս յարմար հովի մը ներկայացունետ մեզ: Իրաւ է թէ այս երկիրը իրեն արտասահման, Ս. Եջմիածնի Գերիշխանութեան կենքարկուի, բայց գիտնալով այս դժուարին կացութիւնը որոյ մեզ կը գտնուի Ս. Կաթողիկոսը, չեմք կարծեր թէ հարկ եղած ուշադրութիւնը պիտի կարող ըլլայ դարձունել մեր վրայ եթե երբեք Նորին Սրբազնութեան դիմենք, սակայն ատկէ աւելի գերազանց պատճառ մը կայ, որ Զեր Սրբազնութեան դիմել կը պարտավորիմք: Գիտք արդեն, թէ տեղւոյս գաղքականութիւնը կազմուած է առանց բացառութեան, Տաճկաստանեն եկող հայերէ, հետևապէս Ռուսաստանեն դրկուելիք հովի մը բնաւ չը պիտի կարենայ գոհացունել այս ժողովուրդը, մի միայն Տաճկաստանի մեջ մեծցած անձնաւորութիւն մը պիտի կարենայ գոհացունել զմեզ ու ապրիլ մեզ հետ: Կարծեմ աւելորդ է այս նասին Երկարաբանել, Զեր Սրբազնութիւնն մեզմէ շատ աւելի աղեկ կը խելամտի ու կ'ըմբռնէ այդ բանաւոր պատճառարանութիւնը իւր բոլոր պարագաներովն:

Սրբազն Դայր, գիտք թէ այս գաղթականութիւնը եկած է Տաճկաստանի զանազան քաղաքներէ ու գաւառներէ, այնպէս որ շատ կը տարբերին իրարմէ սովորութեամբ, զարգացման աստիճանով և մտածման կամ դատելու եղանակովն, հետևապէս այնպիսի անձնաւորութիւն մը պետք է, որ ոչ միայն զարգացած, այլ նաև նկարագրի ու կորովի տէր ըլլայ և մանաւանդ գաւառային բարքերուն ու կեանքին ծանօթ: Այս տեղի համար էական պահանջ մ' լաւ խօսենու կամ վարուելու ձիրքը, մեր Ս. Եկեղեցւոյ պարզ և ուղիղ սկզբունքներն կամ դաւանութիւններն քարոզած պահուն գիտնայ նաև տեղական հանգամանքներուն կամ պահանջներուն համաձայն շինչ և բարոյացուցիչ յորդորներ ու խրատներ տալ ժողովուրդին, փոխանակ անտեղի ու քանդիչ նոլեռանդութեամ որ մանաւանդ այս Երկրին մեջ կործանարար է մեզ համար, լուսամիտ և ճշմարիտ սկզբունքներով մեր սիրտոց վառ պահել դեպ ՚ի մեր Ս. Եկեղեցին և մերձեցնել մեզ այն ազգայինները, որ հեռանալու և օտարանալու ճամբռուն մեջ մտած են: Մեր նոր սերունդը իսպառ կորսուելու վտանգին մեջ ըլլալով, կարող ըլլայ գեք Մայրենի լեզուի նախնական ուսումը տալ ու լեզուն կենդանի պահել: Ինձ կը քուի, թէ դժուար չպիտի ըլլայ այդպիսի մէկը որկել տեղս, եթե միանգամ հասկցուի ու զգացուի այն կարևորութիւնն որուն արժանի է տեղւոյս գաղթականութիւնը: Եթե ինչ ինչ նկատումներ չարգելին զիս, մի առ մի պիտի թուենք այն առաւելութիւններն ու բազմադիմի օգուտներն, որ կրնայ յառաջ բերուիլ այս Երկրին մեծ հաստատուող մեծ գաղթականութեն մը, եթե կարող հովիտ մը առաջնորդուելու բախսոր ունենայ:

Քաջ գիտենք թէ Տաճկաստանի մեջ իսկ շատ մը կարեւոր տեղեր կը կարօտին կարող հովիւներու, բայց անուրանալի է թէ անոնք գեք կորսուելու վտանգին մեջ չեն և հոգեւոր պէտքերն մատակարարելու կարող քահանաներ միայն բաւական պիտի ըլլան զանոնք Եկեղեցւոյ ծոցը պահելու և տոհմային սերը պահպանելու իրենց մեջ, մինչդեռ այս տեղեր հոգեւոր մատակարարութեան գոհացումը չէ գլխաւոր պահանջն, այլ

այնպիսի պետքէր, գորս կրնայ գոհացունել միայն լուսամիտ. հմուտ և ժրաշան եկեղեցական մը. ինչպէս է օրինակի համար Արաբկիրի առաջնորդ Մուշեղ Վարդապետն:

Չմոռնամ աւելցնելու թէ քանի մը անգամ դիմում ըրինք Ամերիկայի առաջնորդ գեր. Սարաճեան Եպիսկոպոսին, բայց միշտ այն պատասխանք ստացանք թէ ուրիշ մեկը չկայ որ ճամբէ: Բաւական ատէն է որ յիշեալն բացակայ է իւր պաշտօնատեղին, ուստի շատերու խորհուրդովն լաւագոյն դատուեցաւ, որ անպաշտօն կերպով Զեր Սրբազնութեան դիմում ընեն ու երբ գոհացուցիչ պատասխան մը ստանամք, յայնժամ հարկ եղած պաշտօնական ձեռնարկներուն կը դիմեմք ըստ Զեր խորհրդոյն: Ենիշտ այս պահուն կը յիշեցունեն ինձ թէ Ամենան անուն (որոյ բուն անունը չենք գիտեր) վարդապետ մը, Արմաշու դպրեվանքեն ելած, վերջին ատեններս եկած է Ամերիկա, արդեօք կարելի՞ է նորա մասին լիուլի տեղեկութիւններ շնորհել մեզ:

Պիտի խնդրեմ նաև որ բարեհածիք մեզ տեղեկացունել թէ Սահակ Վ. Նազարեթեանը իրօք դարձա՞ծ է Մայրենի Եկեղեցին, այս մասին բաւական տարակուտելի գրոյցներ կը շրջին: Նաև եթէ կարելի է նորա անցելոյն Վրայօք մեզ լուսաբանէք, ուրիշ աղքիւրներէ կարգ մը տեղեկութիւններ հասած են թէն, բայց լաւագոյնը կը համարեմք Զեր Սրբազնութենեն լսել և ծշմարտութեան վերահաս ըլլալ:

Սենք բոլոր պարագաներով քաջառողջ ենք ու կը մատուցանեմք մեր յարգալից յանբոյրներն Զեր Ս. Աջոյն:

Մնամ խորին յարգանօք Զերդ
Յ.Ա.Նշկեան



Ֆունդ Ամերիկա, գործ 1902-1905 թթ., արձնգր. 2064, թիվ 95, թուղթ 1-2:

Փոռվիտէնս, 16 Ապրիլ, 1905

Գերապատի Տէր Յովսեփ Արքեպիսկոպոս Սարաճեան¹
Բարեխնամ Առաջնորդ Դայոց Ամերիկայի յՈւստըր

Սրբազան Դայը,

Երկրէն մեր ընտանիքներու կողմէն Զեր հասցեին մեզի եկած նամակը, զոր տեղւոյս հոգաբարձութեան միջոցաւ դոկած էիք, ստացանք: Այդ մասին հաճեցեք ընդունիլ մեր խորին շնորհակալութիւնը:

Այդ նամակը, որ այնքան սրտածնիկ կերպով կուգայ պարզել վիճակը մեր դժբախտ ընտանիքներուն և այն արդար բողոքը, որ այնքան աղտոտորէն կը նետեն

¹ Ամերիկահայոց առաջնորդ Տ. Յովսեփ Եպս. Սարաճյան (1898-1906 թթ.):

մեր երեսին իբր ուխտադրուժ ամուսիններու, ոտք մինչեւ գլուխ կը ցնցէ մեր էութիւնը և սակայն արդարեւ իրաւունք ունին բողոքելու: Սակայն խնդիր է, թէ մենք որո՞ւ բողքենք, մենք, որ գրեթ մեր բոլոր վաստակը անջնջիատ դրկած ենք իրենց, որպեսզ դոյզն ինչ գտնէ նիւթապէս ամոքենք այդ թշուառներ, մենք որ գուրկ ընտանեկան ծնողական գուրգուրանքներ, հոս օտարութեան այս երկինքին տակ կը հալինք ու կմաշինք, մենք, որ գիտակ մեր ընտանեկան Սրբազն ուխտին, որում հակառակ մեկամքին, կարծես թէ դրժած ենք, բոլոր սրտով կը փափաքինք օր առաջ երթալ մեհայրենի երկիր: Յոն, սակայն, ինչպէս Զեր Բարձր Սրբազնութիւն գիտէ, Ծամբաներ գոցած են մեզ թրջահայերուս համար առանց բացառութեան: Մենք տասնապատի աւելի կը բողոքենք, յ'անուն արդարութեան, յ'անուն այդ անտէր և թշուառ կիներում որ Զերդ Սրբազնութիւն շնորհըն ընէ, իբր Առաջնորդ Ամերիկայի Յայոց, ընելու ինչ ոպտոք է զմեզ մեր երկիր դրկելու: Որով անհուն երախտապարտ պիտի բողուք թէ զմեզ և թէ մեր դժբախտ ընտանիքները հանդեպ Զեր անգին բարեպաշտութեան:

**Մատչելով 'ի համբոյր Զեր Սրբազնութեան Ս. Աջը
Մնամ խոնարի ծառայք Զեր Սրբազնութեան
Յակոբ և Պաղտասար Յախիկեան**



Ֆոնդ Ամերիկա, գործ 1907 թ., արձնգր. 3633, թիվ -, բուղթ 1-3:

1907, Յունիս 18, Շիքակ

Ամենայն Յայոց Պատրիարք¹

Սրբազն Յայր,

Սիալասիկ կու գամ առ Զերին Վեհափառութեանը արտայայտել մի քանի տառեր իմ տկար գրչովս:

Ինչպէս քաջ գիտէք մեր Յայոց վիճակը, որն քանի մը դարեր իվեր խեղա և ստրուկ կեանք կը վարէր, և այս վերջերս ալ աւելի սարսափելի տանջանքներ տեղացին

¹ Նկատի ունի S. Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարքին (1896-1908 թթ.):

մեր վրայ, և բաւական հայերս խեղճութեան ենթակայ ըլլալով սկսեցին օտար երկիրներ գաղթել և բափառական կեանք կը վայելէն:

Սիրելի հովիվդ Յայաստանեայց Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ, Խ. (իմա խոնարհ – Ք.Ա.) ծառանիդ և միկնոյն հարուածով վիրաւորուած սկսեցի միկնոյն քափառիկ կեանքը վայելել մեր հայրենիքի լուսաւորչական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցին զուրկ մնացած ըլլալով:

Ուստի Սրբազան Յայր և Սուրբ Եկեղեցւոյ հովիւ, Խ. ծառանիդ (26) տարեկան հասակին հասած և օտար երկիրներ մնացած ըլլալով և ննջեցեալ ծնողքս ալ Պոլիս թողնելով, միայնակ կեանքես ծանծրացած ըլլալով, կ'ուզեն իմ ներքին գաղափարս արտայայտել Զեր Վեհափառութեան առաջ, և յուսամ նկատի պիտի առնեք, այսինքն նպատակս է իմ հայրենիքի հայ օրիորդի մը հետ ամուսնանալը փոխանակ օտար ազգինը, ինչու որ՝ չեմ ուզեր ազգութեանս արիւնը ապականել: (Յայ որբանոցէն ուսեալ):

Ուստի Սրբազան Յայր և Եկեղեցւոյ քաջ հովիւ, խոնարհաբար կու գամ առ Զեզ, որուն պարտականութիւնը Զեզ վրայ թողնելով, յուսամ 'ի գործ դնել պիտի ջանաք վերոյիշեալը:

Իմ անունս է Յովակիմ Միրաքեան, ծնած եմ Պոլիս, Իպրահիմ Փաշա Մահլէսի:

Մնամ Վեհափառութեանդ նամակիդ սպասող
ծառանիդ Յովակիմ Միրաքեան

3.4. Յաճեցէք իմացնել մեզ, թէ ի՞նչ տեսակով կրնանք կարգադրել օրիորդի խնդիրը.
այսինքն՝ դրամի մասին, թէ՝ որչափ: Թիթետ, թէ՝ դրամ:

Յասցւ հետեւեալն է.

Jack Mirakian
132 So. Halstad St.,
Chicago, Ill.
U.S.A.

Պատրիարք Յայր,

Յետևեալ ստորագրող արք և կանայք կը վաւրացունենք պրոն. Յովակիմ Միրաքեանի ազնիւ ընթացքը, որուն թէ բարոյականին և թէ գործնականի մէջ ունեցած լաւ վարքը տեսնուած ըլլալով, կստորագրենք հետևեալք.

Խաչատուր Ս. Սամուելեան
Տիկին Նազլու Սամուելեան
Տօրտ. Ս. Չուպանեան
Տօրտ. Յ.Կ.Յովաննեսեան

Փրովիտենս, 1910 թ., Յուլիս 2

Ամենապատիւ S. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան՝
Պատրիարք Յայոց 'ի Կ. Պոլիս

Սրբազն Յայր,

Քաղաքս որ երեք հազար աւելի հայ գաղթականութիւն մ'ունի և որուն գրեթէ չորս հարիւրն ընտանեօք. քանի տարիներէ 'ի վեր է այս մեծ գաղթականութիւնը առ ՚ի չ'գոյէ Եկեղեցական գրկուած կը մնայ կրօնական ամեն մինիթարութենէ, տարուան ընթացքին մէջ հազիւ մի անգամ կարող կ'ըլլայ հայ Եկեղեցական մը ձեռք բերել Եկեղեցական արարողութիւն կատարել տալու հաճար. ննջեցեալներ կը քաղուեն առանց Եկեղեցականի. Պատկի խորհուրդներ կը կատարուին օտար Եկեղեցական-ներու ձեռամբ, երեխաներ կը պահուեն երկար ատեն առանց մկրտութեան, մինչև որ Եկեղեցական մը ձեռք բերուի, ու կը պատահի շատ անգամ ալ որ կը մեռնին առանց մկրտութեան:

Սրբազն Յայր, քաղաքս չէ միայն որ կրօնական այս տիխուր ու ողբալի վիճակն ունի, այլ ամբողջ Փրովիտենսի թէմը, որ կը պարունակէ իր մէջն աւելի քան եօթն հազար հայ գաղթական, կեսեն աւելի ընտանեօք. մի այսպիսի ազգակուլ երկրի մէջ, այսքան ստուար հայ գաղութ մ' երը ընդ երկար ձգուի կրօնական լքեալ վիճակի մէջ, զուրկ Եկեղեցական արարողութենէ, բաւական է որ անոնք սակաւ ալ օրական պիտի ստանան: Մենք հոս շատ անգամ աշխատած ենք մեր մնայուն Եկեղեցականն ունենալ, բայց չենք կրցած ձեռք բերել. քանից դիմում ըրած ենք առաջն փոխանորդ Գաֆթանեան Յոր և խնդրած իրմէն մի անգամ հոս այցելել միահին միջոց մը խորհելու այս կարևոր ու բազմահայ թէմը փրկելու: Ներկայ կորստաբեր վիճակին, սակայն նա չէ հաճած կարծ այցելութիւն մը իսկ տալ, առարկելով թէ «թէմէս չեմ կրնար հեռանալ»:

Ուստի կը խնդրեմք Ձեզմէ վարդապետ մը տրամադրելի ընել թէմիս մնայուն հովուութեան պաշտօնին. վարդապետ մ' որ ժողովուրդ կառավարելու բաւական փորձութիւն ունենալէ զատ ուսեալ ու բաւականաչափ ալ թէմբասաց ըլլայ:

Մնամ խորին յարգանօք Ձերդ

Ա. Տերայենց

Ատենապետ Յայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

¹ S. Եղիշէ արք. Դուրյան պատրիարք (1909-1910 թթ.):

Ֆոմի Ամերիկա, գործ 1913 թ., արձնգոր. 1163, թիվ - , բուլղ 1-2:

Ամենապատիւ Տէր Տէր Յովիաննէս Սրբազան Վրքեպիսկոպոս Արշարունի¹
Պատրիարք Հայոց Թուրքիոյ.

Կ. Պոլիս

Ամենապատիւ Սրբազան Հայոց,

Ամերիկայի մէջ, սեփիհական Եկեղեցի ունեցող վայրերէ զատ քաղաքներ, կամ եպիսկոպոսներու Եկեղեցիներու և կամ վարձուած մասնաւոր սրահներու մէջ պաշտամունք կը կատարէն և պատարագ կը մատուցանէն:

Նիւ Եօրք ալ այս Վերջիններէն մէկն է. սրահ մը վարձուած է, ուր կիրակի օրեր պաշտամունք և պատարագ կը մատուցանէնք, հասարակ օրեր, կես օրէ Վերջ (ը-ե) ժամը 3-5 1/2 հայ երկսեռ մանկտացն հայ. ընթերցում, պատմութիւն և կրօնի դասեր կը տրուին:

Սեղաննիս շարժական է, որ Վերջերս շինել տուինք, շատ մը պակասներու մէջ, աչքը զարնող պակասն է Ս. Աստուածածնայ և մէկ մըն ալ խաչի օժուած պատկերներին:

Ամերիկահայը շատ դրամ կու տայ կրթասիրացներու, ուսումնասիրացներու, որրասիրացներու ևն ևն, բայց, կը տարակուսիմ, որ Եկեղեցական պատկերի համար դրամ տայ. միւս կողմէ սակայն, Պոլսոյ շատ մը Եկեղեցիներուն մէջ մէկէ աւելի Ս. Աստուածածնայ և խաչի օժուած պատկերներ կենալն կասկածէ Վեր ըլլալուն: Այսչափ մը միմիքարութեան մեզ պարզնելու ակնկալութեամբ, սոյն դաշնագրացս կը մատուցանեմ Զեր Բարձր Սրբազնութեան, խնդրելով, որ Ծաղկազարդէն առաջ սոյն երկու պատկերներն մեզ հասցնելու համար հարկ եղողներու հարկ եղած խիստ հրաման տալ բարեհաճիք:

Մատչիմ ՚ի համբոյր Աջոյն Զեր Բարձր Սրբազնութեան,

Եմ և մնամ ամենախոնարի և երախտապարտ սրտի,

Մատքոս քին. Մանիկեան

Հովի Շոգեւոր Նիւ Եօրքի

10 Մարտ, 1913

Նիւ Եօրք

¹ Տ. Յովիաննես արք. Արշարունի պատրիարք (1911-1913 թթ.):

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Յայր¹

Առջի օրուան «Ժամանակ»ի մէջ նամակ մը կար, որ կը նկարագրէր Ամերիկա գացող ազգայնոց խեղճութիւնն յօրինակ և ՚ի գգուշութիւն այլոց:

Այս գրութիւնը յիշեցուց ինձ, թէ ասկէ առաջ յանձնաժողով մը կազմուեցաւ խորինը և գործադրելու համար արտագաղթի հոսանքին առաջքը առնելու միջոցները: Չեմ գիտեր, թէ այդ յանձնաժողովը իրո՞ք կազմուեցաւ, և եթէ կազմուի իսկ, պիտի կարենա՞յ օգտակարապէս իր նպատակը իրագործել: Որովհետև յայտնի է, թէ յորդորներն ու քարոզները միայն բաւական չեն ետ կեցնելու անոնք, որ յաջողութեան յոյսերով և օրինակներով, - ըլլան նոյն իսկ ցանցառ - քաջալերեալ որոշած են իրենց համար «Աւետեաց Երկիրը» երաւ, և ցորչափ բնագաւառներուն վիճակը նիւթական և ընկերական ներկայ պայմաններուն մէջ կը մնայ, և աւելորդ է ըսել, թէ ինչ որ ալ ըլլայ, դեռ Երկար ժամանակներ թերևս պիտի շարունակէ մնալ, պէտք չունինք ինք-զինքնիս խաբել, այս վիճակը պիտի տնե: Եվ եթէ կառավարութիւնը չուզէ արգելիչ գործնական միջոցներ ծեռք առնել, չեմ կարծեր, որ բարոյական միջոցներ բաւական ազդեցիկ կարենան ըլլալ կասեցնելու համար այդ հոսանքը:

Ըստ իս, միայն մէկ միջոց կայ, զոր քարոզներուն և յորդորներուն հետ միանգամայն Զեր Սրբազնութիւնը կրնայ լոկի մնջիկ ՚ի կետ առնել անշուշտ աւելի օգտակարապէս, քան հազար յանձնաժողովներ և կուսակցութիւններ:

Յայտնի է, որ գաղթողներուն մէջ ամհամեմատ շատ փոքր թիւ մ'է, որ Երբայլն յետոյ կը յաջողի և գոհ կը մնայ իր գաղթելն: Մնացեալ անհուն մեծամասնութիւնը դեռ կէս ճամբուն չի հասած կամ հոն Երբայլն առաւել կամ նուազ ժամանակամիջոցէ մը յետոյ կամ նիւթական, կամ փիզիքական ու առողջական, և կամ նոյն իսկ բարոյական և ընկերական պատճառներով արդէն իսկ զղացած է տեղէն ելլելուն և կուզէ վերադառնալ, բայց նախ մեծ մասանք նիւթական միջոցները կը պակսին իրեն վերադարձի Երկար ժամբորութեան ծեռնարկելու համար: Յետոյ չի համարձակիր կամ կամչնայ ծեռնունայն դառնալու իր հայրենիքը: Ասկէ զատ բարեկամներ կամ ընկերներ կը բռնեն զինք և կստիպեն մնալ, կամ թէ անգամ մը հոն ինկած, կը յուսայ և կը յուսայ բարութուն մը ծեռք բերել և կը մնայ մինչև որ օր մ'ալ յախտենական կերպով թողու անդ իր մնացորդները:

Արդ, եթէ գտնուի մէկը կամ մարմին մը, որ հսկէ այդ գաղթողներուն վրայ, որ հետամուտ ըլլայ անոնց, որը չեն կրցած յաջողիլ և աւելի կամ նուազ անօգուտ տեղը կը մնան օտարութեան մէջ, կամ թէ յաջողած ըլլալով հանդերձ կը փափաքին այլևս վերադառնալ, և սակայն սա կամ նա նկատառումներով կը վարանին, և քաջալեր և ՚ի վիճակի դնե զանոնք իրենց Երկիրը դառնալու, ծշմարտապէս մարդասիրական և ազգօգուտ գործ մը կատարած պիտի ըլլայ, որովհետև, ինքանինքնիս չի խարենք, Նոր աշխարհ գացող հայերը ընդ միշտ կորսուած են Ազգին համար: Եթէ գացողները կրցան վերադառնալ, լաւ, եթէ ոչ, նոյն իսկ առաջին սերունդը անգամ օտարացած է հայութե-

¹ Նկատի ունի Տ. Զավեն արք. Տեր-Եղիայան պատրիարքին (1913-1922 թթ.):

մեն, ուր մնաց Երկրորդ և Երրորդ սերունդները, և տղայամտութիւն պիտի ըլլար յուսալ, որ մէկ քանի ինչ ըլլալ կամ ինչ ընելին իրենք ալ չի գիտցող զարգացեալ (?) կամ ոչ, Եկեղեցականներ պիտի կարենան օտարացնան առաջքն առնել, Եթէ նոյն իսկ իրենք առաջնորդ չըլլան ատոր Եկեղեցին բարեկարգելու իրենց, չեմ գիտեր ինչպէս որակեմ, ջանքերով և գործունեութեամբ (?!): Բարեկախտութիւն մ' սակայն, որ այդպիսի մարմին մը գոյութիւն ունի, որ է Եգիպտոսի Բարեգործականը, որ, Եթէ չեմ սխալիր, արդէն Նոր աշխարհի ամէն կողմը իր մասնաճիւղերն ու ներկայացուցիչներն ունի և որ կրնայ իր ունեցած ազգին հաճար ճշմարտապս նախախնամական դերը այս մասին ՚ի կետ առնել, Վերադարձնելով այսպիսիները հետզիետ իրենց հայրենիքը կամ գեր Տաճկաստանի հայաբնակ վայրերը, ուր մանաւանդ հիմա բաւական գործ կայ աշխատաւոր բազուկներու կարօտ, և ուր գործ ընդհանրապս օրավարձերը քիչ շատ գորհացուցիչ են և մէկ կողմէ ալ պիտի ըլլան: Ուստի, Եթէ Զեր Բ. Սրբազնութիւնը համամիտ է այս մասին, թող դիմէ ուղղակի Բարեգործականի կեղորնին և ջանայ ընդունիլ և գործադրել տալ այս առաջարկը նոր ապացոյց մ'նս ընծայելով այսու իր լուրջ և գործնական ոգլոյն և ուղղութեան, որոյ, առաջին օրէն իսկ, հեռուեն խոնարհաբար գնահատող մ'է:

Դամբուրիւ Ս. Աջոյն Զեր Բ. Սրբազնութեան
Ն.Ծ.

21 Յունուար, 1914



Ֆոնդ Ամերիկա, գործ 1914 թ., արժնգր. 624, թիվ -, բուղթ 1-2:

Յունուար 22, 1914, Նիւ Եորք

**Ամենապատիւ Չաւէն Արքեպիսկոպոս Եղիանան,¹
Պատրիարք Ամենայն Հայոց Կ.Պոլիս**

Սրբազան Հայո,

Զեր Սրբազնութեան կու գանք յայտնել մեր խորին խնդակցութիւնները եւ շնորհաւորութիւնները ազգիս Պատրիարքութեան այդ նույիրական պաշտօնին գլուխը անցնելնուդ առթիւ եւ կը մաղթենք, որ բարձրեալն Աստուած Զեզի պարգեւ վերին իմաստութիւն եւ զօրութիւն, որպէսզի կարող ըլլաք ազգին նաւը ապահով տեղերը դեկավարել, մանաւանդ այս ամենափափուկ ժամանակներուն մէջ:

Կ'ուգենք այս առթիւ Զեր Սրբազնութեան ուշադրութիւնը հրաւիրել մօտերս Ամերիկա գաղթող հայերու աննախանձնելի վիճակին:

Վերջին քանի մը ամիսներուն մէջ Ամերիկա տնտեսական տագնապալից

¹ S. Չավեն արք. Տեր-Եղիայան պատրիարք (1913-1922 թթ.):

Վիճակի մը մէջէն կ'անցնի, որուն հետեւանօք շատ մը գործարաններ փակուած են եւ հազարաւոր գործաւորներ, ի շարս որոց բազմաթիւ հայեր, անգործ կը թափառին շաբաթներէ իվեր, ողորմելի դժբախտութեանց մատնուած:

Նկատելով, թէ մեր հայրենակիցներէն շատեր հոս գալէ ետքը չարաչար յուսախար եղած կը գտնեն ինքզինքնին եւ շատեր, չիմանալով անգործութեան տառապանքին, յետին թշուառութեան եւ յուսահատութեան մէջ կիյնան, կը խնդրենք Ձեր Սրբազնութենեն, որ Թուրքիոյ Առաջնորդարաններուն եւ տեղական թերթերուն միջոցաւ հրահանգ տաք հայ ժողովուրդին, որ այս միջոցներուն Ամերիկա չգաղթեն:

Դայ Գաղթային Ընկերակցութիւնը մօտէն տեղեակ ըլլալով թէ՝ այս երկրի գործերուն եւ թէ հոս եկող նորեկ հայերու թշուառ վիճակին, պարտք կզգայ այս խնդիրը ներկայացնել Ձեր Ամենապատութեան, յուսալով, թէ զարժանն պիտի տնօրինէք:

Ամենախորին յարգանքներով,
Ձերդ Խ.Կ.Պէննէեան¹
տնօրէն



Ֆոնդ Ամերիկա, գործ 1888-1920 թթ., արձնգր. 5435, թիվ 616, բուղթ 1-5:

Ուստոր, Մէսս., Յուլիս 29, 1919

Ամենապատիւ Տ. Տ. Զաւէն Ս. Արքեպիսկոպոս²
Պատրիարք Դայոց և Նախազահ Ազգային Կեդր. Վարչութեան, Լայլ և Այլն
'ի Կ.Պոլիս

Բարձրաշնորհ Սրբազն Դայը,

Ամերիկայի Դայց. Առաքել. Ս. Եկեղեցւոյ Ազգ. Կեդր. Վարչութիւնը Յուլիս 18-ին Ուրբաթ օրը ի Պոստոն գումարուելով, նախ նկատի առաւ պաշտօնապէս Ձեր Սրբազնութեան Վերադարձը յԱբոր և ի գործ Պատրիարքութեան Դայոց, ողջամբ և բարեա, յետ աշխան տառապանաց և դժմրակ պայմանաց Ձեր աքսորական կենաց:

Կեդր. Վարչութիւնը անհուն իրճուանօք արձանագրեց այդ պատմական եղելութիւնը՝ ի փառ Դայկական Ազգատութեան և Մարտիրոսութեան և ի ցնծութիւն Մօրս Սերոյ Դայաստաննեաց Սուլը Եկեղեցւոյ:

Սրբազն Տէր, թոյլ տուէք ուրեմն ըստ որոշման Ազգ. Առաջնորդարանիս Կեդր.

¹ Նկատի ունի Դայ Գաղթային Ընկերակցության տնօրեն, «Կոչնակ» շաբաթաթերթի խմբագիր Վերապատվելի Խաչատուր Կ. Պեննեյանին:

² Տ. Զավէն արք. Տէր-Եղիայան պատրիարք (1913-1922 թթ.):

Վարչութեան, այսու ի պաշտօնէ Ձեզ ներկայացնել գաղութիս Հայ Ազգ. Եկեղեցւոյ համայն հաւատարիմ զաւակաց և ժողովրդեան ու անոր ներկայացուցիչ ժողովականաց և իմ ջերմագին խնդակցութիւններն ու շնորհավորութիւններն այդ գերազանցապէս պատմական իրադարձութեան առթի:

Դարիւ հազարաւորներով հայութեան պատուական ու անմեղ զաւակաց գո- հերուն մէջէն Աստուած է որ խնայեց, պաշտպանեց, պահեց ու հուսկ ուրեմն վերա- դարձուց զՁեզ կրկին ի գլուխ Ձեր հօտին, որպէսզի ոչ միայն կարենաք Ձեզի Ազգին Կամքովն ու Աստուուժոյ Շնորհքովն յանձ- նուած Շառայութեան Մեծ և Օգտակար Գործը, այլ մանաւանդ, անցնելով Դիւցազն ու Մարտիրոս Հայ-Քրիստոնեայ Ձեր զաւակաց սպանդանոցներուն, արեան ծովերուն աւերեալ շնչերուն և անոնց ոսկորներովը ճերմկած անշէն անապատներուն անհու- նութիւններէն, այժմ կանգնած Աշխարհի-Դատաստանին վկայութեան արողին վրայ, Կենոնանի, Անլուելի, Անկաշառ Վեան, Պատմիչը և Խօսնակն լինիք մօտ Մէկ Միլիոն Անեղ Հայ-Քրիստոնեայ Զոհերու սպանութեանց, Ծերերու խոշտանգանաց, Մայրերու Ենթարկուած անարգանաց, Կոյսերու անպատի բռնաբարմանց, Սանուկներու և Որ- բերու դժոխային և գազանական տանջանացն և վերջապէս իրենց գերեզմաններէն յասնող վերապրող հայութեան ընդգեցուցիչ ողբերգական կացութեան:

Այո՛, Սրբազն Տէր, Աստուածային Նախախնամութեան ամերկոյք, հզօր ու կենդանի Աջը առաջնորդեց Ձեզ և կրկին բերաւ, որ Դուք Նոր Թարգմանիչն ըլլաք հայ ցեղին Անսահ Իրաւանց և Արդարագոյն վրիժաց՝ յԱնուն ան Աստուուժուն, զոր մեր փառաւոր նախնիք և հաւատացեալ հարք և հայոց ազգն պաշտեց ի բոլոր սրտէ, յան- կեղծաւոր մտաց, ամբողջ բան դարե՛ շարունակ:

Տարակոյս չունիմ, թէ այսուհետեւ ցորչափ ապրիք, պիտի խորապէս և ամէն վայրկեան աւելի պիտի զնահատէք, գիտակցիք և շնորհապարտ պիտի ըլլաք կենդա- նացն Աստուուժոյ այն բացարիկ առանձնաշնորհման համար, զոր Նա Ձեր Սրբազնու- թեան պարգեւեց: Ուստի և Դուք, կը հաւատանք, թէ չպիտի դադարիք գործելէ, բարձրա- բարբար պահանջելէ, վկայելէ, պատմելէ՝ բողոքելով, որ ինչ զոր ծշմարտութիւն, արդարութիւն, դատաստանական իրաւունք և աներկմիտ վճիռ է ընդմէջ Աստուուժոյ և իր չարչարեալ խաչեցեալ Նոր Որդույն-Հարութեան մէկ կողմէ, և անբարոյացած, փտած, գազանացած մեր մարդակերպարան թշնամի Թուրքաց միւս կողմէ: Մինչև զախարիի հա- լատացեալք և երկիրածք նորէն ցնծան, մինչև յաւիտենական կորստեան սուզը, թախիծք պատ անզգամներուն հոգին և մինչև որ իրենց անբանացած, ծիւաղային գիտակցութեան այժմ որդուտած հիւլմերն բուժուին և գիտնան ու իրատարակեն Հայոց Անմեղութիւնն, իրենց անպատում ոճիրները և թէ «Ե՛Աստուած» և «Տէր է Յիսուս Քրիստոս»:

Անցման և սպասման այս շրջանին՝ միտքս և գիտակցութիւնս ինձ կը ծանու- ցանէն, թէ այս է Հայոց Պատրիարքիդ հիմնական գործն ու կոչումն, որուն մէջ Ձեր կատարեալ յաջողութեանն համար ջերմագին կաղօթենք առ Աստուած: Նոյն ատեն կարողութիւն, գօրութիւն և իր Առաջնորդական Բանք շնորհէ Ձեզ, որ սատ Եսայեայ, կարողութիւն, որպէս գտողովուրդն, որ լի եղև տարապանօք», լոյս և յոյսն ըլլաք մքնացած «միսիթարեք գտողովուրդն»:

ազգերուն և լքուն հոգիներուն, իբր Աւետարանի պաշտօնեայ և Քրիստոսի Առաքեալ, իսկ հայր և պաշտպան թիւրաւոր որբոց, այրիաց և զրկելոց իբր պաշտօնեայ և գործադիր պետը Ազգին:

Կուզեմ հաւաստել, Սրբազն Հայր Զեզ, թէ մեր գաղութին բոլոր հարազատ հայ Քրիստոնեայ Զաւակաց աղօթքը սրտարուիս և խորին յարգանք ու համակրութիւնն համբուն, Զեզի համար և Զեզի հետ է, ինչպէս որ էր Զեր աքսորանաց և վտանգից ամբողջ շրջանին մէջ: Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ինքն առաջնորդէ, կարողացուաց և յաջողէ զԶեզ յամենայն գործս ի բարիս:

Կը խնդրինք, որ ընդունիք Ամերիկահայ Առաջնորդական Վիճակիս անունով մեր յայտնած այս շնորհաւորութիւններն, առ Աստուած ուղղուած մաղթանքներու անկեղծ հաւաստիքը և հայրական և պատրիարքական Զեր պատգամներով յուսադրոք, քաջալերեք, հաստատէր մեր վիճակին ու գաղութին «Քենական հովիւններն», «Հովուական» և «Առաջնորդական թեմերու Հոգաբարձութիւններն», Երեսփոխանական ժողովոյ կազմն, որ իր տարեկան ժողովն պիտի ունենայ Սեպտ.ի վերջին կիրակի օրը և համայն հայ ժողովուրդն Ամերիկայի գաղութին, որ կարու են Զեր Օրինութեանց և Միուն, նանանաւանդ զի Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին հետ թղթակցութիւնը աւելի քան տարի մը բացարձակապէս անկարելի դարձած են:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյն ու Խաչին Ամեն. Սրբազնութեանդ,

Սնամ խորին յարգանօք,

Առաջն. Տեղապահ Հայոց Ամերիկայի

Ծահէ Ծ. Վարդ. Գասպարեան¹



Ֆոնդ Ամերիկա, գործ 1920 թ., արձնագ. - , թիվ 3337, քուղք 1-2:

Կ. Պոլիս, 14 Սեպտմ., 1920

Գերաշնորհ Տ. Բարգէն Ս. Եպսկ. Կիլէսէրեան²
Առաջնորդական Տեղապահ Ամերիկահայոց յ՛Ուսքը

Զինադադարէն յետոյ, երբ ճամբաները բացուեցան, Ամերիկայէն հետզհետ

¹ Ամերիկահայոց Առաջնորդական տեղապահ Տ. Ծահէ Ծ. Վարդ. Գասպարյան (1917-1920 թթ.):

² Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ Տ. Բարկեն Եպս. Կյուլեսերյան (1920-1921 թթ.):

Պոլիս գալ սկսան հայ երիտասարդներ հարսնացու աղջիկներ փնտռելու, ինչպես նաև եղան շատեր, որոնք իրենց ծանօթներու միջոցաւ աղջիկներ ուզեցին ամուսնութեան համար, և որովհետև հոս միջակ ու աղքատ դասակարգի աղջիկներու համար շատ դժուար է ամուսնութիւն կնքել, մանաւանդ որ վերջին պատերազմին անոնք ալ աւելի նեղութիւններու ու փորձանքի ենթարկուած էին, ուստի անոնց ծնողները շատ դիւրաւ սկսան հաւանիլ իրենց աղջիկներուն համար Ամերիկայի եկած այս առաջարկներուն: Թեպետև Ամերիկայի մեր երիտասարդներուն այս ծեռնարկը իր երկրին օգուտը ուներ, որովհետև մեկ կողմէն անոնք հայ աղջիկներուն հետ ամուսնանալով հայ ընտանիքներ կազմելու ազգասիրական գգացումներով տոգորուած են, և միւս կողմէ մեր ոչ բարեկեցիկ հայ ընտանիքի աղջիկներն ու որբուիիները իրենց համար մեկ-մեկ կենակից ունենալու բախտը պիտի վայելէին, բայց այս կարգի ամուսնութիւններն ալ իրենց անպատեհութիւններն ունեցան ու պիտի ունենան, եթէ դարձանը չխորհու: Որովհետև կը պատահի, որ երիտասարդին կողմէ իր վիճակի մասին ներկայացուած և կամ անոր մասին դուրսէն առնուած տեղեկութիւնները իրականութեան չեն համապատասխաններ, և կամ յանձնարարութեամբ դրկուած աղջիկը չը համակրի զինքը հրաւիրող փեսացուին, և փոխադարձաբար, և ահա կը սկսի դժբախտութիւնը երկու կողմին համար ալ իր բոլոր դաշնութիւններովը, մանաւանդ օտար ու անժանօթ այդ հեռաւոր երկրին մեջ:

Արդ՝ բոլոր այս անպատեհութիւններուն առջև առնելու և խարկանքներու տեղի քրողլու համար պիտի խնդրենք Զեր Ս. Եղբայրութենէն, որ բարեհածի, թէ մեր անունով և թէ իր անունով, Ամերիկայի բոլոր հայ թերերու մէջ յայտարարել թէ յետ այսօրիկ Ամերիկա բնակող մեր հայ երիտասարդներէն ամուսնանալու համար անձամբ կամ իր ծանօթներու միջոցաւ դիմում ընողները պէտք է ի ծեռն ունենան Առաջնորդարաններ առած վկայական մը՝ ներկայացող անձին լուսանկարովը մէկտեղ, որ հաստատ անոր ինքնութիւնը, տարիքը, ծննդավայրը, այժմեան բնակավայրը, բնական վիճակը (ամուրի, թէ այրի), արհեստը և նիւթական կարողութիւնը, ինչպես նաև նոյն վկայականին կցուած ըլլայ անոր առողջական վիճակը պատկերացնող բժշկական տեղեկագիրը (Ռաբոր) հաստատուած Առաջնորդարանիդ կողմէ: Առաջ այս վկայականներուն Պատրիարքարանս չպիտի թոյլատրէ Ամերիկայէն առաջարկուած ու է ամուսնութեան:

Կստահ ըլլալով, որ Զեր Գերապատուութիւնը, նկատի առնելով մեր այս առաջարկին կարողութիւնը, պիտի բարեհածի անմիջապէս հետևանք տալ անոր ու մեզի ալ տեղեկութիւն հաղորդել.

Մնամ ողջունի Սիրոյ Աղօթակից
Պատրիարք Հայոց
Զաւէն Արքեպատկ.¹

¹ S. Զավեն արք. Տեր Եղիայան պատրիարք (1913-1922 թթ.):

Առաջնորդարան Հայոց Ուստուր

ՊԱՇՏՈՆԱԿԱՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՒՆ

ի պատասխան Կ.Պոլսի Հայոց Պատրիարք Ամեն. Զաւեն Սըրբազանի
թիվ 3337 եւ 14 Սեպտեմբեր, 1920 թուակիր պաշտօնագրի

... Որովհետեւ պատահած է, որ կամ երիտասարդներ սեռային ախտերով վարակեալ գտնուած են, եւ կամ իրենց մասին տրուած տեղեկութիւններ եւ եղած յանձնարարութիւններ չեն հանապատասխանած իրականութեան, եւ խեղճ աղջիկներ միայն Ամերիկա հասնելէ ետքը դէմ ու դիմաց եկած են սոսկալի իրականութեան հետ: Վասնգի եթե փեսացուն յանձնարարուած է իբրեւ երիտասարդ կամ իբրեւ քարեկեցիկ կամ լաւ գործի տէր, կարող ընտանիք պահելու, եւայլն, իրականութեան մէջ հաստատուած է, որ երիտասարդ ըսուածը տարիքը առած, խեղանդամ, անխիդամ մարդուն մէկն է, իսկ քարեկեցիկ կամ լաւ գործի տէր ըսուածը անգործ մէկը, անկարող տուն տեղ պահելու, եւայլն, եւայլն, եւ այսպիսիններ հեռուներէն յանդանած են Ամերիկայի անունով իրապուրել Հայոց պատուազգաց աղջիկները եւ Ամերիկա բերել տալով զանոնք պատճառ եղած են անոնց դժբախտութեան:

Որպէս զի այսպիսի սխալներ չշարունակուին եւ դժբախտութիւններ չպատահին այլեւս, երկուստեք ամուսնացողներու շահուն եւ օգտին համար, Կ.Պոլսն հարս առնել կամ բերել ուղղողներ պէտք է որ իրենց ծեռքը ունենան երկու տեսակ վկայական, մէկը ստուգելու եւ հաստատելու համար փեսացուներուն ինքնութիւնը, իսկ միւսը՝ յայտնելու համար փեսացուներուն առողջական վիճակը:

Ինքնութեան վկայականը պիտի տրուի Առաջնորդարանիս կողմէն:

Անոնք որ ինքնութեան վկայական կ'ուզեն առնել Առաջնորդարանէս, պէտք է որ անձանք ներկայանան իրենց տեղույն Հոգաբարձութեանց, անշուշտ ուր որ Հոգաբարձութիւններ կան-, եւ կամ ուղղակի Առաջնորդարանիս, եւ լեցնեն խնդրագիր մը (էփիկրէյրն) եւ տան իրենց լուսանկարէն երկու օրինակ, որ պէտք է հանուած ըլլայ ճիշտ այդ օրերուն:

Իսկ Առողջական վկայականը պէտք է առնուած ըլլայ դարձեալ ճիշտ նոյն օրերուն, ժամօթ, վկայեալ եւ խորամիտ բժիշկէ նը: Թէ Հոգաբարձութիւններէն եւ թէ բժիշկներէն տրուած վկայականներ պէտք է վաւերացուին Առաջնորդարանիս կողմէն:

Անոնք որ առանց այս վկայականներու կը դիմեն Կ.Պոլսի հարս առնելու կամ բերելու համար, այդպիսի դիմումներ պիտի մերժուին Ազգային Պատրիարքարանի կողմէ:

Այս կարգադրութիւնները կը յայտնենք յանուն Կ.Պոլսի Պատրիարք Ամեն. Զաւեն Սըրբազանի եւ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան, եւ կը յանձնարարենք մեր Եկեղեցիներու Հոգաբարձութեանց եւ Հոգեւոր Հովուաց, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որ կը հետաքրքրուին այդ խնդրով, որպէսզի նախանձախնդիր ըլլան պահպանելու այս կարգադրութիւնները:

Սնամ Աղօթարար
Տեղապահ
Բարգեն Եպիսկոպոս¹

1920, Հոկտ. 25



Ֆոնդ Ամերիկա, գործ 1921 թ., արձնգր. 194, թիվ - , թուղթ 1-2:

Էլիզ Այլբնտ, 23 / 12, 1920

Ազնուաշուք Տեր,²

Ներկայս կը խնդրեմ Զենէ ծառայութիւն մը. Զեզի կը դիմեմ, որովհետև չեմ ճանչնար ոչ մէկը:

Յրամանքնիդ բնիկ կեսարացի Վերժին Գալէնտերեան տարագրութենէն ազատուած են. ծնողըներս և ազգականներս զոհ տալէն և շատ տառապանք քաշելէն վերջը մինակ նշանածն գտայ, որ կը գտնուի Միլվոք քաղաքին մէջ: Իրեն քով կերթայի, բայց շոգենաւեն ինձ էլիզ Այլբնտ փոխադրեցին. չեն ծգեր, որ երթամ: Իրեն հեռագրեցին, թէ աս ինչ անունով աղջիկ մ'եկած է ծեր հասցեին, կը ճանչնա՞ք զինքը և ծեր ի՞նչը կ'ըլլայ ըսելով: Քանի օրերէ իկեր պատասխան չեկաւ, և ես իրեն քանի քանի նամակներ գրեցի անոց ալ ոչ մի պատասխան: Կը խնդրեմ Զենէ, հետևեալն է իրեն հասցեն. գրեցէք, հարցուցէք հասցեն փոխած է կամ հիւանդ է, ինչ է, ինչ չէ, ինձ իմացունեք:

Տեր, եթէ միջոցով մը կրնաք զիս ազատել՝ ազատեցէք կ'աղաչեմ, որովհետեւ կ'ըսեն, թէ պիտի վերադարձնենք քեզ: Եթէ ես դրկեմ վիճակս շատ քէ պիտի ըլլայ: Ես աւելի կը նախընտրեմ իոս Զեր շուրջին տակ աշխատիլ, քան թէ ես երթալ, կ'աղաչեմ ինձ այս քանտէն ազատեցէք, ալ հոգիս ելաւ:

Երախտապարտ պիտի ընեք զիս, եթէ կարելի եղածին չափ շուտ պատասխանեք:

¹ Նկատի ունի Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ S. Բարկեն Եպս. Կյուլբսերյանին (1920-1921 թթ.):

² Նկատի ունի Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ S. Բարկեն Եպս. Կյուլբսերյանին (1920-1921 թթ.):

Երախտագետ աղջիկնիդ
Վերժին Գալէնտրեան

Mr. Armen Meghrouni
542 E. Water St.,
Milwaukee, Wis.
U.S.A.

3.9. Չի մոռնամ ըսելու, զիս վերադարձնելու ըլլան հնքգինքս ծովը կը նետեմ, բայց 18 տարեկան թարմ հասակին մեջ չեմ ուզեր ալ հնքգինքս փչացնել, կեանքը անոյշ է: Ուրեմն, հոս կան քանի մը օտար երիտասարդներ, որ ծեռքս կը խնդրեն, ստիպուած եմ խօսք տալու, քանզի աշխարհի մեջ չունիմ ոչ մեկը:

Աւաղ, ազգս չուրանալու համար այնչափ տառապանքներ քաշեցի ու թուրքերուն քովէն փախայ, Եկայ հոս ազատ քաղաքին մեջ ազգս պիտի ուրանամ, չէ, չէ, չեմ կրնար: Խնդրեմ, Կ'աղաչեմ, ազատեցէք զիս, և ես պատրաստ եմ աշխատելու ինչ տեսակ գործ ալ, մինակ թէ ազգս չուրանամ:



Ֆոնդ Ամերիկա, գործ 1921 թ., արձնգր. 2449, թիվ -, թուղթ 1-2:

Օգոստոս 5, 1921
Ակրան, Οհայո, U.S.A.

Նորին Սրբազնութեան S. Զաւէն Պատրիարք¹
Հայոց ի'Կոստանտնոպոլիս

Սրբազն Հայր,

Դինգ տարիէ ի վեր հայրենիքս հեռու այս օտար հորիզոնի տակ տքնելով ջանացի քանի մը սենթ շահիլ և վերադառնալ ծննդավայրս, բայց դժբախտաբար մեր հայրենիքի վատրար վիճակը առայժմս չի թոյլատրեր այդ նտադրութիւնս ի կատար հանելու: Ուստի վերջնականապէս մտադրութեցայ այս երկրին մեջ ամուսնանալ և սպասել մինչև երկրի վիճակը բարուց ընթացք ստանայ:

Նկատի ունենալով, որ հոս հայ ազգի օրիորդներ շատ քիչ կան և եղածներն

¹ S. Զավեն արք. Տեր-Եղիայան պատրիարք (1913-1922 թթ.):

ալ իմ բնակութեան տեղէն շատ հեռու են: Նկատելով, որ օտարի հետ ամուսնանալը դւն է իմ զգացումներուս և հակառակ մեր նահապետական սովորութիւններուն: Եւ վերջապես նկատելով, որ պատերազմի հետևանքով բազմաթիւ հայ կանայք և օրիորդներ փախստական լեցուած են ի Պոլիս.- յարմար դատեցի դիմել Զեր Սրբագնութեան և խնդրել Զեր աջակցութիւնը այս խնդրուն մէջ: Կը փափաքիմ հայ օրիորդ մը այդ տեղէն Զեր միջոցաւ ինձի դրկուի որպէս կնութեան: Գիտեմ, ամուսնութեան շատ անյարմար ծև մըն է այս, բայց, պարագաներու դժնդակ դասաւորումներու հետևանքով, վերոյիշեալ ծեւը յարմարագոյնը գտայ:

Սրբազն Դայր, ներփակ կը գտնեք իմ լուսանկարը, տարիքն է 27, ամուսնացած չեմ, Ամերիկայի մէջ գործաւորութեամբ կը զբաղիմ և ընտանիք մը այս երկրին մէջ համեստ պահելու չափ կարողութիւն ունիմ: Կրթութիւնս թէ և տարրական, բայց ինքնաշխատութեամբ միշտ սովորելու հետամուտ են եղած և են: Առողջութեանս նասին թշշկական վկայագիրը Զեզ կը դրկուի ուրիշ ծրարով մը:

Այսչափ տեղեկութիւն Զեզ հաղորդելով իմ մասին կը խնդրեի, որ յարմար օրիորդի մը հաւանութիւնը առնելիք և իր նկարը յարակից ծանօթութիւններով ինձի դրկելիք, որպէս զի իր գալու նասին պատրաստութիւններու վրայ կարգադրութիւններ ընենք: Մտադրութիւնս է տոմսակը և ծախքերը Պատրիարքարանին միջոցաւ ընել, որը ամենն ապահով և օրինաւորն է:

Այսչափ: Խնդրելով Զեր Սրբազնութեան հայրական օրինութիւնները, անհամբեր կը սպասեմ Զեր պատասխանին:

Զեր որդի՝ Աբրահամ Վարդանեան

Իմ հասցեն. Abraham Vartanian
285 Berry Ave.,
Akran, Ohio
U.S.A.



ԾԱՆՈԹՎԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ետո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 72:
2. Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան. Դայերու ցրումը աշխարհի զանազան մասերը (Սկիզբան մինչեւ ԺԱ դար Քրիստոսի), հ. Ա, Գահիք, 1941, էջ 97-98:
3. Միքայելյան Վ., Դրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 5:
4. Malcom, V.M. *The Armenians in America*. Boston, Chicago, 1919. Mirak, R. *Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I.* Cambridge, 1983. Mirak, R. *Armenians* (S.Thernstrom, ed. *Harvard Encyclopedia of American Ethnic Groups*. Cambridge, London, 1981). Tashjian, J.H. *The Armenians of the United States and Canada*. Boston, 1947. Minasian, Ed. *The Armenian Immigrant Tide. From the Great War to the Great Depression*. Mirak, R. *Outside the Homeland. Writing the History of the Armenian Diaspora (Recent Studies in Modern Armenian History)*. Cambridge, 1972). Wertsman, V. *The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book*. New York, 1978. Antreasian, J. *The Armenians in America: A Personal Viewpoint* (R.Hovannisian, ed. *The Armenian Image in History and Literature*. Malibu, 1981). Barsumian, N. *Stowaway to Heaven*. Ohio, 1961. Avakian, A.S. *The Armenians in America*. Minneapolis, 1977. Atamian, S. *The Armenian Community*. New York, 1955. Boghosian, H.B. *Highlights of Armenian History and Its Civilization*. USA, 1957. Lang, D.M. *The Armenians. A People in Exile*. London, 1981. Chandras, K.V. *Arab, Armenian, Syrian, Lebanese, East Indian, Pakistani and Bangla Deshi Americans: A Study Guide and Source Book*. San Francisco, 1977. Danilov, D.P. *Immigration to the USA*. Canada, 1983.
5. Գալօտեան Ա., Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950: Մարտիրոսեան Լ., Ամերիկահայութիւնը Երեկ Եւ այսօր, Պեյրութ, 1973: Ակն-եանց, Դայերն Ամերիկայում, Արենք, 1893: Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա. Բ տարի, Պոստոն, 1912, 1913: Թեղյիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, Վիեննա, Վենետիկ, 1915, 1921, 1922, 1925, 1926: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, Կազմ. Յ.Խաչմանեան, Պոսթըն, 1925, 1926: Արշալոյս պատկերազարդ տարեգիրք, պատրաստեց Ա.Մելիքեան, Գ տարի, Ֆրեզնո, 1922: Ասպարեզ: Ժողովածու տասնամեակի առթիւ (1908-1918), Ֆրեզնո, 1918: Ասպարեզ: Յիսնամեակ. 1908-1958, Ֆրեզնո, ա.թ.: Քառասնամեակ (1903-1943) Երիտասարդ Հայաստան-ի, Նիւ Եօրք, 1944:
6. Աբրահամյան Ա.Գ., Դամառոս ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967: Դակորյան Գ., Դայերի գաղթը ԱՄՆ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 12, Երևան, 1986: Դակորյան Գ., Դայերի տեղաբաշխումն ԱՄՆ-ում (19-րդ դարի վերջ-20-րդ

դարի սկիզբ), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 7, Երևան, 1987: Մանկութիւն Ն.Լ., Ամերիկահայ գաղութի պատմությունից, «Պատմա-քանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 1962:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Adams, J.T. *The Epic of America*. Boston, 1932, p. 27. Gavian, R.W., Hamm, W.A. *The American Story*. Boston, 1945, p. 4. Tashjian, J.H. *The Armenians of the United States and Canada*. Boston, 1947, pp. 1-2. Adamic, L. *A Nation of Nations*. New York, London, 1945, p. 287. *The National Experience. A History of the United States*. New York, 1963, p. 14.
2. Tashjian, J.H., նշվ. աշխ., էջ 2:
3. Adamic, L., նշվ. աշխ., էջ 287:
4. Նույն տեղում: Lang, D.M. *The Armenians. A People in Exile*. London, 1981, pp. 120-121.
5. Adamic, L., նշվ. աշխ., էջ 288:
6. *The National Experience*, էջ 15: Tashjian, J.H., նշվ. աշխ., էջ 3:
